





891.99

Դ-23

ՏԱՐԱՎԻՐԱՆ Հ 1981 թ.

Բ. ԵԱԶՈՒՄՑԱՆ

Մ Ա Ր Դ Ի Կ

ՀՅԱՀ
545

1/5811



ՏԱՐԱՎԻՐԱՆ Հ 1981 թ.

1986


Կազմը, Փարզացը, յով նկատմանը
նկարիչ Շ. Հռվիտանիսյանի

Գտա. Խմբ. Ռ. Արայիշ
Տեխն. Խմբ. Տ. Խաչվանիշյան
Սրբագրիչ Հ. Դուռիսանյան

≡

Պետհատի ապարան
Դլավլիսի լիադոր 289, Պատկեր 1269,
Հքառ. 2530, Ցիրած 4000:

ՆՎԻՇՈՒՄ ԵՄ
Մովկուշ Խօնշիկովի
Տիշատակին



**Մոհանակ Խեցւառի
ՄԱՆԵ**



Դիվանդանոցի միջանցքում խռնվել եր հենց
աշխատանքից յեկած բանվորների բաղմությունը։
Նրանք մինչև հիվանդանոց հասնելը շատ եյին շտա-
պել, հեալով բարձրացել եյին հանքերը տանող
զառիվերը։ Հիվանդանոցի միջանցքում, յերբ գեղերի
սուր հոտը նրանց սթափեցրել եր, նրանք ասես
նոր եյին հասկացել, թե ու՞ր եյին շտապում ու զըդ-
լացել եյին, վոր արդեն հասել են այդտեղ։

Միջանցքում մյուսներին մոլորված ու տխուր
գտնելով, իրենք ել գլխիկոր կամ արտհագուտի կո-
ճակների հետ եյին խաղում, կամ գլխարկները ձեռք-
ների մեջ առած անընդհատ պտտում եյին, տրորում։

Նրանք մեկ-մեկ անցնում եյին հինգերորդ սեն-

յակի առաջից ու դռնից անհամարձակ ներս նայում :
Այնտեղ պառկած եր նրանց սիրելի Մուկուչը : Ըս-
դամենը մի քանի ժամ առաջ վողջ ձուլարանը Մու-
կուչի ձեռքին եր . նա լեզենդար հերոսի նման
ընթացք եր տալիս հրահեղուկ մետաղի ձուլվածքին ,
յերբ հանկարծ կույր մի պատահականությամբ այդ
ձուլածոն նրան դարձրեց բոցավառմած կենդանի մի
սյուն , վոր վազվզում եր կոնվերտորների արանքում
ապա հսկայական կաղնու նման նա տապալվեց գե-
տին , ծանր հեալով խոր այրվածքներից :

Յերբ արդեն գործարանի բժիշկն ու քույրերը
փաթթել եյին Մուկուչին ու հաղթանդամ Մուկու-
չը դարձել եր բամբակի վիրակապի մի հսկայական
դանդված՝ դրված պատղարակի մեջ , ձուլարան յե-
կագ Մուկուչի կինը :

Նա նայում եր Մուկուչի դեմքի բամբակներից
աղատ մնացած մի մասին , վոր խանձված ու սեա-
ցած եր , նայում եր առանց արտևանունքների , նրա
աշքերին , խաշված , պապակած շուրթերին ու վշտից
փետում եր մազերը , անիծում :

— Քանդովի՛ ես զավոդը , վոր վերջը քո կյանքը
տարապի :

Մուկուչը , վոր յերկաթի առողջությամբ ու
կամքով դիմադրում եր անտանելի ցավերին և դեռ
չեր կորցրել դիտակցությունը , պղտոր , հանդիմանող
հայցքով նայեց կնոջն ու հաղիվ շարժելով այրված
շուրթերը միմնջաց՝

— Զավոդ ա , անեն բան կպատահի , դեռ յերե-
խանց մասին մտածի ...

Հիվանդանոցում Մուկուչի ժոտ նատել եր նրա
մայրը, մահճակալի շուրջը շվարած կանգնել եյին
բժիշկներն ու քույրերը, նրա ընկերները, Ակորը,
Մելիքը Հերակլին: Նրանք մթնած, շվար կանգնել ե-
յին ու անդոր լսում եյին Մուկուչի ծանր հառաջան-
ները:

Մուկուչին փրկելն անհնար եր. նրա կյանքի
ժամերը հաշված եյին, բայց Մուկուչն առանց գե-
տակությունը կորցնելու իր ու, խանձված գեմքը
մի կերպ թեքում եր, հաղիսվ մի քանի վայրկյան բա-
ցում եր մեկ կամ մյուս աչքը, ճանաչում եր իր մոտ
յեկաղին, մի յերկու խոսք եր փոխանակում, վոչ-
վոքի անուշաղիր չեր թողնում:

Մահը խորթ հասկացողություն եր Մուկուչի
համար: Յեվ ի՞նչպես կարելի յեր անկենդան պատ-
կերացնել վարպետ Մուկուչին, վորը հիացմաւը եր
պատճառում, յերբ մարդ նրան տեսնում եր ձուլա-
րանում աշխատելիս: Պարթևահասակ, խոշոր կտղմ-
վածքով քառասունին մոտ մարդ եր Մուկուչը: Յերբ
նա կոնվերտորի մոտ կանգնած՝ մեռքը ճակատին
ձուլածոյին եր նայում, թվում՝ եր, թե այդ նրա ու-
ժից են դղրդում շիկացած մետաղով հղի կոնվեր-
տորները: Զեռքը ճակատից չհեռացնելով առյուծի
հայացքով նայում եր Մուկուչը, մոտենում եր, այ-
ձեռքից զուրս եր քաշում բրեղինտե կոշտ ձեռնոցն ու
ամուր, դղացմունքով սեղմում իր մոտ յեկողների
ձեռքը: Ու յերբ իր կոշտ ափի մեջ եր առնում ձեր
ձեռքը՝ ասես վոչ թե մարդ եր բարեկում ձեղ, այլ
ձեր ափը գտնվում եր եքսկավատորի հզար բռան-

մեջ։ Զեր ձեռքը թողնելով, Մուկուչը նախ սովորականի նման կհարցներ ձեր առողջությունը, իր կատավում, մանր աչքերով կժպտար, ապա կասեր թե ինչպես են աշխատում կոնվերտորները, ինչ ե պակաս, թե այդ հերթին քանի տոնն պղինձ կարելի յե պասել։

Յեզ հիմա, այդ կենդանի, հղոր, յեռանդուն մարդը բամբակի ու սավանների մեջ փաթաթված, մահճակալին ընկած գալարվում եր, ծանր հառաջում։ Նրա հառաջանքը թափանցում եր իր ընկերների հոգու խորքը, այնտեղ տակն ու վրա յեր անում ամեն ինչ ու նրանք ծանր շնչելով, զայրացած իրենց անզորության վրա, դարձնում եյին յերեսները, վոր հանկարծ Մուկուչը չնկատի իրենց արցունքը։

Մուկուչը չեր հավատում մահվան։ Բայց նա խոսում եր մահվան մասին։ Նա այդ անում եր վոչ թե հուսահասությունից, այլ ծանր ցավերից։ Նա մի անդամ միայն ցավագարի նման ուժեղ գոռաց ու լոեց։ Քիչ հետո նա բացեց աչքերն ու նայելով ընկերներին ստաց։

—Յերանի մեռնեմ՝ ազատվեմ այս ցավերից։

Մի քանի ժամից Մուկուչն ազատվեց այդ ծանր ցավերից։

Բանվորական ավանն ընկղմվել եր խոր վշտի մեջ։ Մուկուչի ինժեները լսելով նրա մահվան լուրը՝ ուշադնաց յեղավ։ Բոլորը, Մուկուչի ընկերները, նրա ծանոթները, բոլոր նրանք, վոր վորևե գործ եյին ունեցել Մուկուչի հետ, հազիվ եյին զսակում իրենց արցունքները նայելով ու շրջանակի մեջ ա-

ռած. Հրջանային թերթի համարին, վոր ամբողջովին նվիրված եր Մուկուչի վողբերգական մահվան, նրա հիշատակին։ Վողջ բանվորական ավանը զնում եր Մուկուչի դադաղի յետևից։

Ժպտում եր Լոռվա գարնանային գեղեցիկ առավոտը։ Գույնզգույն ծաղկել եյին ծիրանի ու բալի ծառերը, կանաչ ուռիները կախված Դերետի վրա ջըրերի հայելու մեջ նայելով հրճվում եյին իրենց նազելի տեսքով։ Նոր յերեացած ծիծեռնակներն ասես վողեռորմած պայծառ յնդանակից, ջերմ արեվից, ու Դերետի փրփրաբաշ ջրերից, թեթև թռիչքով խոտի մի կտոր կտուցներին առած շտապում եյին նորոգմելու իրենց բույնը։

Այս ամենին աններդաշնակ, ծանր հնչում եր մահվան քայլերգը։ Գործարանի սուլիչը, վոր 10 տարի շարունակ ամեն որ աշխատանքի յեր կանչել Մուկուչին, այժմ տիսուր վերջին հրաժեշտն եր տալիս նրան։ Բանվորական ավանի միջով անցնող գընացքների շոգեքարշերը Մուկուչին ճանապարհ եյին դնում իրենց սուլոցներով ու նրանց արձագանքը Լոռու ձորերում ասես ամենի լեռների սուզը լիներ իրենց ծոցից դուրս յեկած ժայռի պես ամուր Մուկուչի համար։

Լոռան ովլիսին կեցած գործարանի վիթխարի ծըխ նելույզը, վորն իր առատ կաթնագույն ծուխը թեքել եր դեպի հանքերի ձորը, ասես իր հրաժեշտի թաշկինակն եր թափահարում սիրելի Մուկուչին։ Այդ ծինելույզի տակ կոկիծը սրտերում, բայց ավելի համար աշխատում եյին նրա ընկերները։

Յերբ վերջին անգամ Մուկուչին իրենց ուսերին առան նրա ընկերները, Մուկուչի մայրը կախվեց գաղաղից, նայեց գործարանի կողմը, այնտեղ ուր յերկար տարիներ Մուկուչը ընթացք եր տվել հրեզեն լավաներին:

Նա նայեց վիթխարի ծխնելույղից բարձրացող ծիսի քուլաներին ու գառնալով Մուկուչին առաց:

— Զավոդի ծուխը բարձրանում ա, զու ետ ո՞ւր ես զնում, Մուկուչ ջան...

Մինչ այդ բոլորը մի կերպ զսպել եյին իրենց: Բայց այլևս հեկեկանքը զսպելն անհնար եր. անհուն կակիծը ամուս սղմել եր բոլորի կոկորդը:

Ու լուս հեկեկանքով, գլխիկոր հերոս ընկերոջ կազաղն ուսերին, նրանք քայլում եյին աշխատելով լսել Մուկուչի մոր սիրոտ մաշող բայաթին...

Իսկ նա սրտակտուր, առանց մի վարկյան հանդստանալու կանչում եր՝

— Բա պղինձն ո՞վ ա կալ անելու, իմ առլանքալասի Մուկուչ ջան...

* * *

Զուլարանում վոչ վոչ չի մոռանա Մուկուչին:

Այդ վոչ միայն նրա համար, վոր Ռազմալարի վեղջուկ Մուկուչ Խաչիկյանը իրրել հիանալի մարդ, զգայուն ընկեր ու վարպետ, բոլորի համար դարձել եր սիրելի ու մտերիմ Մուկուչ Խեչիկյով: Վոչ ել նըրտ համար, վոր Մուկուչը հիանալի վարպետ եր,

վոր նա մետաղե լավաների իսկական հրամանառարեր։

Նրան չեն մոռանա, վորովհետև բոլորի ականջին հնչում են նրա խանձված շուրթերից գուշը յեկած բառերը։

— Զավոդ ա, ամեն բան կպատահի...

Նա աշխատեց ու մեռավ վորպես հերոս, նրա ամբողջ կյանքն ընթացավ հերոսին վայել պարզությամբ, հասարակ ու համեստ։

Նա մետաղե լավային գոհ գնաց այն ժամանակ, յերբ փորձում եր հարեւան գործարանի գեն թափվող մնացորդներից պղինձ ստանալ։ Յեզ յերբ նա հնոցի մեջ նայում եր՝ տեսնելու, թե ինչպես ե գընում ձուլման պրոցեսով, հնոցում առաջացած գաղերի պայթյունը նրա յերեսին նետեց ձուլված պղինձը։ Ու յերբ կինը անիծում եր այն գործարանը, վորին նա տվել եր վողջ կյանքը, նա բարկացած ժըմնջաց՝

— Զավոդ ա, ամեն բան կպատահի...

Հերոսի ըմբռնողությունը շոշոփելի յեր գառնում ամենքի համար, ովքեր վոտից գլուխ ճանաչում եյին Մուկուչ Խեչիկովին։ կոնվերտորի մոտ կեցած այդ հասարակ, կոշտ մարդուն։ Նա կիսագրագետ բանվոր եր, բայց իր գիտակցության մեջ այնպիսի ուժ եր կուտակել, վորը նրա համար սովորական բան եր գարճնում իր պոստում մեռնելը։

Յեզ հիմա յել, յերբ ականջիդ հնչում ե ժահվան քայլերզն ու գործարանի ու շողեքարշերի սուլոցները, յերբ հիշում են այն վշտով համակված ժարդիանց, վոր գլխիկոր, թաց աչքերով բայլում

եյին սիրելի Մուկուչի դադաղի յետեից, նորից
սեղմում ե կոկորդու, ինչ վոր բան անհանգիստ ե ա-
նում քեզ ներքուստ :

Մարդ չի կարողանում դադաղի հետ համատեղել
կոնվերտորի մոտ կեցած կենդանի Մուկուչ Անչի-
կովին :



Հ 5811
Տ 545
Հ 602

Բազմա Սուլուսուն ԱՅՐԻՆ



Առղեկ-Տ



4-4

Ազիղին հանդիպեցի յերկար ընդմիջումից հետո,
յերբ մի քանի տարի յեր, ինչ խորհրդայնացել եր
յերկիրը։ Թեև խորհրդայնացումից հետո Ազիղը
կորցընել եր իր վողջ ունեցվածքը,—իսկ այդ ունեց-
վածքը փոքրիկ գյուղաքաղաքի կես թաղամասը բըո-
նող միհարկանի շենքնը եյին ու մի ընդարձակ այգի,
թեև մեռել եր Ազիղի ամուսին Սոլոմոնը, այնու-
ամենայնիվ նա արտակարգ բարձր տրամադրության
մեջ եր։ Նա ավելի յեր գերացել ու խոշորացել, չը-
նայած իր հասակին կարմրությունից փայլում եյին
նրա լայն այտերը, նրա դեմքից չեր իշխում ժպիտը։
Նա ուրախ քրքջում եր լայն բացելով անատամ բե-
րանը։

Ազիղը դեռատի, մարմնեղ գեղջկուհի յե լինում,

յերը ինամախոսները դալիս են հայտնում, վոր Սուլոմոնը ցանկանում ե ամուսնանալ Աղիզի հետ։ Ուրախանում են Աղիզի ծնողները, նրանք լցվում են հպարտության զգացմունքով, վոր «բազարում»՝ փոքրիկ գյուղաքաղաքում՝ բազագ փեսա պիտի ունենան։

Այդ ամուսնությունը սակայն, այնքան հեշտ չէր Սոլոմոնի համար, վորի ամբողջ կյանքը հաշիվ ու մտածմունք եր։ Արշինը ձեռքին չափել ե նա կտորներն ու մտածել։ Խանութի դռանը, ծառի ստվերում, նարդի խաղալիս, Սոլոմոնը գցել ե զառերն ու մտածել։ Մտածել ե ամուսնանալ Աղիզի հետ Սոլոմոնն, ու հաշիվներ ե արել։ Իսկ հաշիվներն արել ե ենակես, վոր վերջը տակը մի բան մնա՞ւ, վոր ինքը դառնաքաղաքի առաջին վաճառականը։ Գիտեր Սոլոմոնը, վոր ավելորդ ծախսերի հետ ե կազմված ամուսնությունը, ընտանիք պահելը, բայց յերկար մտածելուց հետո համոզվել եր, վոր ուրիշ յելք չկա, վոր ահւաժեցտ ե այդ քայլն անել։ Սոլոմոնին այդ վորոշմանն եր հանդեցրել և ժառանգ ունենալու անհրաժեշտությունը, վորպեսզի իր ունեցվածքը ցաք ու ցրիվ չդար։ Բացի այդ, նա ստիպված չեր լինի խանութում ծառայող պահել։ իր յերեխաներն իր հետ կաշխատելին։ Իսկ Աղիզին ընտրել եր այն պատճռով, վոր կարծում եր, թե նա դեղիկուհի լինելով տռանձին պահանջներ չի առաջադրի և խոնարհ կին կլինի իրեն։

Այդպես ել Սոլոմոնն ամուսնանում ե Աղիզի հետ։
Աղիզին հենց առաջին որից դուր չի դալիս Սոլոմո-

Նը: Նրա ղեղջկական հոգին հաշտվել չեր կարող
այդ չոր, համբիչ դարձած մարդու հետ: Յեկ կյան-
քում ճանաչելով Սոլոմոնին, նա ամենից լավ հաս-
կացավ, թէ ի՞նչու այդ բաղադին ժլատ Սոլոմոն ա-
նունն ելին ավել:

Ամուսինները համարյա շարաթներով իրար հետ
չեյին խոսում, վորովհետեւ խոսակցության նյութ
չեյին գտնում: Ազիզին բոլորովին չեյին հետաքրքրում
Սոլոմոնի առևտրական գործերը: Սոլոմոնն ել
իր հաշիվներից բացի, վոչ մի բանի մասին չեր կա-
րող խոսել ու մտածել:

Ճաշերին շատ հաճախ տուն չեր դնա Սոլոմոնը,
իսկ յերր դնար, ասես զողունի մի բան կուտեր, հետ
կքաշվեր թափափին ու զարմանքով կնայեր, թէ ինչ
շատ և ուսում Ազիզը: Ապա կմտածեր Սոլոմոնը,
վոր հակառակ իր սպասածի իննայողության մասին
շատ չի մտածում Ազիզն ու ճաշի հետ պանիր ել և
հանում սեղան: Այդ մասին ի հարկե, դեռ վոչինչ չեր
խոսում Սոլոմոնը:

Երր ճաշին տուն չեր դնում Սոլոմոնը, անցնում
եր իր յեղբար խանութը: Նրա յեղբայրը՝ Պավեն,
վոր դեռ սիրտ չեր արել ամուսնանալ ու խոր մտա-
տանջության մեջ եր,—ամբողջ որն անց եր կացնում
իր յերկաթեղենի խանութում: Ճաշերին, յերր նրան
հյուր եր դնում իր յեղբայր Սոլոմոնը, կողքի մրգա-
վաճառ—սպարսիկից կես Փունտ չամիչ ելին վերցնում
նրանք, մի Փունտ հաց, ու լուռ, առանց մի խոսք
փոխանակելու ճաշում ելին: Ապա յերր վերջացնում
ելին ճաշը և հանկարծ դրսից լսվում եր թեյավա-

ճառ պարսիկի ձայնը, յերկար մտատանջվում ելին
նրանք մի—մի բաժակ դարձինով թեյ խմեն, թե այդ
որը կարելի յեր անց կացնել և առանց ավելորդ
չուայլության:

Ազիղի գրությունը հուսահատական եր: Բայց նա
չեր հուսահատվում ու կարծում եր, վոր ամեն ինչ
զեզի լավը կգնա, յերբ իրենք յերեխաներ ունենան:
Յեկ իրոք, յերբ նա մի տղա ծնեց—պայծառաջավ
Սոլոմոնը, ժպտաց այդ որը և նույնիսկ շոյեց Ազիղի
գլուխուր: Բայց այդ յերկու որ տեսց միայն: Յերե-
խայի ծնունդը կարծես Սոլոմոնին ավելի լցրեց պա-
տասխանատվության զգացումով ու նա ավելի լսակ-
յաց, ավելի ժամանակ: Յերեխան ծնվելուն պես
նա մի նոր շենքի հիմք դրեց: Հիմքի վրա հավաքվել
ելին վարպետները, խաչը ձեռքին կանգնել եր քա-
հանան, բայց Սոլոմոնը դեռ չեր վորոշել կարեռը
մի բան: Նա դեռ մտածում եր, թե շենքի հիմքի
անկյունում վոսկե դրամ ձգի, թե՝ արծաթի, վոր
հիմքն անխախտ ու ամուր լինի, վոր Աստված իր
շենքը զերծ պահի ամեն փորձությունից:

Ու յերեսը խաչակնքելով, Սոլոմոնը, բոլորի աշ-
քի առաջ աչքերը փակելով մի վոսկե տասը սուր-
լանոց հանեց պրապանից ու նևուեց խորած հիմքի
մեջ: Այդ գիշեր նա չկարողացավ քնել մի վոսկին
կորցնելու մտքից և այն կասկածից, թե գիշերը վար-
պետները վոսկին կարող են հանել հիմքից:

Ազիղը մտածում եր, թե յերեխայի մեծանալու
ու նոր յերեխա ծնվելու հետևանքով կփոխվի Սոլո-
մոնը: Բայց նրանք ունեցան յերկրորդ, յերրորդ,

Հորբորդ, հինգերորդ, վեցերորդ յերեխան և դժանից դրությունը միայն վատացավ։ Նրանց կյանքը վեր եր ածվել անվերջ մի կռվի։ Մաշվում եյին յերեխաների չստերը, մաշվում եյին նրանց շորերը և Աղիզը պետք ե մի շարաթ մարդուն ասեր, պիտի կովեր նրա հետ, յերեխան պիտի մի չորս որ բորիկ գողրոց գնար, վոր Սոլոմոնը հարեւան մաշկակարից մի զույգ չուստ վերցներ յերեխայի համար։ Սոլոմոնիր հերթին հանդիմանում եր կնոջը, վոր նա հաշիվ չդիտե, վոր նա անշնորհք և և մեծ յերեխաների հագուստը լավ չի հարմարեցնում փոքրերին ու ամեն մի շոր մաշվելիս խսկույն կտոր և պահանջում։ Որերով թեյ չեյին խմի ժամանակ Սոլոմոնի տանն ու յերբ յերեխաները շաքար պահանջեյին նա ակնարկելով չենքի կիսատ մնացած տանիքը կասեր։

—Սպասեցեք տան գլխին փափախ գնենք, հետո չայ շատ կիսմեք...

Աղիզն այլիս, ամեն ինչից հույսը կարած աղոթում եր աստծուն։ Ու միշտ յեկեղեցի գնալով Աստծուց միայն մի բան եր խնդրում, —այն, վոր Սոլոմոնը գոնե յերկու տարի իրենից չուտ մեռնի, վոր գոնե յերկու տարի նրանից հետո հանդիստ կյանք տեսնի ինքը։

Յերբ յերկիրը խորհրդայնացավ բազավ — Սոլոմոնը կաթվածահար չեղավ։ Այդ զարմացրեց բոլորին և առաջին հերթին Աղիզին։ Բայց ասես խելազարվել եր նա, թուլացել եյին նրա ծնկները։ Սոլոմոնը գունատ, զազաղից բարձրացածի սարսափած հայացքով նայում եր կյանքին ու վոչինչ չեր հասկանում։ Ա-

Մեն ինչ սոսկալի ցավ եր պատճառում նրան մինչև
վոսկրի ծուծը։ Անմիտ թափառում եր նա, անկազ
խոսքեր եր ասում, արշինով չափելու ձեւեր եր ա-
նում, խոսում եր մուշտարիների հետ, հայհոյում
եր շենքի բնակիչներին՝ բակը կեղտոտելու ու բընա-
կարանի վարձն ուշացնելու համար։

Հանկարծ սթափում եր նա ու հասկանում,
վոր վոչ բնակիչ կա, վոչ մուշտարի, վոչ արշին։
Այդ սարսափելի յեր լինում։ Այդ ժամանակ նա խո-
րասուրիում եր իր պղտոր ու քառսային մտքերի
տիղմի մեջ, անզոր կատաղությունից կրնացնում
եր ատամներն ու հառաջում հոգու խորքից։

Աղիղը տեսնում եր այս, ասես քիչ խղճահար-
վում եր, բայց հիշելով անցյալը, մխիթարիվում եր,
Սոլոմոնի տանջանքը համարելով իր կործանված-
կյանքի, իր տանջանքների հատուցումը։

—Հո աստված լսեց ինձ, — ամբողջ հոգով քըր-
քը առաջանի ասում եր Աղիղը, — հողը նրա գլուխոր,
վոնց վոր հողեցի. մենակ բոլշեիկները յեկան նրա
հախիցը։ Պատերը դես շարեց—դեն շարեց, վերջո
բանջար ուտելով սատկեց։

Ու գոհ իր վիճակից և այն բանից, վոր Սոլոմո-
նի մահից հետո վոչ թե յերկու, այլև ամբողջ մեց
տարի յե ապրում արդեն առանց նրա ճնշիչ ներկա-
յությունն զգալու, Աղիղն իրեն թեթև, ուրախ, մի
տեսակ յերիտասարդացած եր զգում։

Տղաներից ել դժգոհ եր Աղիղը։

—Նրանքել իրենց հոր նման շունդուրս յեկան...

Գանդատվում եր Աղիղը։ Նրանցից վորը հաշմա-

պահ, վորը պահեստապետ և խորհրդային աշխատող
եր, բայց գաղտնի առևտրով եյին զրադվում: Նրան-
ցից և վոչ մեկը չեր ցանկանում իր խնամքի տակ
տռնել ծերացած մորը:

—Դատարանով ջանները հանում եմ, ամեն ամիս
իմ ապրումտի փողն առնում եմ ու ինձ համար ապ-
քում:

Աղիղը միանգամայն անկեղծ եր:


Այնպես, ինչպես իր վողջ կյանքում չեր սիրել
բազազ Սոլոմոնին, նա այնպես ել չեր սիրում նրա
տղաներին, վորոնք արյան հետ ստացել եյին իրենց
հոր մանր առևտրականի քսույությունն ու ժլատու-
թյունը, վոր այնքան խորթ եր Սոլոմոնի այրու
գեղջկական հողուն:

Աղիղը տանյակ տարիներ ապրել եր այդ մար-
դու հարկի տակ և նրա հողին մնացել եր անարատ
ու մաքուր: Նա ամբողջ հոգով ատել եր Սոլոմոնին,
նրա վողջ շրջապատն ու ընկերներին, վորոնցից ա-
մեն մեկը մի չարիք եր հասարակության համար և
բռնակալ իր ընտանիքում:

Հոկտեմբերը նրանց ջնջեց յերկրի յերեսից:

Ահա, թե ինչու այնպես կենսուրախ եր բազազ
Սոլոմոնի այրին:





ՔԵՐԴՈՐ ԻՎԱՆԻԶԻ ԿՅԱՆՔԸ



Մարսավելին մեռավ :

Մեռավ վորովես նախահեղափոխական Հայկական դյուլի վարժապետ, վոր ամուրի ու անտեր արդեն ծերանում եր :

Նա խաղաղ ապրում եր գյուղում, այցելում եր տերտերի ու գյուղի անվանի մարդկանց տները, ամառվա շողին սառը թան եր ուզում իր քույր Մարանից կամ տիրուխնուց, թափառում եր այգիներում, յերբեմն սար եր բարձրանում ու անհոգ կյանք վարում լեռներում :

Այսպես հոսում են որերը, մինչ 1905 թվին Անդրկովկասում ծայր են առնում ազգամիջյան կոտորածները :

Սարսափահար գյուղացիները հավաքվում են
դյուզի միակ գրադետ մարդու մոտ՝

—Ի՞նչ խարար կա, վարժապետ...

Վարժապետը, վոր վշտից արդեն մի քանի թառ
հոնի ողի յեր կոնծել, ձեռքին շուռ ու մուռ եր տա-
լիս «Մշակ»—ի վերջին համարն ու գլուխն որորե-
լով պատասխանում:

—Սարսափելի յե ժողովուրդ, սարսափելի...

Թեև ժողովուրդը չի հասկանում սարսափելի
բառի իմաստը, բայց վարժապետի տեսքից ու ձայ-
նալարերի դողոցից հասկանում ե, վոր ինչ վոր
սարսափելի բան ե կատարվում:

Այնքան ե աղջում գյուղացիների վրա այդ բա-
ռը, վոր գրանից հետո վարժապետի անհւնը կնքում
են «սարսափելի»:

Յեզ 13 տարի անց, 1918 թվին գյուղի ուսուցիչ
Արտեմ Խվանիչը վախճանվեց զորպես սարսա-
փելի, վորին այլ կերպ չեյին կանչում դյուղում:

Ու մյուս առավոտ իմանալով, վոր վարժապետը
վախճանվել ե, գյուղացիները գլուխներն որորելով
առում եյին՝

— Հայիփ, մեր սարսափելի, հայիփ...

Ու այդպես անտեր ու անշուք, հայկական մո-
ռացված գյուղում իր մահկանացուն կնքեց ներսիս-
յան դպրոցն ավարտած հայ ուսուցիչը:

Սարսափելին Ֆյոդոր Խվանիչի կրտսեր յեղ-
բայրն եր:

Ինքը Ֆյոդոր Խվանիչը նույնպես ուսուցիչ եր,
նույնպես յերկարամյա ուսուցիչ, վորը նույնպես ա-

մուրի ու անտեր եր մնացել, մինչ մի որ տեսել եր .
վոր կզակից արդեն պատկառելի, ձյունի պես ճեր-
մակ մորուք և կախվել:

Բայց մի քիչ այլ կերպ եր ընթացել Ֆյոդոր Ի-
վանիչի կյանքը:

Նա նախ և առաջ վոչ թե Ներսիսյան դպրոցն եր
ավարտել, այլ ուսական մանկավարժական սեմի-
նարյա, դասատու յեր յեղել վոչ թե հայկական՝ ծը-
խական դպրոցներում, այլ մի փոքրիկ գյուղաքա-
ղաքի ուսական դպրոցում:

Ընտանեկան կյանք չուներ Ֆյոդոր Իվանիչն ու
նրա մեջ ել յերջանկություն չեր փնտուում:

Յեթև իր յեղբայր Սարսափելին իր շամուսնա-
նալը հիմնավորում եր նրանով, թե՝

— Յես ո՞ւմ համրուրածին ինձ կին վերցնեմ, —
ապա Ֆեոդոր Իվանիչն այդպիսի արդաւմենոներ չեր
փնտուում և այդ խնդրի շուրջը բացված խոսակցու-
թյունը վարպետութեն դիակում եր ասելով՝

—Մոռացել եմ ամուսնանալ...

Ապա մի աչքը փակում եր ու շատ լուրջ կեր-
պարանք ընդունելով շոյում եր սպիտակ մորուքն ու
ասում:

—Բայց մտադիր եմ մոտ ժամանակներս ամուսնա-
նալ...

Դպրոցն ել Ֆյոդոր Իվանիչին հոգեկան բավա-
րարություն չեր պատճառում: Նրան դուք չեր գա-
լիս դպրոցական միջավայրն, ուսուցիչների անվերջ
խծծանքներով: Նա իր գործին նայում եր, վորպես
արհեստ, վորպես «ճակատագիր», վորից խոսափելն

անմտություն եւ Նրա միակ մխիթարությունն այս
եր, վոր սիրված եր անխտիր իր բոլոր աշակերտ
ների կողմից, վայելում եր նրանց հարգանքը, վո-
րոնք Ֆյոդոր Խվանիչին մեծ սիրով ռուչիտելք եյին
կանչում։ Մեկ ել Ֆյոդոր Խվանիչը մխիթարվում եր
նրանավ, վոր առանց ափառսելու առատաձեռն իր լու-
ման եր գցում բարեգործական նպատակներով կատար
վող հանգանակություններին, և պարտաճանաչ կեր-
պով մասնակցում եր «Հայոց բարեգործական ընկե-
րության» կաղմակերպած բոլոր յերեկույթներին,
վոր գերազանցապես կադմակերպում եյին «Վարդա-
նաց որերին» և բնմադրում եյին «Ալարայրի ճակա-
ռամարաց»։ Ֆյոդոր Խվանիչին մասամբ մխիթարում
եր և այն (այդ, ի հարկե, նա պահում եր սրակ
խորքում), վոր ինքը թեև ավարտել եր ռուսական
սեմինարյա ու ռուսական միջամվայրում եր գտնվում,
բայց իսկույն չեր ռուսաստանում շատ ինտելիգենտների հետ,
այլ սիրում եր իր ազգակիցներին, չեր խորշում նրանց
հետ լինելուց։

Ինչպես կյանքում, այնպես ել դպրոցում Ֆյոդոր
Խվանիչը տեսնում եր չոր չինովնիկություն ու շլա-
ցուցիչ ուսադիրներ, վորոնք ամեն ինչից ու ամեն
գաղափարից վեր եյին և ամեն ինչ պետք ե յենթարկ-
վեր գրանց։

Եեվ նա յերկյուղածությամբ ու ակնածանքով եր
վերաբերվում դեպի սմուրիտելներն ու ինսպեկտոր-
ները, վորոնք հաճախ անցնում եյին դպրոցները, վոչ
թե ոգնելու, այլ ողովինցիայի ուսուցիչներին վախ-

ներշնչելու, իրենց մեծության առաջ նրանց շնչինությունն ավելի շոշափելի զգացնել տալու համար:

Ֆյոդոր Իվանիչն իր կաշվի վրա զգացել եր այն բարոյական վոչնչացումը, վորին յենթարկվում եր պրովինցիայի ամեն մի ուսուցիչ ցարական ամենաշընչին չինովնիկի առաջ: Այսպիսով նրա մեջ մեխանիքական պատկառանք ու հարդանք եր մշտկվել դեպի չինովնիկությունը: Թեև այդ գեմ եր Ֆյոդոր Իվանիչի գեղջկական վոգուն, բայց միաժամանակ կարծես այդ գուրք եր գալիս նրան, վորպես որինաչափ մի յերեվույթ, այն գիտակցությամբ, վոր ճաշխարհը նարդիվան եռ, վոր մարդիկ պետք ե վորոշ աստիճանականության մեջ լինեն իրար նկատմամբ:

Յերբ յերկիրը խորհրդայնացավ, այդ Ֆյոդոր Իվանիչի համար վոչ վատ եր, վոչ ել այնքան հարապատ նրա վոգուն ու գաղափարներին:

Սակայն խորհրդայնացման հենց առաջին որից մի բան նկատեց Ֆյոդոր Իվանիչը, վոր նրա սրտին շատ հարազատ եր: Այդ այն ուշադրությունն ու հողատարությունն եր, վոր խորհրդային իշխանությունը ցույց եր տալիս ժողովրդական լուսավորության ու ւերկրի կուլտուրական վերելքի գործին: Յեկ Ֆյոդոր Իվանիչն անվերապահորեն, թեև արդեն ծերացած ու բոլորովին ճերմակած մուրուքով, իր վողջ ուժերը նվիրեց խորհրդային միջնակարդ դպրոցին:

Խորհրդային դպրոցումն ել նա մնաց բոլորի կողմից սիրված «ուշատելլը». բայց հարգանքը դեպի նրա աշխատանքը գուրս յեկավ աշակերտների նեղ շրջանակից ու խորհրդային հասարակայնությունը նրան ճա-

նաշեց՝ թերթիքում տեսնելով նրա նկարը, նրան ճանաչեցին հանգստյան տներում, ուր նա ուղարկվում եր վորակես դպրոցի լավաղույն հարվածային։ Ծերացած ֆյոդոր Խվանիչը դարձել եր կոմյերիտականների սիրելին, վորսնց նա դպրոցից զուրս ել ողնում եր ուսաց լեզուն ուսումնասիրելու դործում։

Կյանքն արդեն ակսել եր շատ բովանդակալից դասնալ Ֆյոդոր Խվանիչի համար։ Յել վորքան որը—որին բովանդակալից եր դառնում կյանքը, այնքան շատ բան եր ափսոսում ֆյոդոր Խվանիչը։ Նա ափսոսում եր, վոր չի սմռւմնացել ժամանակին, ափսոսում եր, վոր իր կյանքի կարծ մասը բաժին ընկավ խորհրդային իշխանության, իսկ այն մյուս յերկար ու վոսկե յերիտառարդության շրջանն անցավ անմիտ ու անբովանդակ։

— Հայ դիտի՛, սկառավեց Ֆյոդոր Խվանիչը, — կեղծ թախիծով արտասանում եր նա ու ասում, վոր արդեն պետք ե մտահոգվել կենսաթոշակի խնդրով։

Բայց մի դեպք տեղի ունեցավ Ֆյոդոր Խվանիչի կյանքում, վոր վերածնեց, կենդանացրեց նրան և այդ այն աստիճան, վոր նա նույնիսկ դադարեց կենսաթոշակի մասին մտածել։

Լուսավորության աշխատավորների հանրապետական համագումար եր։

Ամբողջովին վերածնվել եր Ֆյոդոր Խվանիչը։ Նա առույդ, յեռանդուն, վոգելունչ ճառ եր արտասանել համագումարում։

— Ճառ սկսեցի նրանով, վոր յերիտառարդ ու-

սուցիչներին խորհուրդ տվի շիախչել գյուղից, հետեւ վել ուսուցիչներին հին սերնդի մի քանի լավ կողմերին, խորհուրդ եյի տալիս շատ բան սովորել ու յերկար խոսում եյի և առ այս պատմում եր Ֆյոդոր Իվանիչը:

Նրա ճառը խլանում ե համալումարի բուռն ծափերի տարափի մեջ: Հուզմունքից ջրակալած աչքերով դարձյալ վորոտալի ծափերի տակ Ֆյոդոր Իվանիչը թողնում ե անրիոնն ու բեմի վրա նախագահության սեղանին զրավում էր տեղը:

— Լուսժողկոմն իր վերջին խոսքում ասաց, վոր նկատի ունի և իմ ճառը: Ես վոր լսեցի՝ սիրոս սկսեց ուժեղ խիել: Քրտինքը պատեց մարմինս, —իրեն հատուկ հումորով պատմում ե Ֆյոդոր Իվանիչը, —ասացի չինի պառաված հալով հիմար բաներ եմ դուրս ավել ու քթեքման մեջ ընկելը: Մտածում եյի, թե հեմի Լուսժողկոմը պետք ե խայտառակի ինձ ամբողջ համապումարի առաջ, գուցե և անվանի հին դպրոցից յեկած, փթած վարժապետ: Ինքս ինձ ասում եյի՝ «Այս, Ֆյոդոր Խանիչ, ինչ ցավու եր կարել վեր կացար խոսեցիր. պատմով՝ ապրեցիր մինչեվ հիմա ու ծերության որերիդ պետք ե խայտառակվեա»: Բայց ուշքի գամ տեսնեմ լուսժողկոմն ասում ե, վոր նոր սերունդը շատ բան ունի սովորելու հին սերնդից և ինձնից ու ամբողջովին հավանություն ե տալիս իմ մտքերին:

Այդ համագումարից հետո ինքը Ֆյոդոր Իվանիչը բարձրացավ իր աչքում, ավելի ինքնավատահ դարձավ ու գործունեյության յեռանդով լցվեց: Մինչ այդ,

Վարձնրանց պաշտել եր այն ժիւաքը, թե ինքն արդեն
ծմբացելու անպետք է, վոր արդեն պետք և կենսա-
թաշակի մասին մռածել—վերացել եր: Նա ժիայն ափ-
ապում եք, Վեհինչու իր յեղայր Սարուափելին ել
այնքան չապրեց, վոր այս որերը տեսներ, ևսու
մեռներւայ վզանորան:

— Ազգա ճայախաղ ջիւման *

— Այս ինքը մեղոր իվանիչն ել յերկար չապրեց:
— Ասծառաւան պետական թոշակառու յեր և մտածում
եր իր կյանքի վերջին մի քանի տարին անցկացնել
շրջագայություններով ու աշխարհ տեսնելով:

Բայց դեռ մոչ մի շրջագայություն չկատարած,
մի որ, մերը վայու և ջարգում մեղոր իվանիչը կաթ
տաքացնելու համար, հոգնած պառկում և թախտին
ու եկ չի կելում: Մյուս որը դրացիները յերկար ժա-
մանակ մլորոր իվանիչին չտեսնելով անհանգստանում
են ու նրան գրնում խաղաղ, հավիտյան քնի մեջ:


Պորպես Հոռատես մարդ; Ֆեղոր իվանիչը նա-
խպահու պատրաստել եր իր կտակը: Նա պատմիրել եր
խնարուածարկում ունեցած իր մոտ 3000 ոռորլին,
վոր պահել եր շրջագայությունների համար, այն ամե-
նոն ինչ կտանի իր բնակարանում ու այն 2000 ոռոր-
լին, վոր Պեղապը պետք և վճարի իր ժահվան դեպ-
ում ամբողջը հանձնել իրենց գլուղի դպրոցին, ուր
յերկար տարիներ վորպես ուսուցիչ աշխատել և ըստար-
սափելին:

Վայսպատ յորութ ում սամաց ընդանուանա՞ւ ու Ա
Ֆյորլոր իվանիչի պատաղի հետևեց վոչ նրա կի-
նըն եր գլում վոչ յերեխանները? Մպանիչ տիրու-
թա քաջ քաջ: Քմիչը բարձաւու աւ նույն անդոք ան-
ձն

Թյամբ Շնչում եյին մահվան քայլերդի ակկորդները :
Դագաղի առաջից յերկու աշակերտուհի ծաղիկներով
դարդարված սև շրջանակի մեջ տանում եյին իրենց
սիրելիի Ֆյոդոր Իվանիչի մեծադիր նկարը : Նրանք
ամուր սեղմակն եյին իրենց սիրելի ուսուցիչի նկարին,
ուսուցիչի, վորին ել յերբեք չեյին տեսնելու, վորի
կենսուրախ կատակներն ու հոգասար հայրական
խոսքերը ել չեյին լսելու :

Կնոջ և յերեխաների փոխարեն Ֆյոդոր Իվանիչի
դագաղի յետեկից մոլոր, գլխիկոր քայլում եյին հար-
յուրավոր աշակերտներ, ուսուցիչներ ու աշխատավոր
ներ, վորոնցից շատերը հազիվ եյին խեղզում իրենց
հեկեկանքը, վոր այնպես դուրս եր ժայթքում սիրելի
Ֆեոդոր Իվանիչի մահվան խորը կսկիծից :





ՅԵՐԿՐԱՐԱՆԻ ՀՈՒՅԶՁԵՐԸ



Կանքերը խոնավ, խավար, առեղծվածային աշ-
խարհ են: Նրանք ել իրենց կյանքն ունեն:

Դեռատի աղջկա ամին իր ձեռքի մեջ առած գուշա-
կի նման՝ յերկրաբանը նայում ե հանքի կնճիռներին:
Նա վորոշում ե նրա բազդի ուղին, փարոսի նման ուղ-
ղություն ե տալիս խավարը ճեղքող կարքիտե լույսե-
րին, ելեկտրականությանը, յերկաթին:

Յեկ արդեն մութ ու դաժան չեն հանքերը:

Շախտերով ելեկտրականությունը, տեխնիկան,
մարդը թափանցում եր յերկրի ընդերքը: Այսուղ գըր
կախառնվում են մարդու, վագոնեակաների, պերֆեր-
ատորների քրքիջը, հեռախց ժպտում են կարքիտե
լույսերը:

Կյանքն է ժպտում այնտեղ ու հախուռն թափով
արտիստ են մարդկանց սրտերը ստորյերկրյա խա-
վարում :

I

Անտառի սառըոտի այն հանքը, սակայն, վորտեղ
Ալետիքն եր աշխատում այդպես չեր: Վոչ մարդիկ ե-
յին ներս ու գուրս անում Ալետիքի հանքում, վոչ ել
յերկրի տակից զուրս յեկող ձիերն եյին լույս ու արև
տեսած բներկրանքով խրխնջում:

Հանքը հենց մուտքից ցեխուտ եր ու հեռվից ջրի
անախորժ խշող եր լսվում, վորը ծանր տպավորու-
թյուն եր թողնում ներս մտնողի վրա:

Հանքի խորքում ջրի աղմուկն ավելի յեր ուժեղա-
նում ու տարտուռ աղղելու չափ ճնշում մարդու, ծա-
նըրանում նրա հոգու վրա:

Հեղեղված հանքը ավերակի նման ծանր տպավո-
րություն և թշղնում:

Դեմք միայն խավար տարածություն և ու ջրի
անախորժ աղմուկը:

Հանքույիներում չեն յերեսում ողեադի հանքի
մուտքն աճապարզ կարրիտե կապտապատճեն լույսերը,
նրանց չի ուղեկցում վաղոնետների հաճելի բրեիջը:

Մութ և, խոնավ ու ամայի:

Ջրի առատ հօսանքը շառաչելով թափմում և վե-
րից ու մեծ առու կազմում: Հենց հեղեղատի տակ
բրեզենտե հազուատներով, յերկարավիզ ոմախնե կո-
չիկներ հաղած Ալետիքն իր յերկու ընկերների հետ
բրիչով ժայռի մեջ անցքեր եր բացում: Նրանք արդեն

ամբողջովին՝ թրջվել ելին, բայց աշխատանքը չելին
թողնում:

— Դնանք քիչ չորանանք, — դարձավ նրանց Ավե-
տիչը:

Մուրճի վերջին զարկի արձագանքը պապանձվեց
ջրով լցված հանքախորշերում: Զրի միապազաղ առ-
մուկին ավելացան ցեխի միջից դժվարությամբ դուրս
յեկող վոտնաձայները:

Դրսում, հանքի մուաքի մոտ բոցկլսում եր խա-
րույիշը: Արդեն յերեկո յեր: Նրանք հանեցին չորերը,
փուցեցին ու իրենք ել պառկեցին կրակի մոտ:

— Տղերք, ձեր խելքն ի՞նչ ա կտրում ես գոր-
ծից, — լուրջունն ընդհատեց Ավետիքն ու Հայացքն
ուղղեց կրակին փայտ բարձող իր ընկերներին:

Նրանք խնամքով չորացնում ելին հազուստներն
ու դժվարանալով պատասխանել Ավետիքի հարցին,
լուռ ելին: Նրանց լուրջունը սակայն չեր նշանակում,
թե այդ հարցը չեր հետաքրքրում նրանց կամ անակըն-
կալ եր իրենց համար: Ծնողհակառակն, նրանցից յու-
րաքանչյուրը շատ եր մտատացել այդ խնդրի շուրջը,
բայց վերջնական յեղրակացության չեր յեկել: Ավե-
տիքի ընկերներին անակնկալի բերեց այն, վոր նրան-
ցից յուրաքանչյուրն այդ խնդրի մասին մտածելով,
չեր փոքրձել իր մտորումներին հաղորդակից դարձնել
ընկերոջը:

— Ֆրանցուայների աչքից մի կորեկն նև չեր փախ-
չի: Հիմա յես չեմ հառկանում, թե են գործից, վոր
նրանք ոլուխ չհանեցին ու կիսատ թողին, մեր ես ին-
ձեներն ի՞նչի յա զոր տալիս—ես մտաին իսկի մտածել

Ե՞ք, — հարցրեց Ավետիքն ու կասկածից տանջվող մարդու հայացքով նայեց ընկերներին:

Նրանց աչքերում Ավետիքը հավանություն կարդաց:

— Ախր գոնե մի նշան յերեար — հենց չարչարմում ենք, Մաթվեյն ել մի բան չի մտածում, — նկատեց նրանցից մեկը:

— Մաթվեյը մտածի՞... արհամարանքով ասաց Ավետիքը, — ի՞նչի, դու չես տեսնում, վոր Մաթվեյն ինժեների պոչն աղառել: Նա ել չի մտածում թե ի՞նչ ա անում, հանքն ել ձեռից դնում ա: Մի իվանով ել կար, եսենց անպետք տեղեր փորեց — փորեց ու հաստատեց, թե մեր հանքն անպետք ա, վակել ավեց: Հիմի յես նորից գրանից եմ վախում, Մաթվեյն ել ով դիակի ուզում ա մի լավ պաշտոն ձեռք գցի ու աչքերը փակել ա:

Հուզմունքից այրվում եյին Ավետիքի այտերը: Նա վրդովմունքից ել խոսել չկարողանալով լռեց ու հենված արմունկին խորասուզվեց մտքերի մեջ:

— Ավետիք, իդուր ես եղանակ խոսում, — դու լավ գիտես, վոր Մաթվեյն ես հանքերում ա մեծացել ու քեղանից ել, ինձանից ել շատ ա մտածում հանքի մասին: Ձե ախափեր, իմ խելքն ել ես հանքից բան չի կարում, բայց Մաթվեյի վրա եղ տեսակ կասկած տանել չեմ կարող:

Ավետիքի համբերությունը հատավ:

— Դու դեռ կաթը թերնիդ կոմսոմոլ ես, դու սում կաց: Երկու որ չկա հանք ես մտել ու դլխիդ զոռ ես տալիս փոխանակ աչքերդ չորս արած շուրջդ նա-

յելու։ Հանքերը մութ են, ախաղերս. պետք ա աչքերը լին բացես, թե չե տեսար իվանովն ի՞նչ արեց։ Յես ես հանքերում շատ եմ աշխատել։ Ամեն զարոյում իմ քրտինքը թափվել ա, քարի թողն ու գինամիտի ծուխը քթիցս դուրս չի յեկել։ Յես գիտեմ ի՞նչ կա, վոր խոսում եմ։

— Բայց ի՞նչ հիմք ունեն ինժեների վրա կասկածելու։ — Նա ազնիվ մարդ ա։

— Ազնիվ մարդ ա . . . զե պարզ ա, թշնամին ազնիվ պիտի յերևա, վոր կասկած չանես։ Հենց վերցըրու են իվանովին։ Քաղցր մարդ եր չա՛տ, իսկի մեկնս չեր ասի, թե աչքիդ վլ բնը ունք կա. բայց տես, թե ինչ արեց։ Յես լավ գիտեմ, թե մեր հանքերում վորտեղ ջուհար կա և վորտեղ տարիներով ել վորեսմի մսխալ բան ձեռքդ չի ընկնի։ Եղ Խվանովը զոռը զցեց հենց են հանքերի վրա— վորտեղ ջուհար չկար։ Հիմի ախաղեր ջան, վոնց վոր տեսնում եմ ու յել նրա գիծն ա տանում։

— Զե, Ասլետիք, ճիշտ ա, հանքի դործը դժվար ու մութ դործ ա, բայց յես եղ կասկածը չունեմ, մանավանդ, վոր Մաթվեյը կա. Նա հինգ մատի պես դիտի մեր հանքն ու ինժեներից ել պակաս չի հասկանում ես դործը։

— Եւ Յերվանդ, ի՞նչ ասեմ քեզ, ջահել ես։ Բայց իմ աչքը շատ ե վախեցել։ Դու լսել ե՞ս, թե Ռուսաստանում ինժեներները հանքերում ի՞նչ են արել։ Ճիշտ ա մեր սպեցներն են, պետք ա նրանց, ովտադրենք, բայց պետք ա զգույշ կենանք։ Եղ ինտելիգենտ դասակարգը վտանգավոր ա. զեռ ընկեր Լե-

Նինև ա ասել, վոր դրանցից պետք ա մուզայիլ
մնալ:

Մինչ նրանք խոսքով տարվել եյին, նրանց գլխի
վերեւ կանգնել եր կեռ քնով, յերկարահասակ Տի
մարդ, վոր իր թանձր աչքերով վերից նրանց եր նա-
յում:

— Տղերք շատ ե՞ք թրջվել, — դարձավ նա Ա-
վետիքին ու առանց պատմասխանի սպասելու շարու-
նակեց, — վաստ տեղում եք, մի քիչ ել վոր առաջ
անցնեք—գործներդ կհեշտանա: Քանի՞ շպուր եք
խինել:

— Վեցը:

— Խորն ե՞ն:

— Չե գեռ:

— Դե, մի մետրի հասցրեք ու գնացեք տուն—ե-
սոր շատ եք չարչաբմել, մութն ել արդեն ընկնում
ա:

Նա ուղում եր հեռանալ, յերբ Ավետիքն անհո-
մարձակ զարձալ նրան.

— Ուստա՞ի, չի լի՞նի ես զաբոյը թողնենք...

Հանդիմանական հայացքով Մաթվեյը վոտքից
գլուխ չափեց Ավետիքին ու վճռաբար հարեց՝

— Չե, եղակես բան չի լինի: Մեր հանքի բախտն
եստեղից պիտի բացվի: Ետպես բաներ մի մտածիր,
հաղիս ենք հանքի գործը քիչ ուղղել: Ել եղ տեսակ
խոռք լլինի: մենակ աշխատեցեք ես հեղեղված տե-
ղից շուտ անցնել: Դե, հայդե, մթնում ա, սկսեցեք
գործը:

Նրանք միասին հանք մտան: Մաթվեյը դիմեց

հանքը, մանրազնին նայեց փորվածքից դուքս յեկած փոշուն ու ասաց՝

— Զուհարը մոտ ա, լավ աշխատեցեք:

Հանքի մուտքի կողմից լալկան բայաթու հեկեկանք լովեց, վորը ջրերի չփշփոցին խառնվելով, ասես կործանվող բեկորների խոլական արձագանք լիներ: Նրանք առանց խոսելու տեղերում քարացած լուռ ունկնդրում եյին մոտեցող յերդչին: Յերբ Սաֆարը յերգում ե՝ բոլորը պիտի լուն: Ամեն ինչ պետք է պապանձվի նրա շուշն ու հիպնոսվածի հման ոշտըրկորեն հնազանդվի նրա լալկան բայաթու յելեվեցներին: Այդ կարծես ամայացած հանքի յերդը լիներ, վորը լցվում եր ջրով և վորի հավիտենական խավարում ավանդությամբ չար վոգիներն են միայն իշխում: Նրանց չի անհնդատացնում անգամ դինամիտի ստորյերկըյա ահռելի վորուաը:

Սաֆարի ձայնը մոտենում եր: Ու վորքան մոտենում եր նա, այնքան խլանում եր հեղեղատի ձայնը: Վորդ հանքն արձագանքում եր նրա յերդին, վոր սկսվում եր լալկան յելևշներով ու գնալով հըղուանում եր: Այդ յերդի մեջ հնչում եր հանքը պարթեցնողի հավատքը գեղի իր գործի հաղթանակը: Սաֆարը յերբ նկատեց Մաթվեյին, ամոթիած բարեեց ու քիչ հեռու ցած գնելով դինամիտի տոպրակը մոտեցավ նրանց:

— Սադ ոլ Սաֆար, սադ ոլ, քո բայաթին ել վոր լինի, մենք կկոտորվենք ես հանքերում,— ասաց Դիմիտրին ու ամելացրեց.

— Սաֆար ջան, աղերքը հենց վոր վերջացնեն.

կապայթեցնես : Պատրոնները լավ դիր՝ ի զուր պատրոն չփչանա — կարդադրեց Մաթվեյն ու դուրս յեկավ հանքից :

2.

Շամիղը բանվորական ավանից իշնում և ձորն, ուր վշշում և քարափից ընկնող վտակը : Այդտեղից արահետը բարձրանում և, ապա գոտու նման փաթաթվում լեռան մեջքին և ուղղակի մտնում դլխավոր հանքը : Այդ արահետով կարբիտե լամպը ձեռքին դնում եր հանքերի յերիտասարդ յերկրաբանը : Նա մտազրադ եր : Արդեն յեկել եր յերկար ու տանջալից աշխատանքի պսակման բոպեն :

Յերկու տարի նա շրջապատմած մի խումբ հին բանվորներով ու յերիտասարդ ենտուզիաստներով՝ անօրինակ ջանքեր եր գործ դրել ապացուցելու, վոր այդ հանքերի դլխավոր հարստությունները դեռ մընում են : Իր արած հաշխիներն ու արմաստի փորման տվյալները ցույց ենին տալիս, վոր հանքը պղնձի խոշոր պաշարներ ունի : Դրանում սակայն պետք և համոզել բանվորներին, պետք և համոզել վարչությանը :

Ու հիմա ինչպես միշտ, նա չկարողանալով համրերել ու սպասել մինչ առավոտյան պարզվի որվա աշխատանքի արդյունքը՝ պայթեցումից անմիջապես հետո նա դնում եր տեսնելու, թե հանքային ինչ չերտերի յեն հասել : Բոլոր հանքախորշերը ըրջելուց հետո նա անցավ և Ավետիքի հանքը :

Դիմամիտը վեց տեղից պայթելով ահազին դանդամած եր դուրս փորել, վորի մեջ հատ ու կենտ

փայլում եյին ծծմբահրաքարերի մանր կտորները։
Այդ նշան եր, վոր մոտենում ե պղնձի շերտը։ Նա մի
քանի կտոր քար վերցրեց ու դուրս յեկայլ հանքից։
Դիշերպա խավարում փայլում եյին բանվորական ա-
վանի լույսերն ու միայն մոտակա ջրվեժի վշշոցն եր
լոյնում։ Այդ յերեկո նա բանվորների առաջ պետք ե
գեկուցեր և աման բարձրանալով առւն չմտայ, այլ
դնաց ուղղակի ակումբը։

Ակումբի դահլիճը բոնել եր մախորկայի ու կար-
րիտի բուրմունքը։ Յերկար նստարանների վրա խառն
ու անկանոն տեղ գրաված հանքափորները իրար հետ
զրուցում եյին, վիճաբանում, վոմանք լամպերի ա-
զուս լույսի տակ թերթ եյին կարդում, իսկ աշմաս-
տով փորողները բոլորը յերխասարդ, կոմյերի-
տական տղաներ մի կողմ համաքված Բուդյոննու
մարշն եյին յերդում։

Մաթվեյը, Յերվանդը, կուսակցական կոմիտե-
ի քարտուղարն ու մի քանի այլ հանքագործներ սե-
ղանի շուրջը համաքված առաջարկներ եյին մշա-
կում։

Յերկրաբանը դահլիճը լիքը տեսնելով բարձր
արամադրությամբ միացավ ալմաղիկներին ու խմբի
մեջ սկսեց լսվել նրա դուրեկան բասը։

Ուժեղացող յերգին վորագես պատասխան հանք-
կոմի նախագահը սկսեց. ջղաճղորեն վոլորել զանգի
կոճակը։ Յերգիչները լուեցին ու տեղ գրավեցին նըս-
տարանների վրա։

— Սկսե՞նք Սիդոր Խվանիչ, — գարճավ յերկրա-
բանին կոմիտեյի քարտուղար Պետրոսը։

— Սկսենք, առանց այն ել ուշ ե:

Հանքային կոմիտեյի նախագահ՝ Կուլուխովը սա
մի հանքագործ, կես հայերեն, կես ռուսերեն,
թուրքերեն, հունարեն ու վրացերեն ժողովականե-
րին հասկացրեց, վոր զեկուցելու յև յերկրաբան ընկ-
նիդորը և ասելու յե, թե ինչ պիտի արմի հանքե-
րում: Յեվ առանց յերկարացնելու ձայն տվեց յերկ-
բարանին:

Սիղոր Խվանիչը մինչ այդ գրատախոտակին ու
ոլատերին վակցը եւ եր մի շարք գծադրեր ու քար-
տեղներ:

Ժողովականների ուշադրությունը մի գծադրից
մյուսի վրա հրավիրելով Սիղոր Խվանիչը նրանց
ցույց եր տալիս հանքի յենթագրյալ հարստություն-
ները: Ահա մի սև կետ: Այդ Ավետիքի հանքն ե:
Դրանից վոչ այնքան հեռու լճի նման կարմիր թանա-
քի ընդարձակ բիծ կա քարտեղի վրա— այդ հանքի
ամենախոշոր շառկներից ե, վոր հարյուր հազարա-
վոր տոններով բարձրորակ ու պղնձառատ հանքաքար
ունի: Դրանից այն կողմ դեպի վերի հորիզոնները
ցրված են ավելի մասն կետեր, վոր արշխալելագի նր-
ման տարածվում են քարտեղի վրա:

— Մեր հարստություններն ակներեւ են,— յեղ-
քափակեց իր խոսքը Սիղոր Խվանիչը,— բայց պետք
ե ասել, վոր այս բոլորը, վոր ցույց են արված քար-
տեղում՝ դեռ պատրաստի հանքաքար չեն: Հարկա-
վոր ե հազարավոր մետրերի հետազոտություն կա-
տարել, բայց մենք վայստիորիկի նման միայն

Հանգստառում ենք հանքախորշերը և գործն առաջ չեղում։

— Ի՞նչ պետք եւ անել։

Մենք այլես հանքափորման պապենական յեղանակներով բավարարվել չենք կարող։ Անհրաժեշտ է արագ ժեխանիզացիայի յենթարկել հանքերը, — պետք է մեխանիկական փորման անցնել, անհրաժեշտ է ուժեղ կոմպրեսորներ դնել հանքում։ Այդ պիտի դյուժուրերել հանքերն ելեկտրոֆիկացիայի յենթարկելով։ Հենց վոր ելեկտրական եներգիան մեզ հասավ — մենք կոկանք ելեկտրական փորիչներով աշխատել մինչև կոմպրեսորներ դրվեն։

— Այդ դժվար ու լուրջ աշխատանք եւ։ Թե մեր մեջ, թւ կոմրինատում կլինեն մարդիկ, վորոնք դեմ կլինեն դրան, կասեն, վոր դես հնարավորություններ չկան այդ քայլերն անելու։ Մեր հանքերի կազմակերպությունները, վոր արդեն ողի պես դպում են դրա անհրաժեշտությունը, — յես համոզված եմ, բոլոր միջոցները ձեսք կառնեն, վորապեսդի հանքերի մեխանիզացիան ամեն կերպ արագացվի։

Նա վերջացնելով իր զեկուցումը նստեց Ավետիքի մոտ, վորը մտազրադ կծկվել, եր առաջին նստարանին։

Զայն վերցրեց կուս։ կոմիտեյի քարտուղար Գետրոսը։ Նա յերկար տարիներ հանքափոր եր յեղել այդ հանքում։ Այն հանքուղին, վորով հռնդալով անցնում եյին վագոննետները, նա բացել եր բրիչով ու դինամիտով։ Ահա թե ինչու նա ամենից լավ ու ամենից պարզ՝ եր ըմբռնում ելեկտրականության ան-

Հրաժեշտությունը : Նա գիտեր, վոր ելեկտրական լարերն ու ոգտակար խողովակները հանքի յերակներն են, վոր հանքերն ելեկտրական արյան ծարավի յեն, վոր նրանց կյանք կտան յերկաթն ու ելեկտրականությունը :

—Մեխանիզացիան ողի պես մեզ անհրաժեշտ է, ընկերներ, —ակսեց նա իր խոսքը : Առանց մեխանիզացիայի մեր հանքերն առաջ դնալ չեն կարող : Յես կարծում եմ վիճարաննելու կարիք չկամուի շախտյոր չի լինի, վոր գա լավ չհասկանա : Պարզ է, վոր առաջին հերթին ունեք և մտածել ելեկտրականություն անցկացնելու մասին :

Գետրոսից հետո խոսք վերցրին Մաթվեյը, հանքի տեխնիկներից ու տանապետներից մի քանիսը, խոսեցին ալմաստով փորող յերիստասարդները : Նըրանք բոլորը հավանություն տալով յերկրաբանի առաջարկներին, խոստանում եյին ամեն կերպ ողնել դորձին :

Արդեն ժողովը մոտենում եր իր վախճանին, յերբ ձայն խնդրեց Ամետիքը :

— Ընկերներ, Գետրոսը հավանություն ավեց ինժեների ասածներին : Յես ել պարզ ե, վոր եզ տեսակ ծրագրին դեմ չեմ կարող լինել, մանավանդ վոր կյանք անց եմ կացրել մեր ես հանքերում :

Յես սրտով կողմնակից եմ եղ ծրագրին : Հին շախտյորի ուղածն ել են ա, վոր աշխատանքը թեթևանայերկրի տակ : Եստեղ ընկեր ինժեները պատմեց մեր հանքերի մասին, խոսեց և են տեղի մասին, վորտեղ յես եմ աշխատում : Եղ չերտյոժներն ել ճիշտն ասած

յես առաջին անգամն եմ տեսնում ու խելքու ել զբանից
բան չկ կարում :

— Բայց ընկեր ինժեներն ել ասաց, վոր դեռ շատ
բան կառկածի տակ ա ու կարող ա, վոր իսկի ջուր-
հար դուրս ել չզա : Քանի վոր վործը եղապես ա, յես
կարծում եմ, վոր մենք եստեղ չենք կարող վորոշում
հանել, թէ անպատճառ պետք ա մեր հանքերին մեխա-
նիկացիա տաք : Իսկ յեթե մեխանիկացիան տվյան ու
հետո ջուհար չելավ, ո՞վ պետք ե եղ միասարարու-
թյան պատասխանը տա : Մենք կրերենք եստեղ միլի-
ոնների գլխին քար կզցենք ու աշխարհի առաջ խայ-
տառակ դուրս կդանք :

— Եես ասում եմ, քանի դեռ մեր հանքերի պատ-
կերը լրիմ մեզ պարզ չի, յեկեք ձեռքով սալելի հար-
վածային աշխատենք, ուժերս չխնայենք, հենց վոր
բոլորին ել պարզ կլի, վոր ջուհար կա, արգեն մեխա-
նիկմի մասին կմտածենք... վերջացրեց Ավետիքն ու
հոտեց տեղը :

— Մի ձայն, մի ձայն...

— Ասկյարին ձայն տվեք, — կանչեցին այս ու այն
կողմից :

— Ընկերներ, — դողդոջույն ձայնով սկսեց Ասկյա-
րը, — ընկերներ, յես զարմացա, վոր ընկեր Ավետիքը
ևս տեսակ խոսքեր ասում ա: Ո՞վ ասեց, վոր ջուհար
չկա: Եղ սուս ա, եղ դուշմանի խոսք ա, դա իվանո-
վի խոսք ա: Ընկերներ Սիդորը շատ դուզ ասում ա—
ջուհար կա, համա մեխանիկմ պետք ա: Մենք աշմաղ-
նի ստանոկներով փորում ենք և նշանը լավ ա դուրս
դալիս: Հանքի բոլոր կոնին ալմաս խփել ենք՝ ամեն

տեղ ել ջուհար պատահել առ Հիմա պետք առ եղ ջուհարը հանենք ուղարկենք զավոդ։ Զավոդը ջուհար ուրաց ընկեր Ավետիք մալատոկավ հա չարչարփում ա, չարչարփում ու որը մի մետր չի կարում պրախողկատա, իսկ յեթե պրեֆերատոր կա—գործը լավ առաջ պնում ա։ Յես առաջարկում եմ, վոր ճիշտ ա ընկեր Սեղորի պրեղաժենին և ալմազնիկների կողմից խոստանում եմ ընկեր Պետրոսին, վոր մենք չատ կողնենք և միշտ պատրաստ ենք եղ աշխատանքի համար։

Ասկյարը վերջացրեց։ Նրան վորոտալից ծափահարեցին։ Ավետիքը մնացել եր գլխիկոր նստած։ Նրա մեջ պայքարում եյին յերկու ուժ, —մեկը նրա բուռներկրանքն եր հանգերի վաղվան որվա համար, վոր նրան ասում եր՝ «Չուտ, միացիր քո մյուս ընկերներին, միացիր Մաթելեյին ու Պետրոսին, ամաչիր կոմսոմոլիստ Ասկյարից»։ իսկ մյուս կողմից նրա սիրտը կրծում եր խուլ կատկածը դեպի «ինտելիգենտ դասակարգը»։ Ու գլխիկոր, անորոշ վիճակում Ավետիքը չգիտեր իր ինչ անելը։ Նա չեր կարողանում կողմնվորուցիւլ։

Ժողովն անվերապահորեն ընդունեց յերկրաբանի առաջադրանքներն ու վորոշեց ամենադորժոն ողնություն ցույց տալ հանքի ելեկտրոֆիկացիային։

Դուրսը ցուրտ աշնանային գիշեր եր։

Սիդորը հոգեկան մեծ բավականությամբ ակումբի շենքի առաջ կանգնած նայում եր լեռների ու սիլուետների մեջ պլազմոդ փոքրիկ հունական գյուղի լույսերին ու ունկնդրում եր հեռացող յերիտառարդների դվարք յերդին։

Նա արդեն տեսնում եր սարի գալաթը բարձրացող
էլեկտրոլարերի բարձր սյուները, արանսֆորմատորի
շենքը։ Նրա ուղեղում տասնյակ ուղղություններով
ձգվում եյին ոճապտույտ հանքուղիներն ու ամուր բա-
րախում եր նրա սիրտը, անհուն հրճիում եր յերկրա-
րանի խուզարկու հոգին։

Դիշերը թագավորում եր հանքերի վրա։

3

— Դա, Սիլոր Իվանիչ, —լոռությունն ընդհատեց
Ստեփան Նիկիտիչն ու պենսնեյի վրայից հայացքն ուղ-
ղեց նրա կողմը։

Այդ հայացքը շատ չոր եր։

Ստեփան Նիկիտիչը թեև ճղնում եր բարեկամա-
կան խորհրդատույի դերում յերեալ, բայց նրա կեռ
քեթը, չորացած, դուրս ցցված այտերը, յերկար ծը-
նոտը դուրս թափած ատամներով մատնում եյին նրա
չար ու անբարիշտ վոդին։

Սիլորը մտադրադ, առանց գլուխը բարձրացնելու,
խորասուղված իր մտքերի մեջ քայլում եր նոր յեկած
ձյան հաստ շերտի վրայով, վոր ճռճռում եր նրանց
վոտքի տակ։ Հանքերից վեր տանող զառիվերով նրանք
բարձրանում եյին դեպի բանվորական ավանը։

Ստեփան Նիկիտիչը տեսնելով, վոր Սեղորը խու-
սափում ե պատասխանել իր ակնարկներին, փորձեց
ուղղակի խոսել նրա հետ։

— Դուք շատ ոխնկով դործ եք բանել Սեղոր Իվա-
նիչ։ Յես ցանկանում եմ ձեզ հետ ավելի անկեղծ լինել.
յես դիտեմ, վոր դուք յերկտասարդ յերկրաբան եք։

ուզում եք ստեղծագործել, փորձել ձեր ուժերը։ Բայց
զգույշ, զգույշ յեղբայր, հիմա այդպիսի ժամանակներ
չեն։

Նա մի պահ լռեց, ապա ավելի մոտենալով Սիդո-
րին ու ավելի իջեցնելով ձայնը շարունակեց։

— Եես քիչ թե շատ հին աշխատող եմ, մաղերիս
շափ անախորժություններ են պատահել աշխատանքի
ընթացքում։ Դրանք հանքային գործում անխուսափելի
յեն, բայց քո ոիսկը յեղբայր մեծ ու պատասխանատու
ոիսկ ե։

Քամու ուժեղ հոսանքը ծյան մանրուքը գետնից
բերում ու խփում եր նրանց յերեսին։ Ստեփան Նի-
կիտիչը շալով ծածկելով դեմքը դարձավ Սիդորին։

— Դուք համարձակ կերպով առաջ եք ընթանում
դեպի հյուսիս։ Մենք ահա հանքից ենք դալիս, — ահա-
պին մետրաժ ենք արել, սակայն կրաքացի շերտերով եք
անցնում։ Այդ ուղղությամբ ծակել եք յերկու տեղից և
կազի շերտերի յեք հանդիպել, իսկ դուք այդ բոլորը
հաշվի չառնելով՝ առաջ եք զնում։

Սիդորն անհագ ներս եր քաշում ծխամուրճի ծուխն
ու թեև լուռ ունկնդրում եր Ստեփան Նիկիտիչին, բայց
վոչինչ չեր հասկանում ու լուռ շարունակում եր քայ-
լիլ։

— Հետո, այդ նոր սիստեմը, վորին փորձում եք
անցնել, — նորից շարունակեց Ստեփան Նիկիտիչը, —
ախր դա Ամերկայի գործ ե, խորհրդային յերկրում
դեռ նոր են այդպիսի փորձեր արվում, այն ել դեռ
տեսնենք ինչով կմերժանան, իսկ դուք ուղում եք հենց
միանգամից . . . միանգամից ուզում եք Ամերիկա

Հայտնապործել այս կորած հանքերում, — արդեն վրբ-
դովիած ավելացրեց Ստեփան Նիկիտիչը, — տարորի-
նակ և, շատ տարորինակ, յես զոչինչ չեմ հասկա-
նում . . .

Սիդորն անվրդով առաջ եր գնում: Նրա միտքը
պրաղված եր բոլորովին այլ խնդիրներով, վորոնցից
մի քանի որ եր ինչ նա վոչ մի կերպ բաժանվել չեր
կարողանում:

Նրանք մտնելով ավան մոտեցան մի հարկանի
շենքի: Ստեփան Նիկիտիչը ծուց ճանապարհ:

— Բարի գիշեր:

— Գիշեր բարի:

Ստեփան Նիկիտիչը մոտեցավ ցանկապատին, ճոնչ-
յունով քաշեց դուռը, բայց նորից թողեց ու ձայնեց:

— Սիդոր Խվանիչ, մի վայրկյան:

Սիդորը կանդնեց: Ստեփան Նիկիտիչը մոտեցավ
նրան, հաղաց, շինց մատներն ու հաղիսլ լսելի ձայնով
շշնջաց:

— Զնեղանաք Սիդոր Խվանիչ: Զկարծեք թե յես
կասկածի տակ եմ առնում ձեր յերկրաբանական պատ-
րաստությունը: Ամենեին մոչէ, քայլ լիցի: Ընդհակա-
ռակն, ինձ հիացնում են ձեր ընդունակությունները:
Այս բոլորը յես ձեղ ասացի իրրեւ իմ լավաղույն լա-
րեկամի: Դիտեք ի՞նչ կա . . . յես ուղղակի կառեմ: —
Դուք մի մոռացեք, վոր անկուսակցական մասնազետ
եք և աշխատում եք հանքերում: Հանքերը հանելուկ
են, — փորում ես խավարում ու հաստատ չգիտես, թե
մի մետք այն կողմ ինչի կհանդիպես, իսկ ամեն մի

կոմյերիուականի թեթև կասկածանքը բավական է, վոր ձեր համարձակության համար վնասարարի անուն վաստակեք...

Սիդոր Խմանիչը, վոր մինչ այդ անխռով ու ստուարյուն լսում եր Ստեփան Նիկիտիչին, վարկյանաբար փոխվեց ու սուր, ապշած հայացքով նայեց Ստեփան Նիկիտիչին։ Ստեփան Նիկիտիչը կծկվել եր կիսամուշտակի մեջ։ նա հանկարծակի յեկած կիսատ թողեց խոսքն ու հետո կցկոտուր ավելացրեց։

— Ներողություն յես միայն այսքանը... Բարի զիշեր — տսաց ու տունց պատասխանի սովասելու, հաղիվ քաշ տալով։ Եր թաղիքն կոչիներն անհետացավ ցանկապատի հետեւում։

Սիդորին ցնցեց այս դեպքը, սակայն նա չըկարողացավ կենուրոնանալ նրա վրա։ Ամրող որը մինչեվ կես դիշեր հանքերում անցկացնելով, նա անհամբեր եր, թե յերբ կհասնի տուն, ինչպիս կըհանդիպի Սուսաննային, վորն այդ որը ողետք ե վերդարձած լիներ Լենինգրադից։ Անհուն կարոտով եր լցվել նա դեպի Սուսաննան, բայց միաժամանակ վախենում եր նրան հանդիպել։ կարծես բողոքի մարմնացումն եր նրան համար Սուսաննան ու այդ սարսափեցնում եր նրան, ալեկոծում եր նրա հոգին։ Ու կանգնած պատշգամբում ինքն ել չգիտեր, թե ինչու յե ձգձգում ներս մտնելը։

Զյունախառն քամին հարձակվում եր տան մոտից անցնող ելեկտրալարերի վրա ու տաղտում, սարսունցուցիչ սուլոց առաջացնում դիշերվա այդ պահին։ Մոտակա տաղավարում ոիթմիկ աշխատում

եր ալմաստի մեքենան, դյուղից լավում եր չների կաղկանձն ու վոռնոցը:

Սիդորը կոթնած պատշպամբի սյունին հիացմունքով ունկնդրում եր ձմռան այդ խրախճանքին: Զյունախառն քամին, վոր աստիճանաբար բքի յեր վերածվում, շատ մոտ եր նրա սրտին ու բերկանք եր տուաջացնում նրա մեջ, ինչպես մըրիկը՝ մըրկահալի հողում: Նրա վողին այդ պահին ճախրում եր Ռերալի ու Սիրիրի լեռների ու մայրու անտառների վրա: Ահա կարաբաշը, կալաթան, ահա Լենայի վոսկեհանքը, վորտեղ ամեն քարի խփել ե նա իր մուրճն ու աճել ե վորպես հետախույզ—յերկրաբան: Ու այդ պահին, յերբ ձմեռ եր ու սառնամանիք, նրանք Սուսաննայի հետ միասին դահուկներով կտրում անցնում եյին ձյունապատ անսահման տարածություններ:

— Սիդոր, կզաս, մի որ գնանք հեռու, շատ հեռու, — գարճավ նրան մի անդամ դահուկով շըրջելիս Սուսաննան ու նրա յերկնադույն աչքերում վառվում եր անհուն մի տենչանք:

— Կղամ, բայց յեթե մեղ ուտեն գայլերը...

— Վոչինչ — միասին կլինենք: Թող մեղ յերկուսիս միասին ուտեն գայլերը— այնպես չե՞ Սիդոր...

Լարերին փաթաթվաղ գաղաղած քամու սուլոցը կարծես մայրու ճյուղերը ջարդող քամու սուլոցը լիներ ու կարծես նրա ականջին տարիների խորքից հնչում եր Սուսաննայի ձայնը այնքան քաղցր ու մտերիմ, այնքան թանկադին ու անձկալի: Կարծես

ահա, նրա առաջ կանգնած են ձյունի հաստ շերտից
խոնարհված մայրու կանաչ ճյուղերն ու նրանց ծայ-
րերից կախվել են սառցե գեղեցիկ ծորակները, վոր
բոլոր գույներով փայլմիլում են ձմռան արևի թույլ
ճառաքայթների տակ:

Բայց և այնպես նա վախենում ե ներս մտնել,
նա չի կարող շիտակ նայել Սուսաննայի աչքերին,
չի կարող դիմանալ նրա հայացքին: Սիդորը վախե-
նում եր նրան հանդիպելուց: Քամու սառը հոսանքը
սթափեցրեց Սիդորին, նա կարբիտե լամպը թողեց
պատուհանում ու մտավ սենյակ: Ներսը մաքուր եր,
ամեն ինչ խնամքով հավաքած, սեղանին պատրաստ
դրված եյին թեյի պարագաները, բայց Սուսաննան
չկար: Սիդորը դվիսարկը նետեց հանքաքարի եքսու-
նատներով լեցուն պատուհանը, նստեց սեղանին ու
ինչ անելը չգիտեր: «Յերեկ սպասել, սպասել քնել
ե» մտածեց Սիդորն ու չուզեց անհանդստացնել Սու-
սաննային. մի բաժակ թեյ խմեց, ծխեց ու ապա
բացեց ննջարանի դուռը: Սենյակը լուսավորված եր
աղոտ կապտավուն լույսով, բայց Սուսաննան չկար:
Փոքրիկ տուալետի սեղանի վրա նա նկատեց իրեն
հասցեյագրված մի ծրար: Նա անհամբեր բացեց ծր-
րարն ու մի չնչով կարդաց:—

— «Սիրելի, թանկագին Սիդոր, չգիտեմ թե ինձ
հետ ինչ ե կատարվում: Վերջին ժամանակներս յես
քեզ շատ ցավ պատճառեցի, բայց յես չեյի ցանկա-
նա քեզ ամենաչին չափով անգամ վշտացնել, վո-
րովիշնետե դու ինձ համար յեղել ես ամեն ինչ—ամե-
նամտերիմ մարդը, վորն ինձ սփոփել ու քաջալերել

և տիրության ու հուսահատության ժամերին։ Յեւ
միշտ քո բարեկամությունն ամեն բանից թանգ եմ
զնահատել, սակայն այս բոլորով հանդերձ, վեր-
ջերս այնպիսի դրություն և ստեղծվել, վոր կարծես
խոչոր վիճ և բացվել մեր մեջ, վորն արդեն վոչ մի
կերպ լցնել չի լինի։

Սիդոր, պետք և այս դրության մասին մտածել
լրջորեն, նրան նայել առանց սանտիմենտալության։
Եես զիտեմ, վոր դու ինձ շատ ես սիրում, վոր յես
զնահատելի ընկեր եմ քեզ համար։ Եես շատ թանգ
եմ զնահատել և այժմ ել զնահատում եմ քո այդ
դպացմունքները։ Բայց դարձյալ կրկնում եմ—պետք
և զգասա նայել իրերի դրությանը։

Դու ամբողջովին, բոլոր նյարդերով կպել ես քո
զործին։ Քեզ կլանել են հանքերը— դու ապրում ես
նրանց հեռանկարներով։ Դու աճում ես այստեղ,
քո յերկրաբանի խուզաբեկու վորին միշտ նոր վորո-
նումներ և անում։

Արդեն յերկրորդ ձմեռն ե, վոր մենք Ուրալից
հետո անց ենք կացնում այս հանքերում։ Այս յեր-
կու ձմեռ շատ բան արժեցան քեզ համար։ Դու ամ-
բողջովին թաղված ցեխի, սիւեմաների, պլանների,
արխիվային նյութերի մեջ քեզ համար մի նոր աշ-
խարհ ես ստեղծում, դու ապրում ես դրանով։ Քեզ-
նից կարբիտի հոտ և փշում և այդ խնկարկում և քո
հոգին։ Եես զգում եմ, վոր քեզ շատ դժվար ե պոկել
հանքերից, վոր այդ քո ուղին ե, վոր հանքերի խո-
ռոչները դարձել են քո թոքերը, վորոնցով շնչում ես
դու։

Իսկ յե՞ս, սիրելի Սիդոր:

Յես յերկրարան չեմ և այդ բոլորն ինձ չեն գը-
րավում: Յեվ յես տեսնում եմ, վոր այս յերկու տար-
վա մեջ միայն արջ եմ դառել, վոր կարծես իմ կյան-
քի իմաստը դարձել ե այն, վոր քեզ հետ լինեմ,
ապրենք միասին: Յես զգում եմ, վոր դու այդ մա-
սին մտածում ես: Ինձ համար շատ ծանր ե տեսնել,
թե ինչպես իմ առջեւ դու քեզ մի տեսակ հանցավոր
ես զգում:

Բայց մեղավոր ե՞ս զու:

Ամենեվին վոչ: Դու ամեն ինչ, ամեն ինչ արել
ես ինձ համար և վոչինչ չես ինայել: Բայց այնու-
հանդերձ յես վորոշեցի վերջ տալ այս բոլորին: Յես
արդեն տեսնում եմ, վոր այս բոլորից հետո յես մի-
այն կարող եմ խանդարել քեզ, վրդովել քո անդորրն
ու արդելակել քո ստեղծագործական աշխատանքը:
Ռւստի վորոշեցի լենինգրագում մնալ ու այլես չը-
զերադառնալ քեզ մոտ: Թե ինչ եմ անելու — զես
ինքս ել չգիտեմ: Սիրելի Սիդոր, այսպես վարվեցի վո-
րովհետեւ ինձ համար շատ դժվար եր քեզ տեսնել ու
հրաժեշտ տալ, ուստի ինդրում եմ ներիր ինձ:

Դեհ, Սիդոր ամուր կաց, մոռացիր իմ մասին,
մի մտածիր, պետք չի այդ, վորովհետեւ այլես քեզ
բացի խանդարելուց ու ավելորդ ցալ պատճառելուց
ուրիշ բանի պետք դալ չեյի կարող... Արդեն ա-
ռանց այն ել քեզ շատ ցալ եմ պատճառել:

Ել պետք չե շարունակել այս մղմագանջը:

Դեհ, վողջ յեղիր ու շարունակիր դործդ:

Մ ո ւ ս ա ն ն ա »:

Կարդաց Սիդորը շնչահեղձ յեղած ու քրտինքը
պատեց նրա վողջ մարմնին։ Նա ցեխոս շորերով ըն-
կավ Սուսաննայի մահճակալին ու տենդի մեջ
մրմնջում եր, — «իմ լավ Սուսաննա, յես կորցրի
քեզ... վերջացավ։ Միթե՞ դու ել չես դա, միթե՞
ել չեմ տեսնելու քեզ, միթե՞ ամեն ինչ վերջա-
ցավ...»

— Յես կդամ, կդամ քո հետեւից չեմ մնա
այստեղ, յես կդանեմ քեզ...

Մընջում եր նա ու գալարվում մահճակալի վրա։

4

Այս ծանր բաժանումը Սիդորին անկողին նետեց։
Նա արդեն վեց որ պառկած եր և ինքն ել չդիտեր,
թէ ի՞նչ ե կատարվում իր հետ։ Նա զգում եր, վոր
ինքը հիվանդ չե, վեր եր կենում, սակայն ուժ չու-
ներ քայլելու, ընկնում եր, պարապել չեր կարող ու
մտքերի հորձանքը մրւթ հանքերի խորքից յելնում
եր ու մինչեւ Նելլայի ափերը զարկում նրա հողնած
դանդին։

Ո՞ւր և Սուսաննան։ Ի՞նչ ե անում հիմա նա։
Կդա՞ արդյոք։ Կդա իհարկե։ Ինքն և մեղավոր, նրա
հետ վարվել չիմացավ, ամբողջովին մոռացության
տվեց նրան։ Սուսաննան շատ զգայուն աղջիկ ե, նա
իրեն շատ ե սիրում, հիմա նա յերեխ ցա-
վում ե իր համար... Ապա նրա առաջ ցցվում եր
Ստեփան Նիկիտիչի խիստ դեմքը ալենանեյի յետեւից,
նրա շալով ծածկած բարակ քիթն ու փսփսուկը։

— Շատ ոխկով բան եք բոնել... մնասարարի
անուն կվաստակեք...

— Ախ վախկուս կատու, խորամանկ, քսու...

— Սիդոր ջան ի՞նչ ե պատահել, հանդստացիր...
ունյակում կանգնած եր Մաթվեյը, վորի ներս մըտ-
նելը Սիդորը չեր նկատել. նա մոտեցավ մահճակալին,
նստեց Սիդորի մոտ ունրա ձեռքն առավ իրա ափի մեջ:

— Զահելություն ես անում Սիդոր. կին եր գը-
նաց, վաղն ելի կդա. շդա ել փառք ասուծո՞ւ աշխար-
հը լիքը կին ե. քեզ հայաքիր, շուտ լավացիր:

— Լավ եմ Մաթվեյ, այս նրանից ե, վոր վերջե-
րս շատ եյի հոգնել. Սուսաննայի բաժանվելն ել
աղղեց ի հարկեւ: Բայց դիտես ինչ, Մաթվեյ, իմ
խիզճն ինձ շատ ետանջում, յես մեղավոր եմ այս
գործում:

— Ի՞նչ մեղք ունես դու, յեղաս' յր, կինդ թո-
ղել զնացել ե, ել քո մեղքը վո՞րն ե: Ա՛խ, ուր եր,
թե իմ պառավին ել մի որ յելներ, անհետանհար. վեր-
ջերս ել գլուխա տանում ե դյուղի քանդվելու մասին:
Ասում ե այդ հանքերը, վոր բացեք՝ դյուղը փրփ-
լու յեւ:

— Գիտես ի՞նչ կա Մաթվեյ, յերբ յես նոր յե-
կա աշխատանքի, ավելի անփորձ եյի, այնքան ել
չեյին վստահում. հիշում եմ, յերբ յեկա ու դործի
պիտի անցնեյի, կոմքինատի հանքային բաժնում սե-
ղանի յետել նստած եր մի ճարագոտ, ոեր մարդ:
Նա մի քանի խոսք փոխանակելուց հետո, ինձ դար-
ձավ ու կես հեգնանքով, կես ցավակցությամբ ասաց՝

— Մանավանդ վոր ձեր կինն ել հիվանդ ե, յես
ձեզ խորհուրդ կտամ զնալ մեր յերկրորդ հանքը.
այնտեղ կլիման շատ լավ ե, հիանալի ամառանոց ե,

շտա աշխատանք ել չկա, այսպես վոր ձեր կինը կարճ
ժամանակում կառողջանաւ:

Հետազայում Սուսաննան թեև իրոք շատ լավա-
ցավ, բայց յես ուշ հասկացա, թե ի՞նչ եր նշանա-
կում այդ ամենը. այս հանքի վրա նրանք խաչ եյին
գրել և ինձ իրրե անփործ ու պատահական մարդու
ուղարկեցին այստեղ, մտածելով՝ յեթե բան գտա-
լավ, իսկ յեթե չե՛ վոչինչ չեն կորցնի:

Դեհ, ինքդ զիտես, Մաթվեյ, թե ինչպես գործի
կայանք: Գիշեր-ցերեկ յես հանքից դուրս չեյի գալիս,
տանն ել պլաններն ու սխեմաներն եյի զծում, խրվում
եյի արխիվի մեջ: Իսկ կի՞նս: Զե վոր այդ ամենը նը-
րան այլպես չեր հետաքրքրում. նա իմ մեջ պետք է
սփոփանք դտներ այս վայրի անտառներում, իսկ յես
այդ չհասկացա և այսպես տիտոր վերջացավ այդ ա-
մենը:

— Իսկապես ճիշտ ես ասում, Սիղոր. Սուսան-
նան մեղավոր չեր: Բայց վոչինչ, քեզ համար մի
նոր, լավ աղջիկ կճարենք: Կուզես զեղեցիկ հույն
աղջիկ ճարենք, բայց տես, ել եղ սխալը չկրկնես,—
կտակով նկատեց Մաթվեյը:

— Զե Մաթվեյ, եղ մեկը չի լինի: Յես այն
յեղակացության յեկա, վոր ընտանիքը յերկրաբանի
համար վարթամություն ե: Ինքդ արջ դարձիր լեռ-
ներում ու հանքերում և ուրիշներին քարշ մի տուր
այդ մենավոր ծերապերը:

— Զե Սիղոր, ճիշտ չես ասում: Ճիշտ վանակ
եւ լուս կյանք և պետք, նրան ել լազ կին եւ պետք:
— Եղաք կյանք և պետք, նրան ել լազ կին եւ պետք:

Այ, ելեկտրականությունը, վոր բերենք, մեր հանքըն ել քաղաք կդառնա. ել վոչվոք չի փախչի եստեղից: Մի տես ե՛, ձորում կրաբախեն կոմպրենորները, հանքախորչերը կղողան պերֆերատորի ճայնից, հանքերը կվողողվեն ելեկտրական լույսով, նոր բարձր շենքեր կշինենք, նոր մարդիկ, նոր ինժեներ ներ կդան:

Սիդորն ուրախացավ, վոր այդպես հեշտ խռակցության նյութը փոխվեց ու Մաթվեյի հետ նորից վողեռորչեց հանքի հետանկարներով:

— Ի՞նչ նորություն կա հանքերում Մաթվեյ: Վեց որ ե հանք չնմ մտել և կարծես կտրվել եմ աշխարհից:

— Նորություն, Սիդոր, այն ել ինչպիսի՛ նորություն, —ասաց Մաթվեյը ու գրպանից հանեց յերկու կտոր հանքաքար, —ահա թե ո՞ւր ենք հասել Ավետիքի հանքում եսոր պայթյունից հետո առաջին անգամ ստացվեց այս հանքանյութը:

Սեդորն ասես թերահավատ նայում եր հանքաքարի կտորներին. նրանց շուռ-մուռ եր տալիս իր ձեռքում, շոշափում եր, մանրազննին նայում նրանց մեջ յեղած կավելինի սև կտորներին, վորոնք վկայում եյին հանքաքարի բարձրորակ լինելը:

— Մաթվեյ, հանքանյութը կավելինախառն ե, այս հազվադեպ հաջողություն ե, յես այսպես շուտ հանքաքար չեյի սպասում, —ասաց նա ու զգացված փաթաթվեց Մաթվեյին. նրա աչքերում փայլում երին արցունքի կաթիլները:

— Սիդոր ջան, Փրանսիացիների կիսատ հանքի

Մյուս հանքախորշերում ել չպուրները սևանում են, շուտով, շուտով շտոկը մեր ձեռքին կլինի: Մենակ դու շուտ լավացիր, քեզ լավ պահիր:

— Շպուրները սևանում են... յես հենց վաղը հանք կղամ, դա հաղիաղեալ հաջողություն եր, Մաթվեյ, հասկանում ե՞ս: Արդեն ելեկտրականությունը կզա. շուտով կոմպրեսորները կյերգեն մեր ձորում, պերֆերատորների աղմուկով կլցվեն մեր հանքերը, ել բրիչով չի աշխատի Ավետիքը:

Նա լուց մի պահ ու կարծես ինչ վոր բան հիշելով մրմնջաց՝

— Հիմա կտեսնենք, Ստեփան Նիկիտիչ...

4

Մյուս առավոտ Սիդորը Մաթվեյի հետ միասին մանր, դանդաղ քայլելով հանք տանող արահետով իջնում եր ձորը: Արեն իր պաղ ճառագայթներով վողողել եր չքնաղ լեռնաշղթան: Հեռու լեռների ձյունապատ դադաթները վայլատակում եյին արեկ ճառագայթների տակ, կապույտ յերկնքում չկար ամպի վոչ մի քուլա: Նույն ոիթմբով աշխատում եր ալմաստի դաղղյահը, նույն դիրքով հունական վուքրիկ գյուղը դեմից նայում եր հանքերին: Ներքեսում հատ ու կենտ մարդիկ ու ձիեր եյին յերեսում, վոր գուրս եյին դալիս հանքերից ու նորից անհետանում գետնի տակ:

Սիդորի գլուխը դեռ ծանր եր շփոթ մտքերից:

Նրա մտքերը դեռ անհույս թափառում եյին Նեփայի գրանիտե ափերին՝ փնտռում եյին Սուսաննա-

յին։ Հախուռն հույզերը բուռն հորձանքով ալեկոծ-
վում եյին նրա հոգում, յերակները քունքերի մոտ
ուժգնորեն խփում եյին, բայց հաստատակամ, զան-
գաղ քայլելով նա իշնում եր ձորը։

Շպուրները սևանում եյին։

Այդ նրա տևական ջանքերի ու բուռն հույզերի
զոսկեպսակն եր։ Բացվում եր մեռած հանքերի առա-
վուաը։

Պետք եր իշնել ձորը, պետք եր հանքի պայծառ
ուզին գծել մութ հանքախորշերում։



ԴԱՆԱԿ ՄՐՈՂ ԴՈՒԴԿՈՎԸ



37
22-10-78

Դուդկով են կանչում նրան բոլորը։
Թե ո՞վ ե Դուդկովը, ո՞ւմ վորդին ե նա, վոր-
տեղից ե յեկել վոչվոք չդիտի։

Մի որ նա իր վոտքի չարխը շալակին յերևաց
բանվորական փոքրիկ այդ ավանում ու մի տեսակ
թարմություն մացրեց այստեղ, նոր մարդ յերևաց։
Ոյնուհետեւ մենք վարժվեցինք Դուդկովին տեսնել
չարխը շալակին թաղերը շրջելիս։

Բոլորի համար դուրեկան եր Դուդկովը, վոչվո-
քի չեր ճանձրացնում—նեղություն չեր պատճառում
նա։ Գլուխը կախ, որում եր դանակները Դուդկովը,
յեթե բան հարցնեյին—սիրով կպատասխաներ և մի-
ամիտ ու խաղաղ կժպատար խոսակցին։

Դուդկովի խաղաղությունը դրավեց և ինձ, մը-
տերմացանք հետը։ Կարմիր, զեր զեմք ուներ Դուդ-
կովը, տարվա բոլոր յեղանակներին միշտ կապույտ

սատիներ բլուզ եր հագնում՝ առանց գոտի կապելու։
Նրա հագին պատառուտած անդրավարտիկ եր լինում
ու միշտ քարշ եր տալիս մեծ ու քրքրված կրկնա-
կոշիկները։

Նա հիվանդուտ հայացքով նայում եր խոսակցին
ու սովորականի նման ժպտում։ ղրանից ավելի եյին
փոքրանում նրա առանց այն ել նեղ աչքերը։

— Դուդկով ի՞նչու կարգին. կոշիկներ չես հագ-
նում…

— Փողը չի բավականացնում, աղավնյակ։

— Ինչքան ես աշխատում որական։

— Մինչեվ 20 ոռորդի, ավել ել ե պատահում։

— Ել ի՞նչի չի բավականացնում։

Նա վշտացած, առանց ժպտալու պատասխանեց։

— Զե՞ս տեսնում, վոր բոսյակի նման եմ ապ-
րում, իսկ բոսյակը հաշիվ չգիտեի…

Ապա նա սկսեց սրել դանակները։ Գործը վերջա-
ցընելով, նա դրապանից հանեց ողեկոլոնի մի փոքրիկ
սրվակ։ ողիկոլոնը լցրեց բաժակի մեջ և զլիսին քա-
շելով քամեց մինչև վերջին կաթիլն ու սրվակը մի
կողմ նետեց։ այդ մի ակնթարթ միայն տեսեց։

Այդպիսի դեպքերում չեր խոսում Դուդկովը, վոչ
ել իրեն ուղղված հարցերին պատասխանում։ Մենակ
հիմար, անիմաստ ժպտում եր նա ու տափակ, բուք
հայացքով նայում խոսակցի յերեսին։

Ապա նրան տեսնում եյինք դարձյալ իր չարխը
շարակին թաղերը շրջելիս։ Յերբ գործ չեր ունենում
Դուդկովը, կանգնում եր կոռպերատիվի առաջ, մաս-
գործների խանութի շուրջն եր ման դալիս ու կեսո-
72

րին դնում եր գետավիկ ուռենիների ստվերի տակ քեելու, կամ գետում լողանալու:

Մի ամբողջ տարի յես կորցրի Դուդկովի հետքը: Սիրիր դնաց նա արդյո՞ք, մի մեծ քաղաքի փողոցներում անհայտացա՞վ, թե հարևան շրջանները գընաց քաշ տալու իր թափառական կյանքը, չիմացա: Մի տարի անց միայն յես նրան հանդիպեցի Դ... քաղաքում: Դարձյալ աստիճներ բլուզը հազին, առանց գոտիի, նորից հնամաշ կրկնակոշիկներով: Զարխը շալակին անցնելիս Դուդկովը հանկարծ ինձ նկատեց մայթի վրա: Նրա քնկոտ, անտարեր հայացքը կենդանացավ, աչքերը փայլատակեցին:

Նո մոտեցավ ինձ, բարեկամաբար ժպտաց ու յերկար թափահարում եր ձեռքս:

— Ու՞ր կորար Դուդկով, ի՞նչպես ես:
— Լավ եմ աղամնյակս, քեզ միշտ հիշում եյի:
— Ելի՞ կոնծում ես Դուդկով:
— Ավելի վատ, —ասաց նա ու ավելացրեց:
— Յերկու որ այգում ընկած եյի մնացել:
— Ելի՞ ոդըկոլոն ես խմում:
— Հա, ձեռք քաշել չեմ կարողանում, դինին չէ բավարարում:

— Լավ, մինչև յե՞րբ ես այդպես շարունակելու, Դուդկով, —արդեն լուրջ հարցնում եմ նրան:

— Մինչև յե՞րբ... սառը, վոչինչ չարտահայտող աշքերով նայում ե Դուդկովն ու կրկնում:

— Մինչև յե՞րբ, սատանան գիտե, թե մինչև յերբ: Ամեն անգամ վորոշում եմ, վոր այս բաժակից հետո չեմ խմի, վոր այս շից հետո չեմ խմի, վորո-

— Մի անդամ հարբած ե լինում Շահ-Աբրամ
թաղավորի զինվորներից մեկը։ Շահ-Աբրամը փո-
ղոցից ձիով անցնելու ժամանակ հարբած սալդաթը
կանգնեցնում ե նրան ու պահանջում, վոր իջնի ձի-
ուց։ Տեսնելով, վոր սալդաթը հարբած ե, ձիուց իջ-
նում ե Շահ-Աբրամ։ Սալդաթը նստում ե թաղա-
վորի ձին ու ժամերով չափ ե գցում քաղաքի փողոց-
ներում։ Մի ժամանակ ուշքի գալով, սալդաթը նկա-
տում ե, վոր իր տակ թաղավորի ձին ե։ Վախեցած
սալդաթը ձին տանում ե գոմին ու վերադառնում իր տեղը։

Մյուս որը թաղավորը կանչում ե սալդաթին։
— Դու քանի՞ գլուխ ունես քո ուսին, — զոռում ե
թաղավորը սալդաթի վրա, — վոր փողոցում ինձ ի-
ջեցնում ես և ինքդ նստում շահի ձիուն։

— Ի՞նչ եք ասում, — զարմանում ե սալդաթը։
— Ի՞նչ եք ասում տեր իմ, — մի՞թե կարող եմ այլ-
պես բան համարձակվել, մի՞թե յես կհանդզնեմ թա-
գավորին իջեցնել ձիուց։

— Դեհ, վերջ տուր այդ հիմարություններին և
բացատրություն տուր, — զոռում ե թաղավորը։

— Տեր իմ այդ յես չեմ յեղել, զինին ե այդ ա-
րել թաղավոր, — բացատրում ե սալդաթը։

— Հիմարություններ դուրս մի տա։ Այդ պետք
ե ապացուցես, ապա թե վոչ՝ քեզ զիմատել կտամ,
վճռաբար ասում ե թաղավորը։

— Պատրաստ եմ թաղավորն ապրած կենա, — ա-
սում ե սալդաթը, — միայն դրա համար մի պայման
ունեմ. զինու ուժը ապացուցելու համար, ինձ մոտ
պետք ե բերել մի կույր ժարդու, ապա մի անդա-

— Մի անդամ հարբած և լինում Շահ—Արքաս
թագավորի զինվորներից մեկը։ Շահ—Արքասը փո-
ղոցից ձիով անցնելու ժամանակ հարբած սալդաթը
կանգնեցնում և նրան ու պահանջում, վոր իշխի ձի-
ուց։ Տեսնելով, վոր սալդաթը հարբած է, ձիուց իջ-
նում և Շահ—Արքասը։ Սալդաթը նստում և թագա-
վորի ձին ու ժամերով չափ և զցում քաղաքի փողոց-
ներում։ Մի ժամանակ ուշքի դալով, սալդաթը նկա-
տում է, վոր իր տակ թագավորի ձին է։ Վախեցած
սալդաթը ձին տանում եւ գոմն ու վերադառնում իր տեղը։

Մյուս որը թագավորը կանչում և սալդաթին։

— Դու քանի՞ զլուկի ունես քո ուսին, — զոռում և
թագավորը սալդաթի վրա, — վոր փողոցում ինձ ի-
ջեցնում ես և ինքդ նստում շահի ձիուն։

— Ի՞նչ եք ասում, — զարմանում եւ սալդաթը,
— ի՞նչ եք ասում տեր իմ, — մի՞թե կարող եմ այդ-
պես բան համարձակվել, մի՞թե յես կհանդինեմ թա-
գավորին իջեցնել ձիուց։

— Դեռ, վերջ տուր այդ հիմարություններին և
բացատրություն տուր, — զոռում և թագավորը։

— Տեր իմ այդ յես չեմ յեղել, գինին և այդ ա-
րել թագավոր, — բացատրում եւ սալդաթը։

— Հիմարություններ դուրս մի տա։ Այդ պետք
և ապացուցես, ապա թե վոչ՝ քեզ գլխատել կտամ,
վճռաբար ասում եւ թագավորը։

— Պատրաստ եմ թագավորն ապրած կենա, — ա-
սում եւ սալդաթը, — միայն դրա համար մի պայման
ունեմ. զինու ուժը ապացուցելու համար, ինձ մոռ-
պետք եւ բերել մի կույր մարդու, ապա մի անդա-

մալույծի, վորը շարժվել չի կարողանում և Պարսկաստանի ամենաաղքատ խասփուշին, վորն իր կյանքում յերբեք շապիկ չի ունեցել:

Թագավորը հրամայում ե, վոր իսկույն ճարենքերն այդ մարդկանց :

Սալզաթը նրանց հավաքում ե սեղանի շուրջն ու սկսում խմեցնել թագավորի մասանի ամենաթունդ ու ընտիր գինիներից։ Յերբ գինին աղղում ե, կույրը բարձրացնում ե բաժակն ու ասում՝

— Այ՛ գինի, իսկը շիրաղի վարդի գույն ունի։

Այս գրգռում ե անդամալույծին։

— Քո՛ո, դու ի՞չ ես տեսնում, վոր գույների մասին դատողություն ես անում։

Նա բարկացած ցատկում ե տեղից ու հարձակում կույրի վրա դոչելով՝

— Հիմա քացով չսատկացնե՞մ ես քոռին...

— Սատկեցրու, վոչի՞նչ, դրա ընտանիքը յես կպահեմ, — սրտաբաց ասում ե խասփուշը, վոր կյանքում յերբեք շապիկ չի ունեցել հադին։

Այս բոլորից հետո սալզաթը դառնալով Շահ-Աբրամին ասում ե՝

— Հիմա տեսա՞ք, թագավորն ասլրած կենա, վոր յես չեմ մեղավոր յեղել։

Թագավորը ներում ե սալզաթին ու համոզվում, վոր գինին ե մեղավոր, վոր գինին շատ բան կարող է անել։

Հիացած իր պատմածից Դուդկովը հաղթանակութեն ինձ ե նայում, իմ հայացքում հավանության արտահայտություն փնտռելով։

— Նստենք նստարանին — առաջարկեց Դուդկու-
քը, յերբ արդեն այլումն եյինք։

— Իսկ գիտե՞ս յես ինչպես հարբեցող դարձա-
աղավնյակս, —ասաց Դուդկովը ուսից ցած զնելով
չարխը։

— Ի՞նչպես դարձար, պատմիր։

— Եհ, դա յերկար պատմություն է։ Իմ ծնող-
ները շուստ մահացան։ Յես զնացի ապրելու իմ կու-
լակ քեռու տանը։ Նա շատ հարուստ ու ազահ մարդ
էր։ Ինձ չեր սիրում քեռիս, վորովհետեւ դեռ սաշ-
դաթ յեղած ժամանակ, հայրս կազարմայում ծեծել
էր նրան։ Հետո, յերբ բանակից վերադարձել են,
քեռիս դեմ և յեղել, վոր իր քույրը հորս մարդու
զնա։ Բայց մայրս նրան չի լսել։ Դրա համար նա ինձ
ել տանել չեր կարող ու ինձ շատ վատ եր պահում,
իր բատրակներին հավասար։ Մի անգամ, յերբ մի
վեղբո կաթ թափելու համար շան նման ինձ ծեծեց
քեռիս, ել համբերությունս հատավ։ Տանը միայն
յես ու ինքն եյինք։ Գիշերը յես դուրս յեկա տնից ու
ամուր փակեցի դուռը։ Մեծ նավթամանը ձեռքիտ
նավթ լցրի տան բոլոր զռներին ու լուսամուտներին,
ապա պինդ փակեցի գոմը և հրդեհեցի ամեն ինչ՝
խոտի հակա դեղի հետ միասին և թագնվեցի մեր
տան դեմի մառանում։ Քիչ հետո բոցերը յերկինք
բարձրացան։ Գոմում բառաջում եյին տասնյակ անա-
սուններ—քեռուս կովերը, յեզները, հուսահատ խըր-
իլը ջում եյին նրա Սիրիրի մադյանները։ Տնից զեռ
ծաղտում չեր լսվում։ Քիչ հետո ջարդվեց ապատութանք
փեղկն ու բոցերի միջից գուրս ընկալ սպիտակ չու-

բերով մի մարդ։ Այդ քեռիս եր։ Նա խելազարի նման այս ու այն կողմ եր վազում բորիկ վոտքերով, գոտուում, աղիողորմ աղաղակում եր, փետում եր մաղերը։ Հետո ինչ վոր բան հիշելով, շանթահարի նըման վազեց դեպի տուն ու իրեն ներս նետեց բոցավառված պատուհանից։ Յես սրտատրով սպասում եյի թե ի՞նչ պիտի լինի ու վախից դողում եյի ամրողջ մարմնով։ Հանկարծ տան պատուհանի շրջանակում յերեաց մի մարդ։ Նա գրկել եր մի փոքրիկ սնդուկ։ Մարդը դեռ չեր կարողացել շրջանակից դուրս գցել իրեն, յերբ շառաչելով նստեց բոցավառված տանիքը։ Քեռիս մնաց մեր տան բոցավառված փլատակների տակ, ամուր գրկած իր փաղի սնդուկը։ Ինձ ձերբակալել չկարողացան—յես անհետացա վոնց վոր սատանա։

— Յես եղ որվանից ել թողի գյուղն ու հեռացա, — շարունակեց իր պատմությունը Դուդկովը։ Եղ ժամանակներն արդեն հեղափոխություն եր Սիրիուի տայբաները լցվել եյին պարտիզաններով։ Յես ել գնացի ու խառնվեցի նրանց։

Հետո յերբ յերկիրը խաղաղվեց, ել չուղեցի գյուղ գնալ։ Ենտեղ վոչինչ չկար, վոչվոք չունեյի գյուղում։ Ժողովուրդն ել քաղցած եր։ Զահել մենակ տղա եյի։ ինձ ամեն տեղ գցեցի։ Միշտ յերկաթուղու վրա եյի։ մի մեշոկ թերիս տակ սկսեցի թափառել։ Մի տեղ ապրանք եյի առնում, մի ուրիշ տեղ ծախում, հաճախ ապրանքը խլում եյին ձեռքիցս, սըպեկույանտների հետ միասին ինձ շատ բռնեցին ու բաց թողին։

— Յերբ եղ գործից ել ձանձրացա, գողությամբ
եյի դլուխս պահում։ Հենց եղ ժամանակներն ել իւը-
մել սովորեցի։ Ամում եյի սամազոնկա, ողի, գինի,
ինչ պատահեր։ Վերջը գողությունից ել ձեռք քաշեցի
ու ես չարխով սկսեցի աշխարհը ման գալ։ Յեզ ես-
պես ել ծանոթացանք քեզ հետ աղավնյակ։ Ահա
բոլորը։

Դուդկովը վոտքը դըել եր չարխի լծակին ու ա-
նիմաստ, ջղաճղորեն պատում եր անխլը։ Այգում
թնդում եր դինվորական նվազախումբը, կայարանից
լովում եր զնացքների աղմուկն ու շողեքարշերի սու-
լոցը։ Դուդկովը չեր խոսում։ Բայց կարծես նա մի
վերջին խոսքի յեր սպասում։

— Լավ, մինչև յե՞րբ պիտի թափառես Դուդկով։
Ի՞նչի չես դնում ձեր գյուղը։

— Ու՞ր զնամ աղավնյակ։ Հիմա ենտեղ բոլորը
կոլտնտեսական են դարձել, զարդացել են։ Ես հալիս,
վոր դյուդ զնամ՝ ձեռք կառնեն, մարդու տեղ չեն
դնի։

— Դու յել քեզ հավաքիր, կարդի արի։

— Ախր ինչպես կարգի գամ, աղավնյակ։

— Այ, մտիր մի գործարան, բանվոր դառ, գործ
արա, դիսցիպլինար մարդ դարձիր, կարգի կզաս։

— Զեմ կարող աղավնյակ, խմելը չի թողնում-
յես ինքս ել այդ մասին շատ եմ մտածել։ Գիտես
ի՞նչ աղավնյակ, ոտւները մի ճիշտ առած ունեն։
Նրանք ասում են՝ «սապատավորին գերեզմանը կուղ-
ղի»։

Յես դիտեմ, վոր յես կորած մարդ եմ ու աես-

նում եմ, վոր անզոր և ինձ հավաքելու, որինավոր
ժարդ գառնալու համար։ Մեկ ե, վոչինչ դուրս չի
գտաւ։

Նա կոթնեց դանակի չարխին ու յերկար ժամա-
նակ լուս եր։ Յես ել վոչինչ չունեյի ասելու Դուռը-
կովին։

— Նու՞, Դուդկով, արդեն գնացքի ժամանակ ե,
յես պետք ե գնամ։

— Այդ ո՞ւր աղասինյակս, Յերևան ես գնո՞ւմ։

— Այո, պիտի գնամ, արդեն ուշ ե։

— Ախտոս, շատ ափսոս։ Յես կուղենայի, վոր
դու մի քանի որ ել մնայիր այստեղ։ Այ, յեթե մարդ
միշտ այսպես ժամանակ անցկացներ, ել ի՞նչու պետք
ե կոնծեր ու թափառական դառնար։ Իսկ եստեղ շատ
ժամանակ յերեխաները խմբով հետեխցս են ընկնում
շրջում հետո, յես ել մենակությունից խմում եմ ու
մոռանում ամեն բան։

* * *


Գնացքը փնչալով կանգ առավ։

Յես թափահարեցի Դուդկովի ձեռքն ու շտապեցի
կայարան։ Արդեն մութ եր։ Ծառուղու վերջին,
չարխը ուսն առած Դուդկովը կանգնել ու շվարած
նայում եր իմ հետեխց։


Քաղաքն արդեն վաղուց թողել եյինք մեր հետեւ։
Գնացքն անընդհատ փնչալով սուրում եր առաջ ու
առաջ, բայց մտքիցս չեր հեռանում Դուդկովը։ Նա
կապույտ սատինե բլուղով, առանց վոտու կանդիան
եր և իմ առաջ։ Ենթաչարին։ պահանջենան մայութելով

գործարաններից ու իր համար անըմբոնելի դյուպից,
հա կորցրած ամեն ինչ, փնտռում եր ինքն ել չգիտեր
թե ինչ ու մոլոր, անորոշ քայլերով անհետանում
ծառաւղու խտացող մութի մեջ...





ՃԱԽՏՅՈՐԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ



四三

Այդ ցեխոտ ճանապարհով շատ անդամներ և
անցուգարձ արել շախտյոր Դիմիտրին։ Դեռ հանքում՝
խոնավ գետնի տակ մտքերը հանդիստ չեն տվել նը-
րան։ Մտմտացել են նա մութ հանքախորշերում մին-
չե պերջացել են աշխատանքը։ Ցեխոտ արտահա-
գուստով, թրջված ստորյերկրյա ջրերով, նա գլուխը
կախ անցել են այդ ճանապարհով ու խոսել իր մտքե-
րի հետ։ Նա մտազբաղ, դլուխը կախ քայլել են ու
տեսել միայն իր սև, սաթի պես սև բեխերի ծայրերը,
կոշիկների քթերն ու ցեխոտ ճանապարհի մի կտոր։
Հիմա այդ ճանապարհով գնում են նա ու նրան
ուղեկցում են փողային նվազախումբը, վորի հաղթա-
կան ակկորդները զարնվում են ավանի յերկհարկանի
շենքերի պատերին ու նրանց արձագանքը կորչում ե

աշնան մերկ անտառի խորքում։ Այսոր նրա հորել-
յանի որն եւ հարգում են նրա 40—ամյա ստորյերկ-
րյա հերոսական աշխատանքը։

Նա մտքերով կես դար հետ եւ զնում։

Դիմիտրին նայում եւ իր անցած ճանապարհին, —
նրա վրա վերսափայտերի նման շարված են փայ-
լուն, բրոնզե կոճակներով ինժեներներ ու պըլիս-
տավներ ու նրա ականջում վժժում են այն բազմա-
հաղար չչակները, վոր 40 տարի շարունակ նրան դոր-
ծի յեն կանչել։

Ու փովում եւ նրա առաջ իր դժույն, իր վորր
մանկությունը իր խեղճ հայրը։ Ամենից առաջ նրան
եւ հեղում Դիմիտրին։ Նա յերկար—յերկար տարիներ
հորթի մորթուց շինած տոպղակներով յերկրի խոր-
քից շալակով հանքաքար եր կը ել հույն կապալառու-
ների համար։ Տասներկու ժամյա տաժանակիր աշխա-
տանքից հետո նա վերադառնում եր տուն, յերեխա-
ներին գուրգուրելու համար ուժ չեր մնում ու նա պատ-
կելով, ամրող գիշերը տքում եր տանջող հողացա-
վից։ Դիմիտրին հաղիվ վեց տարեկան եր, յերբ ծանր
հողացավից վախճանվեց հայրը։ Ու նրա վրա հար-
ձակվեց դաժան վորբությունը...

Դարունը ճշացել եւ այդ ձորերում։ Սոխակները
սիրո մեղեդին են դայլայլել, ձորերը լցվել են ծա-
ղիկներով, ամեն մի թփի տակից ժողոտացել են մանիչա-
կը։ Նայել եւ այդ ամենին ափսոսանքով պատանի Դի-
միտրին, որորել եւ գլուխն ու լուռ մտել հանքը՝ մի
կտոր հաց վաստակելու համար։

Եեկան 1905 թվի փոթորկութ որերը։ Քսանվեց

տարեկան յերիտասարդ եր այն ժամանակ ինքը, բայց
իր յետև արգեն ուներ 12 տարվա հանքափորի աշ-
խատանք: Ռուսական հեղափոխության ցասկու ա-
լիքներն հասան և Անդրկովկաս: Ահա, ինքը գիշե-
րով չըում և հանքախորշերն ու գործադուլի կոչ ա-
նում բանվորներին: Գործադուլավորներին միանում
և իրենց հանքը, հանքերում վիստում են ղաղախները,
սակառում են աշխատանքի անցնել, բայց աննկում են
դործադուլավորները:

Ու պայքարի որերը կիսուննտի հարյուրավոր
կադրերի նման մի վայրկյանում անցնում են նրա
մտքով:

Դահլիճը լցվել և խայտարղետ հասարակությամբ =
Նստարանների վրա, առաջին շարքերում տեղ են գը-
րավել հին շախայորներն իրենց կանանց հետ միա-
սին: Նրանց մեջ կան պարսիկ բանվորներ, վոր ճո-
ղոսքեր են իրանի խաների շահագործումից ու մըս-
րակներից: Նրանք սև, թեթև փափախները գըլխնե-
րին, նստած սպասում են ու մինչև հոբելյանական
նիստի սկսվելը յերկար ծխամորճով ծխում են տե-
ղական ծխախոտը: Ակնապիշ ծխի քուլաներին են նա-
յում նրանք ու ո՞վ իմանա ի՞նչ են վերհշում իրա-
նում անցկացրած իրենց կիսաքաղց կյանքից:

Ահա նրանց հետեւ տեղ են գրավել յերիտասարդ
հույն աղջիկներ, վոր հագել են իրենց տոնական ըգ-
ղեստներն ու շարվել են մի շարքի: Նրանք խորածանկ
հայացքով շուրջն են նայում, անհոգ փսփսում են ի-
րար ականջի, ինչ-վոր ակնարկներ են անում ու դըն-

զում և նրանց քրքիջը։ Դրան իրրե պատասխան հըն-
չում և յերիտասարդ հանքափորների թեթև մի յերդը,
վորը գրավում և վողջ դահլիճի ուշադրությունը։
Այդտեղ են և հանքերի ինժեներները, տեխնիկները,
հանքափորների նոր սերունդը—կոմյերիտականները։
Ավելի հետ նստոտել են արտահագուստով բանվորներ,
վորոնք մի ժամ, ժամ ու կես հետո հանք պիտի իշնեն
աշխատելու։ Ովքեր ուշ են յեկել, տեղ են գրավել
լուսամուտներում, կամ նստարանների արանքում,
կանգնել են պատերի տակ։ Մեջ ընդ մեջ նվազում և
նվազախումբն ու կանայք յերջանկության կնիքը
գեղքներին զրուցում են այն մասին, թե ինչ արտա-
կարդ որ ե, թե ինչ պատիվ արին իրենց Դիմիտրով։

Բեմի ճակատին ամրացված և մեծառիր մի նկար։
Նրա շրջանակի միջից պատկառելի տարիքով մի մարդ
հիվանդութ աչքերով նայում և դահլիճին։ Դա հորել-
յարն ե—այն մարդը, վոր 40 տարի անընդհատ աշ-
խատել և յերկրի ընդերքում։ Նկարի տակ խոշոր տա-
ռերով գրված ե. «Կեցցե ընկեր Դիմիտրի Արիստո-
ֆորովը»։

Դիմիտրի Արիստօֆորով։

Ո՞վ չի ճանաչում նրան։ Նա այդ դահլիճում
նստածներից շատերի հետ խոնավ հանքերում աշխա-
տել և տասնյակ տարիներ։ Նրանցից շատ շատերին
պերֆերատոր բռնել և առվորեցրել Դիմիտրին, ցույց
և ավել թե ինչպես պետք և դնել կապերը, սովորեց-
րել ե, թե ինչպես պետք և պայքարել գետնի տակ՝
բնության տարերքը հաղթահարելու համար։ Այդ
դահլիճում նստածներից մի քանիսի կյանքն և փրկել

Նա ու փլվածքի հետև մնալու յերկյուղը սրաներում, յերբ լսել են Դիմիտրիի ձայնը՝

— Վախիլ մի, գալիս եմ... նրանց նորից ժըպտացել ե կյանքը՝ նրանք հաստատ դիտեն, վոր յեթև փլվածքի վայրն ե յեկել Դիմիտրին—փրկությունն ապահովված ե:

Բոլորը ճանաչում են այդ հնարազետ վարպետին, անզուգական ընկերոցն ու մարդուն: Ահա թե ինչու բոլորի գեմքին գոհունակության մի ժպիտ կա, վոր վիճակվել ե իրենց այսոր անհուն սերն ու հարգանքն արտահայտել այդ վաստակավոր մարդուն, տոնել նրա աշխատանքի տոնը:

Հանդարտ բացվում ե վարագույրը: Փոքրիկ բեմի վրա տեղ են դրավել Դիմիտրին իր ընտանիքով, նրա ընկերները հարևան հանքերից, զանազան կադակերակությունների ներկայացուցիչներ, այլ քաղաքներից յեկած պատղամավորներ, վոր յեկել են վողջունելու Դիմիտրի Խրիստաֆորովին: Նրանք թըպում են Դիմիտրիի ծառայությունները հանքերի վերականգնման, վերակառուցման, նոր կադրեր ընտեսելու գործում:

Իրեն ուղղված սիրավիր հայացքներին, ուահիճի թնդացող ծափերին, բերված նվերներին Դիմիտրին պատասխանում ե յերկու խոսքով: Նա պարզ, անպանույն պատմում ե իր. և իր ընկերների գրկանքները Փրանսիական կոնցեսիոններների ժամանակ: Նու ասում ե, վոր ինքը վերածնվել ե ու կյանք աեսել մեայն յերկը խորհրդայնացումից հետո և վոր այսուհետեւ ել վոչ մի ջանք չի խնայի, վորպեսզի՝

— Կորչի բուրժուադիան ու յերջանիկ կյանք
հաստատվի ամրող աշխարհում...

Ու նրա ձայնը լուռ, ուշադիր դահլիճում հնչում
ե վորպես հանքի խորքից հնչող հղոր սպառնալիք
կազիալի հասցեյին :

Հանքերի վարիչը, այդ խստարարո մարդը, վոր
այնքան չոր ու պահանջկոտ ե հանքախորշերում, հի-
մա դարձել ե շատախոս, հաճելի թամադա : Նա բո-
լոր ջանքերը գործ ե դնում, վոր հորելյանը ուրախ
ֆինալ ունենա : Մըրահի յերկու ծայրերում տեղ գտած
սազանդարները մրցում են իրար հետ . մեկը գեռ
չվերջացրած՝ մյուս խումբը մի նոր, ավելի ու-
րախ ու թեթև յեղանակ ե սկսում : Սեղանների շուր-
ջը բոլորել են հանքափորները, ինժեններները, յերի-
տասարդ տղաներ ու ջահել, թուլուն աղջիկները : Նը-
րանք խմում են Դիմիտրիի կենացը, յերկար կյանք
են մաղթում նրան, վոր դեռ շատ տարիներ իրենց
հետ կողք կողքի աշխատի պղնձի հանքերում :

Խայտարղետ չորերամի գեռատի հույն աղջիկները
նաղանքով պարում են ու նրանց շուրջը ճկուն պարով
սկսույններ են անում ջահել կավալերները : Ահա
բացված փոքրիկ հրապարակում կնոջ հետ միասին
պարում ե ինքը Դիմիտրի Խրիստաֆորովը : Նա լայն
տարածում ե թեսերն ու նրա կրծքին ելեկտրական
լույսի տակ շողջողում ե կենտրոնակոմի անդամի
կրծքանշանը : Ո՞վ իմանա յերիտասարդ արյունը հո-
սեց Դիմիտրիի յերակներում, թե այն անսահման
յերջանկությունից եր, վոր այդ պահին ճշում եր նրա
սրտում, նա չկարողանալով զսպել իրեն ու պարի-

ժամանակ քնքլորեն թեր փաթաթեց ինո՞յ վզով :
Եինն ամոթխած , ընդհանուրի ուրախ քրքիշների ու
ծափերի տակ փախավ պարի հրապարակից : Դիմիտ-
րին մոտեցավ ու պարի հրավիրեց իր յերկարամյա-
ռշխատանքի ընկերոջը , Մաթվեյ Բաթմանովին , վորէ
հետ շատ փորձություններ եր բաժանել կյանքում ու
յերկրի տակ :

Պարում և Մաթվեյ Բաթմանովը :

Կլոր , չեկ այդ մարդը 42 տարի աշխատել ե յեր-
կրի ընդերքում : Նա Դիմիտրիի հետ յերեխա յե յե-
ղել . նա Դիմիտրիի հետ խանդավառ յերիտասարդ ե
յեղել ու նետվել ե պայքարի մեջ : Նա Դիմիտրիի հետ
միասին ըմպել ե Ֆրանսիական կապիտալի ու ցարիզմի
դառնության բաժակը : Ու այժմ իր բարեկամի , իր
ընկերոջ հոբելյանն ե : Մեծարում են ծանր , տոկուն ,
ստեղծագործ ախտանքը :

Այդ վեր և քաշել նրա վողին : Նա յերջանկության
եքստազի մեջ ե : Մաթվեյն այդ արտահայտում ե իր
անպաճույն , պարզ շախտայորական պարով : Պրիմի-
տիվ , հասարակ շարժումներ ե անում Մաթվեյը . 42
տարի խոնավ յերկրի տակ աշխատած այդ մարդը
թեթև պատանու պես ցատկում ե վեր : Այդ հաղթա-
նակի պար ե ու կարծես սեղանի մոտ յեկել պարում ե
վոչ թե Մաթվեյը , այլ վողջ բեղմնավոր բազմերանդ
հանքն ե պարում իր ընդերքի մարդու յերջանկու-
թյան պարը :

Պարում և Մաթվեյը և կարծես նա վոչ թե շախտ-
յոր ե , այլ հեքիաթների մեջ յեղած այն հօկա տի-

տաններից մեկը, վորի վրա հենված եւ յերկրագում-
դը:

Ուշ գիշերին սրահը սկսում եւ դատարկվել:

Զորի խորքից, ասես յերկրի ընդերքից լովում ե
խուլ մի հեռց: Ասես վիթխարի մի սիրտ եւ բաղ-
իսում Շամլուղի ձորում: Այդ հրաշալի կոմպրեսորն
եւ, վոր գիշեր ու ցերեկ խոտացրած ող եւ տալիս պեր-
ֆերատորներին:

Դեմը՝ գյուղում գիշերվա խավարում հրավառ-
ված եւ մի չենք: Այդ հոքեյարի բնակարանն եւ, վոր
նրա քառասնամյա աշխատանքի տոնին ասես լուսա-
վոր խինդով քրքջում եւ այն խավար տարիների վրա,
վոր անց և կացրել Դիմիտրին ու նրա նման շատե-
րը:

Գյուղից ո՞չ ալմաստի դազգահի լույսերի տակ
յերեռում եւ կնճուտած յերկիրը, վոր տասնյակ մետ-
րերով խոր ակոսներ եւ լուսել ու յերկնքի առաջ բացել
փլվածքի յերախները: Ասես այնտեղ տասնյակ եքս-
կովատորներ գլխական պար են բռնել ու ծալտյալ
հեռացել գիշերով: Այդ ճեղքվածքների տակ «Ծոփե»
հանքն եւ, վորտեղ 40 տարի աշխատել եւ Դիմիտրի
երիտաֆորովն ու այժմ այնտեղ պղնձի համար մա-
քառում են նրա յերիտասարդ ջոկատները:



ԱԵՐԳՈ ՔՅՈՒԿԻ ԶԱՏԵՐԸ



Ու ուղյուղի բինան տեղավորված եր մի մեծ
բացատում, վորին մի կողմից դըկել եյին հոնի գա-
ճաճ ծառերը, իսկ մյուս կողմից մոշի խճճված, դե-
պի ձորը թեքված թփերը: Ցածր թաղիքասլատ վը-
րանները մեջքներին յեղեզնե զոտիներ փաթաթած՝
ցրիվ տեղավորվել եյին դեղեցիկ այդ բացատում:
Բինայից վերև, հոնի ծառերից դենը, ձգվում եյին
բարձր անտառները: Անտառի միջով բացատը յերկա-
րուկ ձգվում եր դեպի մոտակա բինան, վոր-
տեղ իջել եյին Ղաղախի թուրք գյուղացիները: Մոշի
թփերից ցած ընկած եր ձորը, վորի խորքում, շատ
հեռվում դետին զուգնթաց սպիտակ ժապավենի նը-
ման ձգվել եր փոշոտ ճանապարհը:

Բինայում դիլ հնչում եր զուռնայի ձայնը:

Հավաքվել եր սարվորների խայտարդեա բաղմու-
թյունը: Նըանք հավաքվել եյին տեսնելու վոչ միայն
Սէրդո Քյոխի քեֆը, այլև մոտակա գյուղից յեկած

զարմանալի զուռնաշում։ Նա, սակայն զուռնաչի չեր։
ինքն ել հարեան գյուղում մեծ ոջախի տեր մարդ եր,
մի քանի հարյուր վոշխարների ու կովերի տեր։ Նրա
ձիերի յերամակից ամենաընտիր հովատակներն եյին
ընտրում նահանդապետին նվեր տանելու համար։ Նա
նվազում եր հենց այնպես, իր աղբերացու Սերդո
քյոխվին պատիվ արած լինելու համար։ Յեկ վոր-
տեսզի ցույց տար իր խորը հարդանքն ու ոերը
Սերդո քյոխվին, տարորինակ զուռնաշին փչում եր
վոչ թե բերանեով, այլ քթով։ Նա մեծ փափախը
դվինին, արխալուզով, կարմրատակած նվազում
եր ու ձորերով։ մեկ հեջում եր նրա զուռնայի
զիւ ձայնը։ Նա նվազում եր ու նրա հետ մեղմ, դու-
րեկան ինչ վոր բայտթի յեր յերդում Լեզզոնց Ար-
տեմը։ Դա կըր, միջահասակ գեր մարդ եր, գեղե-
ցիկ կազմվածքով, վոր Ուսեփանց գյուղում հայտնի
յեր իբրեւ լավ կոխ բռնող ու քաղցր բայտթիներ. եր
յերգում։ Ուսեփը նրան ել հետը բերել եր, վոր ամե-
լի հանդիսավոր լինի Սերդո քյոխվի քեֆը։

Կանայք շփոթված ու շատ մտահոգ դադաներն ե-
յին մանում ու դուրս գալիս։ Նրանց մի մասը, ու-
րազանցապես հարսները, մոտակա աղբյուրից կժե-
րով ջուր եյին կրում յերեսներին իջեցրած չիքիլայի
հաստ քողը։ Ուրիշները շաջի վրա թարմ հաց ու աղ-
դակ եյին թխում, հետևում եյին կրակի վրա. դրած
կերակրի պղինձներին։ Հինդ կին հերթով ճոճում եյին
խնոցին, վոր թարմ կարագ հասցնեն թանկապին
հյուրերին ու թանաթաթախ դնեն սեղանին։

Հյուրերն արդեն վաղ առավոտից հավաքվել ե-
յին։ Ոսկիը մատ քսան ձիավորով յեկել եր իր գյու-
ղից։ Քաղաքից յերկու կառքով հյուրեր եյին յեկել
Թիֆլիսի ինչ—վոր մի աղվակատ ու Սերգո քյոխի
աղբեր վաճառականները գավառական քաղաքից։
Քինան եր հասցվել և 40 զույլանոց գինու մի տա-
կառ, վոր սայլով կանդնեցված եր հոնի ծառերի
ստվերի տակ։

Քիչ հետո յերեացին սպասվող ամենակարեւոր
հյուրերը։ Յերբ հեռվում յերեացին 5-6 ձիավոր,
ցնծաղին հնչեց Ուսեփի զուռնան։ Նա նվազում եր
ձիերը չափ դժելու ինչ վոր յեղանակ, իսկ Սերգո
քյոխվան ուրիշ մի քանի հողու հետ յեկվորներին
դիմավորեցին հրացանների համազարկով։ Զիավոր-
ները զվարթ իջան ձիերից, վորոնց վրայից գոլորչի
յեր բարձրանում։ Նորեկ հյուրերի մեջ եր յերկար բե-
խերով, յերկար, հետ ծալված փափախը գլխին,
թուրը կապած պրիստամվը յերկու ուրյադնիկների
ու յերեք ստրամնիկների հետ։ Ստրամնիկներն իս-
կույն ձիերը տարան խնամելու, իսկ պրիստամվը
ուրյադնիկների հետ միասին մինչև խոսակցություն
բացվելը մի-մի կտոր խաշլամայով՝ գատարկեցին ա-
րագի թասերը Նիկալայ 2-րդ կայսեր կենացը։ Այդ
որը բոլորում եր Ռոմանովների արքայական տան
300 տարին։

Քիչ հետո հոկա կարպետները դիոեցին գետնին,
յեկ յերբ սեղանը լցվեց բարիքներով ու բոլորը ծա-
լապատիկ շարվեցին նրա շուրջը, քահանան բարձրաց-
նելով աջ ձեռքն որհնեց սեղանը։

Աւաեփն արդեն զուռնան հանձնել եր զուռնաշի—
ներին ու սեղանի ծայրին նստած սեղանը կառավա—
րում եր իբրև թամադա: Նրա մի կողքին նստած եր
պրիստավը, իսկ մյուս կողքին Անրու քյոխվան,
վոր հաճախ սրան նրան իր մոտ եր կանչում տեղ եր
ուղարկում, կարգադրություններ անում:

Հարեւան բինաներից հավաքված հայ և թուրք
սարվորները մեծ բազմությամբ հեռու ծառերի տակ
կանգնած դիտում եյին գյուղի ու քաղաքի նշանա—
վոր մարդկանց խրախճանքը:

Թամադան ամեն մի կենացից հետո պարել եր
տալիս սեղանակիցներից վորեն մեկին, կամ պարող—
ների ցանկը լրացնում եր դագաներում աշխատող
հարսներով, վորոնք քաշվելով եյին գաղիս պարելու,
բայց յերբ սկսում եյի պարել, ել դուրս չեյի գալիս
հրապարակից: Յերբ պարից հոգնում եյին, Ուսեփը
բայաթու պատվեր եր տալիս Լեզզոնց Արտեմին:
Արտեմն աչքերը փակում եր, ձեռքը պահում եր ա—
կանջի մոտ ու հնչում եր նրա մեղմ, դուրեկան բա—
յաթին: Յերգում եր Արտեմն ու հարբած հյուրերը
որորում եյին գլուխները, շատ զգացվողները լաց
եյին լինում ու համբուրվում իրար հետ:

Թիֆլիսից յեկած աղմակատը, վոր բոլոր հյուրե—
րից տարբերվում եր իր հալստուկով ու պանամա գրւ—
խարկով, չեր խմում ու իր հարեւաններին զվարճաց—
նում եր քաղաքի նոր անեկդոտներով: Այդ նկատել
եր թամադա Ուսեփն ու մի յերկու անգամ զգուշացրել
պատվավոր կենացները չխմելու համար: Թամադան
նկատել եր, վոր աղմակատը յերբեմն թափում է

բաժակը, բայց գեռ զապում եր իրեն, վոր չվիրա-
վորի քաղաքացի հյուրին:

Թամադան բաժակը վերցնելով վոտքի կանգնեց
ու առաջարկեց լիքը լցնել բոլոր բաժակները:

— Մենք ապրում ենք մեր վողորմած թագավորի
շվաքի տակ: Մեր հողերը, վոր ավելանում են, մեր
ապրանքը, վրո շատանում ա, վաճառականները, վոր
խաղաղ առևտուր են անում ու հարստանում են, եղ
բոլորի համար մենք մեր վողորմած թագավորի ու-
ժին ու ծով խելքին ենք պարտական: Նրան, վոր
Աստված ամենակարող իշխանավոր ա նշանակել յեր-
կրի վրա, ասել ա, վոր բոլորին հավասար աչքով
մտիկ տա—զաճառականին ձեռ բոնի, վոր շատանան
նրա ողուտները, հողատերերին քոմակ անի, վոր ա-
վելի շատանան նրա հողերը, ու մենք վոր ապրենք՝
հասարակ ժողովուրդն ել ապրած ու ապրած ա: Մեր
վողորմած թագավորի ներկայացուցիչը մեր սեղա-
նին, ես ըովեյիս մեր կողքին նստած մեր աղբեր
կւոն Բեգն ա: Նա մեր թագավորի նման հալալ ու
վողորմած հայասար նայում ա մեր բոլորին, իբրև
պրիստավ միշտ ոգնության ա գալիս մեզ, վորտեղ
ել լինի: Յես խմում եմ մեր կւոն Բեգի կենացը.
թող նա մեր գլխից անպակաս լինի, միշտ նրա հետ
ես տեսակ յերջանիկ սեղանների նստած լինենք:

Զորը թնդաց բացականչություններից: Թամադա
Ուեփն իր խոսքը վերջացնելով զուտնան վերցրեց
զուտնաչու ձեռքից ու զնելով քթին կարմրատակած
ոկտեց նվազել «ահարի»: Յերբ բոլորը դատարկեցին

թամակները, թամադան կարմրած աչքերը վոլորեց ազ-
պակատի վրա:

— Արշակ, Առոն Բեղի կենացը չես խմո՞ւմ . . .

— Աստված և վկա խմեցի, — շփոթված ասաց
ազգակատը:

Բարկացած թամադան ցատկեց տեղից, պատյա-
նից դուրս քաշեց խանչալը, ճախ ձեռքով վերցրեց
գինու կիսատ տկնորն ու վազեց աղվակատի կողմը:
Վախեցած աղվակատը ցատկեց տեղից ու կաղ վոտ-
քով դես-դեն եր վազում, թագնվում եր սրա-նրա
յետև ու արսափած կանչում:

— Բուն դի տեղը՝ կխմեմ, բուն դի տեղը՝ կը-
խըմեմ:

Նա խնդրում եր խանչալը դնել պատյանում,
բայց չեր կարողանում հասկացնել իր միտքը: Ոսե-
փը վերջապես բռնեց նրան, պառկեցրեց սարալանջին
ու կանչեց՝

— Զարոին բերեք . . .

Աղվակատը վախեցած ճայն չեր հանում և պառ
կած, անկանոն տարածած վոտքերը, աչքերը պարզած
գեպի յերկինք, սպասում եր թե ի՞նչ պիտի լինի:

Յերբ ճադարը բերին, Ուսեփը ճագարը դրեց աղ-
վակատի բերնին ու խանչալի ծայրը դնելով նրա փո-
քին կարգադրեց, վոր տկնորից գինին շուռ տան ճա-
գարի մեջ: Բոլորը հիացած թամադի սրամառու-
թյամբ ու ուրախ կատակով՝ քրքջում եյին, իսկ աղ-
վակատը մորթվող անասունի տեսքով մեծ կումերով
կույ եր տալիս ճադարից հոսող գինին: Նա յերբեմն
դադարեցնում եր խմելը շունչ քաշելու համար և

այդ ժամանակ գինին ձագարը լցվելով նրա յեղբերից կաթկթում եր ու հոսում աղմակատի վզի ու սպիտակ ոճիքի վրայից :

Անսահման զվարճացած այս տեսարանից, հյուրերը նորից սեղան նստեցին, իսկ հարբած ու դինով թրջված աղմակատը յերկու մարդու ողնությանամբ շաղված աչքերով մտավ վրան՝ իրեն հավաքելու:

Թամադան դեռ չեր հասցրել նոր կենաց առաջարկել, յերբ բինայում յերեացին յերեք նոր ձիավորներ : Նրանք իջան ձիերից ու լիքը խուրջինները վար իջեցրին : Դրանցից մեկը Հասան Աղան եր, մոտակա թրջական Դ. գյուղի ամենահարուստ անասնատերը, վորի վոշխարների հոտը 3000 գլխից անցնում եր : Նա հագել եր լեզվու շալից ընտիր չուխա, կապել եր արծաթե խանչալը, գլխին դրել եր բուխարու մորթուց շագանակապույն գեղեցիկ փափախ :

Սերգո քյոխվան իսկույն ընդառաջ դնաց թանկա դին հյուրին, համբուրվեց հետը և ուղեկցելով Հասան Աղին՝ նստեցրեց իր և թամադի արանքում : Թամադան իսկույն առաջարկեց Հասան Աղի կենացն ու ինքը զումով տուշ նվազեց նրա կենացի վրա :

Տուշից հետո Հասան Աղան շնորհակալություն հայտնելով վերցրեց բաժակն ու առաջարկեց խմել իր քիրզա, հայտնի վաճառական Գրիգոր խաղեյինի կենացը :

— Ինձ կարելի՞ յէ մի խոսք, — ասաց թամադան :

— Կարելի յէ, կարելի յէ, — ձայնեցին այս ու այն կողմից :

— Ինչպան վոր ես կենացը թանկապին և Հասան

Աղի համար, ենքան ել թանկագին և ինձ համար,
վորովհետեւ Գրիգորն խմ աղբերացում եւ Բայց Գը-
րիգորի կենացը հասարակ կերպով խմել չենք կարող:
Նրա սւապերը շատ ավանակ եյին սիրում, ավանա-
կը դժանց ոջախի բարեկամն եք: Գրիգորի պապերին
հարգելու համար պետք ե խմենք և ավանակի կե-
նացը:

Բոլորը հռհռացին: Թամադան վրանի առաջ կա-
սլած ավանակը բերեց սեղանի մոտ, լայն բացեց ա-
մանակի բերանն ու մի մեծ քրեղանով գինի լցրեց
նրա բերանը: Յերբ ավանակին բաց թողին, նա ան-
սրինակ դռոցով թողեց սեղանն ու փալանը շուր տը-
մած փախազ դեպի ձորը:

Սեղանավորները ցնցված եյին այս տեսարանից
ու թամադի սրամտությունից: Նրանք ուրախ քրքը-
ջում եյին ու անզուսպ ծիծաղից ջրակալել եյին նր-
րանց կարմրատակած՝ գինուց շաղված աչքերը:

Յերբ հյուրերը քիչ խաղաղվեցին, Սերգո
քյոխին պարելու ցանկություն հայտնեց: Ուսեփին
իսկույն աշադ զուռնաչու ձեռքից վերցրեց զուռնան
ու սկսեց նվազել այն յեղանակը, վոր սովորաբար
պարում եր Սերգո քյոխին: Սերգո քյոխին վոտքի
կանդնեց, վոտքերից հանեց չստերն ու գյուղական
գույնզպույն դուզպաները հագին սկսեց պարել կա-
նաչ խոտի մրա:

Նա լայն տարածած թևերը համարյա միշտ ան-
շարժ եր պահում, շատ կամաց շարժմում եր տեղում
ու կապույտ աչքերով սեղանավորների գլխի վրայով
նայում եր հեռու սարերին ու անտառներին: Նրա

պարի մեջ կար ինչ վոր խաղաղ ինքնազոհություն ու
հանգստություն։ Նրա անշարժ թևերը կարծես
ասում եյին, վոր թափահարելու վոչ մի կարիք չու-
նեն, վորովհետև նա արդեն հասել է այս բարձ-
րունքին, վորին ձգտել է։ Նրա կապույտ, անշարժ
աչքերը, վոր նայում եյին սարերի հեռուն, տիրա-
կան եյին, խրսխտ, ասես իրենց եյին յենթարկել այդ
բարձրունքներն ու սավառնում եյին նրանց վրա։
Հասան Աղան ել վոտքի կանգնելով սկսեց պարել
Սերգո քյոխավի հետ։

Յերբ յերկար պարելուց հետո, իրար թևի տա-
կով անցնելով Հասան Աղան ու Սերգո քյոխավեն համ-
բուրվեցին, սեղանակիցների ցնծությանը սահման
չկար։ Սակայն մի ըոսկեյում ասես խամբեց այդ
ցնծությունը, պապանձվեց սեղանը։ Սերգո քյոխավեն
պարը վերջացնելով ցանկացավ հազնել չստերը և
չկային նրանք։

— Թուրքերը դողացած կլինեն, — ասաց մեկը։

Այդ բավական եր, վոր վողջ սեղանը վոտքի յել-
ներ ու Լեռն Բեգի գլխավորությամբ շարժմեր
դեպի թուրքերի մոտակա բինան։ Նրանք քայլում
յին գուտնայի նվազի տակ, վոմանք նույնիսկ պա-
րում եյին։ Սերգո քյոխավան քայլում եր Հասան աղի
հետ միասին բորիկ վոտքերով ու նրա նախշուն դուշ-
պաները շալպտուրիկ եմին տալիս կանաչ խոտերի ու
դեղին նարգիզների մեջ։

Հազիվ մի տասնյակ աղքատ, մանր վրան-
ներ ծվարել եյին անտառի յեղբին։ Նրանց մեջ չկային
բարձր, կլոր գեղեցիկ կարպետներով գարդարմած

«Հարիս» մրաններ : Դագաներից ցած շինած եր «Ճեռը» : Մի քանի կանայք նրա վրա ընկած պատվում ենին, վորպեսզի փոքրացնեն մալարիայից ուռած իրենց փայծաղները :

Այդ թուրքական բինան եր :

Ամոթիսած թուրք կանայք այդքան մարդ տեսնելով, իսկույն փաթաթվեցին չարսավների մեջ ու յերեխաններին շալակած մտան վրանները : Նրանց հետեւ գեռ զատարկ պատվում եր լվացքի սապոնով ոծած «Ճեռը» :

Սերգո քյոխմի թափորը կանգնեց բինայի դիմաց : Լևոն քյոխալան ուրյաղնիկների ու ստրաժնիկների հետ առաջացավ դեպի վրանները :

Քիչ հետո ստրաժնիկները մի գյուղացու դուրս բերին վրանից դեմքն ամբողջովմին արյունլվա, նրա մեջքին ստրաժնիկներից մեկը խփում եր հրացանի կոթով : Նրանց հետեւից դուրս յելազ ուրյաղնիկը՝ մի զույգ չստեր ձեռքին :

Սերգո քյոխմինն ե՞լին այդ չստերը թե չե, խեղճ գյուղացին այդ չստերը գողացել եր, թե՞ իր տոն ուրերի չստերն ելին, վոր պահել եր ծալքի տակ, այդ միւնութին եր ստրաժնիկների ու լևոն Բեգի համար :

— Բինան քանդել, բոլորը հենց ես բոպեյիս թող քոչեն, — յերկար բնիսերն ինքնազոհ վոլորելով կարգադրեց լեւոն բեղը :

Ստրաժնիկների ողնությամբ գյուղացինները վրանների ռաներն ելին հանում, թաղիքներն ելին փաթաթում ու բարձում սայլերին : Սայլերն իշնում ելին դե-

պի ձորն ու նրանց հետևից յերեխաները շալակներին
տիսուր քայլում եյին թուրք կանայք :

Քիչ հետո, բինայի տեղ մնաց ոջախների հետ-
քերը մի քանի սեացած քարերով, գտպաների թախ-
տերի տակ փարթամ աճած սպիտակ խոտերը և անա-
սունների աղբը, վոր անհամաչափ ցրված եր վողջ
բինայով մեկ :

Ճեռը վոչ վոքի պետք չեր ու մնացել եր բինայի-
վերին սարալանջին, վորի կողքին չտոերը հաղին-
պարում եր Սերդո քյոխինն ու ավելի զել հնչում եր
Ռւսեփի դուռնան :



ՔԱՐՎԵՑ ՏԱՐԻ ԱՆՑ



Յերկրորդ անգամն եր, վոր մենք գործադուլի ե-
յինք պատրաստվում:

1906 թվի ոգոստոս ամիսն եր, ամառվա ամենա-
լավ ժամանակը: Որն ել շատ լավ հիշում եմ—ամսի
յերկուսն եր: Եղ որերին մեր քունն ու դադարը կըտ-
րել եր, մտածում եյինք վո՞նց անենք, վոր գործը
հաջող դնա, վոր անպայման հաղթողը մենք լինենք:

Մեզ զեկավարողը մեքենայական ցեխի մի դար-
բին եր:

Վրացի մի սիրում ու բոյով տղա յեր նա, վոր
վոչ ահ ուներ, վոչ ել առանց մտածելու մի բան կա-
ներ: Բանվարները՝ Հայ լինեյին, Թուրք թե ոս—Զե-
լիմեյին շատ եյին սիրում, նրա խոսքը լսում եյին:
Ավ մի դանդառ ունենար, նրան կտսեր, ով սրտումը

մի խորհուրդ ունենար — նրան կպատմեր : Զելի-
ձեն մի սովորություն ուներ, վոր բոլոր բան-
կորների հետ միշտ առանձին — առանձին կիսուեր,
նրանց տունը կզնար, մի խոսքով ամեն մի բանվորի
մտերիմ, ամենահավատարիմ ընկերն եր դառել : Ես
ել մեծ նշանակություն ունեցավ, վոր բանվորները
սրտով ու միաբան համաձայնեցին գործադուլին
դուրս դալ :

Ճիշտ և, մի անգամ 1905 թվի դեկտեմբերին գոր-
ծադուլ եյինք արել, բայց ելի են ժամանակ հեշտ
չեր բանվորին գործադուլի դուրս բերել : Թե՛ բան-
վորները հիմիկմա չափ դիտակից չեյին, և թե՛ շատ
եր վտանգավոր — գործադուլավորներին բանտար-
կում եյին, Սիրիր եյին քշում, ով կառկածելի յեր
թվում՝ ձեռաց գործից հեռացնում եյին :

Գործադուլից մի որ առաջ, Զելիձեն մեղ մեկ
մեկ ասաց, վոր գիշերը հավաքվելինք գետափը : Են
ժամանակ զավողը հո եսենց չեր : Ես ձորերը սաղ բա-
ղեր եյին, մենակ զավողն եր ու մի քանի տում :
Մենք մեր ժողովները բաղերումն եյինք անում :

Գիշերը ով չեր աշխատում, կամաց — կամաց,
մեկ — մեկ հավաքվեցինք ճալա : Մառերի տակ ահա-
դին մարդ եր հավաքվել . շատերը կարծում եյին Զե-
լիձեն մի քանի մարդ ե կանչել և զարմանում եյին,
վոր եղքան բանվորություն և հավաքվել, վոր եղ-
քան մարդ համաձայն և գործադուլին :

Զելիձեն մանրամասն բացատրում եր, թե յերբ
պիտի գործը թողնել, թե գուլուկը ի՞նչ ձևով կտա,
թե գործը թողնելուց հետո վո՞րտեղ պիտի հավաք-

վել : Բոլորիս տրամադրությունը շատ բարձր եր, բոլորս ել հաստատ գիտելինք, վոր տնպարման կը հաղթենք : Ամեն մեկն ել, վոր տեսնում եր Զելիձեցին, լսում եր նրա համոզված խոսքերը, ավելի յեր սրտապնդմում, ինքն ել եր նրա նման վրդեռությամբ լցվում :

Եերբ ամեն ինչ վորոշված ու պայմանավորված եր, Զելիձեն, ասաց՝

— Բա գուղոկն ո՞վ կտա . . .

Մի բոպե սուս կացան : Քիչ հետո մի քանի հոգի ցանկություն հայտնեցին : Յես ել, վոր շատ եյի ուղում դործագուլին ակտիվ մասնակցել՝ դուղոկը տալու ցանկություն հայտնեցի :

Համաձայնվեցին, վոր յես տամ : Ուրախությանս չափ չկար : Յես ուղում եյի ասել՝

— Տղերք, ինչ ել լինի յես դուղոկը ժամանակին կտամ, չկասկածեք :

Բայց վոչինչ ել չասացի :

— Ենքան պիտի տաս, վոր հանքերի գուղոկի պատասխանը լսվի : Մինչեւ նրանց պատասխանի ձայնը չլսես՝ ցած չես գա, — ասաց Զելիձեն :

— Զմոռանաս հա՛, դավորակից հետո, ճանապարհին ինձ ասում եր Զելիձեն, բացատրում եր թե վոնց հասնեմ գուղոկի մոտ, վոր վախենալու բան չկա, վոր ուրիշ բանվորների ինքը կկանգնեցնի հընոցի մոտերքը :

Մյուս որը նախաճաշից հետո, յերբ բանվորներն անցան աշխատանքի յես ել զնացի իմ գործին : Հնուցապանը մի ուսւ բանվոր եր : Նա չգիտեր գործա-

դուկի մասին։ Նա մենակ եր այնտեղ և յերբ ինձ
նկատեց, առեց, վոր եղանեղ չի կարելի կանգնել։

Յես առանց նրան ուշադրություն դարձնելու,
սանդուղքներով սկսեցի բարձրանալ, համա աչքիս
պոչով կաշեղարին եյի մտիկ տալիս։ Նա վոր տեսավ
բարձրանում եմ՝ վազեց դեպի ինձ ու փեշերիցս սը-
կսեց ցած քաշել։ Յես փեշիս տակից բեհրուղը դուս
քաշեցի ու ասի՝

— Զեն չհանես . . .

Նա յել տեղից չշարժվեց։

Յես դուդոկի մոտ եյի։ Ուրախությունից սիրտս
խփում եր։ Յես ձեռքս գցեցի գումակին ու յերկար
տրեւողի նման սկսեցի դուդոկը տալ։ Զեռաց յեկալ
ինժեները։ Նա շնկված դես-դեն մտիկ արավ, համա
մի խոսք ել չասաց ու դնաց։ Նրա գնալուն պես յեկալ
պահակներից մեկը։ Նա նայեց իմ կողմն ու հրացանն
ուսից իջեցրեց։

Եղ ժամանակ բանվորներն արդեն հավաքվել ե-
յին։ Նրանք հարձակվեցին պահակի վրա ու գոռացին։

— Կորի, կորի ստեղից . . .

Պահակը փախալ։

Յես դեռ տեղս կանգնած գուդոկը տալիս եյի . . .

Վերջապես իմ գումակի ձենին հանքերի գուդոկը
պատասխան տվեց . . . գործադուլն այնտեղ ել սկսվեց։

Յես դուդոկը ժամանակին եյի տվել։

Դրանից ավելի եյի ուրախացել ու սիրտս գուդո-
կի հետ ուժեղ խփում եր։

Ուուշկեն թողի ու իջա։ Դուքս յեկա թե չե, բան-

Վորները շրջապատեցին ինձ, թոցքին վերև ու ճռ-
ճռում եյին իրենց ձեռքերին...

* * *

Հիացմունքով ու հակառակությամբ լցված յերի-
տասարդ բանվորները լսում են վարպետ Պողոսին:
Նրանք բոլորը կոլտնտեսական դաշտերից նոր են հա-
վաքվել գործարան: Ու վարպետ Պողոսի հասարակ
անպաճույն խոսքերով պատմածը Զելիձեյի ու հա-
րյուրավոր գործադուլավոր շախտյորների ու պրղըն-
ձագործների կատարած աշխատանքի մասին հեքիաթ
և թվում խորհրդային իրականության մեջ աճած կոմ-
յերիտականներին:

Վարպետ Պողոսը վերջացնում է իր հուշերը յերի-
տասարդների հավաքույթում: Մեր լուակյաց վարպե-
տի աչքերը նորից մառվում են յերիտասարդ որերի
հրով: Նա հրճվանքով լի ստուգող հայացքով նայում
է դահլիճին: Այդ խանդավառ հարյուրավոր յերիտա-
սարդները կարծես իր սուլիչի ահազանգով են հա-
վաքվել այդանող: Նրա ականջին տարիների խոր-
քից գեռ թարմ, հաղթական հնչում է իր ահազանգը:
Ու հանքերի հեռումներում աշխատող բանվորների հո-
գու խորքից նրա ականջին են հասնում իր սուլիչի
արձագանքները:


Նու անհուն յերջանկության ժպիտը դեմքին
հանդարտորեն իշխում է տմրիոնից:

Տասնյակ յերիտասարդներ տեղերից ցատկում են
ու ընդառաջ գնում սիրելի վարպետին: Նրանք իրենց
լուստ թևերին են առնում նրան:

Ու քսան վեց տարի անց, ինչպես սուլիչի սահ-
ղուղքներից իշխելու որը, տասնյակ զույգ ձեռքեր
ճոճում են նրան իրենց գլխի վերև, նրա մարտական
ահազանդի ու այսորվա հերոսական աշխատանքի
համար . . .



ՅԵՐԵՒ ԿՈՒՑԱԵՐ



Հսկա ժայռը հրվանդանի նման սուր քթով կախ-
վել և խոր անդունդի վրա։ Զորում բարակ պարանի
նման վոլորուն ընկած և սպիտակ, փրփրաբաշ վտա-
կը, վոր գալիս և հեռու անտառներից ու նորից կոր-
չում թափ անտառների մեջ։ Ժայռերի հարթ տարածու-
թյան վրա լայնանիստ բաղմել և Աղթալայի մանքը։
Նա յել կարծես վախեցած նայում և իր առաջ բացված
խոր անդունդին, բայց չի կարողանում յետ քաշվել
ժայռի պոնկից։ Այն կողմից, ուր ժայռն ուղղահա-
յաց ու անառիկ չե, բարձրացել են հինավուրց բերդի
պարիսպներն ու նրանց վրա աշտարակներ են կա-
ռուցվել։ Այդ աշտարակները հիմա արդեն քանդվել

են և միայն նրանց բեկորները վանքի մուտքի մոտ
ավերված, կիսալուսնի նման նայում են ձորին:

Վանքի կողքին ծվարել և հին շենքի մի մնա-
ցորդ: Բակի խորքից փշե ցանկապատը կեռ ուղիյով
տանում ե դեպի մի դուռ, վորի շրջանակի վրա ծաղ-
կանկար հին փորագրություններ կան. դուան կամարի
քարերը բաժանվել են իրարից ու արդեն թափվում
են: Այդ դուռը տանում ե դեպի վանականների շենքի
նախկին մի ընդարձակ սրահը, վորն այժմ տանիք
չունենալով վեր ե ածվել սքանչելի պարտեղի: Հաս-
միկի փարթամ, ցածր թփերը կանոնավոր շարքով
պարտեղի մուտքից ձգվել են մինչև նրա կենտրոնը:
Նրանց բողբոջները հենց նոր բացվել են ու ցնծադին
փարթամությամբ ժպառմ են արևին: Պարտեղի
կենտրոնում չուայլ մատղաշ շյուղեր արձակած բարձ-
րացել են թթենինները, բալի դեղեցիկ ծառերն իրենց
փայլում բներով ու խնձորենինները, վորոնց ճյուղե-
րին սպիտակ փոշու թավշյա մի շերտ ե բռնել: Պար-
տեղի արևարայաց պատերից մեկի վրայով դեպի
վեր են բարձրացել պտուտակներն ու բազմաթիվ ճյու-
ղերով խճճվել են, հյուսվել իրար:

Պարտեղում, այնտեղ, վորտեղ կանաչներ չկան,
գետինը մաքուր ավելված ե, ջրված: Մառերի ուղա-
վերների տակ նստած են յերեք կին: Նրանցից մեկը
թուղե պղինձը կրակին դրած բանջարեղեններից ինչ-
վոր ճաշ ե պատրաստում: Նա գդալլը ձեռքին խա-
ղաղ խառնում ե ճաշն ու յերբեմն—յերբեմն գլուխը
վեր բարձրացնելով նայում ե մյուս յերկու կանանց,
վորոնք լուռ գլխիկոր նստած են քարերին: Այդ մի

վարկյան և միայն տեսում և նա գլուխը իշեցնելով
նորից կամ բանջարեղենի մնացորդն և կտրտում
կաթսայի մեջ, կամ մի քանի չոր փայտի կտոր ավե-
լացնում կրակին:

Յերեք կանանց մեջ նա ամենից յերիտասարդն
եր, 30—32 տարեկան, բարձրահասակ, վայելչակաղմ
մի կին, Լայն, գեղեցիկ ճակատի տակ աղեղների
նման ձգվող հոնքերը, վերեկց պարուրում են նրա
կապույտ աչքերը, վոր արդեն կորցրել են իրենց
կրակն ու փայլը: Նա զվարին ամուր կապել և ձեռա-
գործ մի շալ ու սև են նրա բոլոր զգեստները: Մյուս
յերկու կանայք ել հաղիվ են շարժվում. նրանք
գունատ ու պաղ, բազմաթիվ հազուատների մեջ
փաթաթված նստում են արեի տակ ու ծուլորեն,
դանդաղ քաշում համրիչի հատիկները: Միայն այդ
փակ պարաեղն ու նրանց սև համազգեստներն են հի-
շեցնում նրանց վանական լինելը:

Նրանցից յուրաքանչյուրին ունի իր առանձին բնա-
կարանը: Հին շենքի ավերակներում, նրա պատու-
հանների ու դրների մեջ նրանք պատրաստել են իրենց
խցիկները: Այդ խցիկներից յերկուսը ցածրում են,
իսկ մեկը մի հարկ բարձրում, 'շինված յերկրորդ
հարկի դրներից մեկի մեջ. պարտեզից գեպի այդ
խցիկն և ձգվում մեջքը կորցրած մի բարակ սան-
դուղք: Այնտեղ բնակվում և կույսերից ամենավա-
գը, վորն արդեն 36 տարի ապրում և վանական կյան-
քով: Նրա խցի հարևան պատուհանում դրված են
տարբեր ձևի շներ, թիթեղե ծինելույզներ, ժանդու-
ված դույլի մնացորդներ:

Շառներից մեկի վրա կախված եւ գեղեցիկ կապույտ մի ըլացարան իր մաքուր պղնձեն թասով, պատի տակ դրված են թեյաման, կաթսաներ ու տնային այլ կարասիներ :

Յերիտասարդ կույսը վերջին բանջարեղենները լցնելով կաթսայի մեջ, փայտե կափարիչով ծածկեց կաթսայի բերանն ու գլուխն առնելով յերկու ձեռների մեջ լուռ քաշվեց իր խուցը : Յերկու պառավները վշտոտ հայացքով նրան ուղեկցեցին մինչև խցի դուռը և յերբ նրանց հայացքներն իրար հանդիպեցին, առանց ծպտուն հանելու նրանք հասկացան իրար :

— Նորից բանեց Աննայի գլխացույը, — Հաղիկ մրմնջաց ավագ կույսն ու ասես մի բան արած լինելու համար սկսեց ամրացնել գլխի շորը :

— Այսոր ել չի կարող փորել բանջարանոցը . . .

— Ե՛խ, աստված, չմեռանք մենք ել . . .ով մի տեր ուներ—դնաց այս վանքից, մենակ մենք մնացինք . . . թե հիվանդանա Աննան ի՞նչ կլինի մեր ճարը :

Ել շխոսեցին պառավները : Նրանք յերկուսն ել մոտեցան ոջախին դրված կաթսային, նստեցին նրա մոտի քարին : Յերբեմն—յերբեմն նրանք միմի բարակ ճյուղ եյին զցում ոջախի մեջ ու մոլոր հայացքով նայում կրակի թույլ բոցկլտոցին : Նրանց մոտ հստած կատուն ահտարբեր շարժում եր պոչը, ցատկում եր այս ու այն կողմ, յեռանդուն ճանկուում եր հողը կամ ծառերի բներն ու նորից պառավների մոտ գալով լիզում եր իրեն, թաթերն անընդհատ քսում դնէին ու ծուլորեն հորանջում արեկի առաջ փակելով աչքերը :

Անեան գլուխն առած ձեռքերի մեջ, հնաված էր
իցի լուսամուտին մտածում եր: Նրա խցիկում մի
մարդ հաղիվ կարող եր շարժվել: Լուսամուտի առաջ
սարքված եր նրա անկողինը, վոր ծածկված եր հնա
մաշ բայց մաքուր ձեռագործով, մահճակալի առաջ
զրված եր փոքրիկ կլոր մի սեղան, անկյունում կախ-
ված եր տիրամոր նկարը, իսկ ամբողջ պատը բռնել
եր ընդարձակ քարտեղ, վորի վրա գծապրված եր
քրիստոնեյության տարածման պատմությունը:

Գլխացավը Աննային մոայլ խոհերի յեր մղում,
վորոնք միշտ նրան հուսահատության ելին հասցնում
և վոչ մի լուսավոր կետ չեր տեսնում նա իր կյան-
քում: Արդեն ամեն ինչ վերջացել եր իրենց մոտ,
սպառովել եյին վերջին պաշարները: Արդեն գարուն եր
դուրսը, բայց ինքն այլևս աշխատել չեր կարողանում
հետզհետե ուժեղացող գլխացավից: Նա տեսնում եր
թե ինչպես աստիճանաբար ուժասպառ և լինում ին-
քը: Իսկ ի՞նչ կուտեն վաղը պառավները: Միթե ին-
քը կթողնի վոր սովամահ լինեն նրանք: Չե՛ վոր ին-
քըն ե նրանց վերջին ապավենը:

Բայց հանկարծ մտքերը նրա գլխում կարծես հա-
կառակ ընթացք եյին ստանում, նրանք կարծես ծառս
եյին լինում ու հարձակվում իր վրա: Նա իրենց խը-
ցերից դուրս տեսնում եր կյանքը: Տեսնում եր, թե
ինչպես շրջապատում ամեն ինչ այլ, լայն հունով և
ընթանում: Ի՞նչն ե իրեն խանդարում ընկնել այդ հու-
նի մեջ, ապրել այնպես, ինչպես միլիոնավոր այլ կա-

նայք են ապրում։ ԶԵ՞ վոր ինքը վանք և ընկել իր-
բե վորք յերեխուա։ նա վանքին նայել և վորպես մի
ապաստարան ու այդքանով և կապված յնդել նրա
հետ։ Ել ի՞նչ ռժվարություն կա սրոկվելու այդ մըդ-
ճաշանջից և ընթացք ու բովանդակություն տալու
իր կյանքին։

Իսկ պառավնե՞րը . . .

Այս հարցը մյուս կողմից առես գաղտադողի,
ինչ վոր մի մութ տեղից սողում եր նրա ուղեղն ու
նորից մթազնում նրա պայծառացող մտքերը։ Բայց
պարտավո՞ր և նա դեռևս յերիտասարդ իր կյանքը
խավարեցնել այդ պառավների համար։ ուերջապես
ի՞նչն և իրեն պարտադրում դրան։ Ապա դադանի ա-
սես ինքն ել թագցնելով իրենից, նա իր սրտի խոր-
քում տեսնում եր խարայաշ, թիկնավետ մի տղա,
վոր դվարթ, սուլելով անցնում եր իր բանջարանոցի
մոտով ու քաղցր ժաղտում իրեն։ Այդ կարծես պայ-
ծառացնում և նրա մտքերը, կարծես հենց այդ և,
լարիրինթի նման խճճված իր մտածումները պայծա-
ռանում են, բայց դարձյալ իր մեջ ուժ չի գտնում
հեռուն գնալու։ Նա դանդաղ բարձրացրեց գլուխը։
Դեմը խաղաղ, իրենց չքնաղ պարտեզն եր ու ոջոխի
մոտ գլխիկոր նստել եյին յերկու պառավները։

Այս խոխի մտքերը ցրելու համար նա դուրս յե-
կալ խցիկից, վերցրեց պատին հենած քահը, վերցրեց
թեյամանն ու համբ քայլերն ուղղեց դեպի պարտեզի
կուռք։ Պառավները լուռ նայեցին նրա հետևից, հա-
ռաչեցին ու դիմիկոր մնացին քարերին նստած։

Պայծառ գարնանային առավոտ եր :

Արևեն իր ճառապայթներով շռայլ վողողել եր լեռներն ու անտառները . ձորում արդեն նա զգացնել եր տալիս իր ուժն ու աւաք արեկ տակ թռչկոտում եյին սպիտակ թիթնոները : Փարթամ աճել եյին բաղեղները , մանր թփուտներն արդեն պատել եյին կանաչով ու նրանց տակից ժպտում եր մանուշակը : Վանքի տակի նեղ արահետով այդ կանաչների միջից քայլում եր Աննան :

Դեռ ձորի վտակին չհասած , ուր սարալանջը թեք վելով կորցնում եր իր ուղղահայաց դիրքը , յերեսում եյին լորու մարդերի հետքերը , այստեղ-այնտեղ դեռ ցցված եյին մնացել անցած տարվա բույսերի չորացած ցողունները : Այդ կույսերի բանջարանոցն եր : Աննան հասնելով այդտեղ , թեյամանը դրեց մի ըստվերում ու հողի մի ծայրից սկսեց փորել : Նա փորում եր , բայց ուժեղ դլխացավը չեր թողնում աշխատել . նրա աչքերը սեանում եյին , հանկարծ կը-տրվում եր նրա լսողությունն ու ել չեր լսում թըռչունների ուրախ յերդը : Նա այժմ տեսնում եր իր վանական , անիմաստ կյանքի հետևանքները . միշտ յերկու պառակների ու կատվի հետ առանձնացած նա այնպես եր կտրվել մարդկանցից ու կյանքից , այնպիս դյուրառդրդիռ եր դարձել , վոր վոչ միայն մարդկանց աղմուկը , այլ անգամ թռչունների խրախճանքը , այն ամենը , ուր կյանքի ու յերջանկության նշան կար , ապղում եր նրա ջղերին , նա ալելի լուակ-

յաց ու մելամաղձուտ եր դառնում : Այդ պատճառով ել նա առանձնացած իր խցիկում միայն ձեռագործ եր անում , վոր նրան տալիս ելին այդ գյուղի ընակիչ-ները :

— Աննա , Աննա , ի՞նչ ես մտածում , — ցածրի թը-պուտներից նրան ձայնեց մի յերիտասարդ աղջիկ ու վաղերով մոտեցամ նրան :

— Բարե Անյուտա , — սասաց նա ու ամուր թա-փահարեց Աննայի ձեռքերը :

— Բարե աղավնյակս , — սթափվելով պատասխա-նեց Աննան :

Դա մի աղջիկ եր թուխ դեմքով , հունական ու-ղիղ գեղեցիկ քթով , վորը նրա դեմքին այնպիսի ար-տահայտություն եր տալիս՝ թե այս ե , պիտի խնդա , բայց զսպում եր իրեն : Նա բաց չթողնելով Աննայի ձեռքը , քնքշորեն շոյում եր և ափսոսող հայացքով նայում նրա դեմքին :

— Ախր Աննա , բահով փորելով ու խցում մնա-լով բան դուրս չի գա : Մի տես թե դուրսն ի՞նչ ե կատարվում : Յերեկ այնտեղ զրուցում ելին , կոռպե-րատիվում շատ հավանել են քո աշխատանքները , քեզ ցանկանում են վերցնել իրենց մոտ , բոլորն ել գիտեն , վոր դու հսկատացյալ չես : Յեկ աշխատիր և կտես-նես , թե հետո ի՞նչ լավ կլինի :

Տարակուաանքով այդ հույն աղջկանն եր նայում կույսն ու կարծես վոչինչ չեր հասկանում : Նա մի-այն տեսնում եր , թե վորքան կյանք կա այդ աղջկա մեջ ու դեռ վորքան ծարավի յե նա կյանքի . այդ ան-հում թախիծով լցրեց նրա սիրտը : Նրա հոգին լցվեց

բումն մի զգացմունքով ու չպիտեր նա՝ դա առելություն և դեպի այդ յերիտասարդ, կենսուրախ աղջիկը, թե նախանձ։ Բայց դիտեր, վոր այդ ամենը ներքուստ իր սրտի խորքից հնչող կյանքի կոչն ե, վորի դեմ սակայն ինքն անզոր է։ Հուզմունքից ու իրեն պատաժ խոր արտմությունից նա չեր կարողանում խոսել։

— Զի լինի աղավնյակս . . . հաղիվ շնչաց նա։ Մարդկանց մոտ չեմ կարող։ Այսպես արդեն վարժվել եմ . . . կապրենք մի կերպ . . .

Նա ել չխոսեց. վերցրեց բահն ու դանդաղ, գըշիկոր փորում եր պարաբո, խոնավ հողը։

Կարծես ափսոսաց իր արածի համար հույն աղջիկը. նա գորովանքով լի մի հայացք նետեց Աննայի վրա ու արահետով բարձրացավ վեր։

Աննան արդեն ուժասպառ եր յեղել, բայց համառութեն շարունակում եր աշխատել։ Նրա շուրջը յեռում եր աշխատանքը։ Քիչ վերը ուրախ հռինդով աշխատում եր բրեմսրերդը, վոր անընդհատ հանքաքրով լի վագոններ եր իջեցնում ձորը։ Այնտեղ, ցածրում, բանվորներն այդ վագոններն իրար եյին կցում, մտրակում եյին ձիերին ու . զվարթ սուլոցով անհետանում դեղնցիկ ձորում։ Աննան յերբեմն յերկար, ակնապիշ նայում եր յերթեկելող այդ վագոններին, ձիերին, վոր պոչերը թափահարելով վազում եյին վագոննետների առաջից, մարդկանց, վոր այնպես անհօդ սուլում եյին ու կարծես վոչինչ չեր հասկանում այդ ամենից։ Ապա նա նայում եր վեր ու տեսնում վանքն ու հին բերդի գորշ պատերը։

Հանկարծ նա ուրախ, ռուսական յերդի թեմի
յեղանակ լսեց հեռու թփերի յետեւ, վորը քիչ հետո
սուլոցի վերածվեց։ Շանթահարի նման ցնցվեց Ան-
նան—ուժգին սկսեց բարախել նրա սիրտը։ Հուզ-
մունքից սկսեցին դողալ նրա ձեռքերն ու վոտքերը,—
այդ նա յեւ։ Այդ նա յեւ, հանքերի թիկնավետ բանվո-
րը, խարտյաշ ոռւս տղան։ Սիրում եր ինքը նրան
թե չեւ—այդ չեր հասկանում Աննան, բայց նրա ներ-
կայությունը, այն, վոր նա քնքությամբ ու սիրով
եր նայում իրեն—անհուն բերկրանքով եր ցնում իր
հոգին։ Նա զգում եր, գիտեր, թե այդ խարտյաշ տը-
ղային հանդիպելուց հետո ինչպես մի տեսակ փոխավել
եր կյանքը իր տչքում, կարծես քաղցրացել եր վոշ-
ինչ չարժեցող ամայի այդ կյանքը։

Եեկ ահա, նա նորից նկատելով իրեն, գալիս և
տեսնելու իրեն, խոսելու իր հետ։ Վորքան քաղցր ե,
վորքան լավ ե լինել նրա հետ։ Բայց մի ուժ, անհաղ-
թահարելի, ներքին անընկճելի մի ուժ հետ ե մղում,
հետ ե պահում նրան։ Վորքան քաղցր ե նրա հետ
լինելը, բայց նա չի կարող տանել նրա ներկայու-
թյունը, չի կարող տեսնել, թե ինչքան սեր ու զուր-
գուրանք կա նրա հայացքում։ Այդ շատ ոտարութի յեւ,
անհնարին, այդ չի կարող տանել, ինքը։ այդ անսո-
վոր ջերմությունը մոլորեցնում եր նրան։

Այս մաքերն ասես ավելի արագացրին նրա օրտի
զարկերն ու մինչ թփերի յետեւ ավելի ու ավելի
մոտենում եր սուլոցը, նա շտապ վերցրեց թեյամանը,
բահը դրեց ուսին ու սկսեց բարձրանալ սրահետով
զեպի վանքը։ Յերբ արդեն մոտենում եր սրարիտապնե-

րին, նա կանգնեց. մէ անհաղթահարելի ուժ նրան
ասես ստիպում եր հետ նայել: Նա ծանր, ասես ա-
կամայից հայացքն ուղղեց դեպի բանջարանոց: Այն-
տեղ ցածրում, ուր քիչ առաջ ինքը փորում եր գե-
տինը, քարի վրա նստել եր յերիտասարդ բանյորն ու
տիտուր նայում եր իր յետեկց:

4

Աննան վայրկյանապես թեքեց գլուխն ու կեռ տ-
րահետով շարունակեց բարձրանալ վեր:


Ցրիվ ու մոլար եյին՝ նրա մտքերը: Նա չեր կարո-
ղանում հաստատուն քայլել այդ կածանով, վորով
հաղարավոր անդամ ձորն եր իջել ու բարձրացել վեր:
Նա չեր կարողանում հաշիվ տալ իրեն, թե ի՞նչ ե
կատարվում իր հետ: Առաջին անդամ նա իր մեջ լլ-
սեց սիրո ճիչը. առաջին անդամ նա զգաց սիրո հղո-
րությունն ու այն, թե ինչպես ինքն անզոր ե նրա ա-
ռաջ: Նա արդեն անդոր եր ամուր, անզուալ սիրելու
մարդուն:

Նա անհամաչափ, մոլոր քայլերով բարձրանում
եր դեպի վանքը:


Նրան հետ եր քաշում արդեն զոչ թե վանքի ու-
ժը, այլ այն յերկու պառավները, վորոնց կյանքի
վրա կապարե խաչի նման ծանրացել եր վանքը:

Նա գնում եր այնտեղ, պառավների հետ միասին
խաղաղ սպասելու անիմաստ մահվան:





ԾՈՎԵԶՐՅԱ ՀՈՒՅԶԵՐ



30. #5

I

Ծովն անհանգիստ եր:

Անտեսանելի հեռումներից, վոր մշուշփում եյին
թափանցիկ մի քողով, դեպի մեզ եյին դալիս ծովի
կնճիռները։ Նըանք մոտենալով ափին ուռչում եյին,
վիթիարէ սահանքով վեր բարձրանում ու դառնում
լայն, հղոր ալիքներ։ Հարձակման անզուսող կրքով
բռնված ալիքներն որորվելով առաջանում եյին։ Նը-
րանք ափի մոտ բարձրանալով ծովի մակերեսից,
փրփրաբաշ ծառու եյին լինում ու ահոելի շառաչյու-
նով զարնվում ափին։ Յեկ յերբ ջրերը հետ եյին
քաշվում։

— Վա՛ ՀՀ... նրանց հետ ազմուկով դեպի ծովն

եյին քաշվում մանր, սահուն քարերը, զարմանելի
թախիծով համակելով վողջ ծովեղերքը:

Մովս այդպես հետ քաշվելով իր ափերից, կար-
ծես չունչ եր քաշում ու նորից հարձակվում ափերի
վրա:

Յերեխաների ուրախությանը սահման չկար:

Նրանք հանդուգն, չարաճճի ընդառաջ եյին
զնում ալիքներին ու յերբ ալիքներն ափին մոտենալով
ծառս եյին լինում, նրանք մի վոստյունով իրենց
ալիքների մեջ եյին նետում: Մի պահ անհե-
տանում եյին յերեխաներն ալիքների փրփրադեղ տա-
րերքի մեջ ու յերբ ջրերը հետ եյին քաշվում, նրանք
վեր եյին յելնում թափալված տեղից, յերեսները մաք
բում եյին ջրից ու աչքերը ճպճպացնելով սպասում
ալիքների նոր հորձանքի:

Ալաղը նահանջում եր ալիքների առաջ:

Ամեն անգամ ալիքները ծովի հատակից խխունջ-
ներ, փնջերով ծովային խոտ. ու մանր քարեր եյին
ափ հանում, բարձրացնում եյին ափն ու ալիք-ալիք
նրան աննկատելի հետ մզում:

Մենք նստած ծովափին ուշադիր հետևում եյինք
ալիքների այդ քմահաճ խաղին ու լուռ խորհրդա-
ծում քիչ առաջ ավարտած մեր վեճի մասին:

Վոչ վոք մեղնից չեր խոսում. մենք խուսափում
եյինք իրար հայացքից: Հայացքներս հառած ծովի
հեռուներին, մեղնից յուրաքանչյուրը կարծես իր
հարցերի պատասխանը սպասում եր հուզված ծովի
գոռ ալիքներից, վոր իրար հետևից զարնվում եյին

ափին՝ մեկը մյուսից մոլեղին, մեկը մյուսից կըր-
քուտ...

2

Ահա թե վորտեղից սկիզբ առավ մեր վեճը:

Սաշան կաղմակերպել եր հերթական եքսկուրսի-
ան: Մենք բարձրացել եյինք ծովափնյա լեռներից
մեկի կատարն ու տեղավորվել հին բերդի ավերակ-
ների մոտ: Քնքուշ միմոգան թեքվել եր դեպի սա-
րալանջն ու ճապոնական հովանոցի նման խիտ սալեր
ձգել մեղ վրա: Ցեղարը-մեր սանատորիայի բոլորի
կողմից սիրված միակ շունը պառկել եր դետնին,
դլուխը դրել թաթերին ու լեզուն հանած հեռում եր:
Նա ճանապարհին խուզարկում եր բոլոր թփերը՝ լոր
բոնելու համար, հետապնդում եր անգամ մորեխնե-
րին, վոր թռչկոտում եյին խոտերի մեջ ու դրանից
հոգնել եր:

Թե քանի՞ յերրորդ անդամն եր Սաշան բարձրա-
նում այդ ավերակների մոտ՝ դժվար եր ասել: Նրա
գործն այն եր, վոր հիվանդներին ծանոթացներ շր-
ջակա զգեղարվեստական տեսարաններին— ինչպես
ինքն եր ասում: Համարյա ամեն որ նա դարմոշկան
կախում եր ուսից ու հիվանդների մի խումբ աանում
վորեւ ուղղությամբ: Հասնելով զգեղարվեստական
տեսարաններին Սաշան այդ վայրի մասին պատմում
եր ինչ լսել եր սրանից-նրանից: Այդ ժամանակ շատ
խղճալի կերպարանք եր ստանում Սաշան: Նա մի
տեսակ կծկված, անորոշ ու կցկտուր պատասխաններ
եր տալիս իրեն ուղղված հարցերին, անորոշ շար-

ժումներ եր անում։ Այդ ժամանակ նրա հայացքում
ներողամտության աղերսանք կարելի յեր կարդալ։

Բոլորովին այլ եր Սաշան, յերբ սպառվում եյին
հարցերն ու պետք եր զվարճանալ։ Այդ ժամանակ
ասես կերպարանափոխվում եր նա։ Թեթևացած,
վճռական շարժումներով նա ձգում եր դարմոնը,
ինքնավստահ, զվարթ տեսք եր ընդունում ու նվազի
տակ կարծես խաղում եյին նրա բոլոր վոսկորները։

Այդ որն ել յերբ քիչ հանգստացել եյինք, Սաշան
քաշեց դարմոնն ու նրա մատներն արագ խաղացին
գարմոնի սաղաֆե ստեղների վրա։ Թեթև, զվարթ
հորդաց ոռւսական ժողովրդական պարի յեղանակը։

Անտոշան խկույն ցատկեց տեղից՝ Յերբ հնչում
ե դարմոնը՝ Անտոշան չի կարող նստած մնալ։ Նա
մի փոքր հարթ տարածություն դառավ ու սկսեց պա-
րել։ Հասարակ, անմիտ շարժումներ չեր այդ ան-
պաճույն պարն Անտոշկայի համար նա ալրում եր
պարով։ Հնչող յեղանակի ու իր շարժումների ոփի-
մով Անտոշան վոգեռիշարծ սուլում եր ատամների
արանքից։ Պարի ընթացքում նրա վոգեռությունը
հասնում եր իր գագաթնակետին ու նրա շարժումներն
ավելի եյին թեթևանում, ավելի պայծառանում եր
նրա հավիտյան ուրախ գեմքը։ Նա ուշադիր հետե-
վում եր, թե իր պարն ի՞նչ տպավորություն ե զոր-
ծում այդտեղ յեղողներից յուրաքանչյուրի վրա ա-
ռանձին-առանձին ու ավելի վոգեվորությամբ եր
թռչկոտում նրանց առանց բացառության բոլորի
ծափերի ու խրախուսող հայացքների տակ։ Տեսնե-
լով այդ, նա վորեե ժեստով-ժպիտով կամ զլուկ

տալսվ վողջունում եր իրեն՝ ծափահարողներին, կամ
ուղղակի աչքով եր անումայդ իհարկե գլխավորա-
ողն կտնանց և նրանց, վորոնց վորես բան ուներ
ակնարկելու:

Մեր սանատորիայում բոլորը գիտեյին Անտոշային
և բոլորը սիրում եյին այդ պարզ շոֆերին: Ակում-
բում լիներ, անտառում, թե ծովափին, բոլորը հա-
վաքվում եյին Անտոշայի շուրջն ու ուրախ եր անց-
նում ժամանակը նրա հետ: Ահա թե ինչու, յերբ
Անտոշան մեկնեց, մի քանի որ կարծես ամայացավ
սանատորիան, — բոլորը նրան եյին հիշում, նրա մա-
սին եյին խոսում հավաքույթներում:

Յերբ Անտոշան վերջացրեց պարն ու նստեց տե-
ղը, հիվանդները խնդրեցին մեկին, վոր ըստ յերե-
վույթին արտիստ եր, վորես բան արտասանել: Նա
մի բոպէ մտածելուց հետո, վոր ըստ յերեւույթին
նյութի ընտրություն եր կատարում, սկսեց արտասա-
նել արվեստով գրված մի նովելլ:

Նա արտասանում եր աչքերը փակ, հենված հին
բերդի ճեղքած բեկորին: Նա արտասանում եր
առանց շտապելու, ասես սպասելով իրեն-չընկերակ-
ցող դաշնամուրի վերջին ակկորդներին: Նրա ձայնը
հիացմունքի տենչով ասես փաթաթվում եր չքնաղ
այն կնոջ մարմարե պարանոցով, վորի մասին գըր-
ված եր նովելլը: Ու մերթ ջղային ցնցումներով եր
հեջում նրա ձայնը, վոր դողում եր ցասման պոռթ-
կումից: Ու այդպես, աչքերը փակ, ճեռքերը խաչած
կրծքին, նա կարծես բուռն ցասման մարմնացում լի-

ներ, վորի ձայնը յերբեմն հնչում եր դաժան, սարսուռ աղդելու շափ խիստ :

Բոլորն առանց ծպտումի հետևում եյին նրա յուրաքանչյուր շարժումին, նրա ձայնի ամեն մի յելեվիթին : Ու արտասանող արտիստի հետ մեկտեղ նըրանց բոլորի դեմքով անցնում եր հիացմունքի մի ժաղիս, վորը սակայն քիչ հետո խամրում եր ցասման ու հիանթափության այն խոր ակոսով ; վոր զծում եյին ունկնդիրների ճակատին արտիստի ցասումից գալարվող ձայնի յելեւնները : Նովելլը՝ խստորեն դատապարտում եր կնոջը : Այնտեղ կինը ներկայացվում եր իբրև մի անդզա հրեշ, վորը կարող ե վոտնահարել ամեն մի սրբություն, վորն ընդունակ ե ուժախոսության ու ամեն մի կեղծիքի : Այնտեղ կինն իր հաճույքի համար սառնարյուն, առանց սոսկումի կարող ե մարդկանց կործանման պատճառ դառնալ : Ու վորքան չքնաղ եր նովելլի հերոսուհին, նա իր դեղեցկության բարձրունքից այնքան արագ դահավիժեց մինչեւ ստորոտյան ամենախոր անդունդը :

Արտիստը վերջացրեց ընթերցումը, բայց առանց բացելու աչքերը մնաց նույն դիրքով անշարժ կանգնած : Չեր շարժվում նրա դեմքի և վոչ մի մկանունքը : Մի վայրկյան բոլորը քարացել եյին : Լուկ եր անդամ Անտոշան : Սաշան չեր համարձակվում ձեռք տաէ դարմոնին :

Այդքան տպակորիչ ու սոսկալի յեր նովելլը :

8

Քիչ հետո նովելլը մտքերի կրքոտ փոխանակության առարկա դարձավ : Շատերը պնդում եյին, վոր

իրավացի յե նովելլի հեղինակը։ Նրանք գտնում եյին, վոր կանայք ընդունակ են ամեն ինչի, —եզրիստ են, խարդախ, վոր հավատ չի կարելի ընծայել նրանց։ Մեղ հետ լեռը բարձրացած կանայք լոել եյին։ Նը- րանք հանցավորի նման չեյին համարձակվում վորեւ- րան ասել։

Տերդի ավերակների մոտից փոքր խմբերի բա- ժանված մենք իջնում եյինք ցած։ Ճանապարհին բո- լորի խոսակցության նյութը նովելլն եր։ Մեր ոեն- յակի իմ մյուս յերկու ընկերների — Սեմաշկոյի և Լողարի հետ միասին մենք գնացինք ծովեղերք։ Նրան- ցից առաջինը Լենինդրադի գործարաններից մեկի մե- խանիկն եր, մյուսը նավաստի։

— Յես ճիշտ եմ դանում — նովելլը՝ ։ Եռվային մանր քարերի մեջ իր տեղը հարմարեցնելով ասաց Սեմաշկոն ու հաստատակամ շարումակեց, — յերեկ եր, վոր դուք ինձ հարց տվիք, թե յես յերիտասարդ մարդ եմ դեռ, բայց ի՞նչու յեմ արդեն յերեք անդամ ամուսնացել։ Դա տեղին հարց եր։ Բայց այդ հար- ցումն ել մեղավորը վոչ թե յես եմ, այլ դարձյալ կա- նայք։ Յես թեև յերեք կնոջ հետ եմ ամուսնացել, բայց փաստորեն յերկու կին եմ ունեցել։

— Ահա թե այդ ինչպես յեղավ, — շարումակեց իր պատմությունը Սեմաշկոն։ — Իմ առաջին կինը վաղճանկեց շատ վաղ. յես նրան շատ եյի սիրում։ Նրա մահից հետո յես ամուսնության մասին չեյի մը- տածում, բայց մեր գործարանի գրասենյակում աշ- խատող աղջիկներից մեկն ինչ վոր շատ եր յերեսում աչքիս, պատվում եր շուրջ։ Կամաց կամաց նա ինձ

դուք յեկավ և մտածեցի հետն ամուսնանալ։ Նա ինձ
սիրում եր մեծ ջերմությամբ։ Նրա վերաբերմունքի,
ամեն շարժման մեջ, յես տեսնում եյի անսահման սեր
և նվիրվածություն։ Մենք վորոշեցինք ամուսնանալ։
Արդեն վորոշել եյինք ամուսնության որը, յերբ հարս
նացուս հայտնեց, վոր ինքը մի թեթև հիվանդու-
թյուն ունի, վորի հետապա բարդացումից խռուս-
փելու համար նպատակահարմար և համարում նախ
բուժվել, ապա նոր ամուսնանալ։ Նա գնաց հիվան-
դանոց։ Յերեք որ թարմ վարդերի փունջը ձեռքիս
դնում եյի հիվանդանոց ու անհամբեր եյի, թե յե՞րբ
և ավարտվելու հարսնացույիս բուժումը։

Յերբորդ որն եր։ Վարդերի փունջը ձեռքիս կանգ-
նած եյի հիվանդանոցի սպասարանում, ուր հանկարծ
պատահեցի իմ մի հին բարեկամիս։ Մենք յերկար
տարիներ իրար չեյինք պատահել։ Նրա հաղին սպի-
տակ խալաթ կարըստ յերեւույթին քժիշկ եր գար-
ձել։ Իրար բարեկլուց ու անցյալը մի քիչ վեր հե-
շելուց հետո յես նրան հարց ու փորձ արի հարսնա-
ցույիս մասին թե ճանաչում ե նրան, ի՞նչ է հիվան-
դությունը, շուրջ կավարսալի բուժումը, թե վոչ։
Ընկերս առանց խոսելու ինձ եր նայում ու խորաման-
կորեն ժամանում։ Յես չդիտեյի, թե ինչու յե նա այդ-
պես ժամանում ու աարակուսանքով նայում եյի ընկե-
րոջ։ Նա վերջապես խոսեց, մտերմաբար խփելով
ուսիր։

— Զեւանում ես, թե վոչինչից տեղյակ չես,—
ի՞նչ ել անմեղ տեսք ես ընդունել։ Վոչինչ չկա, վի-
ժեցում եր արինք, այսոր դուրս կդրենք...

Վարդերը ձեռիս յես մնացել եյի քարացած։ Այլ-
ևս ամեն ինչ պարզ եր։ Վարդերի փունջը հենց այ-
տեղ դետին խփեցի ու դուռս յեկա հիվանդանոցից։
Վիժեցման համար չեր ի հարկե բարկություն։ Ինձ
խարելն եր անսահման վիրավորել իմ ինքնասիրու-
թյունը։ Յերբ հարսնացուս հիվանդանոցից յեկավ։
յես նրան հայտնեցի, վոր իր հետ չեմ ամուսնանա։
Ասացի նաև, վոր յեթե ինքն սկզբից այդ մասին ինձ
աղյախորեն հայտներ և շխարեր, յես դարձյալ կա-
մուսնանայի իր հետ։ Նա բոլորովին չզարմացավ և
վոչինչ չառարկեց, միայն խնդրեց, վոր անախոր-
ժություններից խուսափելու համար, քանի վոր
նշանակված եր մեր ամուսնության որը՝ հավաքվե-
յինք քեֆի, իսկ ինքը ասում եր, վոր ինձ հետ վո-
րեւ կապ չի ունենա։ Յես սիրում եյի նրան և չեյի
ցանկանում նրան անհարմար վիճակի մեջ գնել, գրա-
համար համաձայնվեցի նրա առաջարկին։ Նշանակ-
ված որը մեր հարսանիքը կայացավ, — հավաքվեցինք
մեր բարեկամներին, մոտ մարդկանց ու մի լավ քեֆ
արինք։ Հենց այդ գիշեր ել նա զնաց իր տունը ու
յերբեք ինձ մոտ չեկավ։

Ահա և իմ յերկրորդ այսպես ասած համուսնու-
թյունը, — վերջացրեց Սեմաշկոն, — իսկ դուք պնդում
եք, վոր աղնիվ են կանայք։ Զե՞ վոր յես սիրում եյի
նրան, չե՞ վոր իմ զգացմունքները դեպի նա վառ ե-
տին ինչպես իմ ձեռքի թարմ վարդերը, բայց նա այդ
չքնաղ վարդերը թափեց հիվանդապահ ոանիտարնե-
րի վոտքերի տակ։ Զե՞ վոր նա կարող եր ինձ շխարել
և իմ սերն այնքան ուժեղ եր դեպի նա, վոր կարող

եյի անսահսել անցյալում յեղած ամեն ինչը : Բայց
կնոջ հոգին հենց այն ե , վոր խարի մարդկանց , ան-
սահման տանջանքներ պատճառի միայն , թունավորի
նրանց կյանքը : Յես անշափ հավանեցի այդ նովելլը :
Նա այնքան գեղեցիկ ե գրված , վորովհետև նրա
հեղինակը շատ խորն ե ըմբռնել կնոջ հոգին ու նրա
տրաղեղիան :

— Ո՞ , դու իրավացի չես , դու իրավացի չես
Նիկոլայ , — անհամբեր բացականչեց Լողարը , վոր Սե-
մաշկոյի պատմության ընթացքում ջղային շարժում-
ներ եր անում , բայց չեր ուզում ընդհատել նրան , —
ամ յեթե խմանայիր թե վորքան ես սխալվում դու :
Դու գիտե՞ս , թե վորքան վեհ ու բարձր ե կնոջ հո-
գին , թե նա վորքան բարձր ե կանգնած : — Դու լսիր
թե ինչ կպատմեմ , հենց ինձ հետ պատահածից : Յես
յերիտասարդ , առողջ , առույգ տղա եյի : Դեռ նոր
եյի կյանք մտնում . իմ առաջ խոստմնալից ժպտում
եր ապագան ու յես դվարթ , ուրախ ինձ նետում
եյի դեպի նա : Մենք ապրում եյինք ծովափնյա մի քա-
ղաքում : Փոքրիկ եր այդ քաղաքը , բայց գեղեցիկ եր ,
նման չեր այն ժամանակվա ռուսական մանր քաղաք-
ներին . այդտեղ կյանքն ընթանում եր յուրահատուկ
ձևով : Այդ ժամանակ յես սիրահարվեցի մի գեղե-
ցիկ , գեռափթիթ աղջկա վրա : Նա նուրբ կազմված-
քով , բարձրահասակ , կապտաչյա աղջիկ եր . նրա մար-
մարե դեմքին իջնող վոսկե խոպոպներն անսահման
գեղեցկություն եյին տալիս նրան , նա կարծես քան-
դակած մաղոննա լիներ , մի մեծ վարպետի մեռքով :
Դրա հետ միասին նա փելոք եր և հեռու յեր այդ ժա-

մանակըլա աղջիկների մեջ յեղած թեթևամտությունից . նա գեղեցկության հետ մեկտեղ վեհասիրտ եր : Նա ավելի խորն եր սիրում ինձ ու պատրաստ եր ամեն զոհաբերության ինձ համար , ամեն զրկանքի : Իրարով հափշտակված մենք ազատ ժամերն անց երինք կացնում միասին ու չեյինք նկատում , թե ինչպես ե թռչում ժամանակը . մենք կորչում եյինք մեր քաղաքի թավ , հիանալի այդիների մեջ ու յերջանիկ եյինք :

Մի գեղեցիկ մայիսյան յերեկո , տարված քնության գեղեցկությամբ , վերցրինք մի մակույկ ու վորչեցինք հեռու թիավարել ծովում : Մենք բավական հեռացանք ափից ցանկանալով մյուս մակույկներից հեռու լինել : Հրապուրված արծաթե ջրերով , վոր փայլատակում եյին մերջալույսի շողերի տակ , մենք չեյինք նկատել , թե ինչպես մեր մակույկի ունեցած ճեղքվածքով ահազին ջուր եր լցվել նրա մեջ : Մենք ջուրը թափելու համար վոչ մի միջոց չունեյինք . նավակն անխուսափելիորեն պետք ե ընկղմվեր : Յես աշխատում եյի ինձ սառնասիրտ պահել , վորպեսզի նա չղղա վտանգն ու տաղնապի մեջ մտածում եյի թե ինչպես փրկեմ նրա կյանքը : Մի վարկյանում հազար կոչմարային խոհեր եյին անցնում գլխովս : Յես զգում եյի , վոր հակառակ ինձ հանդիսատ պահելու ջանքերին ինչպես արագ եր բարախում սիրտս : Նա կարծես ասում եր՝ «տես , հիմա քո աչքերի տուաջ ջրահեղձ պիտի լինի քո ամենասիրելի եակը , նա վորը վոչինչ չե խնայում քեզ համար , ի՞նչ ես անում նրա կյանքը փրկելու համար» :

Մի պահ այլնա վոշինչ չեյի մտածում և միայն
կատաղի, ջղաճղական շարժումներով ավելի ու ավելի
արագ եյի շարժում թիակները։ Նկատում եյի, ոտ-
կայն թե ինչպես մակույկում հետզհետե ավելանում
եր ջուրը։ Յես դեռ չեյի վորոշել անելիքս, յերբ հան
կարծ տեսա, թե ինչպես նա մակույկից իրեն
նետեց ծովը։ Այդ կատարվեց մի ակնթարթում, այն-
պես արագ, վոր յես շփոթվեցի ու տեղումս մնացի
քարացած։ Նա մի բոսե սուզվեց ջրի տակ ու դուրս
դաշով, սկսեց լողալ մակույկին դուգընթաց, յերբեմն
բանելով մակույկից։

Դու մենակ ափ կհասնես—մակույկը չի խորտակվի
իսկ յես կլողամ քեզ հետ միասին։ Արագ թիավարիր,
մոտենալով մակույկին ասաց նա ու ժպտաց իր թովիչ
ժպիտով, վոր հանգիստ լինեմ յես։

Իմ քոլոր թախանձանքները համոզելու նրան, վոր
ինքը դա նավակ, իսկ յես լողամ—իզուր անցան։ Նա
վճռաբար պատասխանեց։

Դու լողալ չդիտես։ Վոչ մի խոսք։ Թիավարիր։
Յեզ իրոք, այն ժամանակ չնայած ապրում եյինք ծո-
վեզերքին, յես կարգին լողալ չդիտեյի։ Մեծ յեղբո-
րըս ծովում խեղզվելուց հետո վշտահար մայրս մեզ
թույլ չեր տալիս անգամ ծովեզերք դնալ։

Մենք յերկար այդպես մնացինք ծովում։

Արգեն վաղուց նա լողում եր մակույկի հետ միա-
սին ու յես տեսնում եյի, թե ինչպես սպառվում են
նրա ուժերը։ Նա թուլանում եր աստիճանաբար, իսկ
մենք դեռ հեռու եյինք մակույկիներից ու տփից։ Իմ
մակույկն ել համարյա արգեն ջրով լցված նրա հմտն

դժվարությամբ եր առաջ շարժվում պետք եր ոգնություն կանչել։ Յես հետո ունեյի 12 համարի այն յերկար, անպետք ատրճանակներից, վոր կային առողջ։ Նրանից յերեք անդամ կրակեցի։ Քիչ հետո մենք նկատեցինք, թե ինչպես դեպի մեզ են դալիս յերկու նավակներ։ Յես թիավարում եյի, առանց մի վայրկյան աչքս հեռացնելու աղջկանից։ Նա արդեն լողում եր ծանր շնչով և յես տեսնում եյի, թե ինչպես թրջված շորերը նրան դեպի հատակն են ձգում։ Իմ մակույկն այլևս առաջ մղել անհնար եր։ Ողնություն յեկող նավակներն արագորեն մոտենում եյին։ աղջիկն ինձ եր նայում ու ժպտում, սակայն անսահման թախիծ կար նրա հայացքում։ Նրա անվեհեր վոգին արդեն ընկճվել եր։ Նա արդեն անսահման հոգնած թպրտում եր ու չեր կարողանում իրեն պահել ջրի յերեսին։ Յես իսկոյն ինձ նետեցի ծովը։ Այդ նկատելով, նա ճշաց այնպիսի մի ճիշով, վորը մինչև հիմա յել յերբ վերջիշում եմ, փշաքաղվում ե մարմինս։

— Ի՞նչ արիր, ասաց նա, վերադարձիր նավակը… դու կիսեղզմես…

Յես մոտեցա նրան ու ուսս մոտեցրի նրա թևին։ Նա ուժեղ թափահարելով թևը հեռացրեց ինձնից ու ընկղմվեց ջրի տակ։ Յես նրա յետևից խորասուզվեցի ջրի մեջ։

Յերբ ուշքի յեկա, մենք յերկուսով պառկած եյինք ծովափին։ Փրկող նավակները մեզ կարողացել եյին մեծ գժվարությամբ ազատել ու ուշքի բերել։ Յերբ նա ուշքի յեկալ տեսնելով ինձ շշնջաց։

— Ինչ՝ լավ և . . . մենք նորից պիտի առլրնեք . . .
յերկուսս ել . . .

Ապա շնչելով, ավելացրեց :

— Ել այդպիսի հիմարություն չանես: Զե՞ վոր
կարող եյիր խողզվել . . .

Նորից սկսվեց մեր յերջանիկ կյանքը: Մենք իրար
սիրում եյինք ավելի ամուր, —կյանքում արդեն հա-
մոզվել եյինք, վոր մենք փոխադարձաբար պատրաստ
ենք ամեն դոհաբերության: Մենք խոսում եյինք ամու-
սնության մասին:

Վորոշ ժամանակ անց, յես հիվանդացա: Հիվան-
դացա ծանր, տիֆով: Որերով անզգա պառկած եմ
յեղել հիվանդանոցում: Մի որ ուշքի գալով յես ճա-
նաչեցի նրան: Նա գթության քրոջ խալաթով նստած
եր անկողնիս, սառուցից տոպրակը ձեռքին: Պետք եր
աեսնել, թե իմ ուշքի գալու մոմենտին ինչպիսի պայ-
ծառություն կար նրա դեմքին, թե յերջանկությունից
ինչպես եյին փայլում նրա աչքերը: Նա խոնարհվեց
գրկեց զլուխս, ցանկացավ համբուրել ինձ, բայց զրս-
ողեց իրեն: Նա հուզված եր: Քիչ հետո նրա խոնավ
աչքերից խոշոր կաթիլներն իջնում եյին դեմքն ի վար
ու շողջողում մարդարիտների նման:

Այդ յերջանկության արցունքներն եյին:

Նա գիշեր-ցերեկ անքուն, մահճակալիս կողքին
մահվան յերկյուղը սրտում աշխատել եր վորակես
քույր, վորակես սանիտար: Ու արդեն ինձ փրկված
եր տեսնում:

Յես բոլորովին առողջացա, դուրս յեկա հիվան-
դանոցից ու սկսվեց մեր յերջանիկ կյանքը. բայց

յիրկանը չտեսեց այդ : Նա ևս հիվանդացավ որի՞ով : Յեթ տեսիր ունեցավ սոսկալի մի բան, վորի կորստարնությունը յես նոր եմ միայն զգում : Զգիանմ թե ի՞նչ պատահածեց ինձ, թե ինչպե՞ս յեղավ, վոր նրա հիվանդության ընթացքում յես վոչ մի անդամ ։ վնացի նրան տեսնելու : Յես չգնացի տեսնելու նրան, վորը պատրաստ եր ինձ համար խեղզվել ծովում, վորն ինձ փրկեց ծանր հիվանդությունից : Յեթ այդ ապերախտության համար յես պատժվեցի առա ծանր ու արդարացի կերպով :

Նա արդեն առողջացել եր, բայց տնից դուրս յեր դալիս . այդ ժամանակ յես գնացի տեսնելու նրան : Նրան դատա այլում կանաչ տաղավարի մեջ . նա զունատվել եր, կտրել եր իր գեղեցիկ խոպսալներն ու գլխին հաղցրել մի սև գլխանոց : Նկատելով ինձ, նա լայն բաց արեց աչքերն ու զարմացած հայացքով նայեց ինձ : Զարմանքի, ծանր հիանթափության ու արհամարանքի թույն կար այդ հայացքում : Յես չհամարձակվեցի առաջանալ ու քարացա տեղում :

— Ո՞ւր ես յեկել . . . ուշ ե արդեն : Այլեւ վոչինչ ընդհանուր չկա մեր մեջ, — ասաց նա խստորեն . . . ձեռքը մեկնեց գեղի դուռը :

Ապա նա շուռ դալով խոնարհվեց գրքի վրա ու դառն հեկեկազ : Նա վոչ մի խոռք չուզեց լսել ինձից ու այնուհետև յերբեք չնայեց իմ յերեսին :

Ահա, այսպես անխմաստ վախճան ունեցավ մեր չքնաղ սերը . . .

Լոգարը լոեց : Նա աչքերը կկոցելով նայում եր

ծովի հեռում, կարծես ուզում եր խորասուրվիել նրա ջրերի դոռ ալիքների մեջ։

— Այսպես յերբ նայում եմ ջրերին, — չչնջաց նա, — ինձ թվում ե, թե այ, այնտեղից, ուր փառուի մոտ կանգնած են նավակները, կհանեն նրան ջրից ու կրերեն ծովափ...

Են նոր եմ հասկանում, թե ինչ վեհ հոգի ուներ նա, թե յես ինչքան ցածր եյի նրանից։ Սիսակ արտյո նոսիելլը, սիսալիում և և Սեմաշկոն։ Կինն անհուն հոգի ունի։ Ազա մի փոքր մտածեցէք այս մասին, — չե՞ վոր խեղզմող մարդը ձեռքը նույնիսկ ծղոտին և դցում՝ փրկության հույսով, իսկ նա տեսնելով իր առաջ բացված ծովի անդունդը, չընց իրեն ոգնության պարզած իմ ձեռը, վորապեսոյի կենդաղանի մնամ յես։ Վորքան վեհ ու գեղեցիկ և այսպեսք և կնոջ մողու այս վիհուռթյունը վեր հանեն զրողները և վոչ թե անբնդհատ գրեն կանանց խորդախության մասին...

4

Լողարը վաղուց վերջացրել եր իր պատմությունը։

Մեղնից վոչ վոք, նույնիսկ Սեմաշկոն չխնամց նրանից հետո։ Մենք խուսափում եյինք նրա հայացքից։ Նա հայացքը հառել եր ծովի հենցից յեկող ալիքներին, կարծես նրանց մեջ տեսնելիս լիներ ոյն շքաղ, հրաշալի աղջկան։

Ծովից հյուսիսի մեր յետել կանգնած լին անտառոտ կառարները պատել եր թանձր մա-

ապիսուղը, վորը զորչ ու ծանր իջնում եր ցած : Այս
տառի բացատների մեջ, մուգ կանաչ Փոնի վրա հատ
ու կենա հասունացող տրաներն ասես լեռնալանջերին
փայտած վոսկե դորգեր լինելին :

Յերեկոն իջնում եր լեռների ու ծովի վրա :

Մովին ավելի մոլեզին եր դասնում : Ամաղերի
թանձր ստվերները սև յաքաների նման հոկայտկան
տարածություններով բնեկնում եյին ծովի վրա ու
ծովը զաժան, մութ կերպարանք եր ստանում :

Աւ ալիքներն իրար յիշուից զարնվում եյին ա-
փին-մեկը մյուսից մոլեզին, մեկը մյուսից կըր-
բուռ . . .




ԲՈՎԱՆԴԱԿԱՆԻ ԹԵՍՈՒՆ

Մուկուչ Անձիկովի ժանը	7
Բազար Սոլոմոնի այբին	17
Ֆեղար Խվանիշի կյանքը	27
Ցերկարարանի Հույզերը	39
Դանակ սրող Դուդ կովը	69
Շախատորի Հորեւյանը	83
Սերգո Շախանվի ջաները	93
Քառավից տարի անց	107
Ցերեք կույրեր	115
Ծովագրյա Հույզեր	129



Прое. 1940г.




264



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0041525



891.54


6 - 23

8 weeks from p.


Aug 24 1986

545









891.99

Դ-23

ՏԵՂՄԱՆ Հ 1981 թ.

Բ. ՀԱՅԱՍՏԱՆ

Մ Ա Ր Դ Ի Կ

ՀԱՅԱՍՏԱՆ
545

1/5811



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1986


Կարճ, Փարզացը, յով նկարները
Ակարիչ Ե. Հռվիտանիուսնի

Գառ. Խմբ. Ռ. Արայի
Ֆեխ. Խմբ. Տ. Խոշվամինյան
Սրբագրիչ Հ. Դոլոխանյան



Պետհանուն՝ ապաքոն
Վլագիլիսի լիոդուր 380, Պատկեր 1260,
Հքառ. 2520, Ցիքած 6000:

Ն Վ Ի Ռ Ո Ւ Մ Ե Մ
Մ Ա Վ Ո Ւ Հ Խ Ե Լ Ո Վ Ե
Տ Ի Շ Ա Մ Ա Կ Ի Ն



ՄՈՒԿՈՒԶ ԽԵԶԻԿՈՎԻ
ՄԱՆԵ



4. February 35.

Հիվանդանոցի միջանցքում խոնվել եր հենց
աշխատանքից յեկած բանվորների բազմությունը՝
Նրանք մինչև հիվանդանոց հասնելը շատ եյին չտա-
պել, հեւալով բարձրացել եյին հանգերը տանող
զառիվերը։ Հիվանդանոցի միջանցքում, յերբ զեղերի
սուր հոտը նրանց սթափեցրել եր, նրանք ասես
նոր եյին հասկացել, թե ու՞ր եյին չտապում ու զբ-
ժացել եյին, վոր արդեն հասել են այլտեղ։

Միջանցքում մյուսներին մոլորված ու տխուր
գտնելով, իրենք ել դպիսիկոր կամ արտհագուտոի կո-
ճակների հետ եյին խաղում, կամ դպիսարկները մեռք-
ների մեջ առած անընդհատ պատռում եյին, արորում։

Նրանք մեկմեկ անցնում եյին հինգերորդ սեն-

յակի առաջից ու դռնից անհամարձակ ներս նայում :
Այնաեղ պառկած եր նրանց սիրելի Մուկուչը : Ըն-
դամենը մի քանի ժամ առաջ վողջ ձուլարանը Մու-
կուչի ձեռքին եր . նա լեզենդար հերոսի նման
ընթացք եր տալիս հրահեղուկ մետաղի ձուլվածքին ,
յերբ հանկարծ կույր մի պատահականությամբ այդ
ձուլածոն նրան դարձրեց բոցավառված կենդանի մի
սյուն , վոր վազվզում եր կոնվերտորների արանքում
ապա հսկայական կաղնու նման նա տապալվեց գե-
տին , ծանր հեալով խոր այրվածքներից :

Յերբ արդեն զործարանի բժիշկն ու քույրերը
փաթթել ելին Մուկուչին ու հաղթանակամ Մուկու-
չը դարձել եր բամբակի վերակապի մի հսկայական
զանգված՝ դրված պատղարակի մեջ , ձուլարան յե-
կագ Մուկուչի կինը :

Նա նայում եր Մուկուչի դեմքի բամբակներից
ապատ մնացած մի մասին , վոր խանձված ու սեա-
ցած եր , նայում եր առանց արտևանունքների , նրա
աշքերին , խաշված , պապակած շուրթերին ու վշտից
փետում եր մաղերը , անիծում :

— Քանդվէ՛ ես զակոդը , վոր վերջը քո կյանքը
տարապի :

Մուկուչը , վոր յերկաթե առողջությամբ ու
կամքով դիմադրում եր անտանելի ցավերին և զես
չեր կորցրել դիտակցությունը , ողլոր , հանդիմանող
հայացքով նայեց կնոջն ու հազիվ շարժելով այրված
շուրթերը միմնջաց՝

— Զավոդ ա , ամեն բան կպատահի , ոճա յերե-
խանց մնասին մտածի ...

Հիվանդանոցում Մուկուչի մոտ նատել եր նըս
մայրը, մահճակալի շուրջը շվարած կանգնել եյին
բժիշկներն ու քույրերը, նրա ընկերները, Ակորը,
Մելիքը Հերակլին: Նրանք մթնած, շվար կանգնել ե-
յին ու անզոր լսում եյին Մուկուչի ծանր հառաջանք-
ները:

Մուկուչին փրկելն անհնար եր. նրա կյանքի
ժամերը հաշված եյին, բայց Մուկուչն առանց գե-
տակությունը կորցնելու իր ու, խանձված գեմքը
մի կերպ թեքում եր, հաղիպ մի քանի վայրկյան բա-
ցում եր մեկ կամ մյուս աչքը, ճանաչում եր իր մոտ
յեկողին, մի յերկու խոռք եր փոխանտկում, վոչ-
վոքի անուշաղիր չեր թողնում:

Մահը խորթ հասկացողություն եր Մուկուչի
համար: Յեվ ի՞նչպես կարելի յեր անկենդան պատ-
կերացնել վարպետ Մուկուչին, վորը հիացմաւը եր
պատճառում, յերբ մարդ նրան տեսնում եր ձուլա-
րանում աշխատելիս: Պարթևահասակ, խոշոր կազմ-
վածքով քառասունին մոտ մարդ եր Մուկուչը: Յերբ
նա կոնվերտորի մոտ կանգնած՝ ձեռքը ճակատին
ձուլածոյին եր նայում, թվում եր, թե այդ նրա ու-
ժից են դղբղում շիկացած մետաղով հղի կանվեր-
տորները: Զեւքը ճակատից չհեռացնելով առյուծի
հայացքով նայում եր Մուկուչը, մոտենում եր, այ-
ձեռքից գուրս եր քաշում բրեղինոտե կոշտ մեռնոցն ու
ամուր, դպացմունքով սեղմում իր մոտ յեկողների
ձեռքը: Ու յերբ իր կոշտ ափի մեջ եր առնում ձեր
ձեռքը՝ ասես վոչ թե մարդ եր բարեկում ձեղ, այլ
ձեր ափը գտնավում եր եքակալատորի հզոր բռն

մեջ։ Զեր ձեռքը թողնելով, Մուկուչը նախ սովորականի նման կհարցներ ձեր առողջությունը, իր կապատագուն, մանր աչքերով կժպտար, ապա կասեր թե ինչպես են աշխատում կոնվերտորները, ինչ ե պակառ, թե այդ հերթին քանի տոնն պղինձ կարելի յե ապասել։

Յեզ հիմա, այդ կենդանի, հղոր, յեռանդուն մարդը բամբակի ու սավանների մեջ վախաթված, մահճակալին ընկած գալարվում եր, ծանր հառաջում։ Նրա հառաջանքը թափանցում եր իր ընկերների հոգու խորքը, այնտեղ տակն ու վրա յեր անում ամեն ինչ ու նրանք ծանր չնչելով, զայրացած իրենց անզորության վրա, դարձնում եյին յերեսները, վոր հանկարծ Մուկուչը չնկատի իրենց արցունքը։

Մուկուչը չեր հավատում մահվան։ Բայց նա խոսում եր մահվան մասին։ Նա այդ անում եր վոչ թե հուսահասությունից, այլ ծանր ցավերից։ Նա մի անզամ միայն ցավագարի նման ուժեղ գոռաց ու լոեց։ Քիչ հետո նա բացեց աչքերն ու նայելով ընկերներին ստաց։

—Յերանի մեռնեմ՝ ազատվեմ այս ցավերից։

Մի քանի ժամից Մուկուչն ազատվեց այդ ծանր ցավերից։

Բանվորական ավանն ընկղմվել եր խոր վշտի մեջ։ Մուկուչի ինժեները լսելով նրա մահվան լուրը՝ ուշադնաց յեղավ։ Բոլորը, Մուկուչի ընկերները, նրա ծանոթները, բոլոր նրանք, վոր վորեւ գործ եյին ունեցել Մուկուչի հետ, հաղիվ եյին զսպում իրենց արցունքները նայելով ու շրջանակի մեջ ա-

ուած. շրջանային թերթի համարին, վոր ամբողջովին նվիրված եր Մուկուչի վողբերգական մահվան, նրա հիշատակին։ Վողի բանվորական ավանը պնում եր Մուկուչի դադաղի յեանից։

Ժպտում եր Լոռվա դարնանային գեղեցիկ առավոտը։ Գույնզպույն ծաղկել եյին ծիրանի ու բալի ծառերը, կանաչ ուռիները կախված Դեբետի վրա ջըրերի հայելու մեջ նայելով հրճվում եյին իրենց նազելի տեսքով։ Նոր յերևացած ծիծեռնակներն ասես վազեսորմած ոլայժառ յնդանակից, ջերմ արելից, ու Դեբետի փրփրաբաշ ջրերից, թեթև թռիչչով խոտի մի կտոր կտուցներին առած շտապում եյին նորովելու իրենց բույնը։

Այս ամենին աններդաշնակ, ծանր հնչում եր մահվան քայլերգը։ Դործարանի սուլիչը, վոր 10 տարի շարունակ ամեն որ աշխատանքի յեր կանչել Մուկուչին, այժմ տիսուր վերջին հրաժեշտն եր տալիս նրան։ Բանվորական ավանի միջով անցնող գընացքների շոգեքարշերը Մուկուչին ճանապարհ եյին դնում իրենց սուլոցներով ու նրանց արձականքը Լոռու ձորերում ասես ամեհի լեռների սուսպը լիներ իրենց ծոցից դուրս յեկած ժայռի պես ամուր Մուկուչի համար։

Լոռան դվինին կեցած գործարանի վիթխարի ծըխ նելույղը, վորն իր առատ կաթնաղույն ծուխը թեքել եր զեպի հանքերի ձորը, ասես իր հրաժեշտի թաշկինակն եր թափահարում սիրելի Մուկուչին։ Այդ ծինելույղի տակ կոկիծը սրաներում, բայց ավելի համար աշխատում եյին նրա ընկերները։

Յերբ վերջին անգամ Մուկուշին իրենց ուսերին
առան նրա ընկերները, Մուկուչի մայրը կախվեց
պապապից, նայեց դործարանի կողմը, այնտեղ ուր
յերկար տարիներ Մուկուչը ընթացք եր տվել հրեզեն
լավաներին:

Նա նայեց վիթխարի ծխնելույզից բարձրացող
ծիսի քուլաներին ու զառնալով Մուկուչին ասաց:

— Զավոդի ծուխը բարձրանում ա, դու իս ո՞ւր
ես զնում, Մուկուչ ջան...

Մինչ ոյդ բոլորը մի կերպ զսպել եյին իրենց:
Բայց այլն հեկեկանքը զսպելն անհնար եր. անհուն
կոկիծը ամուս սղմել եր բոլորի կոկորդը:

Ու լուս հեկեկանքով, գլխիկոր հերոս ընկերով
զապաղն ուսերին, նրանք քայլում եյին աշխատելով
լլել Մուկուչի մոր սիրոտ մաշող բայաթին...

Իսկ նա սրտակտուր, առանց մի վարկյան հան-
դուանալու կանչում եր՝

— Բա պղինձն ո՞վ ա կալ անելու, ի՞մ տուան-
բալասի Մուկուչ ջան...

* * *

Զուլարանում վոչ վոք մի մոռանա Մուկուչին:

Այդ վոչ միայն նրա համար, վոր Աւգումարի
վեղջաւկ Մուկուչ Խաչիկյանը իրենի հիանալի մարդ,
զգայուն ընկեր ու վարպետ, բոլորի համար դարձել
եր սիրելի ու մտերիմ Մուկուչ Խեչիկով: Վոչ ել նը-
րա համար, վոր Մուկուչը հիանալի վարպետ եր,

զոր նա մետաղե լավաների իսկական հրամանառարեր:

Նրան չեն մոռանա, վորովհետեւ բոլորի ականջին հնչում են նրա խանձված շուրթերից գուշը յեղած բառերը:

— Զավոդ ա, ամեն բան կպատահի...

Նա աշխատեց ու մեռավ վորովես հերոս, նրա ամբողջ կյանքն ընթացավ հերոսին վայել պարզությամբ, հասարակ ու համեստ:

Նա մետաղե լովային զոհ դնաց այն ժամանակ, յերբ փորձում եր հարևան գործարանի զեն թափվող մեացորդներից պղինձ ստանալ: Յեզ յերբ նա հնացի մեջ նայում եր՝ տեսնելու, թե ինչպես ե զընում ձուլման պրոցեսուը, հնոցում առաջացած գաղերի պայթյունը նրա յերեսին նետեց ձուլված պղինձը: Ու յերբ կինը անիծում եր այն գործարանը, վորին նա տվել եր վողջ կյանքը, նա բարկացած ժըմնջաց՝

— Զավոդ ա, ամեն բան կպատահի...

Հերոսի ըմբռնողությունը շոշոփելի յեր դառնում ամենքի համար, ովքեր վոտից գլուխ ճանաչում եյին Մուկուչ Խեչիկովին՝ կոնվերտորի մոտ կեցած այդ հասարակ, կոշտ մարդուն: Նա կիսագրագետ բանվոր եր, բայց իր գիտակցության մեջ այնպիսի ուժ եր կուտակել, վորը նրա համար սովորական բան եր դարձնում իր պոստում մեռնելը:

Յեզ հիմա յել, յերբ ականջիդ հնչում ե ժահվան քայլերզն ու գործարանի ու շողեքորչերի սուլացները, յերբ հիշում են այն վշտով համակված ժարդկանց, վոր գլխիկոր, թաց աչքերով ըսյում

եյին սիրելի Մուկուցի դադաղի յետեից, նորից
սեղմում ե կոկորդու, ինչ վոր բան անհանգիստ ե ա-
նում քեզ ներքուստ :

Մարդ չի կարողանում դադաղի հետ համատեղիլ
կոնվերտորի մաս կեցած կենդանի Մուկուլ և չի-
կովին :



~~Հ 5811~~
Հ 5811
~~545~~
~~602~~

Բաշական Առաջնորդության Ազգային
Ակադեմիա





4-1

Ազիղին հանդիպեցի յերկար ընդմիջումից հետո,
յերբ մի քանի տարի յեր, ինչ խորհրդայնացել եր
յերկիրը։ Թեև խորհրդայնացումից հետո Ազիղը
կորցրել էր իր վողջ ունեցվածքը, —իսկ այդ ունեց-
վածքը փոռքրիկ գյուղաքաղաքի կես թաղամասը բըո-
նող միհարկանի շենքեր եյին ու մի ընդարձակ այգի,
թեև մեռել էր Ազիղի ամուսին Սոլոմոնը, այնու-
ամենայնիվ նա արտակարգ բարձր տրամադրության
մեջ էր։ Նա ավելի յեր գերացել ու խոշորացել, չը-
նայած իր հասակին կարմրությունից փայլում եյին
նրա լայն այտերը, նրա զեմքից չեր իշխաւմ ժպիտը։
Նա ուրախ քրքջում էր լայն բացելով անառամ բե-
րանը։

Ազիղը զեռաստի, մարմնեղ զեղջկուհի յե լինում,

յերը ինամախոսները դալիս են հայտնում, վոր Սոլոմոնը ցանկանում է ամուսնանալ Աղիզի հետ։ Ուրախանում են Աղիզի ծնողները, նրանք լցվում են հպարտության զգացմունքով, վոր քրաղարում՝ փոքրիկ գյուղաքաղաքում՝ բազաղ փեսա պիտի ունենան։

Այդ ամուսնությունը սակայն, այնքան հեշտ չէր Սոլոմոնի համար, վորի ամբողջ կյանքը հաշիվ ու մտածմունք եր։ Արշինը ճեռքին չափել ե նա կառուներն ու մտածել։ Խանութի դռանը, ծառի ստվերում, նարդի խաղալիս, Սոլոմոնը գցել ե զառերն ու մտածել։ Մտածել ե ամուսնանալ Աղիզի հետ Սոլոմոնն, ու հաշխաներ ե արել։ Իսկ հաշխաներն արել ե ենակն, վոր վերջը տակը մի բան մնա՞ւ, վոր ինքը դառնաքաղաքի առաջին վաճառականը։ Գիտեր Սոլոմոնը, վոր ավելորդ ծախսերի հետ ե կապված ամուսնությունը, ընտանիք պահելը, բայց յերկար մտածելուց հետո համոզվել եր, վոր ուրիշ յելք չկա, վոր ահւածեցտ ե այդ քայլն անել։ Սոլոմոնին այդ վորոշմանն եր հանգեցրել և ժառանգ ունենալու անհրաժեշտությունը, վորպեսզի իր ունեցվածքը ցաք ու ցրիվ չդար։ Բացի այդ, նա ստիպված չեր լինի խանութում ծառայող պահել։ իր յերեխաներն իր հետ կաշխատելին։ Իսկ Աղիզին ընտրել եր այն պատճառվ, վոր կարծում եր, թե նա դեղիկուհի լինելով առանձին պահանջներ չի առաջադրի և խոնարհ կին կլինի իրեն։

Այդպես ել Սոլոմոնն ամուսնանում է Աղիզի հետ։ Աղիզին հենց առաջին որից դուր չի դալիս Սոլոմո-

Նը: Նրա զեղջկական հոգին հաշտվել չեր կարող
այդ չոր, համրիչ դարձած մարդու հետ: Յեվ կյան-
քում ճանաչելով Սոլոմոնին, նա ամենից լավ հաս-
կացավ, թե ի՞նչու այդ բազաղին ժլատ Սոլոմոն ա-
նունն ելին տվել:

Ամուսինները համարյա շաբաթներով իրար հետ
չելին խոսում, վորովհետեւ խոսակցության նյութ
չելին գտնում: Ազիղին բոլորովին չելին հետաքրքրում
Սոլոմոնի առևտրական գործերը: Սոլոմոնն ել
իր հաշիվներից բացի, վոչ մի բանի մասին չեր կա-
րող խոսել ու մտածել:

Ճաշերին շատ հաճախ տուն չեր գնա Սոլոմոնը,
իսկ յերբ գնար, ասես զողունի մի բան կուտեր, հետ
կքաշվեր թախտին ու զարմանքով կնայեր, թե ինչ
շատ է ուստում Ազիղը: Ապա կմտածեր Սոլոմոնը,
վոր հակառակ իր սպասածի խնայողության մասին
շատ չի մտածում Ազիղն ու ճաշի հետ պանիր ել և
հանում սեղան: Այդ մասին ի հարկե, դեռ վոչինչ չեր
խոսում Սոլոմոնը:

Յերբ ճաշին տուն չեր գնում Սոլոմոնը, անցնում
եր իր յեղբար խանութը: Նրա յեղբայրը՝ Պավլեն,
վոր գեռ սիրտ չեր արել ամուսնանալ ու խոր մտա-
տանջության մեջ եր,—ամբողջ որն անց եր կացնում
իր յերկաթեղենի խանութում: Ճաշերին, յերբ նրան
հյուր եր գնում իր յեղբայր Սոլոմոնը, կողքի մրգա-
վաճառ—պարսիկից կես Փունտ չամիչ ելին վերցնում
նրանք, մի Փունտ հաց, ու լուռ, առանց մի խոսք
փոխանակելու ճաշում ելին: Ապա յերբ վերջացնում
ելին ճաշը և հանկարծ դրսից լսվում եր թեյավա-

ձառ պարսիկի ձայնը, յերկար մտառանջվում եյին
նրանք մի—մի բաժակ դարչինով թեյ խմեն, թե այդ
որը կարելի յեր անց կացնել և առանց ավելորդ
շռայլության:

Ազիղի գրությունը հուսահատական եր: Բայց նու
շեր հուսահատվում ու կարծում եր, վոր ամեն ինչ
զեզի լավը կդնա, յերբ իրենք յերեխաներ ունենան:
Յեվ իրոք, յերբ նա մի տղա ծնեց—պայծառաջավ
Սոլոմոնը, ժպտաց այդ որը և նույնիսկ չոյեց Ազիղի
դլուխոր: Բայց այդ յերկու որ տեսց միայն: Յերե-
խայի ծնունդը կարծես Սոլոմոնին ավելի լցընց պա-
տասխանավության զգացումով ու նա ավելի լուսկ-
յաց, ավելի ժլատ դարձավ: Յերեխան ծնվելուն պես
նա մի նոր չենքի հիմք գրեց: Հիմքի վրա հավաքվել
եյին վարպետները, խաչը ձեռքին կանգնել եր քա-
հանան, բայց Սոլոմոնի դեռ չեր վորոչել կարեւոր
մի բան: Նա գեռ մտածում եր, թե չենքի հիմքի
անկյունում վոսկե գրամ ձգի, թե՝ արծաթի, վոր
հիմքն անխախտ ու ամուր լինի, վոր Աստված իր
չենքը զերծ պահի ամեն փորձությունից:

Ու յերեաը խաչակնքելով, Սոլոմոնը, բոլորի աշ-
քի առաջ աչքերը փակելով մի վոսկե աաար ռուր-
լանոց հանեց պրպանից ու նետեց խոր փորած հիմքի
մեջ: Այդ գիշեր նա չկարողացավ քնել մի վոսկին
կորցնելու մտքից և այն կասկածից, թե գիշերը վար-
պետները վոսկին կարող են հանել հիմքից:

Ազիղը մտածում եր, թե յերեխայի մեծանալու
ու նոր յերեխա ծնվելու հետևանքով կփոխվի Սոլո-
մոնը: Բայց նրանք ունեցան յերկըորդ, յերբորդ,

չորրորդ, հինգերորդ, վեցերորդ յերեխան և գըտա-
նից դրությունը միայն վատացավ։ Նրանց կյանքը
վեր եր ածվել անվերջ մի կռվի։ Մաշվում ելին յե-
րեխաների չստերը, մաշվում ելին նրանց շորերը և
Աղիզը պետք և մի շաբաթ մարդուն ասեր, պիտի
կույեր նրա հետ, յերեխան պիտի մի չորս որ բորբկ
գողրոց գնար, վոր Սոլոմոնը հարեւան մաշկակարից
մի զույգ չուստ վերցներ յերեխայի համար։ Սոլոմո-
նը իր հերթին հանգիմանում եր կնոջը, վոր նա հա-
շիվ չգիտե, վոր նա անշնորհ և և մեծ յերեխաների
հագուստը լավ չի հարմարեցնում փոքրերին ու ա-
մեն մի չոր մաշվելիս խսկույն կտոր և պահանջում։
Որերով թեյ չելին խմի ժլատ Սոլոմոնի տանն ու
յերբ յերեխաները շաքար պահանջնին նա ակնար-
կելով շենքի կիսատ մնացած տանիքը կասեր։

—Սպասեցեք տան գլխին փափախ դնենք, հետո
չայ շատ կիսմեք...

Աղիզն այլևս, ամեն ինչից չույսը կտրած ազո-
բում եր աստծուն։ Ու միշտ յեկեղեցի գնալով Աստ-
ծուց միայն մի բան եր խնդրում, —այն, վոր Սոլոմոնը
զոնե յերկու տարի իրենից չհւտ մեռնի, վոր
զոնե յերկու տարի նրանից հետո հանգիստ կյանք
տեսնի ինքը։

Եերբ յերկիրը խորհրդայնացավ բազավ—Սոլոմոնը
կաթվածահար չեղավ։ Այդ զարժացը բոլորին և
առաջին հերթին Աղիզին։ Բայց ասես խելազարվել
եր նա, թուլացել ելին նրա ծնկները։ Սոլոմոնը գու-
նասա, պազաղից բարձրացածի սարսափած հայացքով
նայում եր կյանքին ու վոչինչ չեր հասկանում։ Ա-

մեն ինչ սոսկալի ցավ եր պատճառում նրան մինչև
վոսկը ծուծը : Ահմիտ թափառում եր նա, անկապ
խոսքեր եր ասում, արշինով չափելու ձեեր եր ա-
նում, խոսում եր մուշտարիների հետ, հայհայում
եր շենքի բնակիչներին՝ բակը կեղառանելու ու բընա-
կարանի վարձն ուշացնելու համար :

Հանկարծ սթափվում եր նա ու հասկանում,
վոր վոչ բնակիչ կա, վոչ մուշտարի, վոչ արշին:
Այդ սարսափելի յեր լինում : Այդ ժամանակ նա խո-
րասուգիում եր իր պղտոր ու քառսային մտքերի
տիղմի մեջ, անզոր կատաղությունից կրնտացնում
եր ատամներն ու հառաջում հոգու խորքից :

Աղիղը տեսնում եր այս, ասես քիչ խղճահար-
վում եր, բայց հիշելով անցյալը, մխիթարվում եր,
Սոլոմոնի տանջանքը համարելով իր կործանված
կյանքի, իր ատամների հատուցումը :

— Հո աստված լսեց ինձ, — ամբողջ հոգով քըր-
քը ջալով ասում եր Աղիղը, — Հողը նրա գլուխուր,
վոնց վոր հողեցի. մենակ բոլլեիկները յեկան նրա
հախիցը : Պատերը դես շարեց — դեն շարեց, վերջո
բանջար ուտելով սատկեց :

Ու զոհ իր վիճակից և այն բանից, վոր Սոլոմո-
նի մահից հետո վոչ թե յերկու, այլև ամբողջ վեց
տարի յե ապրում արդեն ասանց նրա ճնշիչ ներկա-
յությունն զգալու, Աղիղն իրեն թեթև, ուրախ, մի
տեսակ յերիասասարդացած եր զգում :

Տղաներից ել զժգոհ եր Աղիղը :

— Նրանք ել իրենց հոր նման շունդուրս յեկան...

Գանգատվում եր Աղիղը : Նրանցից վորը հաշվա-

պահ, վորը պահեստապետ և խորհրդային աշխատող
եր, բայց գաղտնի առևտրով եյին զրադվում: Նրան-
ցից և վոչ մեկը չեր ցանկանում իր խնամքի տակ
տանել ծերացած մորը:

Դատարանով ջանները հանում եմ, ամեն ամիս
իմ ապրուստի փողն առնում եմ ու ինձ համար ապ-
քում:

Աղիզը միանգամայն անկեղծ եր:


Այնպես, ինչպես իր վողջ կյանքում յեր սիրել
բազաղ Սոլոմոնին, նա այնպես ել չեր սիրում նրա
տղաներին, վորոնք արյան հետ ստացել եյին իրենց
հոր մանր առևտրականի քսույությունն ու ժլատու-
թյունը, վոր այնքան խորթ եր Սոլոմոնի այրու-
ղեղջկական հոգուն:

Աղիզը ասանյակ տարիներ ապրել եր այդ մար-
դու հարկի տակ և նրա հողին մնացել եր անարատ
ու մաքուր: Նա ամբողջ հոգով ատել եր Սոլոմոնին,
երա վողջ լրջապատն ու ընկերներին, վորոնցից ա-
մեն մեկը մի չարիք եր հասարակության համար և
բանակալ իր ընտանիքում:

Հոկտեմբերը նրանց ընջեց յերկրի յերեսից:

Ահա, թե ինչու այնպես կենսուրախ եր բազաղ
Սոլոմոնի այրին:





ԳԵՂԴՈՐ ԻՎԱՆԻԶԻ ԿՑԱՆՔԸ



Մարտավիելին մեռավ :

Մեռավ վորովնես նախահեղափոխական հայկական գյուղի վարժապետ, վոր ամուրի ու անտեր արդեն ծերանում եր :

Նա խաղաղ ապրում եր գյուղում, այցելում եր տերտերի ու դյուցի անվանի մարդկանց աները, ամառվա շողին սառը թան եր ուղում իր քույր Մարանից կամ տիրուխնուց, թափառում եր այդիներում, յերբեմն սար եր բարձրանում ու անհոգ կյանք վարում լեռներում :

Այսպես հոսում են որերը, մինչ 1905 թվին Անդրկովկասում ծայր են առնում ազդամիջյան կոտորածները :

Սարսափահար գյուղացիները հավաքվում են
դյուզի միակ գրապետ մարդու մոտ՝

—Ի՞նչ, խարար կա, վարժապետ...

Վարժապետը, վոր վշտից արդեն մի քանի թա-
հոնի ողի յեր կոնծել, ձեռքին շուռ ու մուռ եր տա-
լիս «Մշակ»—ի վերջին համարն ու գլուխն որորե-
լով պատասխանում:

—Սարսափելի յէ ժողովուրդ, սարսափելի...

Թեև ժողովուրդը չի հասկանում սարսափելի
բառի իմաստը, բայց վարժապետի տեսքից ու ձայ-
նալարերի դողոցից հասկանում ե, վոր ինչ վոր
սարսափելի բան և կատարվում:

Այնքան ե աղդում գյուղացիների վրա այդ բա-
ռը, վոր գրանից հետո վարժապետի անհւնը կնքում
են սարսափելի:

Յեզ 13 տարի անց, 1918 թվին գյուղի ուսուցիչ
Արտեմ Խվանիչը վախճանվեց վորպես սարսա-
փելի, վորին այլ կերպ չեյին կանչում գյուղում:

Ու մյուս առավոտ իմանալով, վոր վարժապետը
վախճանվել ե, գյուղացիները գլուխներն որսրելով
ասում եյին՝

— Հայիփ, մեր սարսափելի, հայիփ...

Ու այդպես անտեր ու անշուք, հայկական մո-
ւացված դյուզում իր մահկանացուն կնքեց Ներսիս-
յան գպրոցն ավարտած հայ ուսուցիչը:

Սարսափելին Ֆյոդոր Խվանիչի կրտսեր յեղ-
բայրն եր:

Ինքը Ֆյոդոր Խվանիչը նույնպես ուսուցիչ եր,
նույնպես յերկարամյա ուսուցիչ, վորը նույնպես ա-

մուրի ու անտեր եր մնացել, մինչ մի որ տեսել եր, վոր կզակից արդեն պատկառելի, ձյունի պես ճերմակ մորուք և կախվել:

Բայց մի քիչ այլ կերպ եր ընթացել ֆյուլոր իւղանիչի կյանքը:

Նա նախ և առաջ վոչ թե Ներսիսյան դպրոցն եր ավարտել, այլ ուսական մանկավարժական սեմինարյա, դասատու յեր յեզել վոչ թե հայկական՝ ծըխական գպրոցներում, այլ մի վոքքիկ դյուղաքաղաքի ուսական դպրոցում:

Ընտանեկան կյանք չուներ ֆյուլոր իվանիչն ու նրա մեջ ել յերջանելություն չեր փնտում:

Յեթև իր յեղբայր Սարսափելին իր շամուսնահալը հիմնավորում եր նրանով, թե՝

— Յես ո՞ւմ համբուրածին ինձ կին վերցնեմ, — ապա ֆեուլոր իվանիչն այդպիսի արգումենտներ չեր մնառում և այդ խնդրի շուրջը բացված խոսակցությունը վարպետներն օփակում եր ասելով՝

—Մոռացել եմ ամուսնանալ...

Ապա մի աշքը փակում եր ու շատ լուրջ կերպարանք բնդունելով շոյում եր սպիտակ մորուքն ու ասում:

—Բայց մտադիր եմ մոտ ժամանակներս ամուսնանալ...

Դպրոցն ել ֆյուլոր իվանիչին հոգեկան բավարարություն չեր պատճառում: Նրան դուր յեր դամս դպրոցական միջավայրն, ուսուցիչների անվերջ խծրծանքներով: Նա իր գործին նայում եր, վորպես արհեստ, վորպիս «ճամանակիր», վորից խոսափելն

անմտություն եւ Նրա միակ մխիթարությունն այս
եր, վոր սիրված եր անխտիր իր բոլոր աշակերտ
ների կողմից, վայելում եր նրանց հարգանքը, վո-
րոնք Ֆյոդոր Խվանիչին մեծ սիրով ռուչիանելը եյթ
կանչում։ Մեկ ել Ֆյոդոր Խվանիչը մխիթարվում եր
նրանամի, վոր առանց ափառելու առատաձեռն իր լու-
ման եր գցում բարեգործական նպատակներով կատար
վող հանդանակություններին, և պարտաճանաչ կեր-
պով մասնակցում եր «Հայոց բարեգործական ընկե-
րության» կազմակերպած բոլոր յերեկույթներին,
վոր գերազանցապես կազմակերպում եյին «Վարդա-
նաց որերին» և բնմադրում եյին «Ալարայրի ճակա-
տամարտը»։ Ֆյոդոր Խվանիչին մասամբ մխիթարում
եր և այն (այդ, ի հարկե, նա պահում եր սրբի
խորքում), վոր ինքը թեև ավարտել եր ոռւսական
սեմինարյա ու ոռւսական միջամվայրում եր դժոնվում,
բայց իսկույն չեր ռուսացելը ինչպես լինում եր
ցարական Ռուսաստանում շատ ինտելիգենտների հետ,
այլ սիրում եր իր աղդակիցներին, չեր խորշում նրանց
հետ լինելուց։

Ինչպես կյանքում, այնպիս ել դպրոցում Ֆյադոր
Խվանիչը աեսնում եր չոր չինովնիկություն ու լլա-
ցուցիչ ուսադիրներ, վորոնք ամեն ինչից ու ամեն
դադախարից վեր եյին և ամեն ինչ պետք ե յենթարկ-
վեր գրանց։

Յեվ նա յերկյուղածությամբ ու ակնածանքով եր
վերաբերվում գեպի սմուարիաելներն ու ինսպեկտոր-
ները, վորոնք հաճախ անցնում եյին դպրոցները, վոչ
թե ողնելու, այլ ողովինցիայի ուսուցիչներին վախ-

ներշնչելու, իրենց մեծության առաջ նրանց շնչինությունն ավելի շոշափելի զգացնել տալու համար:

Ֆյոդոր Իվանիչն իր կաշիի վրա զգացել եր այն բարոյական վոչնչացումը, վորին յենթարկվում եր պղբովինցիայի ամեն մի ուսուցիչ ցարական ամենաշընչին չինովնիկի առաջ: Այսպիսով նրա մեջ մեխանիքական պատկառանք ու հարդանք եր մշտկվել դեպի չինովնիկությունը: Թեև այդ գեմ եր Ֆյոդոր Իվանիչի գեղջկական վուգուն, բայց միաժամանակ կարծես այդ դուր եր դալիս նրան, վորպես որինաչափ մի յերեվույթ, այն գիտակցությամբ, վոր գաշխարհը նարդիվան եռ, վոր մարդիկ պետք ե վորոշ աստիճանականության մեջ լինեն իրար նկատմամբ:

Յերբ յերկիրը խորհրդայնացավ, այդ Ֆյոդոր Իվանիչի համար վոչ վատ եր, վոչ ել այնքան հարցադատ նրա վողուն ու գաղափարներին:

Սակայն խորհրդայնացման հենց առաջին որից մի րան նկատեց Ֆյոդոր Իվանիչը, վոր նրա սրտին շատ հարազատ եր: Այդ այն ուշադրությունն ու հողատարածությունն եր, վոր խորհրդային իշխանությունը ցույց եր տալիս ժողովրդական լուսավորության ու ւերկրի կուլտուրական վերելքի գործին: Յեկ Ֆյոդոր Իվանիչն անվերապահորեն, թեև արդեն ծերացած ու բուրովին ճերմակած մուրուքով, իր վողջ ուժերը նվիրեց խորհրդային միջնակարգ դպրոցին:

Խորհրդային զնորոցումն ել նա մնաց բոլորի կողմից սիրված ռուցիսելլը: բայց հարգանքը դեպի նրա աշխատանքը դուրս յեկավ աշակերտների նեղ շրջանակից ու խորհրդային հասարակայնությունը նրան ճա-

նաշեց՝ թերթիկում տեսնելով նրա նկարը, նրան ձանաչեցին հանգստյան տներում, ուր նա ուղարկվում եր վորապես դալրոցի լավաղույն հարվածային։ Ծերացած ֆյոդոր Խվանիչը դարձել եր կոմյերիականների սիրելին, վարսնց նա դալրոցից զուրս ել ոգնում եր ոռուաց լեզուն ուսումնասիրելու դործում։

Կյանքն արդեն ակսել եր շատ բովանդակալից դասնալ ֆյոդոր Խվանիչի համար։ Յեզ վորքան ոբը—որին բովանդակալից եր դառնում կյանքը, այնքան շատ բան եր ափասում ֆյոդոր Խվանիչը։ Նա ափսոսում եր, վոր չի տմումնացել ժամանակին, ափսոսում եր, վոր ծերանում և արդեն ու բարկանում եր, վոր իր կյանքի կարճ մասը բաժին ընկալ խորհրդային իշխանության, իսկ այն մյուս յերկար ու վասկե յերիտառարդության շրջանն անցավ անմիտ ու անբովանգակ։

— Հայ դիտի՛, սրառավեց Ֆյոդոր Խվանիչը, — կեղծ թախիծով արտասանում եր նա ու ասում, վոր արդեն պետք և մտահոգվել կենսաթոշակի խնդրով։

Բայց մի դեպք տեղի ունեցավ Ֆյոդոր Խվանիչի կյանքում, վոր վերածնեց, կենդանացրեց նրան և այդ այն աստիճան, վոր նա նույնիսկ դադարեց կենսաթոշակի մասին մտածել։

Լուսավորության աշխատավորների հանրապետական համագումար եր։

Ամբողջովին վերածնվել եր Ֆյոդոր Խվանիչը։ Նա առույդ, յեռանդուն, վոգեշունչ ճառ եր արտասանել համագումարում։

— Ճառ սկսեցի նրանով, վոր յերիտառարդ ու-

սուցիչներին խորհուրդ տվի շիախչել գյուղից . հետեւ մել ուսուցիչների հին սերնդի մի քանի լավ կողմերին , խորհուրդ եյի տալիս շատ բան սովորել ու յերկար խոռում եյի և առօտքում եր մյոդոր իվանիչը :

Նրա ճառը խլանում և համազումարի բուռն ծափերի տարափի մեջ : Հուզմունքից ջրակալած աչքերով դարձյալ վորոտալի ծափերի տակ մյոդոր իվանիչը թողնում և անրիոնն ու բեմի վրա նախազահաւթյան սեղանին դրավում իր տեղը :

— Լուսժողկոմն իր վերջին խոսքում ասաց , վոր նկատի ունի և իմ ճառը : Ես վոր լսեցի՝ սիրոս սկսեց ուժեղ խփել : Քրտինքը պատեց մարմինս , —իրեն հատուկ հումորով պատմում և մյոդոր իվանիչը , — ասացի չինի պառաված հալով հիմար բաներ եմ դուրս տվել ու քիչքման մեջ ընկելու : Մտածում եյի , թե հեմի Լուսժողկոմը պետք և խայտառակի ինձ ամբողջ համազումարի առաջ , գուցե և անվանի հին զպրոցից յեկած , փթած վարժապետ : Ինքս ինձ ասում եյի՝ «Այս , մյոդոր իվանիչ , ինչ ցավով եր կտրել վեր կացար խոսեցիր . պատվով՝ ապրեցիր մինչեվ հիմա ու ծերության որերիոդ պետք և խայտառակվես» : Բայց ուշին գամ ահանեմ լուսժողկոմն ասում և , վոր նոր սերունդը շատ բան ունի սովորելու հին սերնդից և ինձնից ու ամբողջովին հավանություն և տալիս իմ մտքերին :

Այդ համազումարից հետո ինքը մյոդոր իվանիչը բարձրացավ իր աչքում , ավելի ինքնավատահ դարձավ ու զործունեյության յեռանդով լցվեց : Մինչ այդ ,

վերձնը աղաղաբել եր այն միտքը, թե ինքն արդեն
ծմբացելու անպետք է, վոր արդեն պետք և կենսա-
թագակի ըստովնամածել—վերացել եր: Նա միտյն ափ-
առագում եր, վեհանջու իր յեղբայր Սարոսին ել
այնքան չապրեց, վոր այս որերը տեսներ, ևսու
մեռներ ուղարկուան:

— Ազգա նայախաղ ըլլից ա

— այս գորում մատ գործաւա

Բայց ինքը, մեղոր իվանիչն ել յերկար չապրեց:
առաջարարութեաններով ու աշխարհ տեսնելով:
Եր եր կյանքի վերջին մի քանի տարին անցկացնել
շնչագայություններով ու աշխարհ տեսնելով:

Բայց դեռ մաս մի շրջագայություն չկատարած,
մի ուր, մերը մասյու և ջարգում մեղոր իվանիչը կաթ
տաքացնելու համար, հոգնած պահկում և թախտին
ու եկ չի լենում: Միւս որը դրացիները յերկար ժա-
մանակ մասուր իվանիչին չաեսնելով անհանգստանում
են ու նրան գործում խաղաղ, հավիայան քնի մեջ:


Պղրաբես Հեղատես մարդ; մեղոր իվանիչը նա-
խապես պատրաստել եր իր կտակը: Նա պատմիրել եր
խնարժամագիզում ունեցած իր մաս 3000 ոռորլին,
վոր պահել եր լրջագայությունների համար, այն ամե-
նոն ինչ կտանի իր ընտակարանում ու այն 2000 ոռոր-
լին վոր Պեղապը պետք և վճարի իր ժաշվան դետ-
ուամ ամբողջը հանձնել իրենց գյուղի զպրոցին, ուր
յերկար տարիներ վորպես ուսուցիչ աշխատել և զեմար-
սափելին:

Այսպիսի յառաջի որմն ուսման ընդառանան: Այս
մյուղը իվանիչի ուսաղի հետևից վոչ նրա կի-
մը եր գործած մուտք մինիսանները? Ոպանիչ ախրու-
թեան մասում: բայց բարձաւու առաջանանդուք առ
ձեւ

Թյամբ Շնչում եյին մահվան քայլերդի ակկորդները :
Դադաղի առաջից յերկու աշակերտուհի ծաղիկներով
դարդարված և շրջանակի մեջ տանում եյին իրենց
սիրելիի Ֆյուգոր Իվանիչի մեծադիր նկարը : Նրանք ա-
մաւր սեղմակնել եյին իրենց սիրելի ուսուցիչի նկարին,
ուսուցիչի, վորին ել յերբեք չեյին տեսնելու, վորի
կենսուրախ կատակներն ու հոգատար հայրական
խոսքերը ել չեյին լսելու :

Կնոջ և յերեխաների փոխարին Ֆյուգոր Իվանիչի
դադաղի յետեկոց մոլոր, գլխիկոր քայլում եյին հար-
յուրավոր աշակերտներ, ուսուցիչներ ու աշխատավոր
ներ, վորոնցից շատերը հաղիկ եյին խեղդում իրենց
հեկեկանքը, վոր այնպես դուրս եր ժայթքում սիրելի
Ֆեոդոր Իվանիչի մահվան խորը կակիծից :





ՅԵՐԿՐԱՐԱՆԻ ՀՈՒՅԶԵՐԸ



Քանքերը խոնավ, խալար, առեղծվածային աշ-
խարհ են: Նրանք ել իրենց կյանքն ունեն:

Դեռասի աղջկա ամին իր ձեռքի մեջ առած գուշա-
կի նման՝ յերկրաբանը նայում եւ հանքի կնճիռներին: Նա
վորոշում եւ նրա բազդի ուղին, փարոսի նման ուղ-
ղություն եւ տալիս խալարը ճեղքող կարքիտե լույսե-
րին, ելեկտրականությանը, յերկաթին:

Յեկ արդեն մութ ու դաժան չեն հանցերը:

Շախտերով ելեկտրականությունը, տեխնիկան,
մարդը թափանցում եր յերկրի ընդերքը: Այսուղ ուսը
կախառնվում են մարդու, վագոնեակաների, պերֆեր-
ատորների քրքիլը, հեռոլից ժպտում են կարքիտե
լույսերը:

Կյանքն և ժպտում այնտեղ ու հախուռն թափով
արախում են մարդկանց որտերը ստորյերկրյա խա-
վարում :

1

Անտառի սառըրութիւն այն հանքը, սակայն, վորտեղ
Ավետիքն եր աշխատում այդպես չեր : Վոչ մարդիկ ե-
յին ներս ու դուրս անում Ավետիքի հանքում, վոչ ել
յերկրի տակից դուրս յեկող ձիերն եյին լույս ու արե-
տեռած բերկրանքով խրխնջում :

Հանքը հենց մուտքից ցեխոտ եր ու հեռվից ջրի
անախուրժ խշչոց եր լսվում, վորը ծանր տպավորու-
թյուն եր թողնում ներս մտնողի վրա :

Հանքի խորքում ջրի աղմուկն ավելի յեր ուժեղա-
նում ու արառու ազդելու չափ ճնշում մարդու, ծա-
նըրանում նրա հոգու վրա :

Հեղեղված հանքը ավերակի նման ծանր տպավո-
րություն և թշղնում :

Դեմք միայն խավար տարածություն և ու ջրի
անախուրժ աղմուկը :

Հանքաւոյիներում չեն յերեսում ովեպի հանքի
մուտքն աճապարզ կարրիտն կապատակում լույսերը,
նրանց չի ուղեկցում վաղոնետների հաճելի բրենջը :

Մոռթ ե, խոնավ ու ամայի :

Ջրի առատ հսանքը շառաչելով թափում ե վե-
րից ու մեծ առու կազմում : Հենց հեղեղառի տակ
բրեղենտե հազուատներով, յերկարավիղ ոհտինե կո-
չիկներ հաղած Ավետիքն իր յերկու ընկերների հեա
բրիչով ժայռի մեջ անցքեր եր բացում : Նրանք արդեն

ամբողջովին թրշլել եյին, բայց աշխատանքը չեյին
թողնում:

— Գնանք քիչ շարանանք, — դարձակ նրանց Ավե-
տիքը:

Մուրճի վերջին դարկի արձականքը պապանձվեց
ջրով լցված հանքախորչերում: Զրի միապազաղ առ-
մռելին ավելացան ցեխի միջից դժվարությամբ դուրս
յեկող վոտնաձայները:

Դրսում, հանքի մուտքի մոտ բոցկլսում եր խա-
րույիշը: Արդեն յերեկո յեր: Նրանք հանեցին շարերը,
փակցին ու իրենք ել պառկեցին կրակի մոտ:

— Տղերք, ձեր խելքն ի՞նչ ա կտրում ես դոր-
ծից, — լոռւթյունն ընդհատեց Ավետիքն ու հայացքն
ուղղեց կրակին վայտ բարձող իր ընկերներին:

Նրանք խնամքով չորացնում եյին հազուսաներն
ու գժվարանալով պատասխանել Ավետիքի հարցին,
լուս եյին: Նրանց լոռւթյունը սակայն չերնչանակում,
թե այդ հարցը չեր հետաքրքրում նրանց կամ անակըն-
կալ եր իրենց համար: Ծնողհակառակին, նրանցից յու-
րաքանչյուրը շատ եր մամաացել այդ խնդրի շուրջը,
բայց վերջնական յեզրակացության չեր յեկել: Ավե-
տիքի ընկերներին անակնկալի բերեց այն, վոր նրան-
ցից յուրաքանչյուրն այդ խնդրի մասին մտածելով,
չեր փորձել իր մտորումներին հազորդակից դարձնել
ընկերոջը:

— Ֆրանցուաների աչքից մի կորեկն ձև չեր վիախ-
չի: Հիմա յես չեմ հառկանում, թե են դործից, վոր
նրանք ոլուխ չհանեցին ու կիսատ թողին, մեր ես ին-
ժեներն ի՞նչի յա զոր տալիս—ես մասին իսկի մատնել

Ե՞ք, — Հարցը Ավետիքն ու կասկածից տանջվող
մարդու հայոցքով նայեց ընկերներին:

Նրանց աչքերում Ավետիքը հավանություն կար-
դաց:

— Ախր դոնե մի նշան յերևար — հենց չարշարվում
ենք, Մաթվեյն ել մի բան չի մտածում, — նկատեց
նրանցից մեկը:

— Մաթվեյը մտածի՛... արհամարանքով ասաց
Ավետիքը, — ի՞նչի, դու չես տեսնում, վոր Մաթվեյն
ինժեների պոչն աղառել: Նա ել չի մտածում թե ի՞նչ
ա անում, հանքն ել ձեռից դնում ա: Մի իվանով ել
կար, եսենց անպետք տեղեր փորեց — փորեց ու հա-
տառեց, թե մեր հանքն անպետք ա, փակել ամեց: Հի-
մի յես նորից գրանից եմ վախում, Մաթվեյն ել ով
դիակի ուզում ա մի լավ պաշտոն ձեռք գցի ու աչքերը
փակել ա:

Հուղմունքից այրվում ելին Ավետիքի այտերը:
Նա վրդովմունքից ել խոսել չկարողանալով լռեց ու
հենաճ արմունկին խորասուղվեց մտքերի մեջ:

— Ավետիք, իղուր ես եղակս խոսում, — զու լավ
գիտես, վոր Մաթվեյն ես հանքերում ա մեծացել ու
քեղանից ել, ինձանից ել շատ ա մտածում հանքի
մտարին: Զե ախափեր, իմ խելքն ել ես հանքից բան չի
կարում, բայց Մաթվեյի վրա եղ ահսակ կասկած
տանել չեմ կարող:

Ավետիքի համբերությունը հասավ:

— Դու դեռ կաթը բերնիկ կոմսոմոլ ես, զու սուս
կաց: Երկու որ չկա հանք ես մտել ու գլխիկ զոռ ես
տալիս փոխանակ աչքերդ չորս արած շուրջգ նա-

յելու։ Հանգերը մութ են, ախաղերս. պետք ա աչքերը լին բացես, թե չե տեսար իվանովն ի՞նչ արեց։ Յես ևո հանգերում շատ եմ աշխատել։ Ամեն զարոյում իմ քրախնքը թափվել ա, քարի թողն ու դինոմիտի ծուխը քթիցս դուրս չի յեկել։ Յես զիտեմ ի՞նչ կա, վոր խոսում եմ։

— Բայց ի՞նչ հիմք ունեն ինժեների վրա կասկածելու։ — Նա ազնիվ մարդ ա։

— Ազնիվ մարդ ա…… դեպարզ ա, թշնամին ազնիվ պիտի յերեա, վոր կառկած չանես։ Հենց վերցըրու են իվանովին։ Քաղցր մարդ եր չա՛տ, իսկի մեկիս չեր ասի, թե աչքիդ վերել ունք կա։ բայց տես, թե ինչ արեց։ Յես լավ գիտեմ, թե մեր հանգերում վորտեղ ջուհար կա և վորտեղ տարիներով ել փորեսմի մսխալ բան ձեռքդ չի ընկնի։ Եղ իվանովը զուը զցեց հենց են հանգերի վրա— վարաեղ ջուհար չկար։ Հիմի ախաղեր ջան, վոնց վոր տեսնում եմ ու յել նրա գիծն ա տանում։

— Զե, Ավետիք, ճիշտ ա, հանգի դործը դժվար ու մութ դործ ա, բայց յես եղ կասկածը չունեմ, մանավանդ, վոր Մաթվեյը կա։ Նա հինգ մատի պես զիտի մեր հանքն ու ինժեներից ել պակաս չի հասնում ես զործ։

— Եւ Յերգանդ, ի՞նչ ասեմ քեզ, ջահել ես։ Բայց իմ աչքը շատ և վախեցել։ Դու լսել ե՞ս, թե Ռուսաստանում ինժեներները հանգերում ի՞նչիք են արել։ Ճիշտ ա մեր սպեցներն են, պետք ա նրանց ովտադործենք, բայց պետք ա զգույշ կենանք։ Եղ ինտելիգենտ զասակարգը վտանգավոր ա, դեռ ընկեր լի-

Նինն ա ասել, վոր դրանցից պետք ա մուզայիթ մնալ:

Մինչ նրանք խոսքով տարվել եյին, նրանց գլխի վերևը կանգնել եր կեռ քմով, յերկարահասակ մի ժարդ, վոր իր թանձր աչքերով վերից նրանց եր նոյնամ:

— Տղերք շատ ե՞ք թրջվել, — դարձավ նա Ավետիքին ու առանց պատմասխանի սպասելու շարունակեց, — Վաստ տեղում եք, մի քիչ ել վոր առաջ անցնեք—գործներդ կհեշտանա: Քանի՞ շպուդ եք խիել:

— Վեցը:

— Խորն Ե՞ն:

— Զե գեռ:

— Դե, մի մետրի հասցրեց ու զնացեց տուն—եսոր շատ եք չարչարմել, մութն ել արդեն ընկնում ա:

Նա ուղում եր հեռանալ, յերբ Ավետիքն անհամարձակ դարձարվ նրան.

— Ուստաք, չի լի՞նի ես դաբոյը թողնենք...

Հանդիմանական հայացքով Մաթվեյը վսաքից դլուխ չափեց Ավետիքին ու վճռաբար հարեց՝

— Զե, եղան բան չի լինի: Մեր հանքի բախտն եստեղից պիտի բացմի: Ետպես բաներ մի մտածեր, հաղիս ենք հանքի գործը քիչ ուղղել: Ել եղ տեսակ խոսք Շընէ: մենակ աշխատեցեց ես հեղեղված տեղից լուս անցնել: Դե, հայդե, մթնում ա, սկսեցեք գործը:

Նրանք միտոին հանք մտան: Մաթվեյը դիմեց

հանքը, մանրազնին նայեց փորվածքից դուքս յեկած փոշուն ու անաց՝

— Զուհաբը մոտ ա, լավ աշխատեցեք:

Հանքի մուտքի կողմից լալկան բայաթու հեկեկանք լովեց, վորը ջրերի չփշիոցին խառնվելով, ասես կործանվող բեկորների խոլական արձագանք լիներ: Նրանք առանց խոսելու տեղերում քարացած լուռ ունենդրում եյին մոտեցող յերգչին: Յերբ Սաֆարը յերգում ե՝ բոլորը պիտի լուն: Ամեն ինչ պետք է պապանձվի նրա շուն ու հիպնոսվածի հման ոշաբքիորեն հնաղանդվի նրա լալկան բայաթու յելեվելիներին: Այդ կարծես ամայացած հանքի յերդը լիներ, վորը լցվում եր ջրով և վորի հավիտենական խավարում ավանդությամբ չար վոդիներն են միայն իշխում: Նրանց չի անհնդստացնում անզամ գինամիտի ստորյերկըյա ահաելի վարութ:

Սաֆարի ձայնը մոտենում եր: Ու վորքան մոտենում եր նա, այնքան խլանում եր հեղեղատի ձայնը: Վողջ հանքն արձագանքում եր նրա յերգին, վոր սկսվում եր լալկան յելմաշներով ու գնալով հըլոռանում եր: Այդ յերգի մեջ հնչում եր հանքը պարթեցնողի հավատքը գեղի իր գործի հաղթանակը: Սաֆարը յերբ նկատեց Մաթվեյին, ամոթխած բարեց ու քիչ հեռու ցած զնելով գինամիտի տոպրակը մոտեցավ նրանց:

— Սազ ու Սաֆար, սազ ոյ, քո բայաթին ել վոր մինի, մենք կկռառվենք ես հանքերում, — տաշ Դիմիտրին ու աշելացրեց.

— Սաֆար ջան, տղերքը հենց վոր վերջացնեն.

կապայթեցնես : Պատրոնները լավ զիբ՝ ի զուր պատրոն չփչանա — կարդաղը Մաթվեյն ու գուրս յեկալ հանքից :

2.

Ծառվեղը բանվորական ավանից իշխում և ձորն, ուր վշշում և քարափից ընկնող վտակը : Այդտեղից արահետը բարձրանում և՝ ապա գոտու նման փաթաթվում լեռան մեջքին և ուղղակի մտնում դլխավոր հանքը : Այդ արահետով կարբիոն լամպը ձեռքին դնում եր հանքերի յերիտասարդ յերկրաբանը : Նա մտազրադ եր : Արդեն յեկել եր յերկար ու տանջալից աշխատանքի պսակման բոպեն :

Եերկու տարի նա շրջապատմած մի խումբ հին բանվորներով ու յերիտասարդ ենտուղիաստներով՝ անորինակ ջանքեր եր դործ դրել ապացուցելու, վոր այդ հանքերի դլխավոր հարստությունները դեռ մընում են : Իր արած հաշվիներն ու արմաստի փորման տվյալները ցույց եին տալիս, վոր հանքը պղնձի խոշոր պաշարներ ունի : Դրանում սակայն պետք և համոզել բանվորներին, պետք և համոզել վարչությանը :

Ու հիմա ինչպես միշտ, նա չկարսղանալով համրերել ու սպասել մինչ առավոտյան պարզվի որվա աշխատանքի արդյունքը՝ պայթեցումից անմիջապես հետո նա զնում եր տեսնելու, թե հանքային ինչ չերտերի յեն հասել : Բոլոր հանքախորշերը շրջելուց հետո նա անցակ և Ամեստիքի հանքը :

Դիմամիտը վեց տեղից պայթելով ահազին դանդաղած եր դուրս փորել, վորի մեջ հատ ու կենտ

փայլում եյին ծծմբահրաքարերի մանր կտորները։
Այդ նշան եր, վոր մոտենում ե պղնձի շերտը։ Նո մի
քանի կտոր քար վերցրեց ու դուրս յեկալ հանքից։
Դիշերգա խավարում փայլում եյին բանվորական ա-
վանի լույսերն ու միայն մոտակա ջրվեժի վշշոցն եր-
րիցում։ Այդ յերեկո նա բանվորների առաջ պետք ե
գեկուցեր և այսան բարձրանալով առւն չմտավ, այլ
զնաց ուղղակի ակումբը։

Ակումբի դահլիճը բռնել եր մախորկայի ու կար-
րիտի բուրմունքը։ Յերկար նստարանների վրա խառն
ու անկանոն տեղ գրաված հանքափորները իրար հետ
զրուցում եյին, վիճաբանում, վսմանք լամպերի ա-
ղուա լույսի աակ թերթ եյին կարդում, իսկ ալմաս-
տավ փորագները— բոլորը յերիտասարդ, կոմյերի-
տական տղաներ մի կողմ հայտաբած Բուդյոննու
մարշն եյին յերդում։

Մաթվեյը, Յերվանդը, կուսակցական կոմիտե-
ի քարտուղարն ու մի քանի այլ հանքագործներ սե-
ղանի շուրջը հավաքված առաջարկներ եյին մշա-
կում։

Յերկրաբանը դահլիճը լիքը տեսնելով բարձր
տրամադրությամբ միացավ ալմաղիկներին ու խմբի
մեջ սկսեց լսվել նրա գուրեկան բասը։

Ուժեղացող յերդին վորպես պատասխան հանք-
կոմի նախագահը սկսեց ջղամդորեն վոլորել զանգի
կոճակը։ Յերդիկները լուցին ու տեղ գրավեցին նրա-
տարանների վրա։

— Ակսենք Սիդոր Խվանիչ, — գարճավ յերկրա-
բանին կոմիտեյի քարտուղար Պետրոսը։

— Սկսենք, առանց այն ել ուշ եւ :

Հանքային կոմիտեյի նախագահ՝ Կուլուխովը ու մի հանքադործ, կես հայերեն, կես սուսերեն, թուրքերեն, հունարեն ու վրացերեն ժողովականներին հասկացրեց, վոր զեկուցելու յև յերկրաբան ընկ. Սիդորը և ասելու յև, թէ ինչ պիտի արվի հանքերում։ Յեվ առանց յերկարացնելու ձայն տվեց յերկը արանին։

Սիդոր Խվանիչը մինչ այդ գրատախոտակին ու պատերին վակցրել եր մի շարք գծադրեր ու քարտեզներ։

Ժողովականների ուշադրությունը մի գծադրից մյուսի վրա հրավիրելով Սիդոր Խվանիչը նրանց ցույց եր տալիս հանքի յինթադրյալ հարսաւթյունները։ Ահա մի սե կետ։ Այդ Ամետիքի հանքն և Դրանից վոչ այնքան հեռու լնի նման կարմիր թանաքի ընդարձակ բիծ կա քարտեզի վրա— այդ հանքի ամենախոշոր շտոկներից և, վոր հարյուր հաղարավոր տոններով բարձրորակ ու պղնձառաւ հանքաքար ունի։ Դրանից այն կողմ դեպի վերի հորիզոնները ցրված են ամելի մահր կետեր, վոր արշիտելադի նրան տարածվում են քարտեզի վրա։

— Մեր հարսաւթյուններն ակներեւ են, — յեղափակեց իր խոսքը Սիդոր Խվանիչը, — բայց պետք ե ասել, վոր այս բոլորը, վոր ցույց են արված քարտեզում՝ զեռ պատրաստի հանքաքար չեն։ Հարկավոր և հաղարավոր մետրերի հետադություն կտարել, բայց մենք փայտվորիկի նման միայն

Հանգստում ենք հանքախորշերը և զործն առաջ չեղիում :

— Ի՞նչ պետք եւ անել :

Մենք այլես հանքափորման պապենական յեղանակներով բավարարվել չենք կարող : Անհրաժեշտ ե արադ մէկանիդացիայի յենթարկել հանքերը, — պետք եւ մեխոտնիկական փորման անցնել, անհրաժեշտ ե ուժեղ կոմպրեսորներ դնել հանքում : Այդ պիտի գյուղի բերել հանքերն ելեկարովֆիկացիայի յենթարկելով : Հենց վոր ելեկարական եներգիան մեզ հասավ — մենք կոկունք ելեկարական փորիչներով աշխատել մինչեւ կոմպրեսորներ դրվեն :

— Այդ դժվար ու լուրջ աշխատանք եւ : Թե մեր մեջ, թե կոմրինատում կլինեն մարդիկ, վորոնք դեմ կլինեն զրան, կասեն, վոր դեռ հնարավորություններ չկան այդ քայլերն անելու : Մեր հանքերի կազմակերպությունները, վոր արդեն ողի պես զգում են զրա անհրաժեշտությունը, — յես համոզված եմ, բոլոր միջնորդները մեռք կառնեն, վորպեսդի հանքերի մեխանիզացիան ամեն կերպ արագացվի :

Նա վերջացնելով իր զեկուցումը նստեց Ավետիքի մոտ, վորը մատղրադ կծկվել, եր առաջին նստարանին :

Զայն վերցրեց կուս . կոմիտեյի քարտուղար Պետրոսը : Նա յերկար տարիներ հանքափոր եր յեղել այդ հանքում : Այն հանքուղին, վորով հոնդալով անցնում եյին վագոննետները, նա բացել եր բրիչով ու դինամիտով : Ահա թե ինչու նա ամենից լավ ու ամենից պարզ՝ եր ըմբոնում ելեկարականության ան-

Հրաժեշտությունը : Նա գիտեր, վոր ելեկտրական լարերն ու ոգտակար խողովակները հանքի յերակներն են, վոր հանքերն ելեկտրական արյան ծարավի յեն, վոր նրանց կյանք կտան յերկաթն ու ելեկտրականությունը :

—Մեխանիզմացիան ողի ուսումնական լարերներ, —ակսեց նա իր խոսքը : Առանց մեխանիզմացիայի մեր հանքերն առաջ դնալ չեն կարող : Յես կարծում եմ վիճարաններու կարիք չկամքի շախատյոր չի լինի, վոր գալակ չհասկանա : Պարզ ե , վոր առաջին հերթին պետք ե մտածել ելեկտրականություն անցկացնելու մասին :

Պետրոսից հետո խոսք վերցրին Մաթվեյը, հանքի տեխնիկներից ու տանապետներից մի քանիսը, խոսեցին ալմաստով փորող յերիսոսսարդները : Նրանք բոլորը հավանություն տալով յերկրաբանի առաջարկներին, խոստանում եյին ամեն կերպ ոգնել դորձին :

Արդեն ժողովը մոտենում եր իր վախճանին, յերբ ձայն խնդրեց Աօլետիքը :

— Ընկերներ, Պետրոսը հայանություն ուժից ինժեների ասածներին : Յես ել պարզ ե , վոր եզ տեսակ ծրագրին դեմ չեմ կարող լինել, մանավանդ վոր կյանքա անց եմ կացը ել մեր ես հանքերում :

Յես սրտով կողմնակից եմ եղ ծրագրին : Հին շախայորի ուղածն ել են ա , վոր աշխատանքը թեթևանայերկը ասակ : Եստեղ ընկեր ինժեները պատմեց մեր հանքերի մասին, խոսեց ե են տեղի մասին, վորտեղ յես եմ աշխատում : Եղ չերտյուֆներն ել ճիշտն ասած

յես առաջին անգամն եմ տեսնում ու խելքս ել պրանից
բան չի կարում :

— Բայց ընկեր ինժեներն ել ասաց, վոր դեռ շատ
բան կատկածի տակ ա ու կարող ա, վոր իսկի ջուր-
հար զուրս ել չզա : Քանի վոր վործը եղավես ա, յես
կարծում եմ, վոր մենք եստեղ չենք կարող վորոշում
հանել, թե անպատճառ պետք ա մեր հանքերին մեխա-
նիզացիա տաք : Իսկ յեթե մեխանիզացիան տվյալն ու
հետո ջուհար չելավ, ո՞վ պետք ե եղ միասարարու-
թյան պատասխանը տա : Մենք կը երենք եստեղ միլի-
ոնների գլխին քար կդցենք ու աշխարհի առաջ իսայ-
առուակ զուրս կդանք :

— Եես ասում եմ, քանի դեռ մեր հանքերի պատ-
կերը լրիմ մեզ պարզ չի, յեկեք մեռքով տվյալի հար-
վածային աշխատենք, ուժերս չխնայենք, հենց վոր
բոլորին ել պարզ կլի, վոր ջուհար կա, արգեն մեխա-
նիզմի մասին կմտածենք... վերջացրեց Ավետիքն ու
նստեց տեղը :

— Մի ձայն, մի ձայն...

— Ասկյարին ձայն տվյալք, — կանչեցին այս ու այն
կողմից :

— Ընկերներ, — զսպզոջույն ձայնով սկսեց Ասկյա-
րը, — ընկերներ, յես զարմացա, վոր ընկեր Ավետիքը
ես տեսակ խոսքեր ասում ա: Ո՞վ ասեց, վոր ջուհար
չկա: Եղ սուս ա, եղ դուշմանի խոսք ա, դա իվանո-
վի խոսք ա: Ընկերներ Սիդորը շատ զուղ ասում ա—
ջուհար կա, համա մեխանիզմ պետք ա: Մենք աշխար-
հի ստանոկներով փորում ենք և նշանը լավ ա զուրս
դալիս: Հանքի բոլոր կոմին ալմաս խփել ենք՝ ամեն

տեղ ել ջուհար պատահել ա: Հիմա պետք ա եղ ջուհարը հանենք ուղարկենք զավոդ: Զավոդը ջուհար ուրաց ընկեր Ավետիք մալատոկով հա չարչարդում ա, չարչարդում ու որը մի մետը չի կարում պրախողկատա, իսկ յեթե պրեֆերատոր կա—դործը լավ առաջ դնում ա: Յես առաջարկում եմ, վոր ճիշտ ա ընկեր Սեդորի պրեդաժենին և արմագնիկների կողմից խոռոշանում եմ ընկեր Պետրոսին, վոր մենք շատ կողնենք և միշտ պատրաստ ենք եղ աշխատանքի համար:

Ասկյարը վերջացրեց: Նրան վորոտալից ծափահարեցին: Ավետիքը մացել եր գլխիկոր նստած: Նրա մեջ պայքարում եյին յերկու աւժ, — մեկը՝ նրա բուռնիքրկանքն եր հանգերի վազվան որվա համար, վոր նրան ասում եր՝ «Հուսու, միացիր քո մյուս ընկերներին, միացիր Մաթիմեյին ու Պետրոսին, ամաչիր կոմսոմոլիստ Ասկյարից»: իսկ մյուս կողմից նրա սիրառ կրծում եր խուլ կատկածը զեպի «Ինտելիդենտ դառակարդը»: Ու դիմիկոր, անորոշ վիճակում Ավետիքը չգիտեր իր ինչ անելիր: Նա չեր կարողանում կողմնվորոշվել:

Ժողովն անվերապահորեն ընդունեց յերկրարանի առաջադրանքներն ու վորոշեց ամենազործոն ողնություն ցույց տալ հանքի ելեկտրոֆիկացիային:

Դուրսը ցուրտ աշնանային գիշեր եր:

Սիգորը հոգեկան մեծ բավականությամբ ակումբի շենքի առաջ կանգնած նայում եր լեռների ու սիլուետների մեջ պլայացող փոքրիկ հունական գյուղի լույսերին ու ունկնդրում եր հեռացող յերիասարդների դվարի յերդին:

Նա արգելն առանում եր սարի դադաթը բարձրացող
կեկտրոլարերի բարձր սյուները, տրանսֆորմատորի
շենքը։ Նրա ուղեղում տասնյակ ուղղություններով
ծզվում եյին ոճապառւյտ հանքուղիներն ու ամուր բա-
րախում եր նրա սիրաը, անհան հրճվաւմ եր յերկրա-
րանի խուզարկու հոգին։

Դիշերը թագավորում եր հանքերի վրա։

3

— Դա, Սիդոր Իվանիչ, —ըստոթյունն ընդհատեց
Ստեփան Նիկիտիչն ու ողենսնեյի վրայից հայացքն ուղ-
ղեց նրա կողմը։

Այդ հայացքը շատ չոր եր։

Ստեփան Նիկիտիչը թեև ճղնում եր բարեկամա-
կան խորհրդասաւյի դերում յերեալ, բայց նրա կեռ
քեթը, չորացած, գուրս ցցված այտերը, յերկար ծը-
նուաը գուրս թափած ատամներով մատնում եյին նրա
չար ու անբարիշտ վոգին։

Սիդորը մտաղբաղ, առանց գլուխը բարձրացնելու,
խորասուղված իր մտքերի մեջ քայլում եր նոր յեկած
ձյան հաստ շերտի վրայով, վոր ճոճում եր նրանց
վոտքի տակ։ Հանքերից վեր տանող զառիվերով նրանք
բարձրանում եյին դեպի բանվորական ավանը։

Ստեփան Նիկիտիչը տեսնելով, վոր Սեղուը խու-
սափում ե պատասխանել իր ակնարկներին, փորձեց
ուղղակի խոսել նրա հետ։

— Դուք շատ ոխսկնվ զործ եք բանել Սիդոր Իվա-
նիչ։ Յես ցանկանում եմ ձեզ հետ ավելի անկեղծ լինել.
յես դիտեմ, վոր զուք յերկտասարդ յերկրաբան եք։

ուզում եք ստեղծագործել, փորձել ձեր ուժերը։ Բայց
զգույշ, զգույշ յեղբայր, հիմա այդպիսի ժամանակներ
չեն։

Նա մի պահ լռեց, ապա ավելի մոտենալով Սիդո-
րին ու ավելի իջեցնելով ձայնը շարունակեց։

— Յես քիչ թե շատ հին աշխատող եմ, մաղերիս
շափ անախորժությաններ են պատահել աշխատանքի
ընթացքում։ Դրանք հանքային գործում անխուսափելի
յեն, բայց քո ոխոկը յեղբայր մեծ ու պատասխանառու
ոխոկ ե։

Քամու ուժեղ հոսանքը ձյան մանրուքը դեռնից
բերում ու խփում եր նրանց յերեսին։ Ստեփան Նի-
կիտիչը շալով ծածկելով դեմքը դարձավ Սիդորին։

— Դուք համարձակ կերպով առաջ եք ընթանում
դեպի հյուսիս։ Մենք ահա հանքից ենք դալիս, — ահա-
պին մետրաժ ենք արել, սակայն կվարցի շերտերով եք
անցնում։ Այդ ուղղությամբ ծակել եք յերկու տեղից և
կավի շերտերի յեք հանդիպել, իսկ դուք այդ բոլորը
հաշվի չառնելով՝ առաջ եք զնում։

Սիդորն անհագ ներս եր քաշում ծխամուրճի ծուխն
ու թեե լուռ ունինքրում եր Ստեփան Նիկիտիչին, բայց
վոշինչ չեր հասկանում ու լուռ շարունակում եր բայ-
լիլ։

— Հետո, այդ նոր սիստեմը, վորին փորձում եք
անցնել, — նորից շարունակեց Ստեփան Նիկիտիչը, —
ախր դա Ամերկայի գործ ե, խորհրդային յերկրում
դեռ նոր են այլպիսի փորձեր արվում, այն ել դեռ
տեսնենք ինչով կիմերֆանան, իսկ դուք ուղղում եք հենց
միանգամբից . . . միանգամբից ուզում եք Ամերիկա

Հայտնապործել այս կորած հանքերում, — արդեն վըր-
դովիած ավելացրեց Ստեփան Նիկիտիչը, — տարորի-
նակ և, շատ տարորինակ, յես վոչինչ չեմ հասկա-
նում . . .

Սիզորն անվրդով առաջ եր զնում: Նրա միտքը
պաղպած եր բոլորովին այլ խնդիրներով, վորոնցից
մի քանի սր եր ինչ նա վոչ մի կերպ բաժանիել էեր
կարողանում:

Նրանք մանելով ավան մտանցան մի հարկանի
շենքի: Ստեփան Նիկիտիչը ծուց ճանապարհը:

— Բարի գիշեր:

— Դիշեր բարի:

Ստեփան Նիկիտիչը մոտեցավ ցանկապատին, ճանչ-
յունով քաշեց դուռը, բայց նորից թողեց ու ձայնեց:

— Սիզոր Խվանի՛չ, մի վայրկյան:

Սիզորը կանգնեց: Ստեփան Նիկիտիչը մոտեցավ
նրան, հաղաց, շինց մասներն ու հաղիսլ լսելի ձայնով
շնչաց:

— Զնեղանաք Սիզոր Խվանիչ: Զկարծեք թե յես
կտսկածի տակ եմ առնում ձեր յերկրաբանական պատ-
րաստությունը: Ամենենին վոչ, քայլ լիցի: Ընդհակա-
ռակն, ինձ հիացնում են ձեր ընդունակությունները:
Այս բոլորը յես ձեղ ասացի իբրև իմ լուվաղույն լա-
րեկամի: Դիտեք ի՞նչ կա . . . յես ուղղակի կտսեմ: —
Դուք մի մոռացեք, վոր անկուտակցական մասնագետ
եք և աշխատում եք հանքերում: Հանքերը հանելուկ
են, — փորում ես խավարում ու հաստատ չգիտես, թե
մի մետր այն կողմ ինչի կհանդիպես, իսկ ամեն մի

կոմյերիուականի թեթև կասկածանքը բավական է, վոր ձեր համարձակության համար վնասարարի անուն վաստակեց...

Սիդոր Խալանիչը, վոր մինչ այդ անխոռով ու ստոնարյուն լսում եր Ստեփան Նիկիտիչին, վարկյանաբար փոխվեց ու սուր, ապշած հայտցքով նայեց Ստեփան Նիկիտիչին: Ստեփան Նիկիտիչը կծկվել եր կիսամուշտակի մեջ. նա հանկարծակի յեկած կիսատ թողեց խոսքն ու հետո կցկոռուր ավելացրեց:

— Ներողություն յես միայն այսքանը... Բարի դիշեր — ասաց ու տունց պատասխանի ապասելու, հաղիվ քաշ տալով եր թաղիքն կոչիկներն անհետացավ ցանկապատի հետևում:

Սիդորին ցնցեց այս դեպքը, սակայն նա չըկարողացավ կենտրոնանալ նրա վրա: Ամբողջ որը մինչեվ կես դիշեր հանգերում անցկացնելով, նա անհամբեր եր, թե յերբ կհասնի տուն, ինչպես կըհանդիպի Սուսաննային, վորն այդ որը պետք ե վերդարձած լիներ Լենինգրադից: Անհուն կարուսով եր լցվել նա դեպի Սուսաննան, բայց միաժամանակ վախենում եր նրան հանդիպել. կարծես բողոքի մարմնացումն եր նրան համար Սուսաննան ու այդ սարսափեցնում եր նրան, ալեկոծում եր նրա հոգին: Ու կանգնած պատշզամբում ինքն ել չգիտեր, թե ինչույն ձգձգում ներս մտնելը:

Զյունախառն քամին հարձակվում եր տան մոտից անցնող ելեկտրալարերի վրա ու տաղտում, սարսոնցուցիչ սուլոց առաջացնում դիշերվա այդ պահին: Մոտակա տաղավարում սիթմիկ աշխատում

եր ալմաստի մեքենան, դյուղից լավում եր շների կաղկանձն ու պոռոցը:

Սիզորը կոթնած պատշաճութի ոյունին հիացմունքով ունինդրում եր ձմռան այդ խրախնանքին: Զյունախառն քամին, վոր աստիճանաբար բքի յեր վերածվում, շատ մոտ եր նրա սրտին ու մերկրանք եր տուաջացնում նրա մեջ, ինչպես մըրիկը՝ մըրկահավի հոգում: Նրա վողին այդ պահին ճախրում եր Ռւրալի ու Սիրիրի լեռների ու մայրու անտառների վրա: Ահա Կարաբաշը, Կալաթան, ահա Լենայի վոսկեհանքերը, վորոնեղ ամեն քարի խփել և նա իր մուրճն ու աճել և վորպես հետախույզ—յերկրաբան: Ու այդ պահին, յերբ ձմեռ եր ու սառնամանիք, նրանք Սուսաննայի հետ միասին դահուկներով կտրում անցնում եյին ձյունապատ անսահման տարածություններ:

— Սիզոր, կզառ, մի որ գնանք հեռու, շատ հեռու, — գարճավ նրան մի անդամ դահուկով ըլքինիս Սուսաննան ու նրա յերկնադրույն աչքերում վառվում եր անհուն մի տենչանք:

— Կղամ, բայց յեթե մեղ ուսուն դայլերը...

— Վոչինչ — միասին կլինենք: Թող մեղ յերկուսիս միասին ուսուն դայլերը— այնպես չե՞ Սիզոր...

Լարերին փաթաթվաղ գազաղած քամու սուլոցը կարծես մայրու ճյուղերը ջարդող քամու սուլոցը լիներ ու կարծես նրա ականջին տարիների խորքից հնչում եր Սուսաննայի ճայնը այնքան քաղցր ու մտերիմ, այնքան թանկադին ու անձկալի: Կարծես

ահա, նրա առաջ կանգնած են ձյունի հաստ շերտից խոնարհված մայրու կանաչ ճյուղերն ու նրանց ծայրերից կախվել են սառցե դեղեցիկ ծորակները, վորուլոր դույներով փայլվլում են ձմռան արևի թռոյլ ճառաքայթների տակ:

Բայց և այսպես նա վախենում է ներս մտնել, նա չի կարող շիտակ նայել Սուսաննայի աչքերին, չի կարող դիմանալ նրա հայացքին: Միդորը վախենում եր նրան հանդիպելուց: Քամու սառը հոսանքը սթափեցրեց Միդորին, նա կարբիսն լամպը թողեց պատուհանում ու մտավ սենյակ: Ներսը մաքուր եր, ամեն ինչ խնամքով հավաքած, սեղանին պատրաստ դրված եյին թեյի պարագաները, բայց Սուսաննան չկար: Միդորը դվարելը նետեց հանքաքարի եքսունատներով լեցուն պատուհանը, նստեց սեղանին ու ինչ անելը չդիտեր: «Յերեկի սոլասել, սպասել քնել եք մտածեց Միդորն ու չուզեց անհանդստացնել Սուսաննային. մի բաժակ թեյ խմեց, ծխեց ու ապա բացեց ննջարանի դուռը: Սենյակը լուսավորված եր աղոտ կապտավուն լույսով, բայց Սուսաննան չկար: Փոքրիկ տուալետի սեղանի վրա նա նկատեց իրեն հասցեյադրված մի ծրար: Նա անհամբեր բացեց ծրարն ու մի չնչով կարդաց: —

— «Միրելի, թանկագին Միդոր, չդիտեմ թե ինձ հետ ինչ և կատարվում: Վերջին ժամանակներս յես քեզ շատ ցավ պատճառեցի, բայց յես չեյի ցանկանա քեզ ամենաչնչին չափով անգամ վլաստնել, վորովհետեւ դու ինձ համար յեղել ես ամեն ինչ—ամենամտերիմ մարդը, վորն ինձ սփոփել ու քաշալերել

և տիրության ու հուսահատության ժամերին։ Յեւ
միշտ քո բարեկամությունն ամեն բանից թանգ եմ
զնահատել, առկայն այս բոլորով հանդերձ, վեր-
ջերս այնպիսի գրություն և ստեղծվել, վոր կարծես
խոչոր վիճ և բացվել մեր մեջ, վորն արդեն վոչ մի
կերպ լցնել չի լինի։

Սիդոր, պետք և այս դրության մասին մտածել
լրջորեն, նրան նայել առանց սանտիմենտալության։
Յես գիտեմ, վոր զաւ ինձ շատ ես սիրում, վոր յես
զնահատելի ընկեր եմ քեզ համար։ Յես շատ թանգ
եմ զնահատել և այժմ ել զնահատում եմ քո այդ
զգացմունքները։ Բայց դարձյալ կրկնում եմ—ոլետք
և զգասա նայել իրերի դրությանը։

Դու ամբողջովին, բոլոր նյարդերով կպել ես քո
զործին։ Քեզ կլանել են հանքերը— դու ապրում ես
նրանց հեռանկարներով։ Դու աճում ես այսուղ,
քո յերկրաբանի խուզարկու վոգին միշտ նոր վորո-
նումներ և անում։

Արդեն յերկրարդ ձմեռն ե, վոր մենք Ռւբալից
հետո անց ենք կացնում այս հանքերում։ Այս յեր-
կու ձմեռ շատ բան արժեցան քեզ համար։ Դու ամ-
բողջովին թաղված ցեխի, սիսեմփների, պլանների,
արխիվային նյութերի մեջ քեզ համար մի նոր աշ-
խարհ ես ստեղծում, դու ապրում ես դրանով։ Քեզ-
նից կարբիտի հոտ ե փշում և այդ խնկարկում և քո
հոգին։ Յես զգում եմ, վոր քեզ շատ դժվար և պոկել
հանքերից, վոր այդ քո ուղին ե, վոր հանքերի խո-
ռոչները դարձել են քո թոքերը, վորոնցով չնշում ես
դու։

իսկ յե՞ս, սիրելի Սիդոր:

Յես յերկրաբան չեմ և այդ բոլորն ինձ չեն գը-
րավում: Յեզ յես տեսնում եմ, վոր այս յերկու տար-
վա մեջ միայն արջ եմ դառել, վոր կարծես իմ կյան-
քի իմաստը դարձել և այն, վոր քեզ հետ լինեմ,
ապրենք միասին: Յես զգում եմ, վոր դու այդ մտ-
ախ մտածում ես: Ինձ համար շատ ծանր և տեսնել,
թե ինչպես իմ առջեւ դու քեզ մի տեսակ հանցավոր
ես զգում:

Բայց մեղավոր ե՞ս զու:

Ամենեվին վոչ: Դու ամեն ինչ, ամեն ինչ արել
ես ինձ համար և վոչինչ չես խնայել: Բայց այնու-
հանդերձ յես վորոշեցի վերջ տալ այս բոլորին: Յես
արդեն տեսնում եմ, վոր այս բոլորից հետո յես մի-
ոյն կարող եմ խանդարել քեզ, վրդովել քո անդորրն
ու արգելակել քո ստեղծագործական աշխատանքը:
Ուստի վորոշեցի լենինգրադում մնալ ու այլես չը-
զերադառնալ քեզ մոտ: Թե ինչ եմ անելու — զես
ինքս ել չդիտեմ: Սիրելի Սիդոր, այսպես վարիչեցի վո-
րովհետեւ ինձ համար շատ դժվար եր քեզ ահանել ու
հրաժեշտ տալ, ուստի ինդրում եմ ներիր ինձ:

Դեհ, Սիդոր ամուր կաց, մոռացիր իմ մասին,
մի մաածիր, պետք չի այդ, վորովհետեւ այլես քեզ
բացի խանդարելուց ու ավելորդ ցալ պատճառելուց
ուրիշ բանի պետք դալ չեյլ կարող... Արգեն ա-
ռանց այն ել քեզ շատ ցալ եմ՝ պատճառել:

Ել պիտք չե շարունակել այս մղձավանդը:

Դեհ, վոզչ յեղիր ու շարունակիր դործդ:

Մ ա ւ ս ա ն ն ա մ :

Կարդաց Սիդորը շնչահեղձ յեղած ու քրտինքը
պատեց նրա վողջ մարմնին։ Նա ցեխոս շորերով ըն-
կավ Սուսաննայի մահճակալին ու տենդի մեջ
մրմնջում եր, — «իմ լազի Սուսաննա, յես կորցրի
քեզ... վերջացավ։ Միթե՞ դու ել չես զա, միթե՞
ել չեմ տեսնելու քեզ, միթե՞ ամեն ինչ վերջա-
ցավ...»

— Յես կդոմ, կդամ քո հետեւից չեմ մնա
այսաեղ, յես կգտնեմ քեզ...

Մրմնջում եր նա ու գալարվում մահճակալի վրա։

4

Այս ծանր բաժանումը Սիդորին անկողին նետեց։
Նա արդեն վեց որ պառկած եր և ինքն ել չդիտեր,
թէ ի՞նչ և կատարվում իր հետ։ Նա զգում եր, վոր
ինքը հիվանդ չե, վեր եր կենում, սակայն ուժ չու-
ներ քայլելու, բնկնում եր, պարապել չեր կարող ու
մտքերի հորձանքը մրւթ հանքերի խորքից յելնում
եր ու մինչեւ Նելլայի ափերը դարձում նրա հողնած
դանդին։

Ո՞ւր և Սուսաննան։ Ի՞նչ և անում հիմա նա։
Կդա՞ արդյոք։ Կզա իհարկե։ Ինքն և մեղավոր, նրա
հետ վարվել չիմացավ, ամբողջովիմ մոռացության
տվեց նրան։ Սուսաննան շատ զգայուն աղջիկ ե, նա
իրեն շատ և սիրում, հիմա նա յերեկի ցա-
վում և իր համար... Ասպա նրա առաջ ցցվում եր
Սակիան Նիկիտիչի խիստ դեմքը պենսնեյի յետեւից։
Նրա շալով ծածկած բարակ քիթն ու փափսուկը։

— Շատ ոխկով բան եք բոնել... վնասարարի
անուն կվաստակեք...»

— Այս վախկուս կատու, խորամանկ, քսու...

— Սիդոր ջան ի՞նչ և պատահել, հանդատացիր...
անյակում կանդնած եր Մաթվեյը, վորի ներս մըտ-
հելը Սիդորը չեր նկատել. նա մոտեցավ մահճակալին,
նստեց Սեղորի մոտ ունրա ձեռքն առաջ իրա ափի մեջ:

— Զահելություն ես անում Սիդոր. կին եր գը-
նաց, վազն ելի կզա. չզա ել փառք ասուծո՛ աշխար-
հը լիքը կին ե. քեզ հայաբիր, չուտ լավացիր:

— Լավ եմ Մաթվեյ, այս նրանից և, վոր վերջե-
րս շատ եյի հողնել. Սուսաննայի բաժանվելն ել
աղղեց ի հարկեւ Բայց դիտես ինչ, Մաթվեյ, իմ
խիզճն ինձ շատ ետահջում, յես մեղալոր եմ այս
դործում:

— Ի՞նչ մեղք ունես դու, յեղաս' յր, կինդ թո-
ղել զնացել ե, ել քո մեղքը վա՞րն ե: Ա՛խ, ուր եր,
թե իմ պառակն ել մի որ յելներ, անհետանար. վեր-
ջերս ել գլուխա տանում ե դյուդի քանդվելու մասին:
Ասում ե այդ հանքերը, վոր բացեք՝ դյուդի փրժե-
լու յեւ:

— Դիտես ի՞նչ կա Մաթվեյ, յերբ յես նոր յե-
կա աշխատանքի, ավելի անփորձ եյի, այնքան ել
չեյին վստահում. հիշում եմ, յերբ յեկա ու գործի
պիտի անցնեյի, կոմքինատի հանքային բաժնում սե-
ղանի յետել նստած եր մի ճարագոտ, գեր մարդ:
Նա մի քանի խոսք փոխանակելուց հետո, ինձ դար-
ձավ ու կես հեգնանքով, կես ցավակցությամբ ասաց՝

— Մանավանդ վոր ձեր կինն ել հիշանդ ե, յես
ձեզ խորհուրդ կտամ դնալ մեր յերկրորդ հանքը.
այնտեղ կլիման շատ լավ ե, հիանալի ամառանոց ե.

շտո աշխատանք ել չկա, այսպես վոր ձեր կինը կարճ ժամանակում կառողջանա :

Հետազայում Սուսաննան թեև իրոք շատ լավացալ, բայց յես ուշ հասկացա, թե ի՞նչ եր նշանակում այդ ամենը. այս հանքի վրա նրանք խաչ եյին գրել և ինձ իրեն անփործ ու պատահական մարդու ուղարկեցին այստեղ, մաածելով՝ յեթե բան դու՝ լավ, իսկ յեթե չե՛ վոչինչ չեն կորցնի :

Դեհ, ինքդ գիտես, Մաթվեյ, թե ինչպես զործի կայանք։ Գիշեր-ցերեկ յես հանքից դուրս չեյի գալիս, տանն ել պլանններն ու սխեմաներն եյի դծում, խրվում եյի արխիվի մեջ։ Իսկ կի՞նս։ Զե վոր այդ ամենը նըրան այդպես չեր հետաքրքրում։ Նա իմ մեջ պետք է սփոփանք դառներ այս վայրի անտառներում, իսկ յես այդ չհասկացա և այսպես տիտուր վերջացավ այդ ամենը։

— Իսկապես ճիշտ ես ասում, Սիղոր. Սուսաննան մեղավոր չեր։ Բայց վոչինչ, քեզ համար մի նոր, լավ աղջիկ կճարենք։ Կուղես զեղեցիկ հույն աղջիկ ճարենք, բայց տես, ել եղ սխալը չկրկնես, — կատակով նկատեց Մաթվեյը։

— Զե Մաթվեյ, եղ մեկը չի լինի։ Յես այն յօրսակացության յեկա, վոր ընտանիքը յերկրաբանի համար վարթամություն եւ ինքդ արջ զարծիր լիուներում ու հանքերում և ուրիշներին քարշ մի տուր այդ մենավոր ծերպերը։

— Զե Սիղոր, ճիշտ չես ասում։ Յերկրաբանի եւ լոկ կյանք և պետք, նրան իլլը լուս կին եւ պետք։ Դիմում ինձի կամացիք, մաս ուրիշ Ս

Այ, ելեկտրականությունը, վոր բերենք, մեր հանքըն ել քաղաք կղառնա. ել վոչվոք չի փախչի եստեղից: Մի տես ե՛, ձորում կբարախնն կոմպրեսորները, հանքախորչերը կդողան պերֆերատորի ճայնից, հանքերը կվոզովվեն ելեկտրական լույսով, նոր բարձր շենքեր կշինենք, նոր մարդիկ, նոր ինժեներ ներ կգան:

Սիդորն ուրախացավ, վոր այդպես հեշտ խոսակցության նյութը փոխվեց ու Մաթվեյի հետ նորից վոզմորվեց հանքի հետանկարներով:

— Ի՞նչ նորություն կա հանքերում Մաթվեյ: Վեց որ և հանք չեմ մտել և կարծես կտրվել եմ աշխարհից:

— Նորություն, Սիդոր, այն ել ինչպիսի՛ նորություն, —ասաց Մաթվեյը ու դրանից հանեց յերկու կտոր հանքաքար, —ահա թե ո՞ւր ենք հասել Ավետիքի հանքում եսոր պայթյունից հետո առաջին անդամ ստացվեց այս հանքանյութը:

Սեղորն ասես թերահավաս նայում եր հանքաքարի կտորներին. նրանց շուռ-մուռ եր տալիս իր ձեռքում, շոշափում եր, մանրազննին նայում նրանց մեջ յեղած կավելինի ու կտորներին, վորոնք վկայում եյին հանքաքարի բարձրորակ լինելը:

— Մաթվեյ, հանքանյութը կավելինախառն ե, այս հազվադեպ հաջողություն ե, յես այսպես շուս հանքաքար չեյի սպասում, —ասաց նա ու դպացված փաթաթվեց Մաթվեյին. նրա աչքերում փայլում երին արցունքի կաթիլները:

— Սիդոր ջան, Փրանսիացիների կիստու հանքի

Մյուս հանքախորշերում ել չպուրները սևանում են, շուտով, շուտով շտոկը մեր ձեռքին կլինի: Մենակ դու շուտ լավացիր, քեզ լավ պահիր:

— Շպուրները սևանում են... յես հենց վաղը հանք կզամ, դա հաղվաղեղ հաջողություն եր, Մաթվեյ, հասկանում ե՞ս: Արդեն ելեկտրականությունը կզա. շուտով կոմպրեսորները կյերգեն մեր ձորում, պերֆերատորների աղմուկով կլցվեն մեր հանքերը, ել բրիչով չի աշխատի Ավետիքը:

Նա լուց մի պահ ու կարծեն ինչ վոր բան հիշելով մրմնջաց՝

— Հիմա կտեսնենք, Ստեփան Նիկիահիչ...

4

Մյուս առավոտ Սիդորը Մաթվեյի հետ միասին ժանր, դանզադ քայլելով հանք տանող արահետով իջնում եր ձորը: Արեն իր պաղ ճառապայթներով վողողել եր չքնաղ լեռնաշղթան: Հեռու լեռների ձյանապատ գաղաթները փայլատակում եյին արեի ճառապայթների տակ, կասույտ յերկներում չկար ամպի վոչ մի քուլա: Նույն ոիթմբով աշխատում եր ալմաստի դադդյահը, նույն դիրքով հունական փոքրիկ դյուղը դիմից նայում եր հանքերին: Ներքեսում հատ ու կենտ մարդիկ ու ծիեր եյին յերեսում, վոր գուրս եյին դալիս հանքերից ու նորից անհետանում գետնի տակ:

Սիդորի գլուխը դեռ ծանր եր շփոթ մտքերից:

Նրա մտքերը դեռ անհույս թափառում եյին նեփայի գրանիտե ափերին՝ փնառում եյին Սուսաննա-

յին։ Հախուսն հույյղերը բուռն հորձանքով տլեկոեցին եյին նրա հողում, յերակները քունքերի մոտ ուժգնուրեն խփում եյին, բայց հաստատակամ, զանգաղ քայլելով նա իշնում եր ձորը։

Շպուրները սևանում եյին։

Այդ նրա տեսական ջանքերի ու բուռն հույյղերի զոսկեպսակն եր։ Բացվում եր մեռած հանքերի առաջոտը։

Պետք եր իշնել ձորը, պետք եր հանքի պայծառ ուղին գծել մութ հանքախորշերում։



ԴԱՆԱԿ ՍՐՈՂ ԴՈՒԴԿՈՎԸ



30
22-6774

Դուդկով են կանչում նրան բռլորը։
Թե ո՞վ ե Դուդկովը, ո՞ւմ վորդին ե նա, վոր-
ակղից ե յեկել վոչլոք չգիտի։

Մի որ նա իր վոաքի ջարխը շալակին յերևաց
րանվորական փոքրիկ այդ ավանում ու մի տեսակ
մարմություն մացրեց այնտեղ, նոր մարդ յերևաց։
Այնուհետև մենք վարժվեցինք Դուդկովին տեսնել
չարիսը շալակին թաղերը շրջելիս։

Առլորի համար դուրեկան եր Դուդկովը, վոչլո-
քի չեր ձանձրացնում—նեղություն չեր պատճառում
նա։ Գլուխը կախ, սրում եր զանակները Դուդկովը,
յեթե քան հարցնեյին—սիրով կպատասխաներ և մի-
ամիտ ու խաղաղ կժամանակացին։

Դուդկովի խաղաղությունը դրավեց և ինձ, մը-
տերմացանք հետը։ Կարմիր, զեր զեմք ուներ Դուդ-
կովը, տարվա բոլոր յեղանակներին միշտ կապույտ

սատիներ բլուզ եր հագնում՝ առանց գոտի կտղելու։
Նրա հագին պատառուտած անդրավարտիկ եր լինում
ու միշտ քարշ եր տալիս մեծ ու քրքրված կրկնա-
կոշիկները։

Նա հիվանդուտ հայացքով նայում եր խոսակցին
ու սովորականի նման ժպառում։ զրանից ավելի եյին
փոքրանում նրա առանց այն ել նեղ աչքերը։

— Դուզկով ի՞նչու կարգին. կոշիկներ չես հազ-
նում . . .

— Փողը չի բավականացնում, աղավնյակ։

— Ինչքան ես աշխատում որական։

— Մինչեվ 20 առւրիմ, ավել ել ե պատահում։

— Ել ի՞նչի չի բավականացնում։

Նա վշտացած, առանց ժպտալու պատասխանեց։

— Զե՞ս տեսնում, վոր բոսյակի նման եմ ապ-
րում, իսկ բոսյակը հաշիվ չգիտի . . .

Ապա նա սկսեց սրել զանակները։ Գործը վերջա-
ցընելով, նա գրանից հանեց ողեկուոնի մի փոքրիկ
սրվակ։ ողեկուոնը լցրեց բաժակի մեջ և զլիխին քա-
շելով քամեց մինչեւ վերջին կաթիլն ու արվակը մի
կողմ նետեց։ այդ մի ակնթարթ միայն տեսեց։

Այդպիսի դեպքերում չեր խոսում Դուզկովը, վոչ
ել իրեն ուղղված հարցերին պատասխանում։ Մենակ
հիմար, անիմասա ժպտում եր նա ու տափակ, բուք
հայացքով նայում խոսակցի յերեսին։

Ապա նրան տեսնում եյինք զարձյալ իր չարխը
շարակին թաղերը շրջելիս։ Յերբ գործ չեր ունենում
Դուզկովը, կանզնում եր կոոպերատիվի առաջ, մաս-
գործների խանութի շաւրջն եր ման գալիս ու կեսո-
72

բին դնում եր գետափի ուռենիների ստվերի տակ քնելու, կամ գետում լողանալու:

Մի ամբողջ տարի յես կորցրի Դուդկովի հետքը: Սիրիր զնաց նա արդյո՞ք, մի մեծ քաղաքի փողոցներում անհայտացա՞վ, թե հարևան շրջանները գընաց քաշ տալու իր թափառական կյանքը, շիմացա: Մի տարի անց միայն յես նրան հանդիպեցի Ն... ժաղաքում: Դարձյալ սատինե բլուզը հազին, առանց գոտիի, նորից հնամաշ կրկնակոչիկներով: Զարխը շալսկին անցնելիս Դուդկովը հանկարծ ինձ նկատեց մայթի վրա: Նրա քնկու, անսարեր հայացքը կենդանացավ, աչքերը փայլատակեցին:

Նու մոտեցավ ինձ, բարեկամաբար ժպտաց ու յերկար թափահարում եր ձեռքս:

— Ու՞ր կորար Դուդկով, ի՞նչպես ես:
— Լավ եմ աղամիյակս, քեզ միշտ հիշում եյի:
— Ելի՞ կոնծում ես Դուդկով:
— Ավելի վատ, —ասաց նա ու ավելացրեց:
— Ցերկու որ այլում ընկած եյի մնացել:
— Ելի՞ ոդըկոլոն ես խմում:
— Հա, ձեռք քաշել չեմ կարողանում, գինին չէ բավարում:

— Լավ, մինչեւ յե՞րբ ես այդպես շարունակելու, Դուդկով, —արդեն լուրջ հարցնում եմ նրան:

— Մինչեւ յե՞րբ... սառը, վոչինչ չարաահայտող աշքերսվ նայում ե Դուդկովն ու կրկնում:

— Մինչեւ յե՞րբ, սատանան գիտե, թե մինչեւ յերբ: Ամեն անգամ վորոշում եմ, վոր այս բաժակից հետո չեմ խմի, վոր այս շից հետո չեմ խմի, վոր

— Մի անդամ հարրած կ լինում Շահ-Արքա-
թագավորի զինվորներից մեկը։ Շահ-Արքասը փո-
ղոցից ձիով անցնելու ժամանակ հարրած սալզաթը
կանգնեցնում է նրան ու պահանջում, վոր իջնի ձի-
ուց։ Տեսնելով, վոր սալզաթը հարրած է, ձիուց իշ-
նում և Շահ-Արքաը։ Սալզաթը նստում է թագա-
վորի ձին ու ժամերով չափ և գցում քաղաքի փողոց-
ներում։ Մի ժամանակ ուշքի գալով, սալզաթը նկա-
տում է, վոր իր տակ թագավորի ձին է։ Վախեցած
սալզաթը ձին տանում է գոմի ու վերադառնում իր տեղը։

Մյուս «ըս թագավորը կանչում և սալզաթին։

— Դու քանի՞ գլուխ ունես քո ուսին, — գոռում և
թագավորը սալզաթի վրա, — վոր փողոցում ինձ Ե-
ջեցնում ես և ինքդ նստում չահի ձիուն։

— Ի՞նչ եք ասում, — զարմանում և սալզաթը,
— ի՞նչ եք ասում տեր իմ, — մի՞թե կարող եմ այդ-
պես բան համարձակվել, մի՞թե յես կհանդինեմ թա-
գավորին իջեցնել ձիուց։

— Դեհ, վերջ տուր այդ հիմարություններին և
բացատրություն տուր, — գոռում և թագավորը։

— Տեր իմ այդ յես չեմ յեղել, գինին և այդ ա-
րել թագավոր, — բացատրում և սալզաթը։

— Հիմարություններ դուրս մի տա։ Այդ պետք
ե ապացուցես, ապա թե վոչ՝ քեզ դիմատել կտամ,
վճռաբար ասում և թագավորը։

— Պատրաստ եմ թագավորն ազրած կենա, — ա-
սում և սալզաթը, — միայն գրա համար մի պայման
ունեմ. գինու ուժը ապացուցելու համար, ինձ մա-
պետք է բերել մի կույր մարդու, ապա մի անզա-

— Մի անդամ հարբած և լինում Շահ-Արքա-
թաղավորի զինվորներից մեկը։ Շահ-Արքասը փո-
ղոցից ձիով անցնելու ժամանակ հարբած սալդաթը
կանգնեցնում է նրան ու պահանջում, վոր իշխի ձի-
ուց։ Տեսնելով, վոր սալդաթը հարբած և, ձիուց իշ-
նում և Շահ-Արքասը։ Սալդաթը նստում և թագա-
վորի ձին ու ժամերով չափ և գցում քաղաքի փողոց-
ներում։ Մի ժամանակ ուշքի դալով, սալդաթը նկա-
տում և, վոր իր տակ թաղավորի ձին և։ Վախեցած
սալդաթը ձին տանում և գոմն ու վերապառնում իր տեղը։

Մյուս որը թագավորը կանչում և սալդաթին։

— Դու քանի՞ դլուխո ունես քո ուսին, — զորում և
թաղավորը սալդաթի վրա, — վոր փողոցում ինձ ի-
շեցնում ես և ինքդ նստում շահի ձիուն։

— Ի՞նչ եք ասում, — զարմանում ե սալդաթը,
— ի՞նչ եք ասում տեր իմ, — մի՞թե կարող եմ այդ-
պես բան համարձակվել, մի՞թե յես կհանդինեմ թա-
գավորին իշեցնել ձիուց։

— Դեհ, վերջ տուր այդ հիմարություններին և
բացատրություն տուր, — զորում և թագավորը։

— Տեր իմ այդ յես չեմ յեղել, զինին և այդ ա-
րել թաղավոր, — բացատրում ե սալդաթը։

— Հիմարություններ դուրս մի տա։ Այդ պետք
ե ապացուցես, ապա թե վոչ՝ քեզ գլխատել կտամ,
վճռաբար ասում և թագավորը։

— Պատրաստ եմ թագավորն ապրած կենա, — ա-
սում ե սալդաթը, — միայն դրա համար մի պայման
ունեմ. զինու ուժը ապացուցելու համար, ինձ մոռ-
պետք ե բերել մի կույր մարդու, ապա մի անդա-

ժալույծի, վորը շարժվել չի կարողանում և Պարսկաստանի ամենաաղքատ խասփուշին, վորն իր կյանքում յերբեք շապիկ չի ունեցել:

Թագավորը հրամայում ե, վոր իսկույն ճարենքերեն այդ մարդկանց :

Սալդաթը նրանց հավաքում ե սեղանի շուրջն ու սկսում խմեցնել թաղավորի մասանի ամենաթունդ ու ընտիր գինիներից: Յերբ գինին ազդում ե, կույրը բարձրացնում ե բաժակն ու ասում:

— Այ' դինի, իսկը վիրաղի վարդի գույն ունի:

Այս գրգռում ե անդամալույծին:

— Քո՛ո, դու ի՞չ ես տեսնում, վոր գույների մասին դատողություն ես անում:

Նա բարկացած ցատկում ե տեղից ու հարձակվում կույրի վրա դոչելով:

— Հիմա քացով չսատկացնեմ ես քոսին...

— Սատկեցրու, վոչի՞նչ, դրա ընտանիքը յես կպահեմ, — սրտաբաց ասում ե խասփուշը, — վոր կյանքում յերբեք շապիկ չի ունեցել հազին:

Այս բոլորից հետո սալդաթը դառնալով Շահ-Աբրամսին ասում ե՝

— Հիմա տեսա՞ք, թաղավորն ազրած կենա, վոր յես չեմ մեղավոր յեղել:

Թաղավորը ներում ե սալդաթին ու համոզվում, վոր դինին ե մեղավոր, վոր դինին շատ բան կարող է անել:

Հիացած իր պատմածից Դուդկովը հաղթանակուրեն ինձ ե նայում, իմ հայացքում հավանության արտահայտություն փնտռելով:

— Նստենք նստարանին — առաջարկեց Դուդկովը, յերբ արդեն այդումն ելինք։

— Իսկ գիտե՞ս յես ինչպես հարբեցող դարձա ազավնյակս, —ասաց Դուդկովը ուսից շած դնելով չարխը։

— Ի՞նչպես դարձար, ողատմիր։

— Եհ, զա յերկար պատմություն եւ, իմ ծնողները շուտ մահացան։ Յես գնացի ապրելու իմ կուլակ քեռու տանը։ Նա շատ հարուստ ու ազահ մարդ եր։ Ինձ չեր սիրում քեռիս, վորովհետեւ դեռ սալզաթ յեղած ժամանակ, հայրս կազարմայում ծեծել եր նրան։ Հետո, յերբ բանակից վերադարձել են, քեռիս դեմ և յեղել, վոր իր քույրը հորս մարդու դնա։ Բայց մայրս նրան չի լսել։ Դրա համար նա ինձ ել տանել չեր կարող ու ինձ շատ վատ եր պահում, իր բարբակներին հավասար։ Մի անգամ, յերբ մի վեդրո կաթ թափելու համար շան նման ինձ ծեծեց քեռիս, իլ համբերությունս հատավ։ Տանը միայն յես ու ինքն եյինք։ Գիշերը յես դուրս յեկա անից ու ամուր փակեցի գուռը։ Մեծ նավթամանը ձեռքիտ նավթ լցրի տան բոլոր դռներին ու լրտամուտներին, տպա պինդ փակեցի դոմը և հրդեհեցի ամեն ինչ՝ խոտի հակա դեղի հետ միասին և թաղնվեցի մեր տան դեմի մառանում։ Քիչ հետո բոցերը յերկինք բարձրացան։ Գոմում բառաչում եյին տասնյակ անտուններ—քեռուա կովերը, յեղները, հուսահատ խըրիցում եյին նրա Սիբիրի մաղյանները։ Տնից դեռ ծաղտում չեր լսվում։ Քիչ հետո ջարդվեց մարտուն կանքի փեղկն ու բոցերի միջից գոււրս ընկալ սպիտակ չու-

բերով մի մարդ։ Այդ քեռիս եր։ Նա խելագարի նման
այս ու այն կողմ եր վազում բորիկ վոտքերով, դու-
գուում, աղիողորմ աղաղակում եր, փետում եր մա-
ղերը։ Հետո ինչ վոր բան հիշելով, շանթահարի նը-
ման վաղեց դեպի տուն ու իրեն ներս նետեց բոցա-
վառված պատուհանից։ Յես սրտատրով սպասում
եյի թե ի՞նչ պիտի լինի ու վախից դոզում եյի ամ-
րող մարմնով։ Հանկարծ տան պատուհանի շրջա-
նակում յերեաց մի մարդ։ Նա գրկել եր մի փոքրիկ
սնդուկ։ Մարդը դեռ չեր կարողացել շրջանակից
գուրս գցել իրեն, յերբ շառաչելով նստեց բոցավառ-
ված տանիքը։ Քեռիս մնաց մեր տան բոցավառված
փլատակների տակ, ամուր գրկած իր փողի սնդուկը։
Ինձ ձերբակալել չկարողացան—յես անհետացա վոնց
վոր սատանա։

— Յես եղ որվանից ել թողի գյուղն ու հեռա-
ցա, — շարունակեց իր պատմությունը Դուդկովիք եղ
ժամանակներն արդեն հեղափոխություն եր Սիրի-
րի տայղաները լցվել եյին սկարաեղաններով։ Յես ել
գնացի ու խառնվեցի նրանց։

Հետո յերբ յերկիրը խաղաղվեց, ել չուղեցի
գյուղ գնալ։ Ենտեղ վոչինչ չկար, վոչվոք չունեյի
գյուղում։ Ժողովուրդն ել քաղցած եր։ Զահել մեհակ
տղա եյի։ ինձ ամեն աեղ զցեցի։ Միշտ յերկաթուղու
վրա եյի։ մի մեշոկ թերս տակ սկսեցի թափառել։
Մի տեղ ապրանք եյի առնում, մի ուրիշ տեղ ծա-
խում, հաճախ ապրանքը խլում եյին ձեռքից, որպե-
կույյանտների հետ միասին ինձ շատ բանեցին ա-
րաց թողին։

— Յերբ եղ գործից ել ձանձրացա, գողությամբ
եյի դլուխս պահում։ Հենց եղ ժամանակներն ել իւը-
մել սովորեցի։ Ամում եյի սամազոնկա, ողի, գինի,
ինչ պատահեր։ Վերջը դողությունից ել ձեռք քաշեցի
ու ևս չարխով սկսեցի աշխարհը ման դալ։ Յեկ ես-
պես ել ծանոթացանք քեզ հետ աղավնյակ։ Ահա
բոլորը։

Դուզկովը վոտքը դընել եր չարխի լծակին ու ա-
նիմասա, ջղաճզորնն պատում եր անխիլը։ Այդում
թնդում եր դինվորական նվազախումբը, կայարանից
լովում եր զնացքների աղմումն ու շոգեքարշերի սու-
լոցը։ Դուզկովը չեր խոսում։ Բայց կարծես նա մի
վերջին խռովի յեր սպասում։

— Լավ, մինչև յե՞րբ պիտի թափառես Դուզկով։
ի՞նչի չես դնում ձեր դյուդը։

— Ու՞ր զնամ աղավնյակս։ Հիմա ենաեղ բոլորը
կուտնաեսական են դարձել, զարդացել են։ Ես հալիս,
վոր գյուղ զնամ՝ ձեռք կառնեն, մարդու տեղ չեն
դնի։

— Դու յել քեզ հավաքիր, կարդի արի։

— Ախր ինչողես կարդի դամ, աղավնյակս։

— Այ, մտիր մի գործարան, բանվոր դառ, գործ
արա, դիսցիպլինար մարդ դարձիր, կարդի կըաս։

— Զեմ կարող աղավնյակս, խմելը չի թողնում.
յես ինքս ել այդ մասին շատ եմ մտածել։ Գիտե-
ի՞նչ աղավնյակս, ոռուները մի ճիշտ առած ունեն։
Նրանք ասում են՝ «սապատավորին դերեզմանը կուղ-
գի»։

Յես գիտեմ, վոր յես կորած մարդ եմ ու աւո-

նում եմ, վոր անզոր եմ ինձ հավաքելու, որինավոր
ժարդ զառնալու համար։ Մեկ ե, վոչինչ դուրս չի
գտ! :

Նա կոթնեց դանակի չարխին ու յերկար ժամա-
նակ լուս եր։ Յես ել վոչինչ չունեյի ասելու Դուշ-
կովին։

— Նու՞, Դուդկով, արդեն գնացքի ժամանակ ե,
յես պետք ե զնամ։

— Այդ ո՞ւր աղամինյակս, Յերևան ես զնո՞ւմ։

— Այո, պիտի գնամ, արդեն ուշ ե։

— Ախտոս, շատ ափսոս։ Յես կուզենայի, վոր
դու մի քանի որ ել մնայիր այսաեղ։ Այ, յեթե մարդ
միշտ այսպես ժամանակ անցկացներ, ել ի՞նչու պետք
ե կոնծեր ու թափառական դառնար։ Իսկ եսաեղ շատ
ժամանակ յերեխաները խմբով հետեւիցս են ընկնում
չըջում հետո, յես ել մենակությունից խմում եմ ու
մոռանում ամեն բան։

* * *


Գնացքը փնչալով կանգ սուալ։

Յես թափահարեցի Դուդկովի ձեռքն ու շտապեցի
կայտան։ Արդեն մութ եր։ Ծառուղու վերջին,
չարխը ուսն առած Դուդկովը կանգնել ու շվարած
նայում եր իմ հետեւից։


Թաղաքն արդեն վաղուց թողել եյինք մեր հետեւ։
Գնացքն անընդհատ փնչալով սուրում եր առաջ ու
առաջ, բայց մաքիցս չեր հեռանում Դուդկովը։ Նա
կապույտ սատինե բլուզով, առանց պառու կանգնած
եր և իմ առաջ։ Յիշու չարխին։ առածովի հորուսու փակութելով

զործարաններից ու իր համար անըմբոնելի գյուղից,
հա կորցրած ամեն ինչ, վիճակում եր ինքն ել չգիտեր
թե ինչ ու մոլոր, անորոշ քայլերով անհետանում
ծառաւղու խտացող մութի մեջ...





ՃԱԽՏՅՈՒԻ ՀՈՐԵԼՑԱՆԸ



Այդ ցեխոտ ճանապարհով շատ անդամներ և
անցուգարձ արել շախայոր Դիմիարին։ Դեռ հանքում՝
խոնակ դետնի տակ մտքերը հանդիսա չեն տվել նը-
րան։ Մամացել ե նա մութ հանքախորչերում մին-
չե պերջացել ե աշխատանքը։ Ցեխոտ արտահա-
գուստով, թրջված սառյերկրյա ջրերով, նա գլուխը
կախ անցել ե այդ ճանապարհով ու խոսել իր մտքե-
րի հետ։ Նա մտազբաղ, գլուխը կախ քայլել ե ու
տեսել միայն իր սև, սաթի պես սև բեխերի ծայրերը,
կոշիկների քթերն ու ցեխոտ ճանապարհի մի կտոր։
Հիմա այդ ճանապարհով գնում ե նա ու նրան
ուղեկցում ե փողային նվազախումբը, վորի հաղթա-
կան ակկորդները զարնվում են ավանի յերկհարկանի
շենքերի պատերին ու նրանց արձագանքը կորչում ե

աշնան մերկ անտառի խորքում։ Այսոր նրա հորել-
յանի որն է. հարզում են նրա 40—տմյա ստորյերկ-
րյա հերոսական աշխատանքը։

Նա մտքերով կես դար հետ ե պնում։

Դիմիտրին նայում ե իր անցած ճանապարհն, —
նրա վրա վերսափայտերի նման շարված են փայ-
լուն, բրոնզե կոճակներով ինժեներներ ու պըլիո-
տավներ ու նրա ականջում վժժում են այն բազմա-
հաղար շշակները, վոր 40 տարի շարունակ նրան դոր-
ծի յեն կանչել։

Ու փախում ե նրա առաջ իր զժզույն, իր վորր
մանկությունը միը խեղճ հայրը։ Ամենից առաջ նրան
և հիշում Դիմիտրին։ Նա յերկար—յերկար տարիներ
հորթի մորթուց շինած առաջակներով յերկրի խոր-
քից շալակով հանքագար եր կրել հույն կապալառու-
ների համար։ Տաներկու ժամյա տաժանակիր աշխա-
տանքից հետո նա վերադառնում եր տուն, յերեխա-
ներին զուրկուրելու համար ուժ չեր մնում ու նա պատ-
կելով, ամբողջ դիշերը տքում եր տանջող հողացա-
վից։ Դիմիտրին հազիվ վեց տարեկան եր, յերբ ծանր
հողացավից վախճանվեց հայրը։ Ու նրա վրա հար-
ձակվեց դաժան վորբությունը...

Գարսւնը ճշացել ե այդ ձորերում։ Սոխակները
սիրո մեղեդին են դայլայլել, ձորերը լցվել են ծա-
ղիկներով, ամեն մի թփի տակից ժամացել ե մանիշա-
կը։ Նայել ե այդ ամենին ափսոսանքով պատանի Դի-
միտրին, որորել ե գլուխն ու լուռ մտել հանքը՝ մի
կտոր հաց վաստակելու համար։

Եեկան 1905 թվի փոթորկու որերը։ Քսանվեց

տարեկան յերիտասարդ եր այն ժամանակ ինքը, բայց
իր յետե արգեն ուներ 12 աարվա հանքափորի աշ-
խատանք: Ռուլական հեղափոխության ցասկու ա-
լիքներն հասան և Անդրկովկաս: Ահա, ինքը գիշե-
րով շրջում և հանքախորշերն ու դործաղութիւնը ա-
նում բանվորներին: Գործադուլավորներին միանում
և իրենց հանքը, հանքերում վիստում են դադախները,
սախում են աշխատանքի անցնել, բայց աննկում են
դործադուլավորները:

Ու պայքարի սրերը կիսուենաի հարյուրավոր
կադրերի նման մի վայրկյանում անցնում են նրա
մտքով:

Դահլիճը լցվել և խայտարդետ հասարակությամբ:
Նստարանների վրա, առաջին շարքերում տեղ են գը-
րավել հին շախայորներն իրենց կանանց հետ միա-
սին: Նրանց մեջ կան պարսիկ բանվորներ, վոր ճո-
ղապետ են իրանի խաների շահագործումից ու մըս-
րակներից: Նրանք սև, թեթև փափախները դըլխնե-
րին, նստած սովասում են ու մինչեւ հորելյանական
նիտի ոկավելը յերկար ծխամորճով ծխում են տե-
ղական ծխախոտը: Ակնապիշ ծխի քուլաներին են նա-
յում նրանք ու ո՞վ իմանա ի՞նչ են վերհիշում իրա-
նում անցկացրած իրենց կիսաքաղց կյանքից:

Ահա նրանց հետեւ տեղ են գըրավել յերիտասարդ
հույն աղջիկներ, վոր հագել են իրենց առնական ըլ-
զեստներն ու շարվել են մի շարքի: Նրանք խորամանկ
հայացքով շուրջն են նայում, անհոգ փսփսում են ի-
րար ականջի, ինչ-վոր ակնարկներ են անում ու դըլն-

պում և նրանց քրքիչը։ Դրան իրբե պատասխան հըն-
չում և յերիտասարդ հանքափորների թեթև մի յերդը,
վորը գրավում և վողջ դահլիճի ուշադրությունը։
Այդտեղ են և հանքերի ինժեներները, տեխնիկները,
հանքափորների նոր սերունդը՝կոմյերիտականները։
Ավելի հետ նստառել են արտահագուստով բանվարներ,
վորոնք մի ժամ, ժամ ու կես հետո հանք պիտի իշնեն
աշխատելու։ Ովքեր ուշ են յեկել, տեղ են զրավել
լուսամուտներում, կամ նստարանների արանքում,
կանգնել են պատերի տակ։ Մեջ ընդ մեջ նվազում է
նվազախումբն ու կանայք յերջանկության կնիքը
գերծներին զրուցում են այն մասին, թե ինչ արտա-
կարդ որ ե, թե ինչ պատիվ արին իրենց Դիմիարաւն։

Բեմի ճակատին ամրացված և մեծադիր մի նկար։
Նրա շրջանակի միջից պատկառելի տարիքով մի մարդ
հիվանդութ աչքերով նայում և դահլիճին։ Դա հորել-
յարն եւայն մարդը, վոր 40 տարի անընդհատ աշ-
խատել և յերկրի ընդերքում։ Նկարի տակ խոշոր տա-
ռերով գրված ե. Շկեցցե ընկեր Դիմիարի Արիստա-
ֆորովը։

Դիմիարի Արիստաֆորով։

Ո՞վ չի ճանաչում նրան։ Նա այդ դահլիճում
նստածներից շատերի հետ խոնավ հանքերում աշխա-
տել և տասնյակ տարիներ։ Նրանցից շատ շատերին
պերֆերատոր բռնել եւ սովորեցրել Դիմիարին, ցույց
և ավել թե ինչպես պետք և դնել կապերը, սովորեց-
րել ե, թե ինչպես պետք և պայքարել գետնի տակ՝
մնության տարերքը հաղթահարելու համար։ Այդ
դահլիճում նստածներից մի քանիսի կյանքն և փրկել

նա ու փլվածքի հետեւ մնալու յերկյուղը սրտներում, յերբ լսել են Դիմիտրիի ձայնը՝

— Վախիլ մի, գալիս եմ... նրանց նորից ժըպտացել ե կյանքը՝ նրանք հաստատ դիտեն, վոր յեթև փլվածքի վայրն ե յեկել Դիմիտրին—փրկությունն ապահոված ե:

Բոլորը ճանաչում են այդ հարազետ վարպետին, անզուգական ընկերոցն ու մարդուն: Ահա թե ինչու բոլորի դեմքին գոհունակության մի ժողիու կա, վոր վիճակվել ե իրենց այսոր անհուն սերն ու հարգանքն արտահայտել այդ վաստակավոր մարդուն, տոնել նրա աշխատանքի տոնը:

Հանդարտ բացվում ե վարագույրը: Փոքրիկ բեմի վրա տեղ են դրավել Դիմիտրին իր ընտանիքով, նրա ընկերները հարևան հանքերից, դանաղան կադակերակությունների ներկայացուցիչներ, այլ քաղաքներից յեկած պատգամավորներ, վոր յեկել են վողջունելու Դիմիտրի Խրիստաֆորովին: Նրանց թրվում են Դիմիտրիի ծառայությունները հանքերի վերականգնման, վերակառուցման, նոր կադրեր ընազգելու գործում:

Իրեն ուղղված սիրավիր հայացքներին, դահլիճի թնդացող ծափերին, բերված նվերներին Դիմիտրին որատախանում ե յերկու խոսքով: Նա պարզ, անպանույն պատմում ե իր. և իր ընկերների դրկանքները Փրանսիական կոնցեսիոնների ժամանակ: Նու ասում ե, վոր ինքը վերածնվել ե ու կյանք տեսել միայն յերկրի խորհրդայնացումից հետո և վոր այսուհետեւ ել վոչ մի ջանք չի խնայի, վորպեսզի՝

— Կորչի բուրժուաղիան ու յերջանիկ կյանք հաստատվի ամբողջ աշխարհում...

Ու նրա ձայնը լուռ, ուշադիր դահլիճում հնչում ե վորպես հանգի խորքից հնչող հղոր ողառնալիք կապիտալի հասցեյին :

Հանքերի վարիչը, այդ խստարարո մարդը, վոր այնքան չոր ու պահանջկոտ և հանքախորշերում, հիմա դարձել և շատախոս, հաճելի թամազա : Նա բոլոր ջանքերը զործ ե դնում, վոր հորելյանը ուրախ ֆինալ ունենա : Մըրահի յերկու ծայրերում տեղ գտած սաղանդարները մըրցում են իրար հետ . մեկը դեռ չվերջացրած՝ մյուս խումբը մի նոր, ավելի ուրախ ու թեթև յեղանակ և սկսում : Սեղանների շուրջը բոլորել են հանքափորները, ինժեններները, յերիտասարդ տղաներ ու ջահել, թուլուան աղջիկները : Նըրանք խմում են Դիմիտրիի կենացը, յերկար կյանք են մաղթում նրան, վոր դեռ շատ տարիներ իրենց հետ կողքը կողքի աշխատի պղնձի հանքերում :

Խայտարղետ շորերով դեռատի հույն աղջիկները նաղանքով պարում են ու նրանց շուրջը ճկուն պարով սրտույտներ են անում ջահել կավալերները : Ահա բացված փոքրիկ հրապարակում կնոջ հետ միասին պարում ե ինքը Դիմիտրի Մրիստաֆորովը : Նա լայն տարածում ե թեկերն ու նրա կրծքին ելեկարական լույսի տակ շողջողում ե կենաղործկոմի անդամի կրծքանշանը : Ո՞վ իմանա յերիտասարդ արյունը հոսեց Դիմիտրիի յերակներում, թե այն անսահման յերջանկությունից եր, վոր այդ պահին ճշում եր նրա սրտում, նա չկարողանալով զողել իրեն ու պարի

ժամանակ քնքշորեն թէը փաթաթեց կնոջ վզով։
Եինն ամոթխած, ընդհանուրի ուրախ քրքիշների ու
ծափերի տակ փախավ պարի հրապարակից։ Դիմիու-
րին մոտեցավ ու պարի հրավիրեց իր յերկարամյա-
ռչխատանքի ընկերոջը, Մաթվեյ Բաթմանովին, վորի
հետ շատ փորձություններ եր բաժանել կյանքում ու
յերկրի տակ։

Պարում և Մաթվեյ Բաթմանովը։

Կլոր, չեկ այդ մարդը 42 տարի աշխատել ե յեր-
կրի ընդերքում։ Նա Դիմիուրիի հետ յերեխա յե յե-
ղել. նա Դիմիուրիի հետ խանդավառ յերիտասարդ ե
յեղել ու նետվել ե պայքարի մեջ։ Նա Դիմիուրիի հետ
միասին ըմպել ե Փրանսիական կապիտալի ու ցարիզմի
դառնության բաժակը։ Ու այժմ իր բարեկամի, իր
ընկերոջ Հոբելյանն ե։ Մեծարում են ծանր, տոկուն,
ստեղծաղործ ախտանքը։

Այդ վեր և քաշել նրա վողին։ Նա յերջանկության
եքստագի մեջ ե։ Մաթվեյն այդ արտահայտում ե իր
անպաճույն, պարզ շախայորական պարով։ Պրիմի-
տիվ, հասարակ շարժումներ ե անում Մաթվեյը. 42
տարի խոնավ յերկրի տակ աշխատած այդ մարդը
թեթե պատանու պես ցատկում ե վեր։ Այդ հաղթա-
նակի պար ե ու կարծես սեղանի մոռ յեկել պարում ե
վոչ թե Մաթվեյը, այլ վողջ բեղմնափար բազմերանդ
հանք ե պարում իր ընդերքի մարդու յերջանկու-
թյան պարը։

Պարում և Մաթվեյը և կարծես նա վոչ թե շախա-
յոր ե, այլ հեքիաթների մեջ յեղած այն հսկա տի-

ոռաններից մեկը, վորի վրա հենված եւ յերկրագոմ-
դը:

Ուշ գիշերին սրահը սկսում եւ զատարկվել:

Զորի խորքից, ասես յերկրի ընդերքից լովում ե
խուլ մի հեռց: Ասես վիթխարի մի սիրա և բաղ-
իսում Շամլուղի ձորում: Այդ հրաշալի կամպրեսորն
եւ, վոր զիշեր ու ցերեկ խտացրած ող եւ տալիս պեր-
ֆերատորներին:

Դեմը՝ գյուղում զիշերվա խավարում հրավառ-
ված եւ մի չենք: Այդ հոբելյարի բնակարանն եւ, վոր
նրա քառասնամյա աշխատանքի տոնին ասես լուսա-
վոր խինդով քրքջում եւ այն խավար տարիների վրա,
վոր անց և կացրել Դիմիտրին ու նրա նման շատե-
րք:

Գյուղից մ'Յ ալժաստի դաղղահի լույսերի տակ
յերևում եւ կնճուտած յերկիրը, վոր տասնյակ մետ-
րերով խոր ակոսներ եւ լոյնել ու յերկնքի առաջ բացել
փլվածքի յերախները: Ասես այնտեղ տասնյակ եքս-
կովատրներ գիշական պար են բռնել ու ծալտյալ
հեռացել զիշերով: Այդ ճեղքվածքների տակ «Ծոսժե»
հանքն եւ, վորտեղ 40 տարի աշխատել եւ Դիմիտրի
կրիստոաֆորովն ու այժմ այնտեղ պղնձի համար մա-
քառում են նրա յերիտասարդ ջոկատները:



ԱԵՐԳՈ ՔՅՈՒՆԻ ԶՍՏԵՐԸ



Ուստիուզի բինան աեղավորաված եր մի մեծ
բացատում, վորին մի կողմից զբկել եյին հոնի զա-
նաճ ծառերը, իսկ մյուս կողմից մոշի խճճված, գե-
պի ձորը թեքված թփերը։ Ցածր թաղիքապատ վր-
րանները մեջքներին յեղեգնե դոտիներ փաթաթած՝
ցրիվ տեղալորսիկ եյին գեղեցիկ այդ բացատում։
Բինայից վերև, հոնի ծառերից դենը, ձգվում եյին
բարձր անտառները։ Անտառի միջով բացատը յերկա-
րուկ ձգվում եր դեպի մոտակա բինան, վոր-
տեղ իջել եյին Ղաղախի թուրք գյուղացիները։ Մոշի
թփերից ցած ընկած եր ձորը, վորի խորքում, շտ-
հեռվում գետին զուգնթաց սպիտակ ժապավենի նը-
ման ձգվել եր փոշու ճանապարհը։

Բինայում զիւ հնչում եր զուռնայի ձայնը։

Համաքվել եր սարվորների խայտարդեա բազմու-
թյունը։ Նըանք համաքվել եյին տեսնելու վոչ միայն
Սերդու Քյոխիկ քեֆը, այլև մոտակա գյուղից յեկած

զարմանալի զուռնաշում։ Նա, սակայն զուռնաչի չեր։
ինքն ել հարեան դյուղում մեծ ոչախի տեր մարդ եր,
մի քանի հարյուր վոչխարների ու կովերի տեր։ Նրա
միերի յերամակից ամենաընտիր հովատակներն եյին
ընտրում նահանգապետին նվեր տանելու համար։ Նա
նվազում եր հենց այնպես, իր աղբերացու Սերդո
քյոխվին պատիվ արած լինելու համար։ Յեկ վոր-
տեսզի ցույց տար իր խորը հարդանքն ու ոերը
Սերդո քյոխվին, տարորինակ զուռնաշին փչում եր
վոչ թե բերանով, այլ քթով։ Նա մեծ փափախը
ովմին, արխալուղով, կարմրատակած նվազում
եր ու ճորերով։ մեկ հեջում եր նրա զուռնայի
զիւ ձայնը։ Նա նվազում եր ու նրա հետ մեզմ, դու-
րեկան ինչ վոր բայտթի յեր յերգում Լեզգոնց Ար-
ակեմը։ Դա կոսր, միջահասակ գեր մարդ եր, զեղե-
ցիկ կազմվածքով, վոր Ուսեփանց գյուղում հայանի
յեր իբրեւլ լավ կոխ բռնող ու քաղցր բայտթիներ, եր
յերգում։ Ուսեփը նրան ել հետը բերել եր, վոր այսե-
լի հանդիսավոր լինի Սերդո քյոխվի քեֆը։

Կանայք շիփոթիված ու շատ մտահոգ դադաներն ե-
յին մտնում ու դուրս գալիս։ Նրանց մի մասը, ու-
րազանցապես հարսները, մոտակա աղբյուրից կժե-
րով ջուր եյին կրում յերեսներին իջեցրած չիքիւյի-
հաստ քողը։ Ուրիշները շաջի վրա թարմ հաց ու աղ-
դակ եյին թխում, հետևում եյին կրակի վրա դրած
կերակրի պղինձներին, Հինդ կին հերթով ճոճում եյին
խնոցին, վոր թարմ կարագ հացնեն թանկապին
հյուրերին ու թանաթաթախ դնեն սեղանին։

Հյուրերն արդեն վազ առավոտից հավաքվել ե-
րին։ Ոսկիր մոտ քան ձիավորով յեկել եր իր գյու-
ղից։ Թաղաքից յերկու կառքով հյուրեր եյին յեկել
Թիֆլիսի ինչ—վոր մի աղվակատ ու Սերդո քյոլավի
աղբերու վաճառականները դավառական քաղաքից։
Քինան եր հասցվել և 40 գույլանոց գինու մի տա-
կառ, վոր սայլով կանգնեցված եր հոնի ծառերի
ստվերի տակ։

Քիչ հետո յերեացին սպասվող ամենակարեւոր
հյուրերը։ Յերբ հեռվում յերեացին 5-6 ձիավոր,
շնծաղին հնչեց Ռւսիկի զուռնան։ Նա նվազում եր
ձիերը չափ դցելու ինչ վոր յեղանակ, իսկ Սերդո
քյուխվան ուրիշ մի քանի հոգու հետ յեկվորներին
զիմավորեցին հրացանների համադարկով։ Զիավոր-
ները զվարթ իջան ձիերից, վորոնց վրայից գոլորչի
յեր բարձրանում։ Նորեկ հյուրերի մեջ եր յերկար բե-
խերով, յերկար, հետ ծալված փափախը գլխին,
թուրը կապած պրիստավը յերկու ուրյադնիկների
ու յերեք ստրաժնիկների հետ։ Ստրաժնիկներն իս-
կույն ձիերը տարան խնամելու, իսկ պրիստավը
ուրյադնիկների հետ միասին մինչեւ խոսակցություն
բացվելը միմի կտոր խաշլամայով՝ գատարկեցին ա-
րագի թասերը Նիկալայ Տ-րդ կայսեր կենացը։ Այդ
որը բոլորում եր Ռոմանովների արքայական տան
300 տարին։

Քիչ հետո հսկա կարպետները դիմեցին գետնին,
յեկ յերբ սեղանը լցվեց բարիքներով ու բոլորը ծա-
յապատիկ շարվեցին նրա շուրջը, քահանան բարձրաց-
նելով աջ ձեռքն որհնեց սեղանը։

Աւոեփին արդեն զուռնան հանձնել եր զուռնաչի-
ներին ու սեղանի ծայրին նստած սեղանը կտուազա-
րում եր իրեւ թամադա : Նրա մի կողքին նստած եր
պրիստավը, իսկ մյուս կողքին Աերգո քյոխվան,
վոր հաճախ սրան նրան իր մոտ եր կանչում տեղ եր
ուղարկում, կարգադրություններ անում :

Հարևան բինաներից հավաքված հայ և թուրք
սարվորները մեծ բազմությամբ հեռու ծառերի տակ
կանգնած դիտում եյին գյուղի ու քաղաքի նշանա-
վոր մարդկանց խրախնանքը :

Թամադան ամեն մի կենացից հետո պարել եր
տալիս սեղանակիցներից վորեւ մեկին, կամ պարոդ-
ներից անկը լրացնում եր զագաներում աշխատող
հարսներով, վորոնք քաշվելով եյին գալիս պարելու,
բայց յերբ սկսում եյի պարել, ել դուրս չեյի գալիս
հրապարակից : Յերբ պարից հոգնում եյին, Ուսեփը
բայաթու պատվեր եր տալիս Լեզզոնց Արտեմին :
Արտեմի աչքերը փակում եր, ճեռքը պահում եր ա-
կանջի մաս ու հնչում եր նրա մեղմ, դուրեկան բա-
յաթին : Յերգում եր Արտեմի ու հարբած հյուրերը
որորում եյին գլուխները, շատ զգացվողները լաց
եյին լինում ու համբուրգում իրար հետ :

Թիֆլիսից յեկած առվակատը, վոր բոլոր հյուրե-
րից տարբերվում եր իր հալստուկով ու պանամա գլու-
խարկով, չեր խմում ու իր հարևաններին զվարճաց-
նում եր քաղաքի նոր անեկդոտներով : Այդ նկատել
եր թամադա Ուսեփին ու մի յերկու անդամ դպուշացրել
պատվավոր կենացները չխմելու համար : Թամադան
նկատել եր, վոր աղմակատը յերբեմն թափում է

բաժակը, բայց գեռ զսպում եր իրեն, վոր չվիրա-
վորէ քաղաքացի հյուրին:

Թամադան բաժակը վերցնելով վոտքի կանգնեց
ու առաջարկեց լիքը լցնել բոլոր բաժակները:

— Մենք ապրում ենք մեր վողորմած թաղավորի
շվաքի տակ: Մեր հողերը, վոր ավելանում են, մեր
ապրանքը, վրո շատանում ա, վաճառականները, վոր
խաղաղ առևտուր են անում ու հարստանում են, եզ
բոլորի համար մենք մեր վողորմած թաղավորի ու-
ժին ու ծով խելքին ենք պարտական: Նրան, վոր
Աստված ամենակարող իշխանավոր ա նշանակել յեր-
կրի վրա, ասել ա, վոր բոլորին հավասար աչքով
մտիկ տա—վաճառականին ձեռ բռնի, վոր շատանա-
նրա ողուտները, հողատերերին քոմակ անի, վոր ա-
վելի շատանան նրա հողերը, ու մենք վոր ապրենք՝
հասարակ ժողովուրդն ել ապրած ու ապրած ա: Մեր
վողորմած թաղավորի ներկայացուցիչը մեր սեղա-
նին, ես ըոսկեյիս մեր կողքին նստած մեր աղբեր
Լեռն Բեղն ա: Նա մեր թաղավորի նման հալալ ու
վողորմած հայասար նայում ա մեր բոլորին, իբրև
պրիստոսկ միշտ ոզնության ա գալիս մեզ, վորտեղ
ել լինի: Յես խմում եմ մեր Լեռն՝ Բեղի կենացը.
Բող նա մեր գլխից անպակաս լինի, միշտ նրա հետ
ես տեսակ յերջանիկ սեղանների նստած լինենք:

Զորը թնդաց բացականչություններից: Թամադա
Ռուսին իր խոսքը վերջացնելով զուսնան վերցրեց
զուսնաչու ձեռքից ու զնելով քթին կարմրատակած
ոկտեց նվազել և հարի: Յերբ բոլորը դատարկեցին

բաժակները, թամադան կարմրած աչքերը վոլորեց ողպակատի վրա:

— Արշակ, Աւոն Բեղի կենացը չես խմո՞ւմ...

— Աստված և վկա խմեցի, — շփոթված ասաց ազգակատը:

Թարկացած թամադան ցատկեց տեղից, պատյանից դուրս քաշեց խանչալը, ձախ ձեռքով վերցրեց զինու կիսատ տկնորն ու վազեց աղվակատի կողմը: Վախեցած աղվակատը ցատկեց տեղից ու կադ վուգով դիսողեն եր վազում, թագնվում եր սրանրայեան ու արսակած կանչում:

— Բուն դի տեղը՝ կխմեմ, բուն դի տեղը՝ կը խըմեմ:

Նա խնդրում եր խանչալը դնել պատյանում, բայց չեր կարողանում հասկացնել իր միտքը: Ոսեփը վերջապես բռնեց նրան, պառկեցրեց սարալանջին ու կանչեց՝

— Զարոին բերեք...

Աղվակատը վախեցած ձայն չեր հանում և պառկած, անկանոն տարածած վուգերը, աչքերը պարզած դեպի յերկինք, սպասում եր թե ի՞նչ պիտի լինի:

Յերբ ձադարը բերին, Ռւաեփը ձագարը դրեց աղվակատի բերին ու խանչալի ծայրը դնելով նրա փորին կարգադրեց, վոր տկնորից դինին շուռ տան ձագարի մեջ: Բոլորը հիացած թամադի որամառությամբ ու ուրախ կատակով քրքջում եյին, իսկ աղվակատը մորթվող անասունի տեսքով մեծ կումերով կույ եր տալիս ձադարից հոսող դինին: Նա յերրեմն դադարեցնում եր խմելը շունչ քաշելու համար և

այդ ժամանակ գինին ճագարը լցվելով նրա յեղբերից կաթկթում եր ու հոսում աղվակատի վզի ու սպիտակ ոճիքի վրայից :

Անսահման զվարճացած այս տեսարանից, հյուրերը նորից սեղան նստեցին, իսկ հարբած ու գինով թրջված աղվակատը յերկու մարդու ողնությանամբ շաղված աչքերով մտավ վրան՝ իրեն հավաքելու:

Թամադան գեռ չեր հասցրել նոր կենաց առաջարկել, յերբ բինայում յերեացին յերեք նոր ձիավորներ: Նրանք իջան ձիերից ու լիքը խուրջինները վար իջեցրին: Դրանցից մեկը Հասան Աղան եր, մոտակար թրջական Դ. գյուղի ամենահարուստ անասնատերը, վորի վոչխարների հոաը 3000 գլխից անցնում եր: Նա հաղել եր լեղպուշալից ընաիր չուխա, կազել եր արծաթե խանչալը, գլխին դրել եր բուխարու մորթուց շաղանակագույն գեղեցիկ փափախ:

Սերգո քյոխվան իսկույն ընդառաջ զնաց թանկողին հյուրին, համբուրվեց հետը և ուղեկցելով Հասան Աղին՝ նստեցրեց իր և թամադի արանքում: Թամադան իսկույն առաջարկեց Հասան Աղի կենացն ու ինքը զումով տուշ նվազեց նրա կենացի վրա:

Տուշից հետո Հասան Աղան շնորհակալություն հայտնելով վերցրեց բաժակն ու առաջարկեց խմել իր քիրզա, հայտնի վաճառական Գրիգոր խաղեյինի կենացը:

— Ինձ կարելի՞ յէ մի խոսք, — ասաց թամադան:

— Կարելի յէ, կարելի յէ, — ճայնեցին այս ու այն կողմից:

— Խչքան վոր ես կենացը թանկառին և Հասան

Աղի համար, ենքան ել թանկադին և ինձ համար, վարովհետեւ Դրիգորն իմ աղմբրացում եւ Բայց Դը- րիգորի կենացը հասարակ կերպով խմել չենք կարող: Նրա սկապերը շատ ավանակ եյին սիրում, ավանա- կը դժանց ոջախի բարեկամն եր: Դրիգորի պատկերին հարգելու համար պետք և խմենք և ավանակի կե- նացը:

Բոլորը հռհռացին: Թամադան վրանի առաջ կա- սկած ավանակը բերեց սեղանի մոտ, լայն բացեց ա- մանակի բերանն ու մի մեծ քրեղանով պինի լցրեց նրա բերանը: Յերբ ավանակին բաց թողին, նա ան- սրինակ դուցով թողեց սեղանն ու փալանը շուր տը- մած փախազ դեպի ձորը:

Սեղանավորները ցնցված եյին այս տեսարանից ու թամադի սրամառությունից: Նրանք ուրախ քրքը- ջում եյին ու անզուսող ծիծաղից ջրակալել եյին նր- րանց կարմրատակած՝ գինուց շաղված աչքերը:

Յերբ հյուրերը քիչ խաղաղվեցին, Սերգո քյոխվեն պարելու ցանկություն հայտնեց: Ուսեփն իսկույն ավագ զուռնաչու ձեռքից վերցրեց զուռնան ու սկսեց նվազել այն յեղանակը, վոր սովորաբար պարում եր Սերգո քյոխվեն: Սերգո քյոխվեն մոտքի կանքնեց, վոտքերից հանեց չստերն ու գյուղական դույնզույն դուզպաները հազին սկսեց պարել կա- նաչ խոտի վրա:

Նա լայն տարածած թերը համարյա միշտ ան- շարժ եր պահում, շատ կամաց չարժեխում եր տեղում ու կապույտ աչքերով սեղանավորների գլխի վրայով նայում եր հեռու սարերին ու անտառներին: Նրա

պարի մեջ կար ինչ վոր խաղաղ ինքնադրհություն ու
հանգստություն։ Նրա անշարժ թևերը կարծես
ասում եյին, վոր թափառաբելու վոչ մի կարիք չու-
նեն, վորովհետեւ նա արդեն հասել է այս բարձ-
րունքին, վորին ձգտել է։ Նրա կապույտ, անշարժ
աչքերը, վոր նայում եյին սարերի հեռուն, տիրա-
կան եյին, խրսխտ, ասես իրենց եյին յենթարկել այդ
բարձրունքներն ու սավառնում եյին նրանց վրա։
Հասան Աղան ել վոտքի կանդնելով սկսեց պարել
Սերդո քյոխվի հետ։

Յերբ յերկար պարելուց հետո, իրար թևի տա-
կով անցնելով Հասան Աղան ու Սերդո քյոխվեն համ-
բուրվեցին, սեղանակիցների ցնծությանը սահման
չկար։ Սակայն մի բոսկեյում ասես խամրեց այդ
ցնծությունը, պապանձվեց սեղանը։ Սերդո քյոխվեն
պարը վերջացնելով ցանկացավ հագնել չստերը և
չկային նրանք։

— Թուրքերը դողացած կլինեն, — ասաց մեկը։

Այդ բախական եր, վոր վողջ սեղանը վոտքի յել-
ներ ու Լևոն Բեգի դլխավորությամբ շարժվեր
դեպի թուրքերի մոտակա բինան։ Նրանք քայլում
յին գուտնայի նվազի տակ, վոմանք նույնիսկ պա-
րում եյին։ Սերդո քյոխվան քայլում եր Հասան աղի
հետ միասին բորիկ վոտքերով ու նրա նախշուն դուլ-
պաները շալպատուրիկ ելին սավիս կանաչ խոտերի ու
դեղին նարգիզների մեջ։

Հազիվ մի տասնյակ աղքան, մանր վրան-
ներ ծվարել եյին անտառի յեղբին։ Նրանց մեջ չկային
բարձր, կլոր գեղեցիկ կարպետներով գարդարված

«Հարիսից վրաններ : Դազաներից ցած շինած եր «Ճեռը» : Մի քանի կանայք նրա վրա ընկած պատվում ենին, վորպեսզի փոքրացնեն մալարիայից ուստած իրենց փայծաղները :

Այդ թուրքական բինան եր :

Ամսթիած թուրք կանայք այդքան մարդ տեսնելով, իսկույն փաթաթվեցին չարսավների մեջ ու յերեխաներին շալակած մտան վրանները : Նրանց հետեւ գեռ զատարկ պատվում եր լվացքի սապոնով ոճած ճճուրք :

Սերգո քյոխվիք թափորը կանգնեց բինայի դիմաց : Լևոն քյոխվան ուրյադնիկների ու ստրաժնիկների հետ առաջացավ դեպի վրանները :

Քիչ հետո ստրաժնիկները մի գյուղացու գուրս բերին վրանից դեմքն ամբողջովին արյունլվա, նրա մեջքին ստրաժնիկներից մեկը խփում եր հրացանի կոթուք : Նրանց հետեւ դուրս յելավ ուրյադնիկը՝ մի զաւյգ չսաեր ձեռքին :

Սերգո քյոխվինն ե՞լին այդ չստերը թե չե, խեղճ գյուղացին այդ չստերը գողացել եր, թե՛ իր առն սրերի չստերն ելին, վոր պահել եր ծալքի տակ, այդ միևնույն եր ստրաժնիկների ու լևոն թեզի համար :

— Բինան քանդել, բոլորը հենց ես ըովելիս թող քոչեն, — յերկար բեխերն ինքնադոհ վոլորելով կարգադրեց լեվոն բեղը :


Ստրաժնիկների ոգնությամբ գյուղացինները վրաների ռւսերն ելին հանում, թաղիքներն ելին փաթաթում ու բարձում սայլերին : Սայլերն իշնում ելին դե-

պի ձորն ու նրանց հետևից յերեխաները շալակներին
տիսուր քայլում եյին թուրք կանույք :

Քիչ հետո, բինայի տեղ մնաց ողախների հետ-
քերը մի քանի սեացած քարերով, զտպաների թախ-
տերի տակ փարթամ աճած սպիտակ խոտերը և անա-
սունների աղբը, վոր անհամաշտի ցրված եր վողջ
բինայով մեկ :

Ճեռը վոչ վոքի պետք չեր ու մնացել եր բինայի-
վերին սարալանջին, վորի կողքին չտերը հաղին
պարում եր Սերդո քյոխալնն ու ավելի զել հնչում եր
Ռւսեփի դուռնան :





ՔԱՆՎԵՑՄԱՐԻ ԱՆՑ



Յերկրորդ անդամն եր, վոր մենք գործադուլի ե-
րինք պատրաստվում:

1906 թվի սկզբանու ամիսն եր, ամառվա ամենա-
լավ ժամանակը: Որն ել չառ լավ հիշում եմ—ամսի
յերկուսն եր: Եղ որերին մեր քունն ու դադարը կըտ-
րել եր, մտածում եյինք վո՞նց անենք, վոր գործը
հաջող դնա, վոր անպայման հաղթողը մենք լինենք:

Մեղ զեկավարողը մեքենայական ցեխի մի դար-
բին եր:

Վրացի մի սիրուն ու բոյով տղա յեր նա, վոր
վոչ ահ ուներ, վոչ ել առանց մտածելու մի բան կա-
ներ: Բանվարները՝ Հայ լինեյին, Թաւրք թե ոս—Զե-
լիմեյին շատ եյին սիրում, նրա խսոքը լսում եյին:
Ավ մի գանգատ ունենար, նրան կասեր, ով սրտումը

մի խորհուրդ ունենար — նրան կպատմեր : Զելի-
ձեն մի սովորություն ուներ, վոր բոլոր բան-
կորների հետ միշտ առանձին — առանձին կիսուեր,
նրանց տունը կղմար, մի խոսքով ամեն մի բանվորի
մաերիմ, ամենահավատարիմ ընկերն եր դառել : Ես
ել մեծ նշանակություն ունեցավ, վոր բանվորները
սրտով ու միաբան համաձայնեցին զործադուլին
դուրս դալ :

Ճիշտ և, մի անգամ 1905 թվի դեկտեմբերին զոր-
ծադուլ եյինք արել, բայց ելի են ժամանակ հեշտ
չեր բանվորին զործադուլի դուրս բերել : Թե՛ բան-
վորները հիմիկված չափ դիտակից չեյին, և թե՛ շատ
եր վտանգավոր — զործադուլավորներին բանտար-
կում եյին, Սիրիր եյին քշում, ով կառկածելի յեր
թվում՝ ձեռաց գործից հեռացնում եյին :

Գործադուլից մի որ առաջ, Զելիձեն մեզ մեկ
մեկ ասաց, վոր գիշերը հավաքվենք զետափը : Են
ժամանակ զավոդը հո եսենց չեր : Ես ձորերը սաղ բա-
ղեր եյին, մենակ զավոդն եր ու մի քանի տում :
Մենք մեր ժողովները բաղերումն եյինք անում :

Գիշերը ով չեր աշխատում, կամաց — կամաց,
մեկ — մեկ հավաքվեցինք ճալա : Մառերի տակ ահա-
դին մարդ եր հավաքվել . շատերը կարծում եյին Զե-
լիձեն մի քանի մարդ ե կանչել և զարմանում եյին,
վոր եղքան բանվորություն և հավաքվել, վոր եղ-
քան մարդ համաձայն ե զործադուլին :

Զելիձեն մանրամասն բացատրում եր, թե յերբ
պիտի զործը թողնել, թե դուրսկը ի՞նչ ձեռվ կտա,
թե դործը թողնելուց հետո վո՞րտեղ պիտի հավաք-

վել։ Բոլորիս արամադրությունը չառ բարձր եր, բոլորս ել հատակաւ գիտեցինք, վոր տնպարման եր հաղթենք։ Ամեն մեկն ել, վոր տեսնում եր Զելիքեցին, լսում եր նրա համոզված խոսքերը, ավելի յեր սրտապնդում, ինքն ել եր նրա նման պողեռությամբ լցվում։

Յերբ ամեն ինչ վորոշված ու պայմանավորված եր, Զելիքեն, ասաց՝

— Բա գուղոկն ո՞վ կտա…

Մի րոպե սուս կացան։ Քիչ հետո մի քանի հոգի ցանկություն հայտնեցին։ Յես ել, վոր չառ եյի ուղում դործագուլին ակտիվ մասնակցել՝ դուդոկը տալու ցանկության հայտնեցի։

Համաձայնվեցին, վոր յես տամ։ Ուրախությանս չափ չկար։ Յես ուղում եյի տեղ՝

— Տղերք, ինչ ել լինի յես դուդոկը ժամանակին կտամ, չկասկածեք։

Բայց վոչինչ ել չասացի։

— Ենքան պիտի տաս, վոր հանքերի գուղոկի պատասխանը լսիի։ Մինչև նրանց պատասխանի ձայնը չլիս՝ ցած չես զա, — ասաց Զելիքեն։

— Զմոռանա հա՛, զավորակից հետո, ճանապարհին ինձ ասում եր Զելիքեն, բացատրում եր թե վոնց հաօնեմ գուղոկի մոտ, վոր վախենալու բան չկա, վոր ուրիշ բանվորների ինքը կկանգնեցնի հընոցի մոտերքը։

Մյուս որը նախաճաշից հետո, յերբ բանվորներն անցան աշխատանքի յես ել զեացի իմ դորեին։ Հնացապանը մի ուսւ բանվոր եր։ Նա չգիտեր դործա-

գուլի մասին։ Նա մենակ եր այստեղ և յերբ ինձ
նկատեց, առեց, վոր եղանդ չի կարելի կանգնել։

Յես առանց նրան ուշադրություն դարձնելու,
սանդուղքներով սկսեցի բարձրանալ, համա աչքիս
ողոջով կաշեզարին եյի մաիկ տալիս։ Նա վոր տեսավ
բարձրանում եմ՝ վազեց դեպի ինձ ու փեշերից սը-
կսեց ցած քաշել։ Յես փեշիս տակից բեհբուդը դուս
քաշեցի ու ասի՝

— Զեն չհանես . . .

Նա յել տեղից շշարժվեց։

Յես դուդովի մոտ եյի։ Ուրախությունից սիրոս
խփում եր։ Յես ձեռքս զցեցի գուլովին ու յերկար
արևոգի նման սկսեցի գուլովկը տալ։ Զեռաց յեկալ
ինժեները։ Նա շնկված դես-դեն մտիկ արավ, համա
մի խոռք ել չասաց ու դնաց։ Նրա գնալուն պես յեկալ
պահակներից մեկը։ Նա նայեց իմ կողմն ու հրացանն
ուսից իջեցրեց։

Եղ ժամանակ բանվորներն արդեն հավաքվել ե-
յին։ Նրանք հարձակվեցին պահակի վրա ու դուռացին։

— Կորի, կորի ստեղից . . .

Պահակը փախալ։

Յես դեռ տեղս կանգնած գուդովկը տալիս եյի . . .

Վերջապես իմ գուլովի ձենին հանքերի գուդովկը
պատասխան տվեց . . . գործադուկն այնտեղ ել սկսվեց։

Յես դուդովկը ժամանակին եյի ավել։

Դրանից ավելի եյի ուրախացել ու սիրոս գուլո-
վի հետ ուժեղ խփում եր։

Ուռւչկեն թողի ու իջա։ Դուքս յեկա թե չե, բան-

Վարները շրջապատեցին ինձ, թուզրին վերև ու ճռ-
ճում եյին իրենց մեռքերին...

* * *

Հիացմունքով ու հափշտակությամբ լցված յերի-
տասարդ բանվորները լսում են վարպետ Պողոսին,
Նրանք բոլորը կոլտնահսական դաշտերից նոր են հա-
վաքվել դործարան։ Ու վարպետ Պողոսի հասարակ
անպաճույն խոսքերով պատմածը Զելիմեյի ու հա-
րյուրավոր գործադուլավոր շախտյորների ու պըղըն-
ձագործների կատարած աշխատանքի մասին հեքիաթ
և թվում խորհրդային իրականության մեջ աճած կոմ-
յերիտականներին։

Վարպետ Պողոսը վերջացնում է իր հուշերը յերի-
տասարդների հավաքույթում։ Ծեր լուակյաց վարպե-
տի աշքերը նորից մասվում են յերիտասարդ որերի
հրով։ Նա հրճվանքով լի ստուգող հայացքով նայում
և դահլիճին։ Այդ խանդավառ հարյուրավոր յերիտա-
սարդները կարծես իր սուլիչի ահազանգով են հա-
վաքվել այդունող։ Նրա ականջին տարիների խոր-
քից դեռ թարմ, հաղթական հնչում է իր ահազանդը։
Ու հանքերի հեռումներում աշխատող բանվորների հո-
գու խորքից նրա ականջին են հասնում իր սուլիչի
արձականքները։

Նա անհուն յերջանկության ժպիտը դեմքին
հանդարտորեն իշխում է ամբիոնից։

Տասնյակ յերիտասարդներ տեղերից ցատկում են
ու ընդառաջ գնում սիրելի վարպետին։ Նրանք իրենց
լուստ թևերին են առնում նրան։


*

113

Ու քսան վեց տարի անց, ինչպես սուլիչի սահ-
ղուղքներից իշխելու ուշը, տասնյակ զույգ ձեռքեր
ճոճում են նրան իրենց դլիսի վերև, նրա մարտական
ահազանդի ու այսորվա հերոսական աշխատանքի
համար . . .



ՅԵՐԵՒ ԿՈՒՑԱԵՐ



Քոկա ժայռը հրվանդանի նման սուր քթով կախվել և խոր անդունդի վրա։ Զորում բարակ պարանի նման վոլորուն ընկած և սպիտակ, փրփրաբաշ վտակը, վոր գալիս և հեռու անտառներից ու նորից կորչում թռվ անտառների մեջ։ Ժայռերի հարթ ասրածության վրա լայնանիստ բազմել և Աղթալայի մանքը։ Նա յել կարծես վախեցած նայում և իր առաջ բացված խոր անգումդին, բայց չի կարողանում յետ քաշվել ժայռի պռնկից։ Այն կողմից, ուր ժայռն ուղղահայց ու անառիկ չե, բարձրացել են հինավուրց բերդե պարիսպներն ու նրանց վրա աշտարակներ են կառուցվել։ Այդ աշտարակները հիմա արգեն քանդվել

են և միայն Նրանց բեկորները վանքի մուտքի մոտ
ավերված, կիսալուսնի նման նայում են ձորին:

Վանքի կողքին ծվարել եւ հին շենքի մի մնա-
ցորդ: Բակի խորքից փշե շանկապատը կեռ ուղիյով
տանում եւ դեպի մի դուռ, վորի լրջանակի վրա ծաղ-
կանկար հին փորագրություններ կան. դռան կամարի
քարերը բաժանվել են իրարից ու արդեն թափվում
են: Այդ դուռը տանում եւ դեպի վանականների շենքի
նախկին մի ընդարձակ սրահը, վորն այժմ տանիք
չունենալով վեր եւ ածվել սքանչելի պարտեղի: Հաս-
միկի փարթամ, ցածր թփերը կանոնավոր շարքով
պարտեղի մուտքից ձգվել են մինչև նրա կենտրոնը:
Նրանց բողբոջները հենց նոր բացվել են ու ցնծազին
փարթամությամբ ժպտում են արևին: Պարտեղի
կենտրոնում շուայլ մատղալ շյուղեր արձակած բարձ-
րացել են թթենիները, բալի դեղեցիկ ծառերն իրենց
փայլում բներով ու խնձորենիները, վորոնց ճյուղե-
րին սպիտակ փոշու թափշյա մի շերտ եւ բռնել: Պար-
տեղի արևարայաց պատերից մեկի վրայով դեպի
վեր են բարձրացել պտուտակներն ու բազմաթիվ ճյու-
ղերով խճճվել են, հյուսվել իրար:

Պարտեղում, այնտեղ, վորտեղ կանաչներ չկան,
գետինը մաքուր ավելված ե, ջրված: Մառերի ուլո-
վերների տակ նստած են յերեք կին: Նրանցից մեկը
թուղի պղինձը կրակին դրած բանջարեղեններից ինչ-
վոր ճաշ եւ պատրաստում: Նոր դդալը ձեռքին խա-
ղաղ խառնում եւ ճաշն ու յերբեմն—յերբեմն դլուխը
վեր բարձրացնելով նայում եւ մյուս յերկու կանանց,
վորոնք լուս գլխիկոր նստած են քարերին: Այդ մի

վարկյան և միայն տեսում և նա գլուխը իշեցնելով
նորից կամ բանջարեղինի մնացորդն և կտրտում
կաթսայի մեջ, կամ մի քանի չոր փայտի կտոր ավե-
լացնում կրակին:

Յերեք կանանց մեջ նա ամենից յերիտասարդն
եր, 30—32 տարեկան, բարձրահասակ, վայելչակաղմ
մի կին ։ Լայն, գեղեցիկ ճակատի տակ աղեղների
նման ձգվող հոնքերը, վերեկց պարուրում են նրա
կաղույտ աչքերը, վոր արդեն կորցրել են իրենց
կրակն ու փայլը։ Նա զլիսին ամուր կապել և ձեռա-
գործ մի շալ ու սե են նրա բոլոր զգեստները։ Մյուս
յերկու կանայք ել հաղիվ են շարժվում։ Նրանք
գունատ ու պաշ, բազմաթիվ հազուատների մեջ
փաթաթված նստում են արեի տակ ու ծուլորեն,
դանդաղ քաշում համրիչի հասիկները։ Միայն այդ
փակ պարտեղն ու նրանց սե համազգեստներն են հի-
շեցնում նրանց վանական լինելը։

Նրանցից յուրաքանչյուրին ունի իր առանձին բնու-
կարանը։ Հին շենքի ավերակներում, նրա պատու-
հանների ու դռների մեջ նրանք պատրաստել են իրենց
խցիկները։ Այդ խցիկներից յերկուսը ցածրում են,
իսկ մեկը մի հարկ բարձրում, շինված յերկրորդ
հարկի զաներից մեկի մեջ։ պարտեզից դեպի տյու-
խցիկն և ձգվում մեջքը կորացրած մի բարակ սան-
դուղք։ Այստեղ բնակվում և կույսերից ամենաավա-
գը, վորն արդեն 36 տարի ապրում և վանական կյան-
քով։ Նրա խցի հարեւան պատուհանում դրված են
տարբեր մեկ շեր, թիթեղե ծինելույզներ, ժանդու-
ված դույլի մնացորդներ։

Շառերից մեկի վրա կտխված ե զեղեցիկ կտպույտ մի ըլացարան իր մաքուր պղնձե թասով, պատմի տակ դրված են թեյաման, կաթսաներ ու տնային այլ կարասիներ :

Յերիտասարդ կույսը վերջին բանջարեղենները լցնելով կաթսայի մեջ, փայտե կափարիչով ծածկեց կաթսայի բերանն ու դլուխն առնելով յերկու ձեռների մեջ լուռ քաշվեց իր խուցը : Յերկու պառավները վշտուտ հայացքով նրան ուղեկցեցին մինչև խցի դուռը և յերբ նրանց հայացքներն իրար հանդիպեցին, առանց ծպտուն հանելու նրանք հասկացան իրար :

— Նորից բանեց Աննայի գլխացավը, — հաղին յրմիջաց ավագ կույսն ու ասես մի բան արած լինելու համար սկսեց ամրացնել դլիսի շորը :

— Այսոր ել չի կարող փորել բանջարանոցը . . .

— Ե'խ, ասաված, չմեռանք մենք ել . . .ով մի տեր ուներ—զնաց այս վանքից, մենակ մենք մնացինք . . . թե հիվանդանա Աննան ի՞նչ կլինի մեր ճարը :

Ել շխոսեցին պառավները : Նրանք յերկուսն ել մոտեցան ողախին դրված կաթսային, նստեցին նրա մոտի քարին : Յերբեմն—յերբեմն նրանք մի-մի բարակ ճյուղ եյին զցում ողախի մեջ ու մոլոր հայացքով նայում կրակի թույլ բոցկլտոցին : Նրանց մոտ նստած կատուն անտարբեր շարժում եր պոչը, ցատկում եր այս ու այն կողմ, յեռանդուն ճանկոտում եր հողը կամ ծառերի բներն ու նորից պառավների մոտ գալով լիզում եր իրեն, թաթերն անընդհատ քսում զնչին ու ծուլորեն հորանջում արեք առաջ փակելով աչքերը :

Աննան գլուխին առած ձեռքերի մեջ, հնաված իր
խցի լուսամուտին մտածում եր: Նրա խցիկում մի
մարդ հաղիվ կարող եր շարժվել: Լուսամուտի առաջ
սարքված եր նրա անկողինը, վոր ծածկված եր հնա
մաշ բայց մաքուր ձեռագործով, մահճակալի առաջ
կրված եր փոքրիկ կլոր մի սեղան, անկյունում կախ-
ված եր տիրամոր նկարը, իսկ ամբողջ պատը բռնել
եր ընդարձակ քարտեղ, վորի վրա գծապրված եր
քրիստոնեայության տարածման պատմությունը:

Գլխացավը Աննային մոռայլ խոհերի յեր մզում,
վորոնք միշտ նրան հուսահատության ելին հասցնում
և վոչ մի լուսավոր կիտ չեր տեսնում նա իր կյան-
քում: Արդեն ամեն ինչ վերջացել եր իրենց մոռ,
սպառվել ելին վերջին պաշարները: Արդեն զարուն եր
դուրսը, բայց ինքն այլևս աշխատել չեր կարողանում
հետզհետե ուժեղացող գլխացավից: Նա աեսնում եր
թե ինչպես աստիճանաբար ուժասպառ և լինում ին-
քը: Իսկ ի՞նչ կուտեն վաղը պառավները: Միթե ին-
քը կթողնի վոր սովամահ լինեն նրանք: Չե՛ վոր ին-
քըն և նրանց վերջին ապավենը:

Բայց հանկարծ մտքերը նրա զվիսում կարծես հա-
կառակ ընթացք ելին ստանում, նրանք կարծես ծառս
ելին լինում ու հարձակվում իր վրա: Նա իրենց իւ-
ցերից դուրս տեսնում եր կյանքը: Տեսնում եր, թե
ինչպես շրջապատում ամեն ինչ այլ, լայն հունով և
ընթանում: Ի՞նչն ե իրեն խանդարում ընկնել ոյլ հու-
նի մեջ, ապրել այնպես, ինչպես միլիոնավոր այլ կա-

նայք են ապրում։ ԶԵ՞ վոր ինքը վանք և ըսկել իր-
բե վորբ յերեխա։ նա վանքին նայել և վորպես մի
տապաստաբան ու այդքանով և կառված յեղել նրա
հետ։ Ել ի՞նչ ռժվարություն կա որոկվելու այդ մըդ-
ճավանջից և ընթացք ու բովանդակություն տալու
իր կյանքին։

Խոկ պառավնե՞րը . . .

Այս հարցը մյուս կողմից առես գաղտապողի,
ինչ վոր մի մութ տեղից սողում եր նրա ուղեղն ու
նորից մթաղնում նրա պայծառացող մտքերը։ Բայց
պարտավո՞ր և նա դեռևս յերիտասարդ իր կյանքը
խավարեցնել այդ պառավների համար։ վերջապես
ի՞նչն և իրեն պարտազրում զրան։ Ապա զազանի ա-
սես ինքն ել թագցնելով իրենից, նա իր որակի խոր-
քում տեսնում եր խարսյաշ, թիկնավետ մի աղա,
վոր դվարթ, սուլելով անցնում եր իր բանջարանոցի
մուսով ու քաղցր ժողովում իրեն։ Այդ կարծես պայ-
ծառացնում և նրա մտքերը, կարծես հենց այդ և,
լարիրինթի նման խճճված իր մտածումները պայծա-
ռանում են, բայց դարձյալ իր մեջ ուժ չի դանում
հեռուն դնալու։ Նա դանդաղ բարձրացրեց զլուկիւը։
Դեմը խաղաղ, իրենց չքնաղ պարտեզն եր ու ոջոխի
մոտ զմիմիկոր նստել եյին յերկու պառավները։

Այս խոխը մաքերը ցրելու համար նա դուրս յե-
կալ խցիկից, վերցրեց պատին հենած քահը, վերցրեց
թեյամանն ու համբ քայլերն ուղղեց դեպի պարտեզի
դուռը։ Պառավները լուր նայեցին նրա հետեւից, հա-
ռաչեցին ու դմիմիկոր մեացին քարերին նստած։

Պայծառ պարնանային առավոտ եր :

Արևն իր ճառապայթներով շուայլ վողողել եր լեռներն ու անտառները . ձորում արդեն նա զգացնել եր տալիս իր ուժն ու ատք արեկ տակ թռչկոտում ե-
յին սպիտակ թիթնոները : Փարթամ աճել եյին բաղեղ-
ները , մանր թփուտներն արդեն պատել եյին կանաչով
ու նրանց տակից ժպտում եր մանուշակը : Վանքի
աակի նեղ արահեառի այդ կանաչների միջից քայ-
լում եր Աննան :

Դեռ ձորի վտակին չհասած , ուր սարալանջը թեք
վելով կորցնում եր իր ուղղահայաց դիրքը , յերեսում
եյին լորու մարդերի հետքերը , այստեղ—այնտեղ դեռ
ցցված եյին մնացել անցած տարվա բույսերի չորա-
ցած ցողունները : Այդ կույսերի բանջարանոցն եր :
Աննան հասնելով այդտեղ , թեյամանը դրեց մի ըստ-
վերում ու հողի՝ մի ծայրից սկսեց փորել : Նա փո-
րում եր , բայց ուժեղ դլխացավը չեր թողնում աշ-
խատել . նրա աչքերը սեանում եյին , հանկարծ կը-
տրվում եր նրա լսողությունն ու ել չեր լսում թըռ-
չունների ուրախ յերգը : Նա այժմ տեսնում եր իր վա-
նական , անիմաստ կյանքի հետեւանքները . միշտ յեր-
կու պառանների ու կատվի հետ առանձնացած նա
այնպես եր կարմել մարդկանցից ու կյանքից , այն-
պես գյուրառդրդիու եր դարձել , վոր վոչ միայն
մարդկանց աղմուկը , այլ անգամ թաջունների խրախ-
ճանքը , այն ամենը , ուր կյանքի ու յերջանկության
նշան կար , պղղում եր նրա ջղերին , նա ալելի լուակ-

յաց ու մելամաղձուտ եր դանինում : Այդ պատճառով ել նա առանձնացած իր խցիկում միայն ձեռագործ եր անում , վոր նրան տալիս ելին այդ գյուղի բնակիւ-**ները :**

— Աննա , Աննա , ի՞նչ ես մտածում , — ցածրի թը-պուտներից նրան ձայնեց մի յերիտասարդ աղջիկ ու վաղերով մոտեցավ նրան :

— Բարե Անյուտա , — սասց նա ու ամուր թա-
փահարեց Աննայի ձեռքները :

— Բարե աղամնյակս , — սթափվելով պատասխա-
նեց Աննան :

Դա մի աղջիկ եր թուի դեմքով , հունական ու-
ղիշ գեղեցիկ քթով , վորը նրա դեմքին այնպիսի տր-
տահայտություն եր տալիս՝ թե այս և , պիտի խնդա ,
բայց զապում եր իրեն : Նա բաց չթողնելով Աննայի
ձեռքը , քնքշորեն շոյում եր և ափսոսող հայտցքով
նայում նրա դեմքին :

— Ափր Աննա , բահով փորելով ու խցում մնա-
լով բան դուրս չի գա : Մի տես թե դուրսն ի՞նչ և
կտտարվում : Յերեկ այնաեղ զրուցում ելին , կռոպե-
րատիվում շատ հավանել են քո աշխատանքները , քեզ
ցանկանում են վերցնել իրենց մոտ , բոլորն ել գիտեն ,
վոր դու հսկատացյալ չես : Յեկ աշխատիր և կտես-
նես , թե հետո ի՞նչ լավ կլինի :

Տարակուտանքով այդ հույն աղջկանն եր նայում
կույսն ու կարծես վաշինչ չեր հասկանում : Նա մի-
այն առնոնում եր , թե վորքան կյանք կա այդ աղջկա
մեջ ու զեռ վորքան ծարավի յե նա կյանքի . այդ ան-
հույն թախիծով լցրեց նրա սիրտը : Նրան հոգին լցվեց

բուան մի զդացմունքով ու չպիտեր նա՝ դա առելություն և դեսկի այդ յերիտասարդ, կենսուրախ աղջիկը, թե նախանձ։ Բայց դիտեր, վոր այդ ամենը ներքուստ իր սրտի խորքից հնչող կյանքի կոչն ե, վորի գեմ սակայն ինքն անզոր ե։ Հուզմունքից ու էրեն պատաճ խոր տրտմությունից նա չեր կարողանում խոսել։

— Զի լինի աղամնյակս . . . հաղիվ շնչաց նա։ Մարդկանց մոտ չեմ կարող։ Այսպես արդեն վարժվել եմ . . . կապրենց մի կերպ . . .

Նու ել չխոսեց. վերցրեց բահն ու գանզազ, գըշիիկոր փորում եր պարաբռ, խոնավ հողը։

Կարծես ափսոսաց իր արածի համար հույն աղջիկը։ Նա զորովանքով լի մի հայացք նետեց Աննայի վրա ու արահետով բարձրացավ վեր։

Աննան արդեն ուժասպառ եր յեղել, բայց համառորեն շարունակում եր աշխատել։ Նրա շուրջը յեռում եր աշխատանքը։ Քիչ վերը ուրախ հռինդով աշխատում եր բրեմսրերդը, վոր անրնդհատ հանքաքրով լի վագոններ եր իջեցնում ձորը։ Այնտեղ, ցածրում, բանվորներն այդ վագոններն իրար եյին կցում, մարակում եյին ձիերին ու զվարթ սուլոցով անհետանում գեղեցիկ ձորում։ Աննան յերբմն յերկար, ակնապիշ նայում եր յերթեեկող այդ վագոններին, ձիերին, վոր պոչերը թափահարելով վազում եյին վագոննետների առաջից, մարդկանց, վոր այնպես անհոգ սուլում եյին ու կարծես վոչինչ չեր հասկանում այդ ամենից։ Ապա նա նայում եր վեր ու տեսնում վանքն ու հին բերդի գորշ պատերը։

Հանկարծ նա ուրախ, ռուսական յերդի թեթէ
յեղանակ լսեց հեռու թփերի յետեւ, վորը քիչ հետո
սուլոցի վերածվեց։ Շանթահարի նման ցնցվեց Ան-
հան—ուժգին սկսեց բարախել նրա սիրտը։ Հուղ-
մունքից սկսեցին գողալ նրա ձեռքերն ու վասքերը,—
այդ նա յեւ Այդ նա յեւ, հանքերի թիկնավետ բանվո-
րը, խարտյաշ ոուս տղան։ Սիրում եր ինքը նրան
թե չե—այդ չեր հասկանում Աննան, բայց նրա ներ-
կայությունը, այն, վոր նա քնքությամբ ու սիրով
եր նայում իրեն—անհուն բերկրանքով եր լցնում իր
հոգին։ Նա զգում եր, գիտեր, թե այդ խարտյաշ տը-
ղային հանդիպելուց հետո ինչպես մի տեսակ փախվել
եր կյանքը իր տչքում, կարծես քաղցրացել եր վոշ-
ինչ չարժեցող ամայի այդ կյանքը։

Եեկ ահա, նա նորից նկատելով իրեն, գորիս և
տեսնելու իրեն, խոսելու իր հետ։ Վորքան քաղցր ե,
վորքան լավ ե լինել նրա հետ։ Բայց մի ուժ, անհաղ-
թահարելի, ներքին անընկճելի մի ուժ հետ և մղում,
հետ և պահում նրան։ Վորքան քաղցր ե նրա հետ
լինելը, բայց նա չի կարող տանել նրա ներկայու-
թյունը, չի կարող տեսնել, թե ինչքան սեր ու զուր-
գուրանք կա նրա հայացքում։ Այդ շատ ուսաբոաի յեւ,
անհնարին, այդ չի կարող տանել, ինքը։ այդ անսո-
վոր ջերմությունը մոլորեցնում եր նրան։

Այս մտքերն առես ավելի արագացրին նրա որտի
զարկերն ու մինչ թփերի յետեւից ավելի ու ավելի
մատենում եր սուլոցը, նա շտապ վերցրեց թեյտմանը,
բահը դրեց ուսին ու սկսեց բարձրանալ սրահետով
զեպի պանքը։ Յերբ արդեն մոտենում եր սրարիսպնե-

րին, նա կանդնեց. մէ անհաղթահարելի ուժ նրան
ասես ստիպում եր հետ նայել: Նա ծանր, ասես ա-
կամայից հայացքն ուղղեց զեպի բանջարանոց: Այն-
անգ ցածրում, ուր քիչ առաջ ինքը փորում եր գե-
տինը, քարի վրա նստել եր յերիտասարդ բանջորն ու
տիուր նայում եր իր յետեից:

4

Աննան վայրկյանապես թեքեց զլուխն ու կեռ ա-
րահետով շարունակեց բարձրանալ վեր:


Ցրիվ ու մոլար եյին նրա մտքերը: Նա չեր կարո-
ղանում հաստատուն քայլել այդ կածանով, վորով
հաղարավոր անդամ ձորն եր իջել ու բարձրացել վեր:
Նա չեր կարողանում հաշիվ տալ իրեն, թե ի՞նչ ե
կատարվում իր հետ: Առաջին անդամ նա իր մեջ լր-
սեց սիրո ճիչը. առաջին անդամ նա զգաց սիրո հզո-
րությունն ու այն, թե ինչպես ինքն անզոր ե նրա ա-
ռաջ: Նա արդենի անդոր եր ամուր, անզուազ սիրելու
մարդուն:

Նա անհամաչափ, մոլոր քայլերով բարձրանում
եր զեպի վանքը:


Նրան հետ եր քաշում արդեն զոչ թե վանքի ու-
ժը, այլ այն յերկու պառավները վորոնց կյանքի
վրա կապարե խաչի նման ծանրացել եր վանքը:

Նա գնում եր այնտեղ, պառավների հետ միասին
խաղաղ սպասելու անիմաստ մահվան:





ԾՈՎԵԶՐՅԱ ՀՈՒՑԶԵՐ



30. #5

I

Սայն անհանգիստ եր:

Անտեսանելի հեռումներից, վոր մշուշփում եյին
թափանցիկ մի քողով, դեպի մեզ եյին գալիս ծովի
կնճիռները։ Նըանք մոտենալով ափին ուռչում եյին,
վիթի-արի սահանքով վեր բարձրանում ու դառնում
լոյն, հղոր ալիքներ։ Հարձակման անզումապ կրքով
բռնված ալիքներն որորվելով առաջանում եյին։ Նը-
րանք ափի մոտ բարձրանալով ծովի մակերեսից,
փրփրաբաշ ծառու եյին լինում ու ահոելի շառաչյու-
նով զարնվում ափին։ Յեկ յերբ ջրերը հետ եյին
քաշվում։

— Վա՞ս... երանց հետ աղմուկով դեպի ծովն

եյին քաշվում մանր, սահուն քարերը, զարմանելի
թախիծով համակելով վողջ ծովեղերքը:

Մովս այդպես հետ քաշվելով իր ափերից, կար-
ծես շունչ եր քաշում ու նորից հարձակվում ափերի
վրա:

Յերեխաների ուրախությանը սահման չկար:

Նրանք հանդուզն, չարաճճի ընդառաջ եյին
վնում ալիքներին ու յերբ ալիքներն ափին մոտենալով
ծառս եյին լինում, նրանք մի վոստյունով իրենց
ալիքների մեջ եյին նետում։ Մի պահ անհե-
տանում եյին յերեխաներն ալիքների փրփրադեղ տա-
րերքի մեջ ու յերբ ջրերը հետ եյին քաշվում, նրանք
վեր եյին յելիում թափալված տեղից, յերեսները մտք
բում եյին ջրից ու աչքերը ճողճացնելով սպասում
ալիքների նոր հորձանքի։

Ավագը նահանջում եր ալիքների առաջ։

Ամեն անդամ ալիքները ծովի հատակից խխոնջ-
ներ, փնջերով ծովային խոտ ու մանր քարեր եյին
ափ հանում, բարձրացնում եյին ափն ու ալիք-ալիք
նրան աննկատելի հետ մղում։

Մենք նստած ծովափին ուշադիր հետևում եյինք
ալիքների այդ քմահան խաղին ու լուռ խորհրդա-
ծում քիչ առաջ ավարտած մեր վեճի մտին։

Վոչ վոք մեղնից չեր խոսում։ մենք խուսափում
եյինք իրար հայացքից։ Հայացքներս հասած ծովի
հեռուներին, մեղնից յուրաքանչյուրը կարծես իր
հարցերի պատասխանը սպասում եր հուզված ծովի
գոռ ալիքներից, մոր իրար հետևից զարնվում եյին

ափին՝ մեկը ժյուսից մոլեղին, մեկը ժյուսից կըր-
քառ...

2

Ահա թե վորտեղից սկիզբ առավ մեր վեճը:

Սաշան կաղմակերպել եր հերթական եքսկուրսի-
ան: Մենք բարձրացել եյինք ծովափնյա լեռներից
մեկի կատարն ու տեղավորվել հին բերդի ավերակ-
ների մոտ: Քեզուշ միմոգան թեքվել եր դեպի սա-
րալանջն ու ճապոնական հովանոցի նման խիտ սալեր
ձգել մեղ վրա: Ծեղարը մեր սանատորիայի բոլորի
կողմից սիրված միակ շումը պառկել եր գետնին,
դլուխը դրել թաթերին ու լեզուն հանած հևում եր:
Նա ճանապարհին խուզարկում եր բոլոր թփերը՝ լոր
բոնելու համար, հետապնդում եր անդամ մորեխնե-
րին, վոր թռչկոտում եյին խոտերի մեջ ու դրանից
հոգնել եր:

Թե քանի՞ յերրորդ անդամն եր Սաշան բարձրա-
նում այդ ավերակների մոտ՝ դժվար եր ասել: Նրա
գործն այն եր, վոր հիվանդներին ծանոթացներ ըլր-
ջակա զգեղարվեստական տեսարաններին— ինչպիս
ինքն եր ասում: Համարյա ամեն որ նա գարմոշկան
կախում եր ուսից ու հիվանդների մի խումբ տանում
վորեւ ուղղությամբ: Հասնելով զգեղարվեստական
տեսարաններին Սաշան այդ վայրի մասին պատմում
եր ինչ լսել եր սրանից-նրանից: Այդ ժամանակ շատ
խղճալի կերպարանք եր ստանում Սաշան: Նա մի
տեսակ կծկված, անորոշ ու կցկառւր պատասխաններ
եր աալիս իրեն ուղղված հարցերին, անորոշ շար-

ժումներ եր անում։ Այդ ժամանակ նրա հայացքում
ներողամտության աղերսանք կարելի յեր կարդալ։

Բոլորովին այլ եր Սաշան, յերբ սպառվում եյին
հարցերն ու պետք եր զվարճունալ։ Այդ ժամանակ
ասես կերպարանափոխվում եր նա։ Թեթևացած,
վճռական շարժումներով նա ճգում եր դարմոնը,
ինքնավատահ, զվարթ տեսք եր ընդունում ու նվազի
տակ կարծես խաղում եյին նրա բոլոր վոսկորները։

Այդ որն ել յերբ քիչ հանգստացել եյինք, Սաշան
քաշեց դարմոնն ու նրա մատներն արագ խաղացին
զարմոնի սաղափե ստեղների վրա։ Թեթև, զվարթ
հորդաց սուսական ժողովրդական պարի յեղանակը։

Անտոշան խկույն ցաւկեց տեղից — Յերբ հնչում
ե դարմոնը՝ Անտոշան չի կարող նստած մնալ։ Նա
մի փոքր հարթ տարածություն գտավ ու սկսեց պտա-
րել։ Հասարակ, անմիտ շարժումներ չեր այդ ան-
պաճույն պարն Անտօշկայի համար — նա ավրում եր
պարով։ Հնչող յեղանակի ու իր շարժումների ոփի-
մով Անտոշան վոգեռորդարձ սուլում եր տուամների
արամքից։ Պարի ընթացքում նրա վոգեռորությունը
հասնում եր իր գագաթնակետին ու նրա շարժումներն
ավելի եյին թեթևանում, ավելի պայծառանում եր
նրա հավիտյան ուրախ գեմքը։ Նա ուշադիր հետե-
ղում եր, թե իր պարն ի՞նչ տպավորություն ե զոր-
ծում այդտեղ յեղողներից յուրաքանչյուրի վրա ա-
ռանձին-առանձին ու ավելի վոգեվորությամբ եր
թռչկոտում նրանց առանց բացառության բոլորի
ծափերի ու խրախուսող հայացքների տակ։ Տեսնե-
լով այդ, նա վորեւ ժեստով-ժպիտով կամ զուկու

տալով վողջունում եր իրեն՝ ծափահարողներին, կամ ուղղակի աչքով եր անումայդ իհարկե գլխավորապես կանանց և նրանց, վորոնց վորեսե բան ուներ ակնարկելու:

Մեր սանատորիայում բոլորը գիտեյին Անառշային և բոլորը սիրում եյին այդ պարզ շոֆերին: Ակումբում լիներ, անառառում, թե ծովափին, բալորը հավաքվում եյին Անառշայի շուրջն ու ուրախ եր տեղում ժամանակը նրա հետ: Ահա թե ինչու, յերբ Անառշան մեկնեց, մի քանի որ կարծես ամայացավ սանատորիան, — բոլորը նրան եյին հիշում, նրա մասին եյին խոսում հավաքույթներում:

Յերբ Անառշան վերջացրեց պարն ու նստեց տեղի, հիվանդները խնդրեցին մեկին, վոր ըստ յերեւույթին արտիստ եր, վորես բան արտասանել: Նա մի բոպե ժամանելուց հետո, վոր ըստ յերեւույթին նյութի ընտրություն եր կատարում, սկսեց արտասանել արվեստով գրված մի նովելլ:

Նա արտասանում եր աչքերը փակ, հենված հին բերդի ճեղքած բնիկորին: Նա արտասանում եր առանց շտապելու, ասես սպասելով իրեն-չընկերակցող դաշնամուրի սերջին ակկորդներին: Նրա ձայնը հիացմունքի տենչով ասես փաթաթվում եր չքնաղ այն կնոջ մարմարե պարանոցով, վորի մասին գըրված եր նովելլը: Ու մերթ ջղային ցնցումներով եր հեջում նրա ձայնը, վոր դողում եր ցասման պոռթկումից: Ու այդպես, աչքերը փակ, ճեռքերը խաչած կրծքին, նա կարծես բուռն ցաման մարմնացում լի-

ներ, վորի ձայնը յերբեմն հեղում եր գաժան, ուր-
սուռ աղդելու շափ խիստ :

Բոլորն առանց ծպտումի հետևում եյին նրա յու-
րաքանչյուր շարժումին, նրա ձայնի ամեն մի յելե-
վիշին : Ու արտասանող արտիստի հետ մեկտեղ նը-
րանց բոլորի դեմքով անցնում եր հիացմունքի մի
ժպիտ, վորը սակայն քիչ հետո խամրում եր ցասման
ու հիասթափության այն խոր ակոսով ; վոր զեռում
եյին ունկնդիրների ճակատին արտիստի ցասումից
գալարվող ձայնի յելեւնիները : Նովելլը՝ խստորեն
զատապարտում եր կնոջը : Այնանդ կինը ներկայաց-
վում եր իբրև մի անդզա հրեշ, վորը կարող է վոտ-
նահարել ամեն մի սրբություն, վորն ընդունակ է ու-
տախոսության ու ամեն մի կեղծիքի : Այնանդ կինն
իր հաճույքի համար սառնարյուն, առանց սովորմի
կարող է մարդկանց կործանման պատճառ դառնալ :
Ու վորքան չքնաղ եր նովելլի հերոսուհին, նա իր
դեղեցկության բարձրունքից այնքան արագ զահո-
վիժեց մինչև ստորության ամենախոր անդունդը :

Արտիստը վերջացրեց ընթերցումը, բայց առանց
բացելու աչքերը մնաց նույն դիրքով անշարժ կանդ-
նած : Չեր շարժվում նրա դեմքի և վոչ մի մկանունքը :
Մի վայրկյան բոլորը քարացել եյին : Լուկ եր անդամ
Անտոլան : Սաշան չեր համարձակվում ձեռք տաէ
դարմոնին :

Այդքան տպապորիչ ու սոսկալի յեր նովելլ :

8

Քիչ հետո նովելլը մտքերի կրքոտ փոխանակու-
թյան առարկա դարձավ : Շատերը պնդում եյին, վոր

իրաւլացի յե նովելլի հեղինակը։ Նրանք գտնում եյին, վոր կանայք ընդունակ են ամեն ինչի, —եզրիս են, խարդախ, վոր հավատ չի կարելի ընծայել նրանց։ Մեղ հետ լեռը բարձրացած կանայք լոել եյին։ Նըրանք հանցավորի նման չեյին համարձակվում վարեկ բան տաել։

Բերդի ավերակների մոտից փոքր խմբերի բաժանված մենք իշխում եյինք ցած։ Ճանապարհին բոլորի խոսակցության նյութը նովելլին եր։ Մեր սենյակի իմ մյուս յերկու ընկերների — Սեմաշկոյի և Լոդարի հետ միասին մենք դնացինք ծովեղերք։ Նրանցից առաջինը Լենինգրադի գործարաններից մեկի մեխանիկն եր, մյուսը՝ նավաստի։

— Յես ճիշտ եմ գտնում — նովելլը՝, — Եռվային մանր քարերի մեջ իր տեղը հարմարեցնելով ասաց Սեմաշկոն ու հաստատակամ շարունակեց, — յերեկ եր, վոր դուք ինձ հարց տվիք, թե յես յերիտասարդ մարդ եմ դեռ, բայց ինչու յեմ արդեն յերեք տնդառ ամուսնացել։ Դա տեղին հարց եր։ Բայց այդ հարցումն ել մեղավորը վոչ թե յես եմ, այլ դարձյալ կանայք։ Յես թեև յերեք կնոջ հետ եմ ամուսնացել, բայց փաստորեն յերկու կին եմ ունեցել։

— Ահա թե այդ ինչպես յեղավ, — շարունակեց իր պատմությունը Սեմաշկոն ։ Իմ առաջին կինը վաղճանվեց շատ վաղ. յես նրան շատ եյի սիրում։ Նրա մահից հետո յես ամուսնության մասին չեյի մըտածում, բայց մեր գործարանի գրասենյակում աշխատող աղջիկներից մեկն ինչ վոր շատ եր յերեսում աչքիս, պատվառմ եր շուրջու։ Կամաց կամաց նա ինձ

դուք յեկավ և մտածեցի հետն ամուսնանալ։ Նա ինձ
սիրում եր մեծ ջերմությամբ։ Նրա վերաբերմունքի,
ամեն շարժման մեջ, յես տեսնում եյի անսահման սեր
և նվիրվածություն։ Մենք վորոշեցինք ամուսնանալ։
Արդեն վորոշել եյինք ամուսնության որը, յերբ հարս
նացուս հայտնեց, վոր ինքը մի թեթև հիվանդու-
թյուն ունի, վորի հետապա բարդացումից խռուա-
փելու համար նպատակահարմար և համարում նախ
բուժվել, ապա նոր ամուսնանալ։ Նա գնաց հիվան-
դանոց։ Յերեք որ թարմ վարդերի փունջը ձեռքիս
դնում եյի հիվանդանոց ու անհամբեր եյի, թե յե՞րբ
և ավարավելու հարսնացույիս բուժումը։

Յերրորդ որն եր։ Վարդերի փունջը ձեռքիս կանգ-
նած եյի հիվանդանոցի սպասարանում, ուր հանկարծ
պատահեցի իմ մի հին բարեկամիս։ Մենք յերկար
տարիներ իրար չեյինք պատահել։ Նրա հաղին ոպե-
տակ խալաթ կար-ըստ յերկույթին քժիշկ եր զար-
ձել։ Իրար բարեկարուց ու անցյալը մի քիչ վեր հի-
շելուց հետո յես նրան հարց ու փորձ արի հարսնա-
ցույիս մասին թե ճանաչում ե նրան, ի՞նչ և հիվան-
դությունը, շուրջ կալարավի բուժումը, թե վոչ։
Ընկերս առանց խոսելու ինձ եր նայում ու խորածան-
կորեն ժպտում։ Յես չգիտեյի, թե ինչու յե նա այդ-
պես ժպտում ու անարակուսանքով նայում եյի ընկե-
րոջ։ Նա վերջապես խոսեց, մտերմաբար խոինլով
ուսիս։

— Ջեանում ես, թե վոչինչից տեղյակ չես, —
ի՞նչ ել անմեղ տեսք ես ընդունել։ Վոչինչ չկա, վի-
ժեցում եր, արինք, այսոր դուրս կդրենք...

Գարդերը ձեռիս յես մնացել եյի քարապած։ Այլ-
ևս ամեն ինչ պարզ եր։ Վարդերի փունջը հենց այ-
տեղ դիտին խփեցի ու դուրս յեկա հիվանդանոցից։
Վիժեցման համար չեր ի հարկե բարկություն։ Ինձ
խարելն եր անսահման վիրավորել իմ ինքնասիրու-
թյունը։ Յերբ հարսնացուս հիվանդանոցից յեկավ։
յես նրան հայտնեցի, վոր իր հետ չեմ ամուսնան։
Ասացի նաև, վոր յեթե ինքն սկզբից այդ մասին ինձ
աղնավորեն հայտներ և շխարեր, յես գարձյալ կա-
մուսնանայի իր հետ։ Նա բոլորովին չզարմացավ և
վոչինչ շառարկեց, միայն խնդրեց, վոր անախոր-
ժություններից խուսափելու համար, քանի վոր
նշանակված եր մեր ամուսնության որը՝ հավաքվե-
ցինք քեֆի, իսկ ինքը առում եր, վոր ինձ հետ վո-
րեւ կապ չի ունենա։ Յես սիրում եյի նրան և չեյի
ցանկանում նրան անհարմար վիճակի մեջ գնել, գրա
համար համաձայնվեցի նրա առաջարկին։ Նշանակ-
ված որը մեր հարսանիքը կայացավ, Հավաքվեցինք
մեր բարեկամներին, մոտ մարդկանց ու մի լավ քեֆ
արինք։ Հենց այդ զիշեր ել նա դնաց իր տունը ու
յերբեք ինձ մոտ չեկավ։

Ահա և իմ յերկրորդ այսպես ասած զամուսնու-
թյունը, —յերջացրեց Սեմաշկոն, —իսկ դուք պնդում
եք, վոր աղնիվ են կանայք։ Զե՞ վոր յես սիրում եյի
նրան, չե՞ վոր իմ զգացմունքները դեպի նա վառ ե-
յին ինչպես իմ ձեռքի թարմ վարդերը, բայց նա այդ
չքնաղ վարդերը թափեց հիվանդապահ սանիտարնե-
րի վոտքերի տակ։ Զե՞ վոր նա կարող եր ինձ շխարել
և իմ սերն այնքան ուժեղ եր դեպի նա, վոր կարող

եյի անտեսել անցյալում յեղած ամեն ինչը : Բայց
կնոջ հոգին հենց այն ե, վոր խարի մարդկանց, ան-
սահման տանջանքներ պատճառի միայն, թունավորի
նրանց կյանքը : Յես անշափ հավանեցի այդ նովելլը :
Նա այնքան գեղեցիկ ե գրված, վորովհետև նրա
հեղինակը շատ խորն ե ըմբռնել կնոջ հոգին ու նրա
տրաղեղիան :

— Ո՞, զու իրավացի չես, զու իրավացի յես
Նիկոլայ, — անհամբեր բացականչեց Լոզարը, վոր Սե-
մաշկոյի պատմության ընթացքում ջղային շարժում-
ներ եր անում, բայց չեր ուղում ընդհատել նրան, —
ամիս յեթե խմանայիր թե վորքան ես ոխալվում դու:
Դու գիտե՞ս, թե վորքան վեհ ու բարձր ե կնոջ հո-
գին, թե նա վորքան բարձր ե կանգնած : Դու լսիր
թե ինչ կպատմեմ, հենց ինձ հետ պատահածից : Յես
յերիասարդ, առողջ, առույդ տղա եյի : Դեռ նոր
եյի կյանք մանում . իմ առաջ խոստմնալից ժպտում
եր ապագան ու յես դվարթ, ուրախ ինձ նետում
եյի դեղի նա : Մենք ապրում եյինք ծովափնյա մի քա-
ղաքում : Փոքրիկ եր այդ քաղաքը, բայց գեղեցիկ եր,
նման չեր այն ժամանակվա ռուսական մանր քաղաք-
ներին . այդաեղ կյանքն ընթանում եր յուրահատուկ
ձևով : Այդ ժամանակ յես սիրահարվեցի մի գեղե-
ցիկ, գեռափիթիթ աղջկա վրա : Նա նուրբ կաղմվուծ-
քով, բարձրահասակ, կապտաչյա աղջիկ եր . նրա մար-
մարե գեմքին իշխող վոսկե խոպոպներն անսահման
գեղեցիություն եյին տալիս նրան, նա կարծես քան-
դակած մաղոննա լիներ, մի մեծ վարպետի մեռքով :
Դրա հետ միասին նա փելոք եր և հեռու յեր այդ ժա-

ժանակըլու աղջիկների մեջ յեղած թեթևածություն-նից . նա գեղեցկության հետ մեկանդ վեհասիրա եր : Նա ավելի խորն եր սիրում ինձ ու պատրաստ եր ա-մեն զոհաբերության ինձ համար , ամեն զրկանքի : Իրարով հափշտակված մենք աղատ ժամերն անց ե-յինք կացնում միասին ու չեյինք նկատում , թե ինչ-պես ե թռչում ժամանակը . մենք կորչում եյինք մեր քաղաքի թավ , հիանալի այդիների մեջ ու յերջանիկ եյինք :

Մի գեղեցիկ մայիսյան յերեկո , տարված ընու-թյան գեղեցկությամբ , վերցրինք մի մակույկ ու վո-րոշեցինք հեռու թիավարել ծովում : Մենք բավական հեռացանք ափից ցանկանալով մյուս մակույկներից հեռու լինել : Հրապուրված արծաթե ջրերով , վոր փայլատակում եյին մերջալույսի շողերի տակ , մենք չեյինք նկատել , թե ինչպես մեր մակույկի ունեցած ճեղքվածքով ահազին ջուր եր լցվել նրա մեջ : Մենք ջուրը թափելու համար վոչ մի միջոց չունեյինք . նա-վակն անխոռասափելիորեն պետք ե ընկղմվեր : Յես աշխատում եյի ինձ սառնասիրա պահել , վորպեսզի նա չղղա վտանգն ու աազնապի մեջ մտածում եյի թե ինչպես փրկեմ նրա կյանքը : Մի վարկյանում հա-գար կոչմարային խոհեր եյին անցնում գլխովս : Յես դղում եյի , վոր հակառակ ինձ հանդիստ պահելու ջանքերին ինչպես արագ եր բարախում սիրոս : Նա կարծես ասում եր՝ «տես , հիմա քո աչքերի տուաջ ջրահեղձ պիտի լինի քո ամենասիրելի եակը , նա վորը վոչինչ չե խնայում քեզ համար , ի՞նչ ես անում նրա կյանքը փրկելու համար » . . .

Մի պահ այլեա վոշինչ չեյի մատածում և միայն
կատապի, ջղաճղական շարժումներով ավելի ու ավելի
արագ եյի շարժում թիակները: Նկատում եյի, սա-
կայն թե ինչպես մակույկում հետզհետե ավելանում
եր ջուրը: Յես դեռ չեյի վորոշել անելիքս, յերբ հան
կարծ աեսա, թե ինչպես նա մակույկից իրեն
նեակց ծովը: Այդ կատարվեց մի ակնթարթում, այ-
պես արագ, վոր յես շփոթովեցի ու տեղումս մնացի
քարացած: Նա մի բոսկ սուզվեց ջրի տակ ու գուրս
դալով, սկսեց լողալ մակույկին զուգընթաց, յերբեմն
բանելով մակույկից:

Դու մենակ ափի կհասնես—մակույկը չի խորտակվի
իսկ յես կլողամ քեզ հետ միասին: Արագ թիավարիր,
մոտենալով մակույկին ասաց նա ու ժպտաց իր թովիչ
ժպիտով, վոր հանգիստ լինեմ յես:

Իմ քոլոր թախանձանքները համոզելու նրան, վոր
ինքը դա նախակ, իսկ յես լողամ—իզուր անցան: Նա
վճռաբար պատասխանեց:

Դու լողալ չգիտես: Վոչ մի խոսք: Թիավարիր:
Յեզ իրոք, այն ժամանակ չնայած ապրում եյինք ծո-
վեպերքին, յես կարդին լողալ չըիտեյի: Մեծ յեղբո-
րըս ծովաւմ խեղզվելուց հետո վշտահար մայրս մեզ
թույլ չեր տալիս անգամ ծովեղերք դնալ:

Մենք յերկար այլպես մնացինք ծովում:

Արդեն վաղուց նա լողում եր մակույկի հետ միա-
սին ու յետ տեսնում եյի, թե ինչպես սպասվում են
նրա ուժերը. նա թուլանում եր աստիճանաբար, իսկ
մենք դեռ հեռու եյինք մակույկներից ու տփից: Իմ
մակույկն ել համարյա արդեն ջրով լցված նրա նմոն

գժվարությամբ եր առաջ շարժվում պետք եր ոգնություն կանչել։ Յես հետո ունեյի 12 համարի այն յերկար, անպետք ատրճանակներից, վոր կային առաջ։ Նրանից յերեք անդամ կրակեցի։ Քիչ հետո մենք նկատեցինք, թե ինչպես դեպի մեզ են վալիս յերկու նավակներ։ Յես թիավարում եյի, առանց մի վայրկյան աչքս հեռացնելու աղջկանից։ Նա արդեն լողում եր ծանր շնչով և յես տեսնում եյի, թե ինչպես թրչված շորերը նրան դեպի հատակն են ձգում։ Իմ մակույկն այլևս առաջ մզել անհնար եր։ Ողնություն յեկող նավակներն արագորեն մոտենում եյին։ աղջիկն ինձ եր նայում ու ժպտում, սակայն անսահման թախիծ կար նրա հայացքում։ Նրա անլեհեր վոգին արդեն ընկճվել եր։ Նա արդեն անսահման հոգնած թպրառում եր ու չեր կարողանում իրեն պահել ջրի յերեսին։ Յես իսկույն ինձ նեաեցի ծովը։ Այդ նկատելով, նա ճաց այնպիսի մի ճիշով, վորը մինչև հիմա յել յերբ վերջիշում եմ, փշաքաղվում ե մարմինս։

— Ի՞նչ արիր, ասաց նա, մերադարձիր նավակը… դու կիսեղզավես…

Յես մոտեցա նրան ու ուսս մոանցըի նրա թևին։ Նա ուժեղ թափահարելով թեր հեռացրեց ինձնից ու ընկղմակց ջրի տակ։ Յես նրա յետելից խորասուզվեցի ջրի մեջ։

Յերբ ուշքի յեկա, մինք յերկուառվ պառկած եյինք ծավափին։ Փրկող նավակները մեղ կարողացել եյին մեծ զժվարությամբ աղատել ու ուշքի բերել։ Յերբ նա ուշքի յեկավ տեսնելով ինձ շնչաց։

— Ի՞նչ՝ լովի և...մենք նորից պիտի առղբնոք...
յերկուսս ել...

Ապա շնչելով, ավելացրեց :

— Ել այդպիսի հիմարություն չանես : Զե՞ վոր
կարող եյիր խողզվել...

Նորից սկսվեց մեր յերջանիկ կյանքը : Մենք իրար
սիրում եյինք ավելի ամուր, —կյանքում արդեն հա-
մոզվել եյինք, վոր մենք փոխադարձաբար պատրաստ
ենք տմին դռհաբերության : Մենք խոսում եյինք ամու-
սնության մասին :

Վարոշ ժամանակ անց, յես հիվանդացա : Հիվան-
դացա ծանր, ախֆով : Որերով անզգա պատկած եմ
յեղել հիվանդանոցում : Մի որ ուշքի դալով յես ճա-
նաչեցի նրան : Նա գթության քրոջ խալաթով նստած
եր անկողնիս ; սառուցի տոպրակը ձեռքին : Պետք եր
տեսնել ; թե իմ ուշքի դալու մոմենտին ինչպիսի պայ-
ծառություն կար նրա դեմքին, թե յերջանկությունից
ինչպես եյին փայլում նրա աչքերը : Նա խոնարհվեց
գրկեց զլուխու, ցանկացավ համբուրել ինձ, բայց զլո-
սլեց իրեն : Նա հուզված եր : Քիչ հետո նրա խոնավ
աչքերից խոշոր կաթիլներն իջնում եյին դեմքն ի վար
ու շողջողում մարդարիտների նման :

Այդ յերջանկության արցումներն եյին :

Նա զիշեր-ցերեկ անքուն, մահճակալիս կաղթին
մահվան յերկյուղը սրառում աշխատել եր վորապես
քույր, վորապես սանիաար : Ու արդեն ինձ փրկված
եր տեսնում :

Յես բոլորովին առողջացա, դուրս յեկա հիվան-
դանոցից ու սկսվեց մեր յերջանիկ կյանքը . բայց

յիրկար չտնեց այդ : Նու ևս հիվանդացավ տիֆով :
Յեթ տեղի ունեցավ սոսկալի մի բան, վորի կորսառա-
յարությունը յես նոր եմ միայն զգում : Զոյխանք թե
ի՞նչ պատահնեց ինձ, թե ինչպե՞ս յնդավ, վոր նրա
հիվանդության ընթացքում յես վոչ մի անդամ
շվճացի նրան տեսնելու : Յես չգնացի տեսնելու
նրան, վորը պատրաստ եր ինձ համար խեղդվել ծո-
վում, վորն ինձ փրկեց ծանր հիվանդությունից :
Յեթ արդ ապերախտության համար յես պատժվեցի
առ ծանր ու արդարացի կերպով :

Նա արգեն առողջացել եր, բայց անից դուրս
յեր դալիս . այդ ժամանակ յես գնացի տեսնելու
նրան : Նրան դուս այլում կանաչ տաղավարի մեջ .
նա զունասովել եր, կարել եր իր դեղեցիկ խոպոպ-
ներն ու գլխին հագցրել մի սև գլխանոց : Նկատե-
լով ինձ, նա լայն բաց արեց աչքերն ու զարմացած
հայտցքով նայեց ինձ : Զարմանը, ծանր հիանթա-
փության ու արհամարանքի թույն կար այդ հա-
յացքում : Յես չհամարձակվեցի առաջանալ ու քա-
րացա տեղում :

— Ո՞ւր ես յեկել . . . ուշ ե արդեն : Այլեւ վոչինչ
ընդհանուր չկա մեր մեջ, — ասաց նա խստորեն . . .
ձեւքը մեկնեց զեղի դուռը :

Ապա նա ըստ զալով խոնարհվեց դրքի վրա ու
դառն հեկեկազ : Նա վոչ մի խոռք չուղեց լոել ինձ-
ից ու այնուհետև յերբեք չնայեց իմ յերեսին :

Ահա, այսպես անխմառ վախճան ունեցավ մեր
չքնաղ սերը . . .

Լոգարը լոեց : Նու աչքերը կկոցելով նայում եր

ծովի հեռաւմ, կարծես ուզում եր խորասութիւն նրա
ջրերի դոռ ալիքների մեջ:

— Այսպիս յերբ նայում եմ ջրերին, — չհջաց
նա, — ինձ թվում ե, թե այ, այնտեղից, ուր փա-
ռոսի մոտ կանգնած են նավակները, կհանեն նրան
ջրից ու կրերեն ծովափ...

Եւս նոր եմ հասկանում, թե ինչ վեհ հոգի ու-
ներ նա, թե յես ինչքան ցածր եյի նրանից: Սխալ
եր այդ նովելլը, սխալիում ե և Ահմաչկոն: Եինն ան-
հուն հոգի ունի: Առա մի փոքր մտածեցէք այս մա-
սին, — չե՞ վոր խեղզմող մարդը ձեռքը նույնիսկ
ծղոտին ե դցում՝ փրկության հույսով, իսկ նա
տեսնելով իր տռաջ բացված ծովի անդունդը, չըց
իրեն ոգնության պարզած իմ ձեռքը, վորպենոցի կեն-
զանի մնամ յես: Վորքան վեհ ու զեղեցիկ ե այս-
պետք ե կնոջ մողու այս վիճությունը վեր հանեն
զրողները և վոչ թե անրնդհատ դրեն կանանց խոր-
դախության մասին...

4

Լողարը վաղուց մերժացրել եր իր պատմու-
թյունը:

Մեղնից վոշ վոք, նույնիսկ Ահմաչկոն չխնուց
նրանից հետո: Մենք խուսափում եյինք նրա հայաց-
քից: Նա հայացքը հառել եր ծովի հենքից յեկող ա-
լիքներին, կարծես նրանց մեջ տեսնելիս լիներ այն
շքաղ, հրաշալի աղջկան:

Ծովից հյուսիսի մեր յետեր կանգնած
անտառուտ կտառողները պատել եր թանձր մա-

ուախուղը, վորը զորչ ու ծանր իջնում եր ցած : Այս
տառի բացաւաների մեջ, մուգ կանաչ ֆոնի վրա հաս
ու կենա հասունացող տրաներն ասես լեռնալանջներին
փոշտաց վոսկե դորդեր լինելին :

Յերեկոն իջնում եր լեռների ու ծովի վրա :

Մովն ավելի մոլեզին եր զաւանում : Ամպերի
թանձր ստվերները սև յաքաների նման հոկայտկան
տարածություններով բնենում եյին ծովի վրա ու
ծովի զաժան, մութ կերպարանք եր սաւանում :

Աւ ալիքներն իրար յետնից զարնվում եյին ա-
փին-մեկը մյուսից մոլեզին, մեկը մյուսից կըր-
բուռ ...



ԲՈՎԱՆԴԱԿԱՆԻ ԹՅՈՒՆ

Մուկուչ Անձիկավի ժանը	7
Բազար Առլումանի այբ/ն	17
Ֆեռզոր Խվանիչի կրածը	27
Բերդրաբանի Հույզերը	39
Դանակ սրող Դուդ կովը	69
Եսիսյորի Հորելյանը	83
Սերգո Շյոխի շատերը	93
Քառեցից առքի անց	107
Յերեք կույրեր	115
Սովորոյա Հույզեր	129



Прое. 1940г.

264



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0041525

